



Գծախիտ պատկերը երեսակայտքեան արդյունք չէ: Գծախիտը իր վերականգնմանով, երկրից են վերգրել ու երեսակայտքեան տեղում փոխել ընդերքը: Մեղսյունները գծախիտ էին դարձրել այն երկիրը, ուր գործում էին հայ ֆիզայիները: Եւ նրանք կամեցան էին հագել գծախիտ բոցերից խորաւած կրակէ շապիկները: — Հայկեանքի որ դու առաքելութիւնն էր դա: Ենչպէ՞ս կարող է լինել հանգիստ եւ անձնական ապահով կեանք, երբ հայրենիքն ինքն է անապա հով, որտեղից պլաք է յայտնուի անձնական երջանկութիւնը, երբ հայրենիքն ինքն է ապերդաւիկ, ուր կը տանի անձնական փառքի ձգտումը, երբ հայրենիքն ինքն է անփառունակ, ուրն է անձնական սկըր, երբ սիրոյ օրորոց հայրենիքը գծախիտ վերա կացուն է օրորում...: Քարանձաւն է նրանց տունը, ամենաշատը՝ գիւղեպրի մարազը կամ գոմը, խոտը կամ ձիւնն է նրանց անկողինը, փոքորիկն է նրանց սպիտակեղէնը, քարն է նրանց բարձր, սեփական շունչն է նրանց կրակը, պէնքի ետո պսակ լած, ուսապարկերում՝ մի կտոր կորեկ հաց եւս մի բոս փո խինձ, ուսապարկերում՝ իրենց պատանքացուն, հապտո ճա կատները թշնամու նենգ գնդակի դէմ, զօր ու գիշեր լեռներում քայլում են կրակէ շապիկէ հագած աստուածները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ




●	Տեսլահար արիւնը...
Պ. ՄՆԱՊԵԱՆ	Հեռակայ յուշեր...
* * *	Վերջին գրոյցը
Մ. ՀԵՐԿԵԼԵԱՆ	Մահը եւ քաղաւմը
* * *	Զարթի՛ր, լաօ
Հ. ՍԱՀԵԱՆ	Քարից քիտն տաղանդ
Ն. ԱՂԱԼԵԱՆ	Դիմանկարի էսփիզ
Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ	Քաղաքացի՜մ՝ Մուշեղ Գալշոյեանի մէջ
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Մըիմ ճորի լուսէ մարդը
Մ. ԳԱԼՇՈՅԵԱՆ	Զարթի Միբոն
Վ. ԳԱԻԹԵԱՆ	Ո՛ւր էս զնում
Մ. ԽԱՐԳՈՅԵԱՆ	Նա իր ժողովրդինն էր...
Վ. ՕՇԱԿԱՆ	Մուշեղ Գալշոյեանի արուեստը
Պ. ԶԵՅԹՈՒՆՅԵԱՆ	Կորստի խորութիւնը
ԱԼ. ԹՈՓԶԵԱՆ	Մարգարէ Գեորգիայոսեան չափանիշը
Ա. ՍԱՀԱԿԵԱՆ	Զարթի՛ր, լաօ
Գ. ԱՃԵՄԵԱՆ	Իրաւունք չունիս, Մուշե՛ղ
Վ. ԹԵՔԵԱՆ-ՓԱՆՈՍԵԱՆ	Եղերերգ
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Միայնակ ծառը
Դ. ՅՈՎՀԱՆՆԷՍ	Հէ՛յ, Մուշեղ
Մ. ՏԷՐ ԳՈՐԼԱՆԵԱՆ	Ո՛ւր կ'երթաս, կռունկ
Մ. ԿՐԱՆՈՍԵԱՆ	Հոգեհանգիստ
Մ. ԳԱԼՇՈՅԵԱՆ	Բարբիտ ծաղիկ որսնողը
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Մաղկած բարեր
* * *	Վկայութիւններ

85.
Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ի. ԵԱՐԻ. ԽԻՒՒՂ Ե ԵԱՐԻՆՈՒԱՐ 1981 ՊԵՐՏԵՐԻ

ՏԵՍԼԱՅԱՐ ԱՐԻՒՆԸ



Ընթերցողին արևին ու երեակայութիւնը շարժած ըլլալու իրադրութիւնը արժանիքներ յայտնաբերած զրոյի մը ժառանգ, ո՛ր տարիքին ու պատանի, անդամանիկ կորուստի մը տարողութիւնը կը ստանայ, իսկ ԼԲԷ ճանապարհի կիսուն պատանի ժառանգ, ենթակային ծանոթ միայն կարելի գեղեցկութիւններուն արուած հարուածին տակ կը կրկնապատկուի կոկորդ, միակուսեան ու որբութեան անգիտեմտութիւնը աստակացած:

Հայտնաբերած մէջ ու հայ գրականութեան ծովէն հետեւող Սփիւռքի տարրեր շրջանակներուն համար հանապարհի կէսերուն պատանած ժանրու ցնցումը կրկնուեցաւ նաեւ Մուշեղ Գալստիանի ժառանգը, որ պատանեցաւ իր անդամայր կաթնաղբիւր գիւղին ժառանգը, Թալինի շրջան, 17 Հոկտեմբերին, որտեղեւեզ անհետեւ արկածով մը, 47 տարեկանին:

Իր գրականութիւնն կը կառուէր ու ժառանգ տալով իր աւագ գրչեղբայրներուն, սերնդակիցներուն ու կրտսերներուն ցաւատանը գրութիւնները միանգամայն հաստատեցին, որ Գալստիան ունէր մարդու եւ հայու հաղթանակաւ խոր մը, արդար, ժառանգը խանգարած ու վշտահար սիրտ մը, որուն յաջերուն, փոթորկումներուն ու հրաշքներուն մէջ կ'եղբայրանային բոլորը, զրահան առգարէզի աւազները Բէ կրտսերները, ինչպէս նաեւ ընթերցող զանգուածները, այնչեղներէն մինչեւ նորաբողոք Հոգիները:

Յատկանշական է Մուշեղ Գալստիանի ընտանեկան կոնֆլիկտին ժառանգ ու տալով ստորագրած իր խորանկ, խորհրդանշական ու ուղեւորային ուժով գրուած շարքի ծաղիկ որոնողը, որ վարձագրուած կիսատուածներէն բաժնուելէ ետք, մարդ նորին իրեն կը հանդիպի, Գալստիան վարձագրէր, որ էր յափտակութեան մէջ կը համախմբէ Հոգիները ու կը մղէ զանոնք պահ մը շնչել անանձնական կեանքով ապրած այն տիպարին կշռոյթով, որ ժողովրդի հաւնար գարձաւ պաշտպան քանակի սիմվոյ եւ քանակ, առաջնորդի սիմվոյ եւ առաջնորդ, կամքի սիմվոյ եւ կամք, յայտի սիմվոյ եւ յայտ:

Ջարժանալի մթնոլորտ մը ունէին, ունին Գալստիանի էջերը, ուր ընթերցողը անմիջապէս կը ծանոթանայ ժառանգ թելադրուող պարագի մը հետ, հետեւներէն յառեղ վերքի մը հետ, աշխատանքի անմաքուր անդերու, այլապէս պատկերներու, այրական արժանապատուութեան ու հոգեկան մաքրութեան հետ՝ ինքստիմամբ, յաղագսով: Ու հայրենիքին ու մարդկային համար ամբողջական ընծայարկում մը ըրաւ էր կեանքը: Ամբողջական հայրենիքին ու ամբողջական ժողովուրդին: Տիպարային հերոսներու սրինակով, Փրկուած պատանին վրայ կ'առուցել տուն մը, գիւղ մը, գաղութներ, նաեւ՝ ժայռերուն դէմ մաքուր յայտնադրած յարաշարժութեան զլազանք, կտոր մը հող, բայց եւ հողին կապուած պահել, անգիտեմտութիւն, բանադրուած եղբայրներուն, մէջն օր, ամբողջ:

Յ. Բ. Բ.

ուժգնութեամբ: Այս իր Հրատարակած Հատորներուն լոյսով՝ գիտունք, գծադրած Զարեք, գրողներ:

Հոս քարեր ծաղկեցնել, Խաղած քարերուն Հրճուանքը ապրիլ, առան բարձրացնել, սան հետ ածիլ հոգեպէս, այլ պատեւ աջ աշխարհէն լուրեր բերելու սահմանուած կոտնկէին: Պատմութեան դաժան ճէլ խաղով իրարմէ բաժնուած մեր Հայրենիքի այս երկու մասերուն կոյրերն ու կանչերը եղան Գալլոյիանի գրականութեան մայր երակները եւ ահոնց մասին էջերուն վրայ արձակուած լուսաթափախ ու մառախլապատ յորհրդը ուղղակիօրէն քարնուկան Հայ մարդուն հոգին կազմող աճէնէն նորին թելերուն:

Տիպար մը, ու ամբողջ փիլիսոփայութիւն մը, ձեռնարկ:

Հատուած մը, ու համարադրող հոգեբանութիւն մը, վարակիչ:

Պարբերութիւն մը, ու հետուններէն եկող ու հեռարձակ կարտա մը, լափլիզող:

Տող մը, ու առանկապոյն զոհարարութեան քաղցրադին թելադրանքը:

Տողերէն ճէլը:

Քիւն աշնան կարծիքը ետ, որքան արեւը, լոյսը, քարը... Այս գագաւորիտը միւլիան տարի ամապատ է եղի, քրովնետիւն նրան պակասել է քա ուժը: Գաւ...:

Դու... Մարդը:

Մարդուն հանգիւղ խոր հաւատք մը ունէր Մուկէ Գալլոյիանի, քրտիւքը շատ լոյս մարդուն, արիւնը շաղկապող մարդուն, յախուած, Հրաժառ, արի մարդուն եւ, մա'նաւանդ՝ իր իրաւունքներէն ինքնիւք տէր յայտարարող Հայ մարդուն, յիշողութիւն ունեցողին, սփական արեւուն հաւատարմարուած հաւատարմիւն, առանց անձնուած ուժերուն խորհուրդին, նոյնութեան, միութեան շաղկապներուն:

Այս հունով ընթացող թիւս, կենտրին թէ գրականութեան ճէլ, հաւատարմով ժառանգութեան հոգին, ձեռնարկող ուժին, գարեւու ընթացքին թիւ առ թիւ կազմուած ու արեւմտեաններուն, իր հիմքերէն ձեւուն բերնով:

«...Ես ալ զու միւլ մարդ եմ, Տիպար, մէկ ու նայն մարդն: Ասա ինչա՞ն. քէ քու տեսնո՞ւն ու իմ մէկ է, քէ քու ապրումն ու իմ մէկ է, քէ քու կարասուն ու իմ մէկ է, քէ քու կարտուն ու իմ մէկ է, քէ քու ցում, Տիպար, քու ցում ու իմ ցում մէկ է, արեւմե ետ ու դու մէկ ու նայն մարդն եմ: Ես ու դու ու ձեր գեղի օգորմանիկ Մգրէն ու մեր գեղի օգորմանիկ կիրակսն ու... ու քէ Տիպար կ'ուզես իմանալ՝ քու ետն ու իմ ետն, քու սպան ու իմ սպան ու իմ պաղի պաղն նայն ու մէկ մարդն եմ: չունի մեր ցում ներ լէ, հին է մեր ցում, Տիպար:»

Ներքին աշխարհի մը մասին վկայող եւ ոճային նախասիրութիւններ պարզող մենախոսական այս հատուածին ճէլ կայ եւ գալլոյիանական հոգեբանութեան կիզակէտը, բոլոր հայերուն ճէլ զգալ նոր թովանդակութիւնը, ազդումներու, կորուստներու, կարտներու ու ցաւերու աճնորհայ կրկներկային ճէլ հոգիներուն միաձայլ թրթուցումը:

Ու առկաւն պիտի շարունակուի պնդումը ու կազմուի էութիւն կազմող այդ աճէնը ու անոնց թելադրանքը խաղանդ տեսիլքը, որ՝

«Յայտնուիլ է ցան հորը, յայտնուիլ է նաեւ պապին, նաեւ՝ ապուպային, ապուպայից ծառանգել է պապը, պապից՝ հայրը, հորից՝ իմքը, իրենից ծառանգել է արդին եւ արդուց՝ արդին, եւ տեսլանք է իր արիւնը: Իսկ իմքը կարծում էր...»

«Տեսլանք է իր արիւնը»:

Դ'ր արիւնը:

Որ բարձունքներու վրայ փոխանցուած էր իրեն, հայկական բարձրանդակին տէրով ու առաջնական անցքերու առաջններով յաղեցած միլիոնայրի մը ճէլ, զոր պահեց բարձունքներու մաքրութեամբ, կաթիլներէն խրատելիւրին ճէլ բարձունքներու կարտը, խռովքը, աղապակը:

Ջուր չէ, որ մարդիկ նորոյ եղբարախաղ զէմքերուն մօտ դրին իր անունը, Պարոյր Սեւակի, Մինաս Աւետիսեանի, մեր միւս նահատակներուն, իրաւներուն, ֆեախիներուն:

«Բազմեք Ներկայ Թիւը, կը յուսանք, զազափար մը կու սայն մեծ թռիչքներու նախասահմանուած այս թելադրիկ տաղանդին մասին»:

ՀԵՌԱԿԱՅ ԶՈՒԾԵՐ...

Վերջին քանի մը տարիներուն, Հայաստանի երիտասարդ արձակագիրներու գործերէն հաւաքածոյ մը կազմելու պարտականութիւնը աւելի խորացուց մեր մտերմութիւնը ենթականերուն հետ, ու յաճախ հոլովուած անուններէն մէկը եղաւ Մուշեղ Գալշոյեան, ի մասնաւորի «Չորի Միրոն» վիպակին առնչութեամբ: Մեր երիտասարդներէն ոմանց հետ միասին կարդացինք աւոր կարգ մը հատուածները, ուրիշներուն թելադրեցինք կարդալ ամբողջութիւնը, տարբեր տարիքի գրողներու ու մտաւորականներու հետ խօսք բացինք անոր մասին, Չորի Միրոն մտաւ մեր առօրեային մէջ, իբրեւ մեր ժողովուրդի վերջին յիսուն-վաթսուն տարիներու փիլիքական ու հոգեկան ելեւէջները անձնաւորած սիրելի մը, արիւնարբոս ոսոխին շղթայազերծած փոթորիկէն ցնցուած ու իր ճակատագիրէն վեր կանգնած մարդ մը, արութեան, անվատութեան, վերականգնումի բնազդներուն, մեծ կորուստներու վիշտէն բխած մեծ տառապանքներու եւ այրող կարօտներու կենդանի վկաններէն մէկը, իրաւ ու խոտվիշ:

Այս ամառնամուտին, «Ապղակ Հաբաթօրեակ»ի էջերուն ստորագրուած յօդուածի մը մէջ պակտիկ ուրախութեամբ մը չէր, որ հաղորդեցինք ընթերցողին Միրոյի սրտագրաւ փորձառութիւններէն մէկը.

«Հայրենի տաղանդաւոր գրագէտ Մուշեղ Գալշոյեանի «Չորի Միրոն» վիպակի հերոս Չորի Միրոն, ներկայ դարու առաջին քառորդին երկու Հայաստաններուն բախտին հաւասարապէս մասնակցած Չորի Միրոն, մեծ փորձութիւններու մէջ իմաստնազած անկրկնելի Չորի Միրոն անպայման մարդու այս տիպարին կ'ակնարկէ, երբ պօրակոչուած իր որդին ճամբու դրած ատեն կ'ըսէ անոր.

«— Թարութ, աշխարհ ամենամեծ կորստւտ մարդու կորուստն է: Մարդու կորուստ անդարձ կորուստ է:

«Լոեց ու պահ լռութեան մէջ բոլոր կորուստները անցուղաւ արին, բոլորը ծանր ու մեծ էին:

«Երկիր ու հողի կորուստ ծանր կորուստ է, — շարունակեց Չորի Միրոն, — բայց հող ուրիշ տէր չի ընդունի, — լոեց, — հող իր տիրոջ հետ արնակից է ու արնակիցին կը սպասէ՛, կը սպասէ՛, ու օրերից մի օր կը հանդիպին: Հողի կորուստ անդարձ կորուստ չէ՛»:

Հոկտեմբերէն Նոյեմբեր՝ զոյգ Ամերիկաները եւ Քանադա կատարած մեր վերջին շրջապտոյտին ընթացքին, մտերիմ շրջանակներու թէ կազմակերպուած գրական լրոյցներու ատեն, յաճախ խօսք եղաւ գրական նոր անցույթներու, գործերու, նուաճումներու, դէմքերու մասին, նաեւ Մուշեղ Գալշոյեանի մասին: Վերջին անունին շուրջ հետաքրքրութիւնը աստիճան մը աւելի աշխուժացաւ Թորոնթոյի մէջ «Համազգային»ի կազմակերպած հանդիպումին, Երկուշաբթի 10 Նոյեմբեր: Ներկաներէն եօթ-ութ հոգի, դեռ ամիս մը առաջ այցելած էին Հայաստան. ուր եւ անձամբ ճանչցած Գալշոյեանը, միասին բաժակ պարպած, երգած, կրուցած: Պատճառը այդ էր, որ հարցումները իրարու յաջորդէն ու պատասխանները գլխաւորաբար կեդրոնանան «Չորի Միրոն»ի վրայ:

Երկու միջավայրէն ցնացող հետաքրքրութեան հեղուկը՝ Միրոն, հերոսու-

հին՝ խութեցի հարսը, պատմութիւնը, հանգոյցները, պատկերներուն թարմութիւնը, լեզուական ու իմաստային գիտերը, արեան քոնկումը, մեծ փորձութիւններու մէջ իմաստնացած հոգիին կարկաշուն հոսքը, պատերազմի գացող Յարութ որդւոյն տուած խորհուրդներէն միտք մնացած մէկ-երկու խորհուրդ:

— Յարութ, տղամարդ մնաս... Լսէ, ու մտեան չանխս՝ մնաս տղամարդ, — թունդ կրկնեց, — կոխ է, նեղ վիճակ կը պատահի, մահի հետ համաձայնի, այրութիւն կորցնելուն՝ չէ՛...:

— Յարութ, զատ, լսէ ու մտեան չանխս, վիպ չծոխ, մահ չընդունիս կամօք... Յարութ, էն մարդ կամօք կ'ընդունի մահ, ով վրէժ ու փափաք չունի»:

Ասոնք եւ նման քանի մը ընդգծումներ, ու՛

«Ըստ մեզի, եթէ վերջին տասնըհինգ տարիներուն մեծ շնչառութեամբ հինգ գիրք ստեղծուած է հայ գրականութեան մէջ, մէկը անպայման Գալշոյեանի «Ձորի Միջոն» է»:

Յաջորդ օր, Հրջանային վարչութեան անդամ Սոնա Յովհաննէսեանի հետ պիտի այցելէինք բոլորովին ինքնատիպ դպրոց մը՝ «Արփի Նըսըրիկ»-ը, ուր եւ պիտի մնայինք ճաշի, հաստատութեան հիմնադիր ու տնօրէնուհի Արփիի բաղձանքով: Դպրոցը կ'ընդունէր երկու տարեկանէն մինչեւ հինգ տարեկան ամէն ազգի մանուկներ, իսկ յետմիջօրէին եւ արձակուրդի օրերուն՝ աւելի մեծեր, այս անգամ ընդհանրապէս հայ, մայրենի լեզու, պար ու երգ սորվելու համար:

— Երեւակայէ, — կ'ըսէր Գալուստ՝ բարձրաձայն խանդավառութեամբ, — երեւակայէ սեւամորթ պպտիկներ, որ «Մեր հայրենիք» կամ «Ձաթթի»-ր, լաօ» կ'երգեն:

Առաւօտեան ժամը տասնըմէկին հասանք դպրոց, եկեղեցւոյ մը ներքնայարկը: Բազմազոյն ու բազմաթիւ մանուկներ, փոքրագոյնները՝ քնանալու պատրաստութեան մէջ, աւելի մեծերէն ոմանք՝ խաղի, ուրիշներ՝ դասի: Արփիին պտղտոցուց մեզ բոլոր բաժանմունքները, բացատրութիւններ տուաւ, պատմեց դպրոցին կենսագրականը, ծանօթացուց ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն հետ, միշտ ժպտուն, իր գործին հանդէպ հաւատք ունեցող հոգիի մը խանդով:

— Հրամեցէք, ճաշը պատրաստ է:

Բոլորուեցանք սեղանին շուրջ, որ իր տեղական ճոխութեան վրայ գումարած էր նաեւ արեւելեան պատրաստութիւններ, աղանդեր, ապուխտ, լիբանանեան օդի: Հասաւ Գալուստը, որ կէսօրէ ետք արձակուրդ պիտի առնէր միասին ըլլալու համար, անոր ետեւէն՝ Տիթրոյիթի Յարութը եւ Թորոնթոյի Գէորգը: Ուսուցիչներ, հիւրեր, տասնըչորս հոգի, ամէնքը երիտասարդ, հետաքրքիր, խանդաբոց:

Բովի սեղանին շուրջ հաւաքուած հայ աշակերտները ոտքի ելան եւ սկսան հայերէն երգեր երգել, բարձրացան բաժակները: Սեղանակիցներէն ոմանք նախորդ գիշեր «Համազգային»-ի կազմակերպած զրոյցին մասնակիցներն էին: Նոր հարցումներ: Դարձեալ հնչեց Մուշեղ Գալշոյեանի անունը: Դարձեալ բեմ եկաւ «Ձորի Միջոն», Գալշոյեանի առաջին յայտնութիւնը:

— Բայց Գալշոյեանը մեռաւ, — ըսաւ յանկարծ Արփի:

— Ի՞նչ:

— Այո, Գալշոյեանը մեռաւ, Թալինի մէջ թաղեցին զինք: Ես հոն էի, քսան օր եղաւ:

digitised by A.R.A.R.®

Քարացան ամենքը: Ոչ ոք լուր ունէր, ոչ ոք կ'ուզէր հաւատալ բօթին: Ես ճամբորդութեան մէջ էի, հայերէն թերթ շատ չէի տեսներ, պատահաբար կարդացածներուս մէջ չէի կռահած գոյժը, ծանօթներս ալ բան չէին ըսած ինծի այդ մասին:

— Ինչպէ՞ս, ո՞ր, — հարցուցի դարձեալ խուճապահար: Թերթերը բան մը չգրեցի՞ն:

Չէին նկատած, չէին կարդացած, չէին լսած:

— Մէկդ ունի՞ր «Հայրենիք»ի հեռաձայնին թիւը:

— Դուն սպասէ, — ըսաւ Սոնա, — ես կը հեռաձայնեմ:

Գնաց, անցաւ քառորդ ժամ մը, եկաւ, գումեց.

— Տօնապետեանին հետ խօսեցայ: Դժբախտաբար հաստատեց լուրը:

Դէպքը պատահած է Հոկտեմբեր 17ին, որսորդական արկածով մը:

17 Հոկտեմբեր, որսորդական արկած, մա՛հ, մինչ մենք, կորուստին անտեղեկ, ամբողջ գիշերը իր անունը հովովեցինք, եղանք իր յայտնաբերած «Ձորի Միտ»-ի հետ:

— Ափսո՛ս, — թռաւ մէկուն բերնէն:

Ափսոսանքները շատցան, հառաչանքներ ալ լսուցան, մինչ ես գլուխս խոնարհած ու խոնարհումով իւրովի կը կրկնէի իր հերոսին ամենաթովիչ մէկ հաստատումը.

— «... Աշխարհ ամենամեծ կորուստ մարդու կորուստն է: Մարդու կորուստ անդարձ կորուստ է»:

— Լաւ որ վերջին այցելութեանս քանի մը անգամ լուսանկարեցի պինք, — ըսաւ Գալուստ:

Ոչ ոքի սիրտ մնացած էր ունկնդրելու, արձագանգելու, բան մը ուտելու, խմելու:

— Գալուստին նկարներուն չափ թանկագին յիշատակ մըն ալ ես ունիմ Մուշեղէն, — ըսաւ Գալուստին հետ Հայաստան այցելած ճեմարանական Միները, — ժապաւէսի վրայ առած եմ իրեն հետ ունեցած մեր պրոյցը, երկու երես, մէկուկէս ժամ:

Նկարներու եւ ձայներիչներու յայտնութենէն ետք, միւս այցելուները եւս սկսան բաներ մը յիշատակել, ճշդել իրենց հանդիպման պահը, Սեպտեմբեր 18էն Հոկտեմբեր 9ի միջեւ օր մը, մէկ ակնթարթի մէջ սրբացած որեւէ յուշ, երգի մը կտորը, կորուսեալ հայրենի եզերքներուն կապուած այրող կարօտ մը: Ես, թերեւ ամէնէն աւելի ծանօթը իր կենսագրութեան ու գրականութեան, յիշելիք ոչինչ ունէի, Հայաստան այցելելու բախտ չէի ունեցած, ինք Լիբանան չէր եղած, այնուամենայնիւ, իմ մէջս ալ սկսան բաներ մը քաղցրանալ, անդրադարձները իր դրկած բարեկեցութեան՝ Մովսէսին հետ, Սարգիսին հետ, ուրիշներու, Միքայէլ Թաւրիպեանի բերած առաջին բարեւը, 1974ին, «Բովտուն»էն անջատուած հաստատումի մը վրայ «Բագին»ի մէջ գրուած երկու էջին առիթով.

«Հրաշք է՝ քնում ենք դիրքերում եւ արթնանում անողջ, իսկ գեղմանացիների ծրարներում արիւնը սառչում է. ռուսական բնութիւնը, ռուս մարդու նման՝ ուրիշ տէր չի ընդունում»:

Այս էր «Բովտուն»ին մէջ կատարուած հաստատումը, որուն հետ կարգ մը պուզահեռներ գծուած էին «Բագին»ի մէջ.

«Պատմականորէն անառարկելի չէ անշուշտ կատարուած հաստատումը, բայց բնական ու հոգեբանական տուեալներէ մեկնած՝ անիկա կը բովանդակէ խորունկ ճշմարտութիւն մը, որ հասարակաց է թուոյր հայրենիքներուն

եւ բոլոր ժողովուրդներուն, ի շարս որոնց նաեւ մեր հայրենիքին, որ «ուրիշ տէր չի ընդունում»:

Դարձայ Գալուստին ու յայտնեցի, որ կրնանք միասին չըլլալ եւ եթէ ինծի յատկացնելիք յետմիջօրէն տրամադրէ Գալշոյեանի նոր առած նկարներէն մէկական օրինակ պատրաստելու «Քազին»-ի համար՝ զո՞հ կը մնամ: Նոյն խնդրանքը ներկայացուցի Միւրին, պոռնցին կրկնօրինակը ունենալու համար: Խոստացան:

Օրուան յայտագիրին մէկ կէտը պահուեցաւ միայն: Երեկոյեան դէմ ժիրայր եւ Սոնա Յովհաննէսեաններուն հետ պիտի հանդիպէինք պետական պատկերասփիւռի կայանը, ուր մեզի պիտի սպասէր Բարեգործականի շաբաթական կէս ժամուան հաղորդումներուն պատասխանատու ու խօսնակ Միւրել Պէյրեան: Այդ շաբթուան պատկերասփռումին գլխաւոր նիւթերը պիտի ըլլային «Համազգային»-ի գանատական գործունէութեան եւ Օջականի ու գրական հարցերու մասին եղած հարց-պատասխանները: Վերադարձին Յովհաննէսեաններուն տունը պիտի գտնէինք Գալուստն ու Միւրելը:

Գացինք: Ուշացանք: Վերադարձին՝ մարդ չգտանք տունը, բայց սեղանին վրայ տեսանք Գալշոյեանի նկարները եւ պոչ ձայներիկները: Դիտեցինք նկարները, ունկնդրեցինք անհետացած գրագէտին ձայնը, դիտեցինք, ունկնդրեցինք: Լաւ բաներ կ'ըսէր. սրտամօտ, հոգեր, տազնապներ, տենդեր, իր գրականութեան աղը կազմող զաղափարներէն լոյսի շերտեր, ապրումներուն զուլ: «Մարդու կորուստ...»: Հապա գրագէտի՞ մը կորուստը:

Դիշերը երկար, երկա՛ր մտածեցի այս տարածամ մահուան մասին: Որսորդակա՛ն արկած...: Բայց ինչպէ՞ս, որո՞ւ ձեռքով: Մանրամասնութիւնները կը պակսէին: Որսորդական արկա՛ծ...: Մէկէն յիշեցի երիտասարդ բարեկամներէս Մովսէսը, Հերկելեան, Հայաստանի ուսանող, որ յաճախ կը պատմէր Գալշոյեանի, Դաւոյեանի, Սօս Սարգսեանի եւ Վարուժան խտըշեանի հետ կատարած որսորդութիւններուն պատմութիւնները, երէններուն պատրաստութեան մանրամասնութիւնները, սարքուած խնձոյքներուն բնոյթը: Նորէ՞ն միասին եղած էին արդեօք, արդեօ՞ք մէկը սխալմամբ... արդեօ՞ք, արդեօ՞ք...

Գալշոյեանի կորուստին սուգը խորապէս զգալով հանդերձ, կը մաղթէի, հոգեւի՛ն կը մաղթէի, որ միասին եղած չըլլային այս անգամ, մէկուն կամ միւսին թիրիմացաբար արձակած գնդակին զոհ զացած չըլլար Գալշոյեան, ապրողներէն ռեւէ մէկը անդարմանելի խղճախայթ մը չկրէր սրտին, չկրկնապատկուէր մեր վէրքը:

Մովսէսը պէտք է Հայաստանէն վերադարձած ըլլար հիմա: Օղակայանին մէջ հանդիպեցանք իրարու:

— Գիտէի, որ առաջին հարցումդ այս պիտի ըլլայ, — ըսաւ ու նկարագրեց պատահարը, մանրամասնօրէն, բոթը իմանալէն մինչեւ յուղարկատրութեան վերջին վայրկեանը:

Կորուստին կսկիծը մնաց, հաւանական խղճախայթին վախը չքացաւ: Թելաղրեցի գրել պատմածը:

Գրեց:

Վերջին լռանկարներ: Վերջին գոռոյցը: Վերջին հրածեշտը:

Վերջինը, վերջինը, վերջինը:

Հայ գրականութեան պատահած աղէտներուն վերջինը: Տար Աստուած կամ սատանա՛ն տար, որ այս ըլլար վերջինը...

digitised by A.R.A.R.@ Պ. ՄՆԱՊԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԶՐՈՅՑԸ

Այս զբոյցը տեղի ունեցած է զյուրի գլխի Կոմիտեի միջոցով մի քանի օրերի ընթացքին եւ ծախսագրութեան անձնակազմի կողմէն իրականացուած:

Ձրուցակից զբաղեցան մահը, սակայն, պատճառ չտրուաւ, որ անկէս զուրս վայ զանձնական զորեանութեանը նեղ սահմանէն, եւ իրքեւ թանկադին նշխար՝ զատնայ սեփականութիւնը լայն հասարակութեան:

Հարազատ մեղաք համար անոր տառին ու ոգին, ի դուրս գրած ենք մասնաւոր ճիշդ մը: Այնուամենայնիւ, խմբագրութեան յարմար զատնայ կատարել անկէս հպումներ, առաւելարար տղորդ կարգ մը անձնաւորութիւններու վերաբերող զատնային խիստ բաժնիներուն մէջ:

Ձայնիւրիկը արամադրութեան է գրագիւնի իրականացուած:



● Կը հարցնեն Սփիւտի մասին: Բայց միեւնոյն քառերով կտրելի չէ խօսիլ տիւրքաւայ գաղութներուն մասին: Օրինակ, Միջին Արեւելի եւ Ամերիկայի հայկական գաղութներուն մէջ պատկերը բոլորովին տարբեր է: Նոյնիսկ իւրաքանչիւր գաղութի մէջ կը համընկնայ բաւարարող տարբեր ճկարագիր ունեցող խումբեր: Վտանգաւորը ամենքէն, որ Միջին Արեւելի մէջ իսկ կրտսերական են: Ասանց համար հայութիւնը գիտակցական բնութեամբ չէ, այլ՝ սովորական քան մը: Տակաւին կայ շատ սովորական բան մը. երբ այս հայը փամառտ կամ Ամերիկա կ'երթայ, քառերովայնութեան գրագում մը կ'ունենայ եւ ձուլումը կը դիւրանայ:

— Ինչքան զգացել եմ, այսինքն՝ դժբախտաբար ես զաղթածներուն չեմ հղել...: Վաթսուներեկ թուականին ուղեցի Թուրքիա գնալ. դա իմ առաջին ուղեւորութիւնը պէտք է լինէր արտասահման: Ինչ-ինչ պատճառներով թոյլ չտուեցին պարզապէս, Ըստ երեւոյթին, խառն էնպէս ասացին — դա սուտ էր —

որպէս թէ Թուրքիան չի ընդունում արեւմտահայերի սերունդներին...

● Ինչ որ քու պարագային, հաւանաբար, ասանցի բլլայն էր:

— Պարզապէս չգիտեմ ես ի՞նչ էր մեծամասնութիւնը, որը կ'սոր էլ գնում է ձեռք մօտ եւ ոնց որ հսկեց բաներ եւ խօսել, ինչ-որ օղակներում տեղ կայ, էլի. մտածում են՝ Մուշեղն էլ մի գիշ լաւ տղայ է...: Ինչպէս էլ գնաց, ես չգիտեմ, էլի, անհամ բաներ են: Ու էդպէս ես խռովեցի եւ ոչ մի տեղ չգնացի փառաբան: Անցնալ տարի Հարաւարտական եմ հղել, Էնտեղ ոչ մի հայի չկարողացալ տեսնել. առաջին, որ Եփեսոսում կայ. զանդեցի, զանդեցի, բայց չհանդիպեցի:

Ես ծանօթ չեմ, էլի, Սփիւտին, բայց իմ ծանօթութիւնը դալիս է, ասանց, անցող-եկողներից, սփիւտաւայ տղաների հետ իմ հանդիպումներից, եւայն, եւայն: Բայց էտեղի մի բան եմ գտնել, էլի, չգիտեմ, օգի՞ց եւ ըզգում, որտեղի՞ց եւ զգում, ինձ թաւմ է՝ հոգու վերադարձ կայ, նրանք՝ ու-

քեր երբեւէ զնացել են (Հայի մասին է խօսքը), Հոգու զաղթ է եղել... Ասենք՝ զաղթը է՛ն չի, որ մինակ երկիրը թողնեն, իրենց ծննդավայրը թողնեն, մինակ է՞ղ չէր զաղթը, զաղթը նաեւ ուրիշ զաղթն էր՝ արդէն մարմնի մէջ իսկ հեռացած։ Սկիզբը դա էր, զա շատ բացատրելի է։

Քիչ առաջ խօսում էիք Փանատայի առաջի սերունդի մասին, թէ ովքեր են եղել։ Նրանք, ի հարկէ, առաջի Հերթին պիտի մտածեն իրենց կեանքը պահելու, ապրելու մասին։ Եւ է՛ն այլարիւմները, որ Հիմա քեզ մօտ կայ, եւայլն, եւայլն, է՞ղ պրոբլեմը նրանց համար չի եղել, աւսինքն՝ լեզուն պահելու, վերապրելու, պայքարելու, կռուելու, նորից երկիր, իրենց գոյութիւնը պաշտպանելու...։ Հոգու զաղթ է եղել եւ Հոգին է իրենցից հեռացել։ Բայց Հիմա, ինձ թւում է՝ հոգու վերապրած է կատարում, նրանք՝ ովքեր, ասենք, լեզուն են մոռացել՝ Հիմա յանկարծ ետ են դալիս, հոգով ետ են դալիս, դէպի ակունքն են դալիս, դէպի իրենց ծնունդն են դալիս, դէպի հայուն թիւնն են դալիս։

● Գլխաւորաբար երկու բան պտտահեցաւ։ Միշտ պիտի է գոտորշել Միջին Արեւելին ու Ամերիկաները, երբ Սփիւտֆի մասին կը խօսեմք, որովհետեւ առանձին-առանձին բաներ են, տարբեր իրականութիւններ են։ Միջին Արեւելի Սփիւտֆը լեզուն չկորսնցուց, բայց չէ՞ որ մինչեւ յիսունական թուականները, մինչեւ Ստալինի մահը, քաղաքականապէս կապ գոյութիւն չուներ եւ միայն ու միայն ժխտական վերաբերմամբ կար ա՛յն բոլոր երեւոյթներուն նկատմամբ...

— Ստալինի ժամանակ, տեղն է, ընդհատում եմ, եթէ յանկարծ իմանային, որ ռեւէ մէկը էստոնի հայերից արտասահմանում բարեկամ ունի՝ նրան պիտի աքսորէին։ Հակասութեան, հակասական մարդ էր սա։ Ընդամէնը բարեկամ ունի եւ նամակ է ստացել Ամերիկայից, Փանատայից, Պէրուից, Էսթան բան։ Թ՛վ էր է՞ղ մարդը, է՞ղ բոլորը նշանակութիւն չունէր։

● Այս եզրու զլխաւոր պատճառներէն մէկը, որ մինչեւ յիսունական թուականները կազմաւորուող սերունդը իրապէս չկարենայ կապ ունենալ Հայաստանի հետ։ Ձեռով մը, գրեթէ երեսուն տարի, փոխարարներու քանակ կապը ստոյգաւ այլեւայլ պատճառներով։ Հիմա, երբ կապերը համեմատաբար շատ աւելի լաւ են, եւ սփիւտֆահայ ու Հայաստանի զեկաւարտութեան կեցութեմը համեմատաբար փոխուած է, ըսեմք՝ բարեփոխուած, բայց դարձեալ կը զգաս, որ ներկայ զեկաւարտութիւնն ալ, իր ելոյթներով, իր արտասահմանեան այցելութիւններով չգիրացուց այդ գործը։ Փոխանակ աւելանայ հայոց պետութիւնը ըլլալու՝ իմենք իր կարգին սկսաւ հատուածական բաներ ընել...

— Ընդէ, ճիշդ է...

● Եւ պէտք չէ ակնկալել, որ մտն մարդ կրնայ համոզուիլ աւելաւ։ Ես կրնամ, օրինակ, նոյնիսկ Հայաստանի ներկայացուցիչին արտայայտութիւններէն վեր ելլելով՝ ըսել. «Դուք չեւ միայն հայը, դուք չեւ Հայաստանը, իմեւ է նաեւ եւ բաւ կեցութեմը չի կրնար վէճի առարկայ դարձնել իմ զգացումներս»։ Փանի մը օր առաջ, «շատ յարգելի» մարդաց հետ կը խօսէի։ Իրենց կեցութեմէն մէջ չըսեմ ժխտական, բայց այնպիսի՝ արհամարհական արտայայտութիւններ կային Սփիւտֆի մէջ գործող հայկական զանազան կազմակերպութեանց, այս պարագային՝ մասնաւորաբար Դաշնակցութեան նկատմամբ, որ...

— Սփիւտֆի կոմիտէն շատ վատ է դրոշմում. Համազասպեանին պէտք է... շատ վատ է աշխատում...

● Կրնաս երեւակայել, որ վեց-եօթը հարիւր սփիւտֆահայ ուսանող գոյութիւն ունի Նրեւանի մէջ, որոնք կ'ընտրուին այնպիսի՝ կողմնակալ չափանիշով, որուն հետեւանքով անոնք ա՛յ միայն չեն օգտուիր ի գին մեծ գոհաբերութեան հայրենիքին ընծայած նսկայական առանկութիւններէն, այլեւ, ընդհակառակը, Սփիւտֆի պատկերը սխալ կը ներկայացրնեն Հայաստանի մէջ, եւ վերադառնա-

լով՝ Հայաստանի պատկերն ալ կ'աղա-
ւաղեն:

— Դարձեալ կուսակցական պատկանե-
լիութեան հարց է զալիս, ծնողները ո՞ր
կուսակցութեան են պատկանում, եւայլն,
եւայլն:

● Շատ պարզ է: Հարիւրէն ինքնուր-
նուկէս կ'ընտրուին այնպիսիներ, ու-
րոնք...

— Բայց եթէ դրանք խելք ունենան,
եթէ խելք ունեն՝ հակառակը կ'անեն,
Դաշնակցական կուսակցութեան պատկա-
նելիութեան երեխաներին... Եթէ իրենք
ուզում են իսկականից խելօք կուս. անել,
եթէ իրօք կուսելու մի տեղ կայ ձեռք դէմ,
եթէ դուք իրօք գաղափարական թշնամի
է՞ք՝ ձեր երեխային կը բերենք էստեղ,
կը սովորեցնենք, յետոյ կու գայ կը
կուսի...

● Որպէսզի տեսնէ հայրենիքը, եթէ
այդ տեսակի կոխ մը գոյութիւն ունե-
ցալու իրաւունք ունի...

— Եթէ գոյութիւն ունի դա: Մեր
դեսպանը Պէյրութում հարիւր տարի
է...

● Գիտեմք ով է:

— Բայց մի մարդ է, որ ամէն իմփոք-
մացիա սխալ է տեղ հասցնում: Նկատե-
ցէք էստեղից: Եւ Պէյրութի էս դէպքե-
րը ցոյց տուեցին, որ ո՞վ է էս ժողովուրդ-
դին տէր եղողը, ո՞վ էր, էլի... Գնում
են սխալները, հիմա էլ են գնում, բայց
փառք Աստու, որ ե՛ւ զեկազարութեան
մէջ, ե՛ւ ինտելիգենցիայի իննսուն տո-
կոսը ճիշդ կողմնորոշուած է:

● Ինքնուրն տակաւ:

— Յամենայնդէպս, էլի, ե՛ւ զեկազար-
ութեան մէջ, ե՛ւ մեր շրջանի դրողներ-
ը իննսուն տոկոսը ճիշդ կողմնորոշ-
ուած է, ճիշդ է գնահատում. ես քեզ հա-
ւատացնում եմ: Այո, ինտելիգենցիայի
իննսուն տոկոսը ճիշդ է գնահատում գոր-
ծունեութիւնը Միփուքում, ով ինչի է
ընդունակ, ով ինչ է անում, ով է ժողո-
վուրդը պահողը, ով է կուսողը, եւ թէ-
կուզ էլ կուսէ՝ ով է արիւն թափողը:
Բոլորը պատկերը գիտեն: Գիտեն, բո-

լո՞րը գիտեն, աչքները բացուել են:

Ուրիշ բան, որ կարող է նաեւ, գի-
տե՞ս, 37 թիւը շատ տանջեց ու վախեց-
րեց մեզ: Մենք վախեցած ժողովուրդ
ենք ընդհանրապէս: Վեց հարիւր տար-
ւայ անխիստութիւնը արդէն վախ է,
վախ է ներարկել ժողովուրդի երակնե-
րի մէջ: Գումարուեց դրան երեսունին-
նական թուականների դեսպատիզը մեզ
մօտ, էն սարսափը, որ մտաւ ժողովուրդ-
դի մէջ՝ ահաւոր է, եւ էդ ինքնաշարժ
գնում է դեռ, էդ սարսափը, ինքնաշար-
ժով: 37 թիւ տեսածը, ինչքան էլ բուն
ըլինէ, եթէ նոյնիսկ հրամանով «Պրաւ-
դա», մեր Միփուքում տալի թերթը,
գրի. «Դաշնակցական կուսակցութեան
նկատմամբ պետք է վերափոխել, ճիշդ
180 աստիճան պիտի բաժանման... չէ՞»:
37 թիւ տեսածները չեն հաւատում. ա-
սում են՝ մեզ խարում են, որպէսզի մենք
դուրս գանք եւ մեզ բռնեն նորից: Ձեռ
հաւատայ: Ահա էսպէս ընդունիւր դը-
րանց, մի՛ մեղադրիր...:

Մեր սերունդը, որ 37 թիւ չի տե-
սել, բայց լու է ներառել, յամենայն-
դէպս, մեր սերունդը կարողանում է, է-
լի, սահեք...

● Մասամբ Եմքալուտած չէ, ձերքա-
գատուած է կամ անմիջական ազդեցու-
թեամ տակը չէ...

— ...Հա՛, մի փոքրիկ բան է հարկա-
ւոր, մի փոքրիկ յենարան է հարկաւոր,
մի կէս խօսք է հարկաւոր էդ կուսակ-
ցութեան նկատմամբ՝ բարի վերաբեր-
մունք, որ ես դարձնեմ էսբան. դա ինձ
ձեռնտու է: Բայց էսբան, էսբան խօսք
է հարկաւոր, բաւական է, որ ես լսեմ,
թէ Պէյրութի մեր դեսպանը յատուկ դը-
րութիւն է ուղարկել, ցնկալալ ուղար-
կել, էստեղ-էտեղ, որ էս ընթացքում,
էդ կոխների ժամանակ, միակ կուսակ-
ցութիւնը, որ կարողացաւ ժողովուրդ
կազմակերպել, ոտքի հանել, եւայլն,
դա ուժեղ կուսակցութիւն է, Դաշնակ-
ցական կուսակցութիւնն է:

● Եւ եղած է մամ բան մը:

— Եղած է, եղած է: Եւ ցնկակալը
յատուկ որոշում կայացրեց՝ վերանա-

յեւ վերաբերմունքը, ուժեղացնել կապը սփիւռքահայութեան հետ եւ որոշումը Մասկուան կայացրեց, ո՛չ թէ Հայաստանի մեր կենտրոնը, որ դրան ընդունակ չի, աւելի ճիշդ՝ ի զօրու չի, ի զօրու չի: Իսկ դա Մասկուան կայացրեց եւ ընդ որում էնտեղ յատուկ կէտ կայ նաեւ՝ վերանայել վերաբերմունքը Դաշնակցական կուսակցութեան նկատմամբ (քառերը կ'արտասանէ հատիկ-հատիկ, իւրաքանչիւր բառի հետ բաւեցքը սեղանին գարնելով): Եթէ նոյնիսկ չկայ էդ մասնակի կէտը, բայց որոշումը հաստատ է: Էս որոշումը բաւական է, որ ես հասկանամ էն չգրուած կէտը, թէ կայ Դաշնակցական կուսակցութեան նկատմամբ վերաբերմունքը վերանայել: Եթէ կայ սփիւռքահայութեան հետ կապը սերտացնելու որոշում՝ դա նշանակում է, որ չգրուած տողը հենց վերաբերում է էդ զօրեղ կուսակցութեան, էսքանը բաւական է:

● Կը կարծեմ, որ Սփիւռքի մէջ գործող գլխաւոր կուսակցութիւնն է Դաշնակցութիւնը եւ այստեղէն է, որ պիտի գայ լայնամտութիւնը. մայր երկիրը այս է, այստեղէն է, որ պիտի գայ իւրաքանչեւ քաղաքական լայնամտութիւնը: Քանի մը օր առաջ, մեր քանաստեղծներէն մէկը հրաշալի մեռավ կ'ըսէր. «Եթէ դուք կէս քայլ դաք, մենք երեք քայլ պիտի առնենք ձեր ուղղութեամբ, որովհետեւ մենք է, որ վերջին հաշուով բարոյական այդ պարտականութիւնը ունինք՝ հասկանալու եւ դուրս դուրսը իւրաքանչիւր հայու վրայ»:

Ձեմ գիտեր, ես այստեղէն կը մեկնիմ մեծ լատտեսութեամբ:

— Այդպէս էլ մեկնիր: Մի բան պիտի ունենաք հաստատ սկզբունք դարձնել — չընդունել Մովսէսական Հայաստանը՝ դա նշանակում է մեռն քաշել նպատակից: Մի առիթով սասունցի աղերքը հաւաքւեցին Սարգսրապատում, ռեստորանում: Ահադին շատ էինք, մի քառասուն հոգի: Բոլորս էլ սասունցի տղաներ: Մենք՝ մենք էինք: Լաւ մթնոլորտ էր, ահադին խմեցինք: Վերջին հաշուով ես

մի խօսք ասեցի: Ասեցի՝ մենք դառնում ենք մի տեղ՝ Սարգսրապատ, որտեղ լուծուեց մեր ժողովուրդի լինել-չլինելու հարցը, ի վերջոյ պետութիւնը ստեղծուեց, կանք: Եթէ մենք սասունցի ենք ու մտածում ենք Երկրի մասին ընդհանրապէս, էլի, էդ Երկիրը դեռ մեզ համար կորած չի, մենք աւելի շատ պիտի աշխատենք Արեւելահայաստանի համար, քան արեւելահայր: Ինչո՞ւ: Որովհետեւ եթէ մենք պիտի հրահով կրակենք՝ էդ հրահովի տեղը էս է (դարձեալ հատիկ-հատիկ արտասանելով քառերը եւ բռնեցքը սեղանին գարնելով): Սա ընդունիր որպէս հրահովի տեղ:

Սուտ բան է, գիտե՞ս, Սփիւռքը մեծ ուժ է, ահաւոր ուժ է, ընդ որում Սփիւռքը այն ուժն է, որ իմ ազատութիւնն է ստեղծում նաեւ, կոնկրետ իմ, մի դրողի ազատութիւնը Սփիւռքը կարող է ստեղծել (դարձեալ բռնեցքը սեղանին գարնելով): Մեր ինտելիգենցիայի մեծ մասի յենարանը Սփիւռքում է: Որովհետեւ էն տրամադրութիւնը, որ ասենք Սփիւռքում կայ, եթէ յանկարծ Մայր Հայրենիքում մի գրող կամ մի մտաւորական արտայայտում է, նշանակում է՝ ինքը աւելի ուժեղ է, ուժեղ է, որովհետեւ իր արմատները դուրս են դալիս սահմանից մայր Հայրենիքի եւ ամբողջ աշխարհով ձգւում: Բայց բոլոր դէպքերում, բոլոր դէպքերում էն ինչ որ պիտի իրականանայ, էս փոքրիկ հողից դուրս պիտի գայ: Եթէ Մհերը պիտի դուրս գայ քարանձաւից՝ պիտի դուրս գայ Հայաստանից, էդ քարանձաւը Հայաստանն է (նորէն բռնեցքը սեղանին գարնելով):

Ին ինչ որ անում էք դուք եւ էն ինչ որ պիտի անէք, բոլոր դէպքերում դալիս է եւ վերջում հանդրուան ունենում էստեղ: Ելիք էստեղից է սկսուելու: Ուրիշ մեւ չի լինում:

Մեր պատմութիւնը, ախր, մեզ չի կարող, մենք ծանր օրերը մոռանում ենք, շատ ենք մոռանում, շատ ենք մոռանում ինչ որ կատարւում է մեզ հետ: Մոռացկոտ ժողովուրդ ենք, էդ մոռացութիւնը դիտե՞ս որտեղից է դալիս, ո՛չ

թէ նրա համար, որ մենք իրօք մոռաց-
կոտ ենք... Մենք ուզում ենք, որ մո-
ռանանք, որովհետեւ եթէ չմոռանաս՝
պիտի բան տեսնուի, կռուես դրա համար։
Կռուելը դժուար է, իսկ աւելի լաւ է մո-
ռանալ, վերջանալ...

● Խուսափումի մեծ մըն է։

— Խուսափումի մեծ մըն է, ինքնախա-
բէութիւն է մոռացութիւնը։ Մոռացու-
թեան նախորդը յուսահատութիւնն է,
անզօրութիւնն է. երբ ունիւր ես, երբ
յուսահատ ես՝ քեզ խաբում ես, թէ մո-
ռացար ու մոռանում ես։ Էսպէս է դուրս
գալիս։

Բայց, վերջին հաշուով, դուք աւելի
յիշողութիւն ունէք. աւելի շատ էք յի-
շում, քան մենք, քան Մայր Հայրենիքը։
Որովհետեւ եթէ մենք էստեղ սովորող
ուսնեք կառուցելու, չգիտեմ ինչ ունենք
կառուցելու, գործարան պիտի կառու-
ցենք, էս պիտի կառուցենք, դու, օտար
հողի վրայ, ոչինչ էլ չունեն հիմք դրե-
լու, հիմք դրելու տեղ չունէք եւ մեր յի-
շողութեան մէջ անընդհատ էստեղն է,
որտեղ մեր գործը պիտի օկսէիք, մեր
հիմքը պիտի փորէիք։ Դուք աւելի քիչ
էք մոռանում, քան մենք. դուք աւելի
քիչ էք խաբում մեզ, քան մենք, եւ էն
հանդամանքը, որ դուք մեզ քիչ էք խա-
բում՝ մեզ էստեղ մոռացութիւնից հա-
նում է ու էսեկից է դալիս արձագանքը։
Կապը, կապը, գիտե՛ս, սխալ է
հասկացւում... Այսինքն՝ Սփիւռքի Կո-
միտէն, ես առում եմ Համազասկեա-
նը վաղուց... Ոչ մի գործ չի տեսնում։
Ասում եմ, ինչո՞ւ չպիտի տեսնում։ Ես գի-
տեմ նա ով է. նրա առաջին գործը դի-
տե՛ս ինչ է, — ով որ դալիս է՝ ի՞նչ
մարդ է, ինչպէ՞ս օղտագործել նրան,
ինչպէ՞ս օղտագործել... Կամ բնդհանրա-
պէս դալիս են... Կազմակերպում է մի
բան... վե՛րը։ Եկել էք, բարով էք ե-
կել, դուք համարում էք ուխտագնացու-
թիւն, ինքը համարում է տուրիզմ...

● Բայց կարծես, ուրախութիւն մեր
բոլորիս, իրենց մօտ ալ բան մը փոխ-
ւած է։ Կ'ենթադրեմ, որ Համազգայի-

ն»ի կազմակերպած պաշտօնական ստա-
ջին շրջապայտանքէն մէկն է տսիկա։ Ու
զադումի՛ք չէ՛ ոչ ոքի, որ Գաղմակցու-
թեան հովանաւորութիւնը վայելող մշա-
կութային միաւթիւն մըն է Համազգա-
յին»ը, որուն քառասուն անդամներ հաշ-
ւող մեր խումբը հոս է այսօր։ Եւ մեր
ներկայացուցիչը այսօր հոն էր եւ քա-
ւական ջերմ եղած է իրենց մօտեցումը,
եւ...

— Էդ իրենից չի դալիս, Մասկուսից
է դալիս։

● Ամսոյն 30իմ մասնաւոր հաւաքոյթ-
ւը ունեմք միասին։ Կ'ենթադրեմ, որ
սրտցաւ խօսակցութիւն մը պիտի ունե-
նանք եւ մեր ամբողջ փափաքը այն է,
որ անպայմանական ըլլայ մեզի հանդէպ
ունեցած իրենց վերաբերմունքը եւ, մա՛-
նաւանդ՝ կ'այլը ըլլայ ուզողի։

— Հիմա գիտե՛ս ինչ կայ։ Նա մարդ-
կանց պիտի ուզարկի մեզ ժօտ՝ Սփիւռք,
որոնք էսենց չիտակ խօսեն մեզ հետ։
Ընտրելու է էնպիսի մարդկանց, որ կա-
րենան չիտակ խօսել մեզ հետ։

● Բայց կ'ենթադրեմ, որ այն սննդ
չեն շարունակելու։ Պիտի ուզէի, որ այդ
խելացութիւնն ալ իրենք ունենան եւ մե-
զի գրկին այնպիսի՝ մարդիկ, որոնք
սրտցաւ եմ, որոնք իրապէս կը փափա-
քին Հայաստան-Սփիւռք մերձեցումը։

— Ես մի բան պիտի ասեմ։ Որտեղից
մենք ինչեցինք Համազասկեանին, Սփիւռ-
քի Կոմիտէն...

● Միջանկեալ բան մը կ'ուզեմ ըսել։
Ինձի համար իբրեւ յիշատակ արձանա-
գրուած այս երթիկն մէջ, եթէ կը կար-
ծես, որ հաստատունը կան, որոնք պէտք
չէ արձանագրեմ, կրնամ կեցնել ժապտ-
ւէնը։

— Ազա՛տ եղի՛ր, Զայնագրում ես, ինչ
ուզում ես ձայնագրել։

● Զէ՛, պարզապէս ես կ'ուզեմ ըսել
այս մէկը, արպէսգի յետոյ...

— Ազա՛տ եղի՛ր։ Այս բոլորը էսքա՛ն
ինձ համար նշանակութիւն չունեն...

● Ես հարիւր առ հարիւր վտահ եմ: Բացարձակապէս ոչինչ ունիմ մէջը, այս բայովը պարզապէս այտցաւ հայտ մը: Ինձ ունեւորներն են եւ ես առ ի գիտութիւն, ըսի, պարկեշտութեամբ համար ըսի...

— Հա, շատ լաւ արեցիր: Տես, ի՞նչ եմ ասում ես: Որտեղի՞ց յիշեցինք Համազասպեանին, յիշեցինք է՛ն բանից որ Սփիւռքի Կոմիտէն, մեր եւ Սփիւռքի կապը, որ ասում ենք սերտացնենք մեր եւ Սփիւռքի կապը, սերտացնենք յարաբերութիւնները՝ սխալ է հասկացում, այսինքն՝ սխալ է իրադրութեամբ էդ կապը: Էդ կապը էնպէս պիտի լինի, ինչպէս քիչ առաջ ես ասացի, այսինքն՝ ներպատկաների միասնութեան համար, վերջին հաշուով:

Իսկ Հիմա ինչպէս է գնում Սփիւռք-Մայր Հայրենիք կապը. ընդունել տուրիսաներ, հասեցից տուրիսաներ դնան եւ Մայր Հայրենիքի մասին բաներ ասեն: Վե՛րջը:

● Բայց արդէն այնքան ժամանակաւրէպ դարձած է, ար...

— Է՛դ եմ ասում, Հիմա մէկը չկայ Սփիւռքում, մէկը չկայ Սփիւռքում, որ չընդունի Մայր Հայրենիքը՝ անկախ կուսակցական պատկանելիութիւնից: Ձկայ էդպիսի մէկը: Մարդիքը, առաջին անգամ, դաշնակցական տղայ, «Բագին»-ի աղաներից, դու գիտե՞ս Մարդիսին, Կիրակոսեան...: Եկել էր հասեղ, հասեղից չէր ուզում բաժանուել: Տասնը՛հինգ օրով էր եկել, տասնը՛հինգ օր էլ երկարացրեց: Եւ դնացել է, մի նամակ եմ ստացել իրենից, որ կարօտով, բանով, ախոյ՛: Ես մեր կուսակցական ժողովում էդ բանը ասացի:

Ընդունում են, չէ՞: Իսկ ընդհանրապէս էդ որ տօնում ենք Սփիւռք-Մայր Հայրենիք կապը պիտի լինի էնպէս՝ ինչպէս ես եմ ասում, նպատակների միասնութեան կապ: Ին ինչի համար դուք մզտում էք, ձեր Հիմքը, որ տեղ չունէք փորելու տարր երկրում, դու Քանաստայում, միւսը՝ հասեղ, միւսը՝ էնտեղ, միւսը՝ էնտեղ...: Դուք ընդամենը ու-

րիշի Հիմք դրածներին, ուրիշ ժողովուրդներին փորած հողի վրայ ծառայում էք փաստօրէն, ծառայում էք: Վերջին հաշուով դա այդպէս է, վերաւորական չլինի ձեզ համար: Ամէն մէկը, ի հարկէ, որպէս անհատ ո՛չ մէկի ստրուկը չէք, ո՛չ մէկի ծառան չէք, բայց վերջին հաշուով դուք էդ հողի ծառան էք դառնում, ձեր քրտինքը օտար հողի մէջ է թափւում, եւ դուք ընդամենը ի՞նչ էք ուզում. մարդ էք, ազգային պատկանելիութիւն ունէք, կորած երկիր ունէք, էդ երկրի վրայ էք ուզում ձեր քրտինքը թափուի, եւ ձեր Հիմքը էնտեղ էք ուզում դնել: Ծառ բնական, մարդկային ցանկութիւն: Նոյնը ես եմ ուզում, նոյնը ես եմ ուզում: Ուրեմն, իմ ու թո կապը, Սփիւռք-Մայր Հայրենիք կապը առաջի Հերթին պիտի ամրապնդուի սրա վրայ: Դու ինչպէ՛ս ես ուզում, ես ինչպէ՛ս եմ ուզում: Դու ուզում ես դա, նոյն բանը ես եմ ուղղում: Իմ բախտը բերել է, ես Մայր Հայրենիքում եմ, թո բախտը էդպէս է բերել եւ դու Քանաստայում ես: Բայց դու ի՞նչ կարող ես անել, ես ի՞նչ կարող եմ անել. էս բանը պիտի պարզենք մեզ համար, էս բանը պիտի պարզուի Կոմիտէի մակարդակով, պետական մակարդակով: Ինչո՞ւ չէ...

Հիմա, տես, Աֆրիկան ինչքա՞ն գոյներով է ներկւում. ո՞ւր էր էդքան պետութիւն: Մենք գիտէինք Աֆրիկան, էնտեղ ճինկլիներ, նեղրեր են ապրում. քանի՞ պետութիւն ստեղծուեց վերջին տասնամեակում, քանի՞ նոր պետութիւն, քանի՞ պրեզիտենդ, չգիտեմ ինչ, հաշուըն, հաշին, հաշին:

Աշխարհը, ժողովուրդները, ցեղերը երբեք էդքան ազգային զարթօնք չեն ապրել, որքան Հիմա: Ամէն մէկը յանկարծ զգում է, որ ինք առանձին է, ազգ է, շնայած նոյն ցեղերն են էնտեղ լըցւած, որ էսենց եթէ նայես՝ բոլորն էլ արարներ են, բոլորն էլ նեղրեր են: Բայց յանկարծ ասում են. մեր անունը սա՛ է, մեր անունը սա՛ է, մեր անունը սա՛ է: Առանձնանում են, Անգլիայի ձեռքն է սրա գլխին՝ վերցնում է, մէկի վրայից՝

Ամերիկայի ձեռքը, բոլորը ինքնութիւն են ձեռք բերում, եւայլն, եւայլն, եւայլն:

Եւ էս բոլորի վրայ, յանկարծ մի քաղաքակիրթ ժողովուրդ, որ դալիս է, առում է՝ էսքան տարուայ թատրոնի պատմութիւն ունենք, նարեկացին որտեղից է դալիս, մեր գրերը 1500 տարւայ պատմութիւն ունեն, եւայլն, եւայլն, եւայլն... Եւ յանկարծ խեղճ ու կրակ մի ժողովուրդ, Երկիրը կորցրած, մի ձորի մէջ լցուած իրար է դիտում: Ինչո՞ւ: Ուրեմն, ինչո՞ւ չմտածել...

Ես Մասկուա էի դնում, այսինքն՝ Մասկուայում էի, դնում էի օգոստոսական, աւտոքոնի պատուհանի տակ նստած էի եւ էսենց նայում էի, երբ յանկարծ պատուհանից դուրս ամպեր երևացին: Ամպեր որ երևացին, ես ասացի, մտածեցի, որ սահմանն է սա: Հիմա, տես, հայի մտածողութիւն, — սահմանն է. որտեղ ամպ երևաց, որտեղ հորիզոնը վերջացաւ՝ դրանից յետոյ արդէն քոնը չի: Տես ինչքան ենք խեղճացել, ինչքան է մեր մտահորիզոնը փոքրացել, մեր երկիրը դարձել է մէկ հորիզոն, մի հորիզոն. ինչքան որ տեւոյ՝ էդքան է երկիրը: Շատ է խեղճ, չէ՞: Մենակ էն չի, թէ փոքր է, մտածողութիւնն էլ է փոքրանում: Իսկ ուսը կը կանգնի սահմանի բերանին, իր սահմանի եզրին, կը նայի էն կողմ եւ կը նայի էնպէս՝ ինչպէս որ իրա երկիրն է, ոնց որ դա իրանն է: Իրեն եթէ ասեն՝ սա սահմանն է, էս դետից էն կողմ ուրիշ երկիր է՝ նա էսպէս չի նայի: Ականջի մօտով կ'անցնի, ուղեղին չի հասնի, որ ուսական սահմանը վերջացաւ. անսահման է: Մտածողութիւնն է, թէ չէ, հզօրութիւնն է, թէ չէ...

Մենք խօսում ենք ուղղակի, դիտեա, սխալ է հասկացում հայրենասիրութիւնը երբեմն, սխալ են հասկացում հողեւորը, սխալ է հասկացում պահանջը, սխալ է հասկացում կարօտը. էս բոլորը մենակ հողի քանը չի:

Եթէ Արարատը էնտեղ կանգնած է, անց որ Գարոյրը ասում է.

Ի՞նչ կայ անլի ծամր աւ խղճալի,
Քան թէ կսկիծը քրդեկորոյս մօր:
Իսկ եթէ դա էլ քիչ են համարում
Եւ սպանւածի դիակը, դիտմա՛մբ,
Տնկում են թշուառ մօր աչքի առաջ —
Ո՛չ թէ մի շաքաթ,
Այլ ձիւ՛ր տարիներ...
Դէ, եթէ մայրս ես՝
Եկ մի՛ ցնցարա՛ւիր...

Արարատն — այսպէ՛ս — դրել են անա
Երեսանի դէմ...

Դա իրօք էղպէս է: Ասենք, թէ Արաքսի մօտ վերջանում է սահմանը, մեզ հող պէտք չի, ընդունենք այս Հայաստանը ո՛չ թէ 30 հազար, այլ՝ 300 հազար քառակուսի քիլոմէթր: Բայց կայ Արարատը աչքիս առաջ անընդհատ, ես չպիտի՞ վերաւորուեմ. ես չպիտի՞ վերաւորուեմ: Տեսնում ես, բայց չես կարող մօտենալ, կայ մի գիծ, որտեղից էն կողմ չես կարող անցնել: Վերաւորանքը բաւական է, որպէսզի ես մտածեմ. մինակ ոտքի տալիս հողը չի, էլի, մինակ էն հողը չի, որ հաց է տալիս, էն հողը չի, որտեղ հիմք ես փորում, էդ չի, էլի: Վերաւորանքը հերիք է, որպէսզի ես մտածեմ: Ինչո՞ւ չէ, շատ բնական եմ ես համարում:

Դէհ, խմենք Արաքսից էն կողմ եւ դած մեր Երկրի կենացը:

● Կ'ուզէի, որ քիչ մըն ալ քաղաքականօրէն կամ անլի ճիշդ՝ քաղաքականօրէն մէջ դրսեւորուող ապրումներուն եւ նպատակներուն մասին խօսիս:

— Ահ, ահ. էդ դժուար է: Այսինքն՝ այն ինչ որ հիմա ես խօսում եմ՝ գրում եմ: Եւ յետոյ՝ կայ նաեւ մի ճշմարտութիւն, որ քեզ ասեմ... Միջայէլին դիտե՛ս: Միջայէլը, Պէյրութից, լաւ մի տղայ, սատուցի, Միջայէլը... Ուզում եմ յիշել տղանունը...: Դաշնակցական էր, լաւ տղայ էր:

Եկաւ մի անգամ, այսինքն՝ էլի մի անգամներ, ասաց, որ ես ուզում եմ անկեղծ մի զրոյց ունենանք, յարմար մի բան, մի տեղ: Ըսի՛ր որտե՞ղ ես ուզում,

ուզում ես սարի գլխին գնանք: Զտնդեցի աղբորս, աստ ունէր: Եկաւ, երեքով բարձրացանք Արագած: Նստեցանք աղբուրի գլխին. մի հատ արազ էինք վերցրել, մի կտոր հաց ու պանիր: Ասի՝ ընդունենք, որ Երկրի աղբուրի գլխին նստած ենք, էսպէս էլ գրավարի խօսենք. անկեղծ, ի՞նչ է ձեզ հետաքրքրում:

Ասաց, ի՞նչ ունես գրած, որ չի տըպագրուել: Ոչոքում էինք ազատ, ոնց որ սարի գլխին կը խօսես, հասկանալի է, կամ ընդհանրապէս կը խօսես ազատ, ինչո՞ւ չպիտի խօսես: Ասի՝ ո՛չ մի տող չունեմ, բոլորն էլ տպագրուել են, ինչ որ մտածել եմ՝ գրել եմ, ինչ որ գրել եմ՝ տպուել է: Սխալ ինֆորմացիա էին տուել, թէ չպիտեմ ով, ով, ով, նաեւ Մուշեղ Գալուստեանը գործեր ունի, որ չեն տպուում, էդպիսի բան չկայ:

Հիմա ես քո հարցին եմ պատասխանում. էն ինչ որ մտածում եմ՝ խօսում եմ. էն ինչ որ խօսացի էսքան ժամանակ՝ հաշտւած-հաշտւած, այսինքն՝ Ներժըռւած է ամբողջ իմ գրածների մէջ: Եւ տպուած: Իսկ եթէ մեր անշնորհութիւնը պիտի գցենք զլաւէթի վրայ, պետութեան վրայ, ցեղնորայի վրայ, թէ թոյլ չեն տալիս՝ դա կը լինի յերկրանք:

Ի գէպ, եթէ արանից աւելի ազատութիւն էլ տան, ի հարկէ, ես լրիւ ազատ չեմ, բայց թէ ինձ տան՝ լրիւ ազատ ես, ինչ ուզում ես արա՛, ախր, ես չպիտի հայհոյեմ. դա պրակտութիւն չի լինի, ես կը գրէի էլի էնպէս՝ ինչպէս հիմա եմ գրում. ես չեմ հայհոյի, պրակտութեանը հայհոյանք չի: Բայց էն ինչ որ ես խօսում եմ, ինչո՞ւ եմ վստահ խօսում, ինչո՞ւ եմ ազատ խօսում, որովհետեւ ես ինձ իրաւունք չէի տայ էդքան էլ խօսել՝ եթէ չգրէի իմ փնջալիները, որ ես գրել եմ: Իսկ եթէ ուրիշ բան պիտի խօսեմ եւ ուրիշ բան գրեմ՝ ես ինձ կը համարեմ ամենավերջին անբարոյակա՜նք: Բայց ես ինչ որ խօսեցի հիմա, ինչ որ խօսում եմ՝ էս բոլորը դրում եմ, բայց դրում եմ էնպէս, ինձ կը ներես, որ արուեստի գործ ընի եւ տպուի: Էդ գէպքում տպուում են: Իսկ ես չպիտի հայհոյեմ, բոլորովին չպիտի հայհոյեմ:



ԿԵՐԱՆ ԼԵՏ

Եթէ թոյլ տան, որ ես բացարձակ վեր կենամ, հայհոյեմ սրան-նրան, թուրքին, կուսակցութեանը՝ ես չեմ հայհոյի: Էդպէս չի: Դա պրակտութիւն չի: Էդպէս գրել եմ եւ էդպէս էլ կը շարունակեմ: Հիմա քո հարցին, ի՞նչ եմ անում եւ ի՞նչ եմ մտածում:

Անհարկներից սկսած, վէպից, վիպակից, պատմաւածքներից, որ շուտով պիտի լոյս տեսնի, էս բոլորը, գիտե՛ս, կայ մի կէտ, թիրախ, նշանակէտ, մի տառ ասենք թէ, ես անընդհատ մի կէտին եմ կրակում:

● Ո՞րն է այս պարագային:

— Նո՛յն կէտը. դա, գիտես, ա՛յն կէտն է, կարօ՛տը, կորցրա՛ծը... Առայժմ մեզ ի՞նչ է հարկաւոր՝ չմոռանա՛նք: Ես քիչ ատաղ խօսում էի, որ մոռանում ենք: Մոռանում ենք ո՛չ թէ որովհետեւ մոռացկոտ ենք, այլ մոռանում ենք մեզ խաբելով, թէ մոռանա՛նք դրա համար, որ վերջ, անգորութիւնից, վախից, մեզ ազատելու էդ ցաւից: Դրա համար ենք մոռանում: Բայց ես ուզում եմ, որ չմոռանանք, ժողովուրդը չմոռանայ եւ նոյն կէտին անընդհատ ես կրակում եմ, որովհետեւ ուզում եմ, որ այդ կէտը

ծակուի՛, ծակուի՛, ծակուի՛...: Եթէ ծակուեց, բոտ երեւոյթին, ես ամբողջ կեանքս եթէ կրուեմ ու ծակուի՛ ես մեծ բանի հասած կը լինեմ, նո՛յն կէտին, զիտե՞ս, նո՛յն կէտին, մեծ բանի հասած կը լինեմ: Դա կը լինի ա՛յն, որ ես ու ընթերցողները, նրանց՝ ու՛մ ուղղում եմ խօսքը, ինչ-որ տեղ նոյնը հասկացանք, որ կորցրածը չպիտի մոռանալ...

● ...Անարդարութիւնը, որ եղած է մեր ժողովուրդին հանդէպ...

— Եւ վերջին հաշուով ինչքա՞ն ժամանակ է անցել. Հնարաւոր չե՞ս մտածում. մի մարդու կեանք էլ չի, մի մարդու կեանք էլ չի:

● Իսկ կարելի՞ է ըսել, որ մոյն Բիրսիին «Խփող» ուրիշ գրողներ ալ կան: Լսեցի, որ գործերդ մէկը նկարահանւած է վերջերս: Հրապարակ ելա՞ւ:

— Հա, վէպը նկարահանուեց, նախ Մասիկուան ցոյց տուեց. էնտեղ էլ նոյն պրոբլէմը կայ, ինչո՞ւ, բայց Մասիկուան ցոյց տուեց, Մասիկուայի կենտրոնական հեռուստատեսութիւնը: Հիմա «Ձորի Միրոն» են նկարահանում, երեք սիրիանոց: Սօսը խաղում է, շատ լաւ է, Սօսը փրկութիւն է, էլի:

● Միջամկեալ, Երկուշաբթի «Նահապետը» պիտի տեսնենք: Կ'ենթադրեմ, որ յաջող գործ է, տղաքը այդպէս ըսին:

— Յաջող ֆիլմ է, «Նահապետ»ի ուժ-ժիւղը ու Սօսը համարեա՛հ հաւասար են սթաուածութեամբ. Սօսը մի քիչ աւելի է, ի հարկէ, նա որպէս ռեժիսոր, ինքը որպէս դերասան:

● Ո՞վ է բեմադրիչը:

— Հենրիկ Մայեանն է: Նա մեր առաջատար ռեժիսորներից է, եթէ ոչ առաջինը, չհաշուած Փելէչեանը, որ էստեղ չի աշխատում, հիմնականում Հայաստան չի աշխատում...

● Փարաջանովը չի չեցիր. կարելի չէ՞ հայկական շարժանկարին մաս կազմող բեմադրիչներու շարքին նկատել զայն՝ իրրեւ տաղանդաւոր մէկ դէմքը մեր սպի-

տակ պատանին:

— Փարաջանովը, դիտե՛ս, հայ իրաւականութեան հետ քիչ կապ ունի: Նա եւ կաւ Ուկրաինայից, «Նոտն գոյնը» նկարեց, նորից վերադարձաւ, իսկ Փելէչեանը հայ ռեժիսոր է: Նա Ուկրաինայի ռեժիսորներից էր, ազգութեամբ հայ: Իսկ եթէ նրան համարենք որպէս հայ ռեժիսոր, առաջինը նրան պիտի ասենք՝ Փարաջանովին:

● Իսկ «Միջիթար սպարապետ»ի բեմադրիչը ով էր:

— Քեոսեյեան կայ, էդմենդ Քեոսեյեան:

● Այնքան տալուորիչ էր «Միջիթար սպարապետ»ի նկարահանումը, մա՛նաւանդ վերջին տեսարանը...

— Կեցիր տեսնեմ, որտե՞ղ ես նայել:

● Պէտքա՛յ, այս գարնան:

— Ի՞նչ կարծիքի ես:

● Ի՞նչ մեղքս պահեմ. սկիզբը խանդավառ չէի, որովհետեւ մախապէս, շուրջ երկու տասնամեակ առաջ իմ տեսած իսթիւն ժապաւեցները տոնատարակ այնքան վատրակ էին, որ արեւմտեան շարժապատկերի իրագործումներում հետքայլ պահող ակամատեսի ակնկալութիւններս չէին գոհացներ: Այս դիտանկիւնէն՝ «Միջիթար սպարապետ»ը հրաշալի իրագործումներ կատարած էր, միեւն տեսարանը բնութեան մէջ, մեր վանկերը նկարելը...

— Ժի՛շդ ես, շատ ճիշդ ես:

● Յետոյ մանրամասնութիւններ կային, որոնք իրապէս յաջող էին: Իրրեւ խաղարկութիւն՝ կտրելի է վիճիլ: Բայց այդ վերջին բոժինը, ուր ռուսական գործերը օգնութեան կը հասնին, պարզապէս շինծաւ էր, եթէ մա՛նաւանդ նկատի ունենանք պատմական այն իրողութիւնը, որ ռուսական ուժերը մեր հողամասին վրայ յայտնուեցան սպարապետին ժամանակաշրջանէն հարիւր տարի ետք: Քիչ մը շատ մերկ էր: Ի՞նչ մեղքս պահեմ, Միջիթար սպարապետի տիպարն ալ, ոչ թէ անպայման պարզացուցած

էին, այլ ազգակի թեքեցուցած՝ շեշտը դնելով զգացական, սիրային-սեռային հայրենի վրայ, քան իսկական էութեան, հայրենասիրական, առասպելական տիպարին վրայ: Ըստ խանգավոր էի, եւ երբ Ապրիլին Հայաստան էի...

— Իսկ Ապրիլին էստեղ եղե՞լ ես:

● Այո, երբ Ապրիլին ես էի, այս գրծով կարծիքներ փոխանակեցինք կարգ մը մտաւորականներու հետ: Եւ հետեւեցին մեր շրջանակի մտաւորականներուն ա՛յն մտածումը, թէ մինչեւ քանակաբանական փոխանակումներու «Միութեամբ սպարապետ»ը այնքան ազատագրեցաւ, որ քոյլ կու տայ մեզի ըսելու, թէ «Միութեամբ սպարապետ»ը հայֆիլմի խաղացանկին վրայ յիշատակութեան արժանի գործ մը չէ, ինչպէս է «Նահապետը», որ բոլորովին տարբեր քան է:

— Այդ ես, որ ես ասում եմ, նոյն Նըշանկէտին, նոյն կէտին խօսելը: Ինչո՞վ եմ ես գնահատում «Միութեամբ սպարապետ»ը: Թեմա է նա աստիճան հերթին, թեմատիկայը մը: Էդ ժամանակ Հիմնականում մեր թշնամին Պարսկաստանն էր: Սպարապետի, Միութեամբ սպարապետի կոխը Հիմնականում Պարսկաստանին հետ էր: Բայց էսօրուայ դրութեամբ, Պարսկաստանը, ինչ որ եղել է՝ եղել է, շատ է անցել, էսօրուայ դրութեամբ եթէ մենք մի թշնամի ունենք՝ դա թուրքն է: Իսկ դրան ֆիլմը շուտ էր տուել, Հիմնականում, ասեմք, կոխ է, ազատագրական շարժումը գնում էր թուրքերի դէմ: Պատմական ինչ-որ, թուում է, թէ ինչ-որ շրջանակ էր պատմութեանը, բառը բառին գերի չէր մնացել, այսինքն՝ ճակատը փոխել, ժամանակակից բան էր դուրս եկել էստեղ: Ժամանակը փոխել էր եւ շատ լաւ էր ստացուել:

Իսկ էլի եմ ասում, գնահատում եմ է՞դ ֆիլմը, է՞դ ֆիլմը՝ թեմատիկ առումով: Ինչո՞ւ: Հենց դա, որովհետեւ «Միութեամբ սպարապետ»ը էդ կէտին կը բախուի է, որ շատ կարեւոր կէտ է: Քիչ առաջուայ նաեւ զո հարցի պատասխանն է դա, որ ասում ես ուրիշ արդի դրութեամբ:

Ներ կան, եւայն, եւայն: Ի հարկէ կան, այսինքն՝ պարտադիր չի հասկաւ դրել: Եթէ ֆիլմ է լինում՝ նոյն կրակոցն է. «Նահապետ»ը ի՞նչ է անում. նոյնն է, նոյն նպատակն է, նոյն թիրախին է կը բախուի, նոյն նշանակէտն ունի, այսինքն՝ եղել է էս պատմութիւնը. ինչո՞ւ մոռանալ, էլի անդրադառնա՞նք էդ մոռացկոտութեան: Հիմա լաւ է, որ մենք ուզում ենք շփոթանալ, շփոթանալ Հիմա հերոսութիւնն է ոնց որ, այսինքն՝ էն ժողովուրդի բնագոյնին դրժողութիւնը, որը եղել է մոռանալ, մոռանալ, մոռանալ, մոռանալ փախից, անգործութիւնից, անհարութիւնից, չգիտեմ ինչից, ինչից, ինչից...: Զմոռանալ ոնց որ կոխ է, էսօրուայ շփոթացկոտութիւնը, յիշելը էսօրուայ կոխն է, այսինքն՝ ուրիշ բան չենք կարող անել մենք: Միայն թէ՛ ընդունել՝ զո պարտութիւնը, ընդունել՝ զո ցաւը, ընդունել՝ զո կորուստը, ընդունել՝ զո պարտութիւնը...: Նըշանից յետոյ ինչ որ կան, նրանից յետոյ ժամանակը կ'անի, եթէ դու ընդունում ես, ընդունում ես: Եւ որովհետեւ դու պարտուած ես, ուրեմն՝ զո մէջ դուն չես հաշուում պարտութեան հետ, ամէն ինչ արդէն մոլորւալ է, կամաց-կամաց զեղ նախապատրաստում ես, լիցքաւորում ես ընդդիմադիր կանգնելու, յաղթելու:

Մենք ընդունում ենք Հիմա: Յիշելով ընդունելը, որ պարտուել ենք, ընդունելը, դա մեծ բան է, իսկ երբ չես ընդունում, որ դու պարտուած ես՝ աւելի՛ քան պարտուած ես: Մոլոր առասպելներ շտեղծենք մեզ համար, էլի, չստեղծենք, թէ մենք հերոս ժողովուրդ ենք, սպրում ենք, ամօթ է, էլի, լեզուն ինկած է...: Փիւնիկի պէս զարթնում ենք, կանգնում ենք, վերածնունդ ենք, եւայն, եւայն: Ախր, դա խեղճութիւնն է, ընդունելը, որ կորցրել ես, ընդունելը, որ պարտուել ես, ընդունելը, որ խել' ես քեզանից, ընդունելը եւ ռիսկ' ընդունելը, վրէժով ընդունելը, ցաւով ընդունելը, զո կորուստը ընդունելը, եւ կամ՝ ի՞նչ նորմալ է, լա՛ւ է, էսօր դա պէտք

է լինի, էսոր ուրիշ բան չունենք անելու:

Էս Մայր Հայրենիքում, դուք մի քիչ աւելի առաջ կարող էք գնալ, էն ինչ որ երբեմն կատարւում է, երբեմն լսում ես, մարդիկ են դնացել, պատուիրակութիւն է գնացել, էս է եղել, ցոյց է եղել, բան է արել, ձեր իրաւունքը էդ տեսակէտից աւելի մեծ է, սահմանափակ չի, եւ բոլորովին չի մանաք, թէ մեզ նաեւ տուրիտ, հիւր էք գալիս, էն ինչ որ կատարւում է, էդ զեռպաններն սպանելը, եւայլն, եւայլն, եւայլն... Շատերը դիտեն ինչպէս են մտածում. ասում են՝ զրանից յետոյ թուրքերը վեր կը կենան, պոլսահայերին կը կոտորեն: Հէ՛րն էլ անխճած, թէ չեն կոտորի, ինչի՛ են ապրում էնտեղ, որ կոտորեն, էդ քանից յետոյ ինչի՛ են ապրում էնտեղ...

● Հիմա աչդ մասին պէտք չէ մտածեմք, արդէն ի՞նչը մնացած է...

— Իսկ եթէ էդպէս մտածեա, ո՛չ մի գործողութիւն չի կատարւում: Հետեւանք ի՞նչ է լինելու, արդէն, արդէն ոչ մի բանի ընդունակ չեա: Ես դրան էլ եմ համաձայն, զրանով մենք ի Հարկէ չենք յաղթի, զրանով թուրքիան չկործանուից...

● ...Նաւագագոյնը կը ցնցուի, նաւագագոյնը հանրային կարծիք կը ստեղծուի, նաւագագոյնը բառերը կը լիցեաւորուի:

— Ես գրան էլ եմ համաձայն, դա էլ եմ գնահատում, դա էլ է աշխատանք: Էդ էլ Սփիւռքը կարող է անել, ով ինչ կարող է՝ թող անի՛, պիտի անի՛:

● Երբ Կարօ Մասունիմ Հայաստան այցելեց, համդիպելու առիթ ունեցա՞ր իրեն:

— Ափսո՛ս. առաջին անգամ, որ եկել էր, ինձ այցելել էր, ես Մասնուայում էի, ուսանում էի: Երկրորդ գալուց, վերջը չեմ հանգիպել, էլի, շատ ցատում եմ: Զօրեղ մարդ էր, իր գրքից գիտեմ, «Սարբի ասլանից գիտեմ, Չաւուշի մասին գրեց, Գէորգ Չաւուշի: Վերջերս աղաներն էին եկել, ինձ մի բան էին թո-

ղել, իրա անտիպը երեւի, Կարօ Մասունիւ անտիպ գործերից մէկն է, ինքնահենապրական: Պարզում էր, որ Հրայր Դժոխքը իր քեռին է, մօրեղբայրն է: Աւելի շատ մօր մասին է, Աննա մայրիկի, քան Հրայր Դժոխքի, փոքրիկ, հարեւր էջանոց գործ է, սիրով կարդացի:

● Իր առիթով պէտք է ըսել, որ դրական գործ կատարեց Սփիւռքի մէջ, վերջը գրականութեան ալ մուրաւեցաւ: Իրեն գրագէտ՝ չեմ գիտեր ժամանակը ինչ պիտի ըսէ, բայց գրագէտը աւելի կարգւած հայրենի աշխարհի սէրը փոխանցեց քաղաք սերունդներուն:

— Այո՛, էդ էլ գործ է, էլի, գործ է: Գիտե՛ս, կոռուշ մարդը, ինչպէս էդ տիպի մարդն էր, ինչպէս որ Կարօ Մասունին էր, բոլոր ժամանակներում կուր շարունակում է՝ ձեւը փոխած: Ես մի մօրեղբայր ունէի, շատ հետաքրքիր, յուզիչ մի բան, յետոյ իմացայ: 17-18 տարեկանից Փիտայ է եղել, Իսրոն, Փեթարայ Իսրոն: Յետոյ, 27 թուականին աքորեցին էդ մարդուն, ամբողջ կեանքում կուրել է, կուրել է, կուրել է, եւ կաւ հստեղ, յետոյ, 27 թուականին աքորեցին որպէս կուրակ, որպէս թուրքերի դէմ կռուող: Կուրակ էր, չէ՞, լսի: Սկիզբը մեր զաղափարախօսութիւնն էր սխալ... Հիմա գիտե՛ս ինչքան բան է փոխուել, տխր, ինչքան բան է փոխուել, ինչքան բան ենք նուաճել...

● Ա՛յդ պատրուակով, քուրքերու դէմ կռուած ըլլալու՞ն համար:

— Յիդայ է եղել, լսի, իսկ Ֆիդային համարում էին գաշնակցական: Դաշնակցականը՝ անկասկածաւոր, թէ ի՞նչ է արել, ինչ չի արել՝ պիտի աքսորել: Փախաւ աքսորից, եկաւ: Զէ, ես կարծեմ չեմ շարունակի, թէ փախաւ-եկաւ, ինչ եղաւ-ինչ չեղաւ: Դա կարելու չի: Անգրագէտ մարդ է եղել: Ուրեմն, մի քանի տարի առաջ, մի մարդ էր ընտելւում մեր գիւղում, շատ խելօք մարդ էր, զրազէտ էր: Այս մարդը՝ Արամը, մի բան առաջ ինձ, ես ձայնազբաժնուեմ, մեկից մի մարդ էր: Ասում է, աքսորից, ասում է, Փեթարայ Իս-

րոն է՞ք տեսքը ուղարկել էր կնոջը: Ուրեմն, պատմութիւն էր գրել, իրենց ֆիզիկական կոխներէ, շարժումներէ, եւայլն: Ես ասի, թէ տսում ես տառերը սովորել էր էնտեղ, աքսորում, նոր էր սովորել, ասում է:

● Այդ պարագային, վերջը...

— Յիսուն-յիսուններկու տարեկանին աքսորել են, Չ՛ թուականին:

● Յիսուններկու տարեկանին:

— Էդբան տարեկանում, յիսուն տարեկանում աքսորել են նրան, նա հօր տարեկանին է եղել համարեա՛: Հէրս ու թանասուն թուին ծնուած է: 47 տարեկանին, իմ տարիքին աքսորել են Իսրային: 47 տարեկանին նստել, տառերն է սովորել աքսորում, երեք տարի նստել է, սովորել, մինչեւ փախնելը եւ նստել, որովհետեւ բանտարկուած է, որովհետեւ աքսորուածը ուրիշ բան չի կարող անել, նստել պատմութիւն է գրել: Բայց իր կոխը շարունակել է, տառերն է սովորել եւ նստել պատմութիւն է գրել, ուղարկել է էնտեղից: Էս կինը բերել է Արամի մօտ, էս մարդու, դրազէս մարդու, Երկրի մարդ, բայց դրազէս: Ասել է՝ Արամ, քեռի Իսրոն բան է ուղարկել, չդիտեմ, թէ ի՞նչ է ուղարկել, վերջրու: Էս մարդը տսում է, ոնց որ մարգարիտի հատիկներ ընեն, իրար ետեւից շարունած, էսպէս, հատ-հատ, սիրուն տառերով գրուած: Հասկանո՞ւմ ես: Աքսորի մէջ է՞ք մարդը շարունակել է իր կոխը: Ես ձանադրուած ունեմ մեր տանը: Զայնազրեցի: Աքսորուած էր, բայց իրա կոխը շարունակել է...

● Իսկ ընդհանրապէս Կարօ Սասունին...

— Այո՛, Կարօ Սասունին, էստեղ ինչ որ արեց, ինչ որ արել էր Երկրում, Երկրում էլ ահագին բան է արել, էդ էլ ահագին բան է արել. էստեղ ինչ որ արեց, եւայլն, եւայլն, նոյնն է արել, վերջը գնաց, ճակատը փոխուեց: Ժակատը փոխուեց միակ, ճակատը է՛ն էր, ինչ որ դու ասացիր, այսինքն՝ սերունդների փոխանցել ոգին, է՞դ էր ճակատը

միայն, է՞դ պիտի անէր եւ է՞դ արեց: Յարգելի մարդ էր, ի հարկէ:

● Իսկ «Ռանչպարների կանչը», որ հրատարակուեցաւ այստեղ, ի՞նչ ընդունելութիւն գտաւ:

— Մե՛ծ, բա՛րժր:

● Կարեւոր հարց մը կայ «Ռանչպարների կանչ»ին մէջ: Մեծ տոկոսով գրեթէ արտագրումն է Ռուբէնի յաշերում:

— Է՞դ ճիշդ է:

● Բայց համեմատութիւնը շատ է, ինչպէս կ'ըսեն...

— Ժիշդ է, բայց Ռուբէնի յուշերը աւելի մեծ են:

● Ինչպէս ըսի, կայ կարեւոր հարց մը: Պօղոսը «Բաղին»ի մէջ երեք յաջորդական յօդաւածներով անդրադարձաւ: Ձեռով մը ո՛չ թէ ամպայմամբ բանագործութիւն է, այլ Դաշտեցը եղածին պէս, գրեթէ տառացիօրէն եւ գիտակցաբար օգտուած է Ռուբէնէն, ինչ որ, իմ կարծիքով, քիչ մը շատ-շատ է...

— Դա խանգարող հանգամանք չի...

● Հաւանաբար մտեւ անոր համար, որ եթէ իբրեւ Ռուբէնի յաշեր տպուէր՝ լոյս տեսնիլու բացարձակապէս կարելիութիւն չկար: Բայց իբրեւ Դաշտեցի վէպը տպուելով՝ ամբողջ սերունդ մը կարելիութիւնը ունեցաւ ճանչնալու մեր յեղափոխական շարժումը: Եւ ըսիք, թէ ժողովրդականութիւն գտաւ այստեղ:

— Ձէ՛, բայց բոլոր դէպքերում Ռուբէնի յուշերը եթէ երբեւէ չտպուեն, եթէ երբեւէ չտպուեն...

● Այդ մեր յեղափոխական գրականութեան հրաշալի՛, երաշալի՛ գանձն է: Ուրիշ բան է, մեր ամբողջ յեղափոխութեան ակտարանն է, այդ եօթը հատաբները...

— Մեծ գրող է Ռուբէնը, մե՛ծ գրող:

● Իր այդ անպակաս լեզուով:

— Կոտտան Զարեանի «Տատրագամի հարաբ», էդ պոեմը...

● Ռուբէնէն օգտուած է:

— Ո՛չ թէ իրմէ օգտուած է, դա «Հայ-

րեմիֆոսում ստացել է իբրեւ յուշ, էդ ժամանակում: Դրանից կոստան Ջարեանը լիերցրել եւ պոեմ է դարձրել. սա օգտուել է, վերջին հաշուով...

● Օգտուել քառք ճիշդ չէ:

— Ինքն իր ձեռով մատուցել է դրականութեանը:

● Համաձայն եմ:

— Վերջին հաշուով, հայ դրականութեան, մեր պոեզիայի շողողուն դործերից մէկն է «Տարազումի հարսը», հանձարեղ դործերից մէկն է: ...«Հայոց դաժամ լեռներում քայլում էին աստուածները գայլաբան»:

● «Մակար Ժերմին պիտեմ արեց ու մտաւ երկիմբ»:

— Սա աստուած է. «Մակար Ժերմին» — ասում է, — արեւմտեան համեմատ զնաց երկիմբ: Աստուած էր, էլի, աստուած էր, եւ երկրի հետ նրան կապում էր տրեխները, ընդամենը: Տրեխները հանեց՝ եւ զնաց երկիմբ:

● «Եւսը լեռան վրայ» վէպը ամբողջ կարդացած ես: Առաջին տպագրութիւնը կարդալու պատեհութիւնը ունեցած ես:

— Զէ, երկրորդ տարբերակն եմ կարդացել:

● Բայց ներկայումս այլ արդէն զօրաւոր գործ է, հակառակ իր ազաւազումներուն:

— Կոստան Ջարեանը ընդհանրապէս հետաքրքիր մտածողութիւն ունի: Դա արդէն մեծ գրող է, մեծ գրող: Ընկալաւ որ, եթէ Դաշտենցն էլ օգտուել է Ռուբէնից՝ ոչինչ: Կարեւորը դիտե՞ս ինչ է, երեւոյթը, երեւոյթը էլի գալիս ենք, նոյն կէտին ենք կրակում, հասկանում եւ, նոյն կէտին:

Շատ բան եղաւ, վերջին տարիներին շատ-շատ բան եղաւ: Մկսած երգերից, ժողովրդական երգերը, որ երգում ենք, երբեւէ դիտե՞ս ինչ կայ, մեր ժողովրդական երգեր երգելը, արեւ, շատ բան է փոխուել, շատ առաջ ենք դարձել: Մկի՛ղն էր ռիալ, էլի, սկի՛ղն էր սըխալ էս մեր զաղափարախոսութեանը,

սպո՛ւշ, սպո՛ւշ բաներ էին, զեկավարներն էին, որ շահակացան, թէ ի՞նչ է հարկաւոր անել, էլի, դադրած, եւայլն, եւայլն, էս ժողովուրդը փրկուելիս, կոտորումից, եւայլն, եւայլն... Բայց էս ժողովուրդին ոգի՛ է հարկաւոր, իր երգ տալն է հարկաւոր, իր պատմութիւն տալն է հարկաւոր, իր եսականութիւնն է հարկաւոր: Վերջին հաշուով, էս ժողովուրդին, հիմա եթէ ես յանկարծ պատմաբան լինէի — կազմում են, չէ՞, ընտրանի, ընտիր երկեր են կազմում յանկարծ, հայ դրականութեան անցած ժամանակներից, խորքերից, մինչեւ հիմա ընտիր երկեր են կազմում յանկարծ, բանաստեղծութիւնների ընտիր երկեր, արձակի ընտիր երկեր, եւայլն, — եւ կը կազմէի պատմութեան, մեր անցած պատմութեան ընտիր երկեր, հատուածաբար, եւ բոլորը հերոսական, էն հերոսական դրուագները, որ մեր պատմութեան մէջ փայլատեղում են...

● Սա հիշաշարի, հիմնադրի հարստութիւն մըն է ժողովուրդի մը համար:

— Եւ կը կազմէի էն դրուագները...

● Որոնք առանցքն են հանդիսացած պատմութեան:

— Եւ ժողովուրդի ինքնասիրութիւնը կը շարունակէ, էն՝ որ ժողովուրդին մէջ ամբողջութեամբ է ինքնապատկանութիւն, որ ինքը հերոսական անցեալ է ունեցել, որ ինքը սպանել է, որ ինքը տիրել է, որ ինքը կոտորել է, որ ինքը դիմադրել է, որ ինքը չի մեռել, որովհետեւ մեր ըստ պատմութեան յետոյ էլ յաղթել է... Բայց չարարութեան, Մամիկոնեանը, Վարդանանց, Աւարայրը, որ չարարութեան, Աւարայրը պայծառ կէտերից մէկն է մեր պատմութեան, չէ՞, եւ նման, նման դրուագներ, նման ճակատամարտներ, Սարգսապատի նման, Վարդանանց կոտորման, էսնեց բաներ պիտի մտքածուծ իրար յետեւից, եւ մոնթաժելով իրար յետեւից՝ ներկայացուի որպէս ժողովուրդի պատմութիւն, եւ ժողովուրդը սրանով, սրանով առնականանաւ, ինքնապատկանութիւն ձեռք բերէր, որ ինքը էսպիսի պատմութիւն ունի: Մեր պատ-

մութիւնը էն չի, ախր, ինչ որ մենք... Մեր դպրոցներում պատմութիւն չկայ, հայ ժողովուրդի պատմութիւն չեն տալու կարգին: Ողբալի՜ վիճակ: Փիղա-յական շարժումը, գիտե՞ս ինչ կայ, վերջին հաշուով, յանկարծ դալիս է, որ տա-սը հոգով մի բանակի դէմ յարձակուել, բան են արել, յաղթել են: Թող պարտը-ւեն, բայց յարձակուել են, մեծ բան է: Էսենց բաներ պիտի լինին: Ժողովուրդը, հայ ժողովուրդը հերոսական պատմու-թեան կարօտ է, հերոսական, ի՞ր պատ-մութեան, ի՞ր դրուագներին կարօտ է, որովհետեւ ինքը ուղում է, որ ինքը ի-րօք, հենց խօսք է, էլի, որ մենք հերոս ժողովուրդ ենք, մենք չենք ապացու-ցում, որ մենք հերոս ժողովուրդ ենք...: Գալիս է տեղը, յանկարծ, գլուխ-նեւ կախ, Ապրիլ 24ին գնում ենք Մի-ծեռնակաբերդ: Գլուխներս կախ, մենք չենք կարող պարծենալ, որովհետեւ պարծենալու տեղ չի: Իդ ժամանակ մեզ-նից ո՛չ թէ արգելեն, մեզ ասեն ցոյց ա-րէք, մենք ի՞նչ պիտի անենք. մենք պի-տի ասենք՝ մեր հոգերը տուէք...: Տը-խո՛ւր բան, հոգերը գոռալով չեն տալ, տխո՛ւր բան: Միլիոն հոգի էդ օր գնում է, էս բոլորը ո՛չ մէկը չի կարող անել: Ով գնում է՝ էդ օր չի կարող ուրտի բան անել, էդ պահին ուրախ սուլելով գնալ: Էսենց վերցնում են, մի հատ ծաղիկ են վերցնում, էսենց, ով էլ չի կարող աղիւ-րել, գիտաւոր տխրութիւն է բերում, արուեստական տխրութիւն է բերում գէմքին, ումն էլ զգացում կայ, թէ երբ պիտի տխրի, ով մի քիչ աւելի պիտի տխրի, պիտի ճշուած գնայ, շատ տը-խո՛ւր պիտի գնայ, ճշուած, պարտը-ւած պիտի գնայ, էսենց գնայ, գնայ, որ մեռելներին սպանել են, մէկուէկս միլիոն մարդ թաղել են, էսենց, էսենց, էսենց, էսենց...

Լաւ է էնքան, որ յիշում են. էսքան բան: Բայց տխո՛ւր օր է, ահաւո՛ր տը-խուր, պարտութեան օր է, պարտու-թեան տխուր, էսենց, էս ինչ գիտեմ...: Ստորագրապատը, Ստորագրապատը ա-ւելի մեծ արժէք ունի, ինչ որ տեղ էդ համալիրը, որ տուեցին: Յետոյ, գի-

տե՛ս, որ ես մասնակցել եմ բացմանը: Ժողովուրդը ուրիշ էր, ժողովուրդը դը-լուխը տնկած էր, ցի՛ց, յոխորտում էր, ոչխար էին բերել, մորթում էին, բան անում, պարում էին, չրա՛խկ, «Մեմֆ անկեզ զիմուր եմֆ, առամօյն վիմակ», էս էին երգում, էն էին երգում, բան էին ունում, պարում էին, չրա՛խկ, չրա՛խկ, չրա՛խկ: Էդ բարձունքի վրայ էր, Թուր-քեան հողա էր տալիս, էս էին անում...: Իսկ էստեղ, գլուխդ գնում ես կախ: Պի-տի լինէր դա, պիտի լինէր...: Բայց դը-նալով, գնալով, գնալով, ինձ թւում է՝ մի օր պիտի երգելով գնալ Միծեռնակա-բերդ: Եթէ մենք նրան պիտի չհասնենք, ամէն տարի պիտի խոնարհուած գնանք՝ սա մեզ կը ստորնացնի, սա մեր հերը կ'անիծի: Ինձ թւում է՝ էդպէս է: Սար-դարապատը աւելի մեծ կատոյց է՝ ողո՛ւ առումով: Աւելի մեծ կատոյց է:

● Ես այն տպաւորութեան տակ եմ, սիրելի Մուշեղ, որ Հայաստանի մեր մը-տաւորակները առհասարակ շատ քիչ բան գիտեն Սփիւռքի Ե՛ւ գրականու-թեան, Ե՛ւ իրականութեան մասին:

— Ովքե՞ր...

● Հայաստանի գրագէտները:

— Նայա՛ծ:

● Այն բոլոր կացութիւնները, այն բո-լոր հագեցիմակները, ընկերային, քա-ղաքական, մշակութային, կրթական այն բոլոր պայմանները, որոնք Սփիւռքին պարտադրուած են, ծանօթ չեն հայրենի մտաւորականութեան: Այսօր գրախա-նութ էի: Կը փնտռես սփիւռքահայ օտւէ գրողի անուն: Ադրարեանէն, Նորունիէն կամ Յակոբ Գույումեանէն մը անդին չ'անցնիր, այս ալ անարդարութիւն է, գիտե՞ս:

— Անարդարութիւն է, էդ իրօք էդ-պէս է: Ես քեզ ասեմ: Մի լաւ բան է սկսել հրատարակատունը, որ լաւ գը-լուխ չի բերում: «Սփիւռքահայ գրակա-նութիւն» վերտառութեամբ մի շարք: Բայց դանդաղ է գնում դա, դանդաղ է գնում վերջին հաշուով:

● Երկու օր անաջ, վարդգէս Պետրոս-
եանի բով էի. հոն հանգիստեցանք տիկին
Գոհարին եւ խօսեցանք Օշականի մասին:

— Օշականը ես նախարան արեցի,
պլանաւորեցի, երբ աշխատում էի հրա-
տարակառնում:

● Անկախ քերի բլալէն՝ սկիզբն է.
ես այդ մասին խօսք չունիմ բնիք, ու-
րովհետեւ ե՛ւ ինձի համար արգար չէ
Օշականին մասին կարծիք յայտնելը, ե՛ւ
հայ գրականութեան հաշւոյն: Իմա-
ցայ. որ կայ ծրագիրը Օշականը ոգեկո-
չելու մեծ հանգիստաբեմն մը, պետա-
կան չափանիշով, ծննդեան 100ամեակին
առիթով: Բայց երեսակայէ, մայնիսկ
չէին մտածած Օշականի կիմն ու տղամ
հրաւիրելու մասին:

— Տղան որան՞դ է ապրում Օշականի:

● Ֆիլատելֆիա: Բարեբախտաբար
տիկին Գոհարը այնքան ազնիւ կին մը
երեւցաւ ինձի, որ...

— Ո՞վ...

● Տիկին Գոհարը, եոմ՝ ուր իրարու
հանգիստեցանք, Գրողներու Տունը:

— Հա՛, տիկին Գոհարը, Գոհար Ա-
ճեմեանը:

● Շատ սիրալիր էր եւ ինձմէ խնդրեց,
որ վախճան հասցեն գրկեմ իրեն եւ...

— Վա՛հ Օշականը, լսել եմ, տղան է
Օշականի:

● Ես խստացայ հասցեն շրկել, որ-
պէսզի գիցեմ հրաւիրեմ ի պահանջել հար-
կին: Կը կարծեմ, որ մտնա ծեօք մը շատ
գեղեցիկ, շատ ազնիւ բան մը կրնայ ըլ-
լալ:

— Հոկտեմբերին... սեկտեմբեր կան,
բաժանմունքներ կան Գրողների Միու-
թիւնում. արժակի բաժանմունքի վարի-
չը երէկ ինձ ասաց, որ Հոկտեմբերին
պէտք է երեկոյ կազմակերպուի ի պատիւ
Օշականի եւ ինձի խնդրեց, որ ես ե-
լոյ՞թ ունենամ. ես անպայման ելոյ՞թ
կ'ունենամ: Օշականի դրքի առիթով մեծ
հանդիսութիւն պիտի լինի մեզ մօտ:

Համաստեղին էինք ուզում. կազմա-
կերպեցինք, պլանաւորեցինք, ես ու



ԿՐՈՋ ԵՒ ԶԱԽԱՆԵՐՈՒՆ ԷՆՏ

Վարդգէսը պայմանաւորուեցինք, որ ես
պիտի կազմեմ, ինքը պիտի առաջարկէ
դրք: Ինչ-ինչ պատճառներով դուրս մը-
նաց, բայց շուտով լոյս կը տեսնի, Հա-
մաստեղն էլ լոյս կը տեսնի: Աղինը գրող
է, աղինը գրականութիւն է, աղինը, բո-
լոր կուսակցութիւններէջ վեր, ո՛չ մի
կուսակցութեան չի պատկանում իրա-
գրականութիւնը, ո՛չ մի: Դու բարձր,
մեծ, մեծ գրականութիւն է: Ախոս՝ս,
կիսատ մնաց, բայց կ'ըլնի, կ'ըլնի:

Ասում եմ շատ լաւ ժամանակ է, է-
սօր շատ լաւ ժամանակ է, գալիս է: Էն
ինչ որ ասենք՝ եղել է, մենք ակահատես
ենք եղել, կամ ապրել ենք, կամ լսել
ենք, էն ինչ որ ապրել են մեր ծնողնե-
րը, ինձից աւագ սերունդը, ուսով որ
համեմատում եմ, սնց որ սար ու ձոր ըլ-
նի, էլի:

Ես ու գու նստել ենք էստեղ, է-
սենց, ազատ, անկաշկանդ. երբեք գի-
տե՛ս ինչ էր. եթէ յանկարծ ես ուսանող
էի յիսունին, յիսուներկուսից յիսունե-
թը, միշտ Ստալինի սատկելը, յիսունե-
րեքին, որ սատկեց: Դրանից յետոյ էլ

վերջը ահադին վատ օրեր եղան։ Ձէր կարող, փողոցով եթէ յանկարծ մէկը հանդիպէր քեզի, հարցուփորձ տնէր, ասէր ո՞վ ես, ես ասէի, թէ ծնողներս սասունցի են, կողքիցս պիտի էնպէս նայէին ինձ՝ ոնց որ, ինչ ասեմ, էլի, ոնց որ Փաշխատի, հասկանում ես, թշնամիի էսպէս եղաւ, ժամանակը էդպէս էր, բայց հիմա, փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ, շատ բան է փոխուել։ Եւ յետոյ՝ էն մեր սկզբի խօսակցութիւնը, կցկատարային խօսակցութիւնը, որ եղաւ, ուրիշ որ էսօր եկել են քեզ մօտ, ելոյթ են ունեցել, էդ պատմաբանները, նրանք չդիտեմ, թէ ինչ նպատակով են եկել։ Եթէ եկել են ձեզ, Դաշնակցական կուսակցութեան անդամներին գէպի մեզ դրանելու՝ նրանք պիտի չիտակ խօսէին։ Եղել են սխալներ, եղել են թիւրիմացութիւններ, եղել են աշխնէ, եղել են այն-իսկ, ինչու՞նչ։ Յետոյ, կուսակցութիւններն էլ կարող էին կոտել։ Պիտի լինէր դա դրանց մէջ։ Կուսակցութիւնները չենց դրա համար են ստեղծուած, որ իրար դէմ կուեն եւ կուեն ո՛չ թէ կուուելու համար, այլ՝ ճշմարտութիւնը բացելու համար, ճշմարտութեան հասնելու համար։ Եղել են էդ կուսակցութիւնները, ընդամենը էդ կուին է եղել ճշմարտութեանը հասնելու համար եւ չեն հասել, չեն հասել, ցաւօք սրտի։ Եղաւ, եղաւ պահ, դա յեղափոխութիւնից յետոյ էր, երբ Ռուսաստանում լաղթեց յեղափոխութիւնը՝ էս բոլոր կուսակցութիւնները պիտի միանային իրար էդ ժամանակ եւ ասէին՝ մենք Ռուսաստանի մի անբաժանելի մասն ենք։ Երկիրը դրաււած էր, Արեւմտեան Հայաստանը ամբողջը վերցուած էր, միացնէին, նրանից յետոյ Աստուած իրանց հետ, ուզում են թող ասանձնացնեն, ուզում են թող միանայ։ Վա՞ս կ'ըլնէր, որ էսօր ամբողջ Հայաստանը մի մեծ հանրապետութիւն ըլնէր, հզօր հանրապետութիւն, 300 հազար քաղաքակրթ քիլոմետր՝ 30 հազարի փոխարէն։ Ունենայինք մի հատ հանրապետութիւն։ Վատ կ'ըլնէ՞ր։ Ընդհանուրը էդ ժամանակ պէտք էր 18 թուականին, ինչպէս որ Լենինն ասալարկեց,

միանային իրար։ Դիւանագիտութիւն չունենք մենք։ Թուրքերին մենք ատում ենք, բայց թուրքերի դիւանագիտութիւնը ունենայինք մի օր, մի ժամ՝ Երկիրը փրկուած էր։ Չարեցինք էդ բանը։ Այսինքն՝ էդ կուր ճշմարտութեան շրջանից մեզ, ցաւօք սրտի, ընդամենը կուր եղաւ կուրի համար, ոնց որ էդպէս եղաւ։

Եղաւ մի լաւ բան։ Եթէ յանկարծ Դաշնակցական կուսակցութիւնը չկարողանար մի փոքրիկ Հանրապետութիւն ստեղծել, պետութիւն, անկախ մի պետութիւն, որ զոյութիւն ունեցաւ երկու տարի կամ ավելի պահա՞ մենք այն ասան հանրապետութիւն կոչուելու իրաւունք չէինք ունենայ, մենք կը լինէինք մարզ, ավտոմատ հանրապետութիւն։ Ռուսիան եւ սահմանադրութեամբ միջուկից պահաւ ժողովուրդ ունեցողը, ազգաբնակչութիւն ունեցողը ատանձին հանրապետութիւն լինելու իրաւունք չունէր՝ եթէ նա պետութիւն չէր։ Իսկ քանի որ կար էդ պետականութիւնը՝ մենք դարձանք ատանձին հանրապետութիւն։ Ահա էն մեծ բանը, էն ինչ որ կատարեց Դաշնակցական կուսակցութիւնը եւ իրաւ պետութիւն ստեղծեց, ասենք թէ, էնքան պետականութիւնից զուրկ, վեց հարիւր տարուց յետոյ մի փոքրիկ պետութիւն։ Յուզի՞չ մի պետութիւն։ Որ Սիմոն Վրացեանը փէշը բռնած ման էր գալիս գաղութներում, հայ գաղութներում, Ռուսաստանի տարածքներում, Նախիջևանում, Բանում, եւ պիտե՞է էր հաւաքում, ոսկի՛, նուիրատուութեամբ, որ պիտե՞է լինի։ Էսպէս ստեղծուեց։ Բայց դրանից լաւը կարող էր լինել, եթէ նրանք լսէին Շահումեանին էնտեղ։ Շահումեանը եկաւ Թիֆլիս եւ ասալարկեց... Ախր, էն ժամանակ Դաշնակցականներն էլ միատարր չէին։ Կար Դաշնակցական Արեւելահայ Բիւրօ, կար Արեւմտահայ Բիւրօ, իսկ Վանի Դաշնակցական Բիւրօն, Արամ Մանուկեանի, Փաշայի ղեկավարութեամբ, ո՛չ մէկին չէր ենթարկւում։ Այսինքն՝ ո՛չ մէկի հետ չէր։

Երեք հատ Բիւրօ կար։ Արեւելահայ

Դաշնակցական Բիւրոն Շահումեանին չընդունեց, Արեւմտահայ Դաշնակցական Բիւրոն ընդունեց, ուսաց՝ համաձայն եմ, յայտարարեմք, որ Ռուսաստանի մի մասն է։ Գրաւուած էր արդէն, ուսական բանակը կարիւնում էր։ Միացնենք, պրծաւ զնաց։ Զլսեցին, մէկ յղարձան։ Վերջը, դա շատ խառը ժամանակ էր, մենք չգիտեմ ի՞նչ կ'անէինք այն ժամանակ, մենք հիմա էսենց խօսում ենք, բայց մենք էլ չգիտենք, ես էլ չգիտեմ ի՞նչ կ'անէինք, ես ի՞նչ կ'անէի։ Կարող է, ես ինչ գիտեմ, երբեմն դառնում ես հենց փաթալիստ, ասում ես՝ ճակատագիր կայ, էլի, կարող է էս էր մեր ճակատագիրը, էսենց պիտի լինի, ես ինչ գիտեմ... Արի խմենք մեր ապագայի կենացը։

● Քիչ առաջ, զիս զարմացնող տեսակետ մը յայտնեցիր, երբ ըսիր, որ Վարուժանը ասելի կնուս, ասելի արուեստագետ քանաստեղծ է, քան Ուլմիսկ Նարեկացին։

— Ոնց որ կորեկի պարկ լինի, կորեկով լցուած, ասենք ծակ ես...

● Նարեկացիի՞ պայազային։

— Այո՛, Նարեկացիի պարագային։ Ու էդ անցքից իրար յետեւից դուրս են դալիս, իրար յետեւից, շարունակ շարան, էստենց մի բուռ կորեկ կարող է դուրս դալ։ Ընդունենք, պատկերներն են, բայց ազգունքները նոյնն են, բոլոր պատկերներին ակունքը մէկ է, միայն թէ՛ Վարուժանի իւրաքանչիւր պատկեր ատանձին ծնունդ է, իսկ Նարեկացուն՝ մէկը միւսին է ծնում, մէկը միւսից է ծնում, դա հանդիստ է։ Դրան չի հետեւում, Վարուժանը զրան չի հետեւում, Վարուժանի պատկերը կարող էր տասը պատկեր իրար յետեւից ծնէր, բայց մի պատկերը ատանձին մի ակունքից է ծնում, չզօր բանաստեղծ է, մեծ բանաստեղծ է։

● Մամաւանդ իր «Հացին երգը»։

— Բա որ գինու երգը գրէ՞ր։ «Հացին» երգը, ինձ թւում է, նրա համար նախապատրաստական ինչ-որ մի բան էր, գինու երգը գրելու համար։ Անցորդ է,

չնայած, որ ծրագրային բան էր դա, ջերմ, բայց Վարուժանի էութիւնը հենց գինու էութիւնն է, որ չզրուեց։

● Որ «Հարճ»ին մէջ հրաշալի ձեւով կը զրսեւորուի։

— Հա՛, «Հարճ»ը։ Բայց գինու երգը չքեղ չտեսեմ, էնպիսի մի բան պիտի լինէր, էնենց ակեկոծ, էնքան հեթանոս, էնքան բուռն, էնքան խելառ... Պատկերացնելու բան չի։ Վերջին հաշուով, Վարուժան Դաւթեանը ուզեցաւ, էլի, Վարուժանի շարածը անել։ «Դիմու երգը» գրեց, լաւ է, բաւ շարք է, բայց ուրիշ կ'ընէր, եթէ յանկարծ էգ մտայղացման տեղ՝ ինքը կարողանար իրականացնել էդքան բան։

Մեծ բանաստեղծները շատ ունենք, շատ։ Աշխարհի մասշտապով, չափով, ո՛չ թէ մեր ձորի՝ Հայաստանի։ Բայց էդպիսի արձակագիրներ չունենք, աշխարհի մասշտապով բունաստեղծները շատ ունենք՝ Դուրեանից սկսած, Մեծարեցից սկսած, Նարեկացու շրջանից։ Նարեկացին, որ էսօր շատ ժամանակակից է, ուսուցիչն է թարգմանում՝ յանկարծ երեւում է, որ էսօրուայ ամենաժամանակակից բանաստեղծն է, անգլերէնի է թարգմանում, անգլիական ամենամեծն եւ վերջ։ Վերջապէս, մեր շրջանից է։ Դուրեանը, Մեծարեցը, Թէքէեանը, Վարուժանը, Սիւսանթոն։ Գալով արդէն մեր արեւելահայ բանաստեղծներին...։ Երբեմն վատ բան է լինում, գիտե՞ս ինչ է լինում, էնենց խանդ է առաջանում մէջս յանկարծ, որ քիչ ենք լիւում Վարուժանին, դէպքից դէպք, ծնունդից ծնունդ, գրանով մենք կ'աղքատանանք, ասիւ։ Երկու տող չգիտեն, ինչու։ Վերջին հաշուով, ոչ թէ հայ բանաստեղծ, այլ՝ արեւելահայ կամ արեւմտահայ բանաստեղծ։ Էս էլ միշտ հիմա չի մտնում գլուխ, չի՛ մտնում գլուխ։

Եթէ ես յանկարծ բանաստեղծ ըլնէի ու գրէի, կը գրէի, ասենք, իր բանաստեղծութիւնը, նոյն բաներով... Ըրը... Ին բանը... Բանաստեղծութիւնն է, որ

ուղում եմ յիշել, բանաստեղծութիւնը, «Ընդ եղեգան քող քոց ելաներ, Ընդ եղեգան քող սիրտս ելաներ»:

Վերնագիրն եմ ուղում յիշել. «Ընդ եղեգան քող քոց ելաներ» ասենք, Ես չեմ կարողանում, օրինակ, Հիմա սա թարգմանել արեւելահայ լեզուի: Եթէ ես էսօր բանաստեղծ ըլնէի, էսօր ապրէի ու գրէի, էսօր ապրէի ու գրէի էդ բանաստեղծութիւնը, ես պիտի էլի գրէի՝ ո՛չ թէ եղեգան, որի փողոց քոց էր ելնում, այլ՝ «Ընդ եղեգան քող քոց ելաներ»: Սրան ի՞նչն է արեւելահայ կամ արեւմտահայ: Սա դարարեան դարձրած չէ՞, թափո՛ւ, պի՛նդ, առնական, արքայական մի լեզու է, որ ո՛չ արեւմտահայ է եւ ոչ էլ արեւելահայ. «Ընդ եղեգան քող քոց ելաներ»: Եթէ Հիմա ես էսենց գրեմ, յանկարծ ես գրէի էդ բանաստեղծութիւնը, էդ բաներով գրէի սա տողը, ո՛վ կարող է ասել, թէ սա արեւմտահայ լեզու է: Բայց յանկարծ, այնպէս է ստեղծում, որ ասում ենք արեւելահայ պոեզիա, արեւմտահայ պոեզիա. հա՛յ պոեզիա է դա:

Գիտես, ես էդ երկփեղկաւծութիւնը չեմ կարող ընդունել, մենակ մի բանի...

● Սանմանի՞ իմաստով:

— Մի բոսէ, ո՛չ, ո՛չ, ո՛չ: Էսօրուայ զրութեամբ կարող եմ էդ երկփեղկաւծութիւնը ընդունել ի շահ ինձ. գիտե՞ս ինչի համար, եթէ մերժում եմ, այսինքն՝ ո՛չ թէ մերժում եմ, էդպիսի բան չկայ, բայց էն չի՛ ինչ որ, ասենք, վերարեմոնսն է, վերարեմոնսն է թուամանեանի նկատմամբ, Իսահակեանի նկատմամբ, Տէրեանի նկատմամբ, Նոյնի՛սի... Յակոբ Յակոբեանի նկատմամբ: Էդ վերարեմոնսն չի՞, էդ գէպում, իմ մօտ կիրք է առաջանում, ասելի կիրք է առաջանում զնալ դէպի գրանք, դէպի արեւմտահայ պոեզիա: Էդ կիրքը, էդ ունեցիւմ, էդ հակադարձ ունեցիւմ, էդ հակադարձ ունեցիւմ է առաջանում մօտս, բայց դա...

● Տակաւիմ անդիմ կայ Սարափեանը:

Սարափեանին մասին խոսող չկայ: Կոստանդնուքը յիշող չկայ:

— Ձկա՛յ:

● Գիտե՞ս ինչ մեծ բանաստեղծ է Սարափեանը:

— Բայց Ջարիֆեանի՞ն ով է յիշում:

● Ջարիֆեանը տակաւին պիտի քսեմք, քէ...:

— Ձէ: Սա վերաւորական է:

● Ի՞նչ ընեմք: Այս է մեր ազգին վիճակը: Ճակատագիր:

— Դրա համար էլ ազգ չենք դառնում, դրա համար էլ ազգ չենք դառնում, դառնում ենք արեւմտահայ, դառնում ենք արեւելահայ, դառնում ենք լոռեցի, դառնում աշտարակեցի, դառնում ենք ոտսունցի, դառնում ենք ապարանցի. ընդամենը հարկաւոր է դառնալ հայ, հայ: Թէեւ շատ հանգիստ բան է, բայց պարզաւոր է, որ շատ էլ դժուար բան է: Էդ ինչի՞ համար էդպէս, էդ մեր հերոսներն էլ չէ՞: Ինչ ինչ ենձ համար ցուէ, յանկարծ լոռեցու համար կարող է դա ուրախութիւն լինի: Եղա՛ւ:

● Լաւ, սիրելիս: Ամէն ինչ վախճանումի կարծեմ: Այսօրուամ այս ազուր, ազուր առիթին համար շնորհակալութիւն կը յայտնեմ: Անծանօթներ չէիմք, բայց...

— Դու ինչպէ՞ս ես գնում:

● Թիֆլիսի վրայով: Թիֆլիս, Լեմինգկրաւ, Մոսկուա, Մոնթեալ:

— Հա, Պէյրուսի չես գնալ: Ես պիտի ասէի, տղերքին բարեւ տար:

● Բայց անդայման պիտի գրեմ տըղոց: Մէկ շաբաթէն Պոզոսը պիտի գայ մեր մօտ:

— Մնապեա՞նք: «Ես այդ շունն եմ», հը՞:

● Հիւսիսային Ամերիկայի եւ Գամատայի մէջ Օշականիմ 100ամեակը պիտի տօնենք: Որքան, որքան լաւ է, որ Օշականիմ կ'նգեկոչուի Պոզոսով, որ Օշականի ամէնէն քաջածանօթ մեկնարաններէ մէկն է:

ԳՊ

Մ Ա Հ Շ Ե Ի Թ Ա Ղ Ո Ւ Մ Ը

Օրը Զորեղաբեր էր։ Պէտք է հեռաձայնէի Սօս Սարգսեանին, յիշեցնելու համար, որ այդ գիշեր մեր մօտ պիտի հաւաքուինք։ Ներկայ պիտի ըլլային բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեան, նկարիչ Յակոբ Յակոբեան, գրողէտ Մուշեղ Դաւոյեան, դերասան Լեւոն Թուխիկեան, նկարիչ Արտաշէս Յունանեան։ Հաւաքուելու առիթը քանի մը օր առաջ մեր կատարած որոնք էր։

Սօսին աղջիկը՝ Անուշիկը, հեռաձայնով յայտնեց, որ հայրը տունը չէ։ Գալարած է Թալին։ Զարմացայ։ Զէ՞ որ ինք Մուշեղին հետ մեր մօտ պիտի գար այս գիշեր։ Ի՞մ գարմանքիս վրայ՝ Անուշիկը աւելի զարմացած ըսաւ։

— Լուր չունե՞ս, որ Մուշեղը վերաւորուել է ու հիւանդանոց պառկած Թալինում։

Շօշեցայ։ Անհաւատալի էր, բայց Անուշիկը աւելցուց։

— Իր որորդական հրացանով ինքն իրան է խփել Կիրակի օր։

Ուրեմն, երբ մենք եղէգնածորի սարերուն վրայ կաքաւ կ'որոտայինք Ռազմիկին եւ Սօսին հետ, Մուշեղը ինքզինք վերաւորած է իր ծննդավայր Կաթնաղբիւրի մէջ։ Երեք օր առաջ կատարուած էր ուրեմն դէպքը եւ մենք գեռ լուր չունէինք։

Տասը օր առաջ Մուշեղին հետ միասին էինք նման առիթով մը։ Ունէինք նաեւ Գանատայէն Հիւրեր։ Երբ նոյն օրը խօսք բացուեցաւ որո՞ւ մասին, Մուշեղը հետեւեալը ըսաւ։

— Նոր հրացան եմ առել, ո՛չ թէ նրա համար, որ շատ եմ սիրում որորդաւորելը, այլ նրա համար, որ հայ տղաւորը պիտի հրացան ունենայ։ Իւրաքանչիւր հայ տղաւորը ունենայ իր սեփական հրացանը։



Զախէն աջ՝ Գ. Պապեան, Ս. Սարգսեան, Մ. Հիւրիկեան, Մ. Գալաշեան եւ համատեղայ իւրեր, 1940 Սեպտեմբեր։

Եւ որովհետեւ Կիրակի օր մենք որորի պիտի երթայինք, ուղեցիւք, որ նաեւ Մուշեղը դայ մեզի հետ։

Պատասխանեց։

— Տղայոց խօսք եմ տուել։ Միւս Կիրակի միասին Սեւան կը գնանք՝ վաղրի ազաւեր խփելու։

Թամազան Սօսն էր, մեր նահապետը, որ անմիջապէս առաջարկեց խմորովին երգ մը երգել եւ չեմ գիտեր ինչու յանկարծ գանատայինը սկսան երգել «Զարթի՛ր, լաօ՞ք երգը։

Մուշեղը շտկուեցաւ, յուզուեցաւ, պայծառացաւ, ու երգի աւարտին բաժակը բարձրացնելով ըսաւ։

— Այս երգը ե՛ս եմ յայտնաբերել ու տարածել։ Ուրեմն այնքան տարածուել է, որ նոյնիսկ Գանատայեանում էլ երգում են։ «Զարթի՛ր, լաօ, մըռնիմ քըզի»։

Եւ աւելցուց։

— Այսօր ես եւ Սօսը ժամադրուել ենք միքրոյի մօտ։ Երեւի տոալին անգամն են, որ երկու հայեր միքրոյի մօտ են ժամադրուում։ Աղջիկնե՛ր, տղա՛ք, հեշտ բան չի մեթօ կառուցելը։ Սա՛ էլ ա քաջութիւն։ Եկէք խմենք մեր ազգի

բազկի ուժի կենացը, որը կուրի ժամանակ զայն օգտագործի թշնամու դէմ, իսկ խաղաղ ժամանակ էլ՝ շինարարութեան մէջ: Մեզ մնում է հիմա կառուցել: Խմենք մեր ամբողջական հայրենիքի, մեր ազգի կենացը:

Երբ առի Մուշեղի վերադարձած ընթացի լուրը, անմիջապէս տուն դադի: Ընկերներս տիրորէն իրարու երես նայցան:

— Լուր ունի՞, — հարցուց Ժանոն: Ես առանց Մարտիկի պատասխանին սպասելու, ըսի.

— Այո, լուր ունիմ:

— Ոչ, լուր չունիս, — ըսաւ Մարտիկ, — Անոյշիկը նոր հեռագայնեց: Ամէն բան չէ ըսած քեզի...

Հոս արդէն սենեակը սկսաւ պարպընդուռնալ: Ես ալ միայն նստեցայ անկողնին: Ուրեմն...

Երկար լուսթիւն: Մինչեւ որ Արտաշէս Յունանեանը Գէորգի հետ ներս մըտաւ ուրախ-զուարթ, սակայն երբ տեսաւ մեր ամպամած հայնացքները, ուղեց դիտնալ մեր տխրութեան պատճառը: Մարտիկը, ամենայն դաժանութեամբ՝ ըսաւ ճշմարտութիւնը: Նկատիւ չը կարծես շանթահար եղաւ: Քարացաւ միայն:

Նոյն գիշեր ամէնքս իմացանք եղելութիւնը, որ նոյնութեամբ տարածուեցաւ ամէնուրեք:

Կերակի առաւօտ, երբ Մուշեղի ընկերները կու գան զինք արթնցնելու, որ որսի երթան, կ'ըսէ անոնց.

— Եղբօրս վրայ վատ երազ եմ տեսել: Տեսել եմ, որ եղբօրս տունը վառուում է: Պէտք է զննած եղբօրս մօտ, Թալին:

Կ'երթայ Թալին ու երբ կը տեսնէ, թէ ամէն ինչ կարգին է, խորոված կը պատրաստեն եւ կ'ուրախանան: Ժաշէն ետք, Մուշեղ իր նոր հրացանը կը փորձէ եւ ապա, հանգստանալու համար, կը նստի քարի մը, հրացանը՝ կողքին, խողովակը դնելով իր կողմը: Սիկարէթ մը

ծխելէ ետք, երբ կ'ուզէ տուն վերադառնալ, ոտքի ելլելու ատեն, հրացանը խողովակէն բռնելով՝ կը վերցնէ, օակայն զաւաղիւր ճիւղ մը մտած կ'ըլլայ ձգանին տրանքը եւ պատճառ կը դառնայ մահացու պայթիւնին: Փամփուշտի ամբողջ կապարը կը մխրճուի մախ կուրծքը: Անմիջապէս կը փոխադրեն զինք Թալինի մօտիկ հիւանդանոցը, ուր Կիրակի օրըւրէն կը խնամուի, բայց հակառակ մասնադէպ ու փորձուած բժշկներու դերմարդկային ճիգերուն, ներքին արեւմահոսութեան հետեւանքով՝ խեղդամահ կ'ըլլայ:

Մէկ օր Կաթնաղբիւրի իր հօրենական տունը պահելէ ետք, մարմինը կը փոխադրեն Երեւան, իր բնակարանը: Երբ մենք հասանք, արդէն հոն էին հարազատները, մտերմները, ժողովուրդը: Հսկայ բազմութիւն մը:

Մուշեղը պառկած էր խաղաղութեան մէջ եւ ջուրհի տխուր մեղեդի մը կը սաւառնէր օդին մէջ: Սգալիբրեհէն չատեր իրեն հետ կը յիշէին Սեւակի եւ Մինասի պատահած արկածները եւ կը հայհոյէին հայու մեր բախտին:

Ուրբաթ գիշեր, քանադասող չորսնեայ Յովհաննիսեանի տունն էինք ու պարզ էր, որ խօսակցութիւնը պիտի բնթանար Մուշեղի եւ անոր զրազեցութեան շուրջ: Ու երբ ըսուեցաւ, թէ վաղը իր մարմինը պիտի բերուի Գրողներու միութեան ճոնը, որպէսզի ժողովուրդը իր վերջին յարգանքը մատուցանէ իր սիրած գրողին, յանկարծ, Յովհաննիսեանի աղջիկը, տաղանդաւոր դերասանուհի Թամարը, անսպասելիօրէն ըսաւ.

— Վաղը զնամ Գրողների ճոնն ու մի լաւ տիրեմ: Այո՛, սիրտս տիրել է ուզում: Ինչքան ժամանակ է, որ չեմ տիրել: Կարծես կենսական բան է տըխրելը մեր ազգի համար: Կարծես յաճախ մենք նման մեծ վշտեր պէտք է ունենանք, որպէսզի կարողանանք ամրապնդուել ու գոյատևել: Իսկ եթէ դա էղպէս չի, ապա ինչո՞ւ այդքան մեծ եղեռներ կատարուեցին եւ արուեստի բընագաւառում այդքան մեծ դուրս ունե-

ցանք, Վարդապետից մինչև Սեւակ, Գոմիտասից մինչև Ջարենց, մինչև Բակունց ու Մինաս: Ջոխազէ՛ք, ես լուրջ եմ ասում: Սիրտս տխրել է ուղում: Պիտի դնամ վաղը եւ մի լաւ տխրեմ:

Յաջորդ օրը, Գրողներու Տունն էինք, որ յորդած էր եւ շուրջը խոնրուած հոկայ քաղմութիւն մը: Հոն էին զրեթէ մեր բոլոր յայտնի դէմքերը, ինչպէս նաեւ պարզ գեղղուկներ: Լուս էր ամէն ոք եւ լուս էր ամբողջ Երեւանը:

Դազազը դանդաղ դուրս բերին: Իրարանցում մը սկսաւ ժողովուրդին մէջ: Մարդիկ կարծես նոր կը դժային կորուստին մեծութիւնը:

Մինչև Սփերա՝ ձեռքերու վրայ տարին զազազը:

Օփերային առջեւէն սկսաւ ինքնաշարժներու առաջին թափօրը, որուն սկըսան միանալ ուրիշ ինքնաշարժներ, բոլոր փողոցներէն, բոլոր քառուղիներէն եւ երբ Երեւանէն դուրս եկանք, ինծի թուեցաւ, որ Հայաստանի բոլոր ինքնաշարժները հոն են: Թափօրին ո՛չ սկիզբը կ'երեւէր եւ ոչ ալ վերջը:

Առաքակ Քաղաքը անցնելէ ետք, ճամբուն վրայ դառնաւ զիւղերու աշակերտները աւելի խորացուցին յուզարկաւորներուն կսկիծը: Ծանապարհին ծաղիկներ ցանած եւ Մուշեղէն մէկ-մէկ նըկար իրենց ձեռքին՝ հազարաւոր ու հազարաւոր աշակերտներ ցոյց կու տային զրոգը, խլելով առաջ ընթացողներուն արցունքը: Ծաղիկներու եւ պտուկներներու այս տեսարանը կրկնուեցաւ բոլոր դիւղերուն մօտ, մինչև Կաթնաղբիւր: Այդ ծաղիկները, այդ թախծոտ, մաքուր, զուլալ աչքերով մանուկները՝ Կարծես անոնք կ'ըսէին.

— Էլ ո՞վ պիտի դրի «Ձորի Միւրօ», ո՞ր էք տանում «Ծաղկած Ժարեքի» հեղինակին: Ձէ՞ք հասկանում:

Դիւղի մուտքին՝ դազազը դարձեալ ձեռքերու վրայ բռնեցին՝ մինչև դերեզմանատուն: Ծամբան՝ իր ամբողջ երկայնքին՝ ծաղիկներով պատած էր նորէն: Հազիւ դերեզմանատուն մուտքին

հասած՝ քարձրախօսէն լսուեցաւ Մուշեղի ձայնը: Ան խաչիկ Դաշտենցի ճիւղնապարմերի կանչը՝ անուն դերքին մասին կը խօսէր:

Ժառանգէնի տոնուած իր խօսքը այն յոգուածն էր կարծեմ, որ քանի մը ամիս առաջ լոյս տեսած էր «Գրական քերթ»ի մէջ: Յուզարկաւորները արձանացած կ'ունկնդրէին՝

«Յոյսը դարձեալ հրաշքն է: Պայքող աղբիւրի ակունքից յայտնուող Բուռլիկ Ջալալիմ, երկրի ընդերքից յայտնուող հրեղէն ձիւն:

«Այդ հրեղէն ձիւն Արաբան էր: Այդ հրեղէն ձիւն Ազրիւր Սեբեթ էր, Սպաղանաց Մակարն էր, Գեորգ Ջաւուշը, Անդրանիկը, Դժոխք Հրայրը, Սմբատը, Գալէն, Ջոլմ, Մօրուք Կարմ, Արծիւ Պետան, Սեւարեցի Սաքմ, Կոստ Յակոբը, Լանկանցի Արթուր, Առդայ Ջօրիկը, Ալադիմ Միսաքը, Բրիգադը, Սէյսո Պօղոսը, Արտմեայ Ջնդան, Մուսան, Բամբակու Մելմ, Կայծակ Անդրէասը, այդ հրեղէն ձիւն Շէնիֆայ Մանուկն էր, Փեթարայ Մանուկը, Փեթարայ Դաղէն, Փեթարայ Ալման, Փեթարայ Խաթան...»

«Պայքող աղբիւրի հրաշքն այս փիղայիններն էին»...:

Յետոյ դամբանականներ խօսեցան Վարդգէս Պետրոսեան, Վահագն Դաթեան, Սիլվա Կապուտիկեան, մանկութեան իր ընկերներէն երկուքը եւ ուրիշներ: Իրենց խօսքերուն մէջ շատեր Մուշեղ Գալուշիանի հետ յիշեցին Պարոյր Սեւակը, Մինաս Աւետիսեանը, Սեբոր Ազրիւրը, Գեորգ Ջաւուշը, Մակար Մեբունին, Գալէն, Հրայր Դժոխքը, Անդրանիկը եւ այլ կիսաստուածներ: Բոլոր խօսուածները չեմ կրնար յիշել, բայց անկարելի է մոռնալ Վահագն Դաթեանի արտասանած բանաստեղծութեան վերջին տունը.

Կարմրել եմ ծաղիկ ու սեզ
Քո արեամ տաք շողփից,
Պատկել ես դու փիղայու պէս
Հրացանը կռակիդ...

ՄՈՎՍԷՍ ՀԵՐԿԵԼԵԱՆ

ԶԱՐԹԻՐ, ԼԱՕ

Այս երգը հ'ա հմ յայտնաբերել ու տարածել, ուրեմն այնքան տարածուն է, որ նոյնիսկ Գանատաներում էլ երգում են. զարթի՛ր, լաօ, մըռնիմ ջըզի:

ՄՈՒՇԵՂ ԳԱՆՈՑԵԱՆ

Առաջին անգամ այս երգը լսեցինք Մուշեղ Գալստյանից: ...Երգում էր ժեղձ, յուզուած եւ թաւ ձայնով: Երգում էր եւ սովորեցնում բոլորիս: Շուտով այդ հին երգը «զարթնեց» եւ յաւածուեց ամէնուր:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

Խուժան ասկեար պօրք է ժողվեր
Եկեր Մշոյ դաշտն է պատել,
Սուլթան կ'ուզի ջնջիլ մըզի,
Զարթի՛ր, լաօ, մըռնիմ ջըզի:

Խեղճ մշեցին մեռաւ լալով,
Օտար երկրներ ման գալով,
Մեռաւ թուրքի հարկը տալով,
Զարթի՛ր, լաօ, մըռնիմ ջըզի:

Զուր ես մնում էլու դռներ,
Երթամ գտնիմ վիմ խեղճ գառներ,
Սուքեմ վիմ բաղչայի ծառներ,
Զարթի՛ր, լաօ, մըռնիմ ջըզի:

Ինչ անիծեմ թուրք ասկեարին,
Որ սպաննեց ջոշ Աբոյին,
Մեր յոյս թողեց օրօրոցին,
Զարթի՛ր, լաօ, մըռնիմ ջըզի:



ՄՈՒՇԵՂ ԳԱՆՇԵՆՆԵՐ

ՔԱՐԻՑ

ԲԻԱԾ

ՏԱՂԱՆԴ

Երկու շաբաթ առաջ էր: Միասին էին...: Իր ստեղծագործական աշխարհն ամբողջացնելու ծրարագրերն էր պատմում: Բռնաճում էր, որ տարիներն արագ են անցնում, որ ինքն ուշացել է, որ գրականութիւն է մտել այն տարի-ֆում, երբ ուրիշներն արդէն ստեղծած են լինում իրենց գլուխ-գործոցները:

— Իմ արածի տէրը ես չեմ, — ասում էր, — ես իմ անելիքների տէրն եմ...

Եւ, հագա՞ր ամսոս, անկատար մնացին նրա անելիքները:

Քարից բուսած տաղանդ էր Մուշեղ Գալշոյեանը: Քարից բր-խած աղբիւր, եւ նրա «ջուրն ուրիշ ջրէն էր»:

Ոտաբոսիկի ֆայլի էր Արագածի ֆարերի վրայ, մեծացել այդ ֆարերի մէջ, յետոյ տիկն էր տուել այդ ֆարերին եւ խօսք բացել աշխարհի հետ...: Պատմել է աշխարհին, թէ ինչպէ՛ս իր տուն ու տեղից էջուած մի ժողովուրդ,

հաստատունով այդ ֆարերի մէջ, ստուն է շինել այդ ֆարերից, այդ ֆարերից հաց է ֆամել, ծաղկեցրել է այդ ֆարերը եւ այդ ֆարերի վրայ դրոշմել իր գոյատեւութեան իրաւունքը:

Աշխարհի հետ կռիւ ունէր Մուշեղ Գալշոյեանը: Տխրասի եւ իշխանութեան կռիւ չէր այդ կռիւը, այլ՝ կռիւ էր մարդ ծնունդու, մարդ ապրելու եւ մարդ մեռնելու համար...

Նա ծնունդ էր մարդկանց հոգսը թեթեւացնելու համար, նրանց ուրախացնելու, երջանկացնելու համար...: Եւ եթէ իմանար, որ իր մահով այսֆան ցաւ է պատճառելու մեզ, երեւի նակատագրական այդ կիրակի օրը ձեռք չտանէր դէպի իր չարաբաստիկ սրտադակասնը:

Դողում են ձեռքերս, դողում են շրթունքներս, ֆարացել են արցունքներս, ֆարացել է միտքս:

Ամբողջ Թալինն է ողբում Մուշեղ Գալշոյեանի կորուստը. ամբողջ Հայաստանը, ամբողջ սովետական գրականութիւնը: Եւ ես եմ ողբում ինչպէս հարազատ գաւառիս վրայ: Գնաս բարով, իմ բարի, իմ միամիտ, իմ իմաստուն երեխայ, իմ սիրելի Մուշեղ:

ՀԱՄՐ ՍԱՀԵՆ

digitised by

A.R.A.R.®

Ն. Ա Դ Ա Լ Ե Ա Ն

ԴԻՄԱՆԿԱՐԻ ԷՍՔԻԶ

Հայ պոեզիայի ու երաժշտութեան ամենահայրենալուծելի երգերից մէկը «Կոռուկի»ն է, միջնադարեան բառաձևով՝ «Ի վերայ կոռուկիմ»։ Պանդուխտ կարօտել է իր տունը, հայրենի եզերքը, հարազատներին, հողը, բնութիւնը եւ կոռուկին հարցնում է, թէ նա իրենց աշխարհից «խալարիկ մի չուկի»։ Կոռուկը լռում է, մարդու տոշորուող սրտի հարցմունքները պատասխան չեն պտնում, նա նեղանում է կոռուկից՝ «...զմա՛, հեռացի՛ր», եւ մնում է կարօտի թանձր ու բազմազոյն նստուածք։ Դիւալոգի մեւ ունեցող երգը՝ զրոյց պանդուխտ մարդու եւ կոռուկի միջեւ, յանկարծ դառնում է մենախօսութիւն, որ զործի բուն խորքն է ու էութիւնը։

Մենախօսութիւնը զեզարուեստական խօսքի միւս մեծերից աւելի է արտայայտում լարուած, դրամատիկ պահեր, ողբերգական հոգեմիճակ։ Երբ մարդը խօսում է ինքն իր հետ, նշանակում է՝ դիմում է հոգեկան խաղաղութիւն գտնելու միջին հնարաւորութեանը, նշանակում է՝ նրա ցաւն այնքան խորն է։

Մուշեղ Գալլոյիանի արձակն առ այսօր ընդգրկուած է երեք ոչ-ծաւալուն գրքերում՝ «Կոռուկի», «Մաղկած քարեր» եւ «Թուլտուլ»։ Դրանցում կոռուկի մասին որեւէ երկ չկայ, կոռուկն իբրեւ բարի աւետիսներ բերող թռչուն ուղղակիօրէն, ֆիզիկապէս չի հանդրուանում եւ ոչ մի տողում, սակայն նրա կարօտաւոր էութիւնը թեւածում է Գալլոյիանի ամբողջ ստեղծագործութեան վրայով՝ իր լուսաւոր ստուերը, տիրութիւններն ու վեհութիւնը հասցնելով դրա բոլոր ծալքերին։

Պանդխտութիւնը կամ զարհրութիւնը Հայոց կեանքի ամենահին ու ատարածուած երեւոյթներից է, մեր ազգային ճակատագրի արտայայտութիւն, որ ընդհանրութիւններ պահպանելով՝ իւրաքանչիւր պատմաշրջանում ունի իւրատեսակ պատճառներ, հոգեբանութիւն ու նկարագիր։ Գալլոյիանի ուշադրութեան կենտրոնում պանդխտութեան ընդհանուր-միացեալ գոյները չեն, այլ՝ այն մարդկանց ներքին կեանքը, որոնք 1915ին արտաքսուել են Արեւմտեան Հայաստանի իրենց ծաղկուն ոստաններից եւ հազարներով եկել Մասիսի արեւելեան ափերը։

Սա Հայ ժողովրդի պատմութեան այն իրադարձութիւններից է, որ յաղթահարում է իր պատմականութիւնը, այսինքն՝ ժամանակների միջ ու երկար շղթան, եւ վալիս մասնակցում կենդանի իրականութեան շարժմանը։ Իրրեւ դրող, Գալլոյիանի աւելի է կենդանացնում երեւոյթը, բարձրացնում, մեր աչքերի առջեւ նորովի դնելով այն, մեզ ասես համոզում մեր համոզմունքը՝ կոռուկին ուղղուած հարցում — երգը անբաժան է Հայրենիք սիրող, առողջ Հայ մարդու յուզաշխարհից։ Նրա դրական-զեղարուեստական մտածումներում իրենց հայրենի եզերքից հեռու գտնուող բիւր մարդկանց կարօտն ունի արդիական կարեւոր նշանակութիւն։

Բախունցի «Լառ-Մարգար» պատմուածքը փայլուն բառաթափանցումներով դժաւորում է մեծ եղեռնի պատճառով պանդխտացած մարդու կեանքի ուղին, այս թեմային տալիս մեր դրականութեան մէջ մշտական դրանքման իրաւունք։ Պանդուխտի տառապանքն ու զգացմունքային աշխարհն ուշագիւր զննութեան են ենթարկուած Մուշեղ Գալլոյիանի մի քանի փաստադրական

պատմութեան հերոս, յատկապէս՝ «Ջորի Միրոն» եւ «Կածամի ճամբարդներ» վիպակներում: Գալչոյեանը շատ բան է ստորում իր տողանդաւոր նախորդից, բայց եւ՝ ղէպի ժողովրդի անդեալն ու ներկան բացում սեփական լուսամուտ:

«Ջորի Միրոն» վիպակ է յիշողութեան մասին, բայց՝ այնպիսի, որը ոչ թէ յանկարծ է արթնանում, անպատեհօրէն, ինչպէս, սովորաբար, յիշողութիւնների կարգ ու յանդէն է, այլ շարժւում իրեն անակիցը հոսանք եւ չդիտես՝ մի տեղ կա՞նգ է առնելու, թէ ոչ:

Միրոն իր միակին՝ Յարութ որդուն ճանապարհում է կուլ: Գիւղից մինչեւ քաղաքային կայարանն ընկած սայլուղին վիպական ժամանակն է, որի ընթացքում նա յիշում է ծննդավայր Սասունը, հայրենի տունը, հողի աշխատակորի իրենց խաղաղ առօրեան, ապա եւ՝ Սեպուհարի հերոսական պաշտպանութիւնը, իրիզախ ընկերների գէմքերը, դադթի պատճառած ա՜նասելի տառապանքը, յետոյ՝ վերածնունդ նոր հայրենիքում տուն-տեղ դառնալու յուզմունքը, հին վերքերի շարժուող մորմոքը, կրկին ծաղկելու, արմատներ արձակելու յոյան ու թաքուն ուրախութիւնը, եւայն, արտով, նիսարկերով, մտքով թափունցում իւրաքանչիւր մանրամասնի մէջ: Սայլուղին կիսկ չընկած կտրւում է Միրոյի յուշ-աշխարհը, բայց սա գեղարուեստական հնարանք է, գրական աւարտութեան պատրանք: Գործի խորքում յիշողութիւնն արտահոսում է այս շրջադէպ, իսկապէս էլ վերականգնում է անեղբր երեւոյթի: Գրողը նուաճում է աւելի քարճը աւարտութեան թիւն. դա անվերջութեան աւարտութեան թիւնն է:

Միրոյի ղէմքը մտայն է, մարմինը՝ տոկուն, շարժուածքը՝ հպարտ, նրա հողում սպաւոր յիշատակներ կան, անանց դառնութիւններ, բայց նա աշխարհին նայում է յոյսի, հաւատի աչքերով, առեւ ամէն ինչ նոր ու նորովի է լինելու. «...էս գիշեր իմ երակների մէջ արւմ կայ, լուսացաւ կը դառնայ ջուր... էրեխայ կ'ազիւմ, Սառէ... Իմ միտք շնամալ է, Սառէ, մեր գերդաստամի մեղք իմ շէփ շլմէիմ չտամիմ գերեզման...»: Հերոսի նկարագրում, որ ստեղծւած է ոչ թէ մանրանկարի, այլ մոնումենտալ խճանկարի ոճով՝ ընդհանրացւած, զանկունածային գունազօծերով, դժուար չէ տեսնել մեր ժողովրդի ճակատադիրը, հայ մարդու հոգմահար կեանքը դարասկզբում եւ նրա անսպառ, միշտ արթուն կենսասիրութիւնը:

Գալչոյեանը ստեղծել է անյայտ-անանուն հայրենասէրի հմայիչ կերպար: Միրոն ապրում է բնութեան պէս՝ չի գիտակցում իր մեծ սէրը հայրենի երկրի հանդէպ, ինչպէս այն բնական գետակը, որը չգիտէ, թէ ինքն ինչքան թաղցր է, առեւ ու վճիտ: Այդ սէրն է Միրոյին մեծացնելով անուն տալիս, անուանակոչում-բնորոշում նաեւ նրա ժողովածուն: «Անուշ էրկիր» — այսպիսին է ծննդավայրը նրա հոգում: «Անուշը» կամաց-կամաց շարժւում է, փուռում ամբողջ հայրենիքի վրայ, միաժամանակ՝ ընդարձակում Միրոյի հոգու դաշտը, այնտեղ ցանում քարճը ու գեղեցիկ շատ զգացմունքներ, որոնք բնթերցողին պարուրում են իրենց ազնիւ միզդաշնութեամբ. «...Կարօտ զօրե՛զ-զօրե՛ղ է, կարօտից զօրե՛զ քամ աշխարհ չկայ: Ինչքան հեռանաս էս մեր քարագլուխ գեղից, մեր քաղսիկից, մեր ձորից, էմքան էս կարօտ կը մեծանայ: Կարօտի հետ տխրութիւն կը մեծանայ, ցառ... Կարօտ տըխրութիւն է, ամուշ-ամուշ տխրութիւն է: Ու էդ տխրութիւն... էդ տխրութիւն մեծ քամ կը պտղէ... մարդու հոգիմ կը մեծացնէ, մարդու կը դարձնէ ամօպահա, հերոս» — որդուն պատերազմ ճամբելիս ասում-խրատում է Միրոն: Նրա բոլոր զգացմունքները խօսում են հայրենիքի հետ, իսկ հայրենիքը ինչ-որ բարդ ու վերամբարձ բան չէ՝ հող է ու ծաղիկ, դաշտ, ծառ, ասու,

ձոր, իրենից, եւայլն, եւ այս ամէնին նա ասեա կապուած է պորտաւարով: Բնորոշ է Սեպասարի ճակատամարտի յուշ-նկարադրութիւնը. նա եւ ընկեր-ները պաշտպանում են ոչ այլ ինչ, քան լերկ քարեր, քարերի համար տառապում, վիրաւորում ու մեռնում: Կարօտից ծնուած տխրութիւնը չի մթաղ-նում Միրոյի հողին, այլ աւելի է լուսաւորում, ցոյց տալիս բոլոր կողմերից:

Բակունցի հերոսին զարդարում է արդար աշխատանքի սէրը, իսկ Միրոյին՝ հայրենի եղերքի մասունքներով, յիշատակներով, հայրենիքի շնորհ լցուած կարօտադին տխրութիւնը, որը Գալստեանը ներկայացնում է, ար-ժէքաւորում իրեն մարդկային բարձր, կարեւոր ու ստոյծառ յատկանիշ, սրանով պայմանաւորում-արդարացնում հերոսի, ընդհանրապէս՝ մարդու, մարդկայնութիւնը: Սա նրա «լուսամուտի» յատկանշական դժբերից է, որ այս ձեւով ու յագեցուածութեամբ չի հանդիպում ուրիշ դրոշներին մօտ: Կարօտագին տխրութիւնը նման է լարուած զսպանակի, հերոսի մարմինը դնում է շարժման, դորձողութեան մէջ:

Միրոն վիպակը «պատմում է» ծերութեան շրջանում, սակայն մեր առ-ջեւ կանգնում է հոգով ու մարմնով երիտասարդ մարդը, նոյնիսկ այն ժա-մանակ, երբ արդէն «կոպկերը ութսունինը տարի ծրարել են գիշեր եւ րացել առաւօտ»: Նրա ասեա անանց երիտասարդութեան հիմքը հարազատ ժողո-ւրդի կեանքն է ու հայրենի հողը, որտեղ նա խոր արժանեք ունի: Նա կապուած է իր երկրին այնքան ամուր, որ հնարաւոր չէ անջատել նրանց եւ մեկուսի զգալ: Միրոն ամբողջ էութեամբ հայ է, նրա երկիրը՝ հին ու յա-ւերժող Հայաստանը, ժողովուրդը՝ իսկական հայեր, տեղաբնիկ է նրանց չլիքի՛ն ուրիշների հետ, աշխարհում նրանք ունեն իրենց աշխարհը, ան-կրկնելի են ու ինքնատիպ: Ժամանակակից զրահանութեան համամարդկա-յին» հոսանքում, որ ուղղում է նաեւ մեր դրական փորձը, Գալստեանը հըն-չեցնում է ժողովրդական, բնաշխարհիկ ձայներ ու դոյներ: Այսօր սա ստեղ-ծազործական մեծ եւ դժուարին լարուածութիւն է:

Այստեղ պէտք է նշել դրոշին բնորոշ մի յատկութիւն եւս: Նա իւրա-քանչիւր բոլից որոնում է մարդու պատկանելիութիւնը երկրին ու ժողովուր-դին, որոնում է լեզուի, մտքերի, զգացմունքների, հայեացքի մէջ, մինչեւ իսկ՝ շարժման եւ դադարի: Ահա բազմաթիւ օրինակներից մէկը. «Օսոմ հե-պալը խրեց հողակոյտի մէջ, յեմուց կոպալիմ, հայեացքը կախեց» («Կա-ծանի Գամբրիլներ»):

«Ձօրի Միրոն» վիպակի գերազանց գլխաւոր յիշողութիւնը «անուշ էր-կիրն է»: «Երկրի» սէրը չի դառնում լաց ու կոծ, այլ րացում է սիրահարի ներքին աշխարհը, որտեղ տառապանքն ունի բանաստեղծական լուսապսակ: Միրոն յիշում է գրկի մարող հայրենին: «Երկիրը» նրա համար կորուսեալ չէ: («Ձօրի Միրոն վիրաւոր ուսը սեղմեց Յարութ քոյուն ու էլ կանգ չա-ռաւ՝ ուշքն ու միտքը ատած գնաց երկիր...»: «...Թաղեց մարեմ երկիր գը-նաց»): Նա այնպէս արագ, բնական ու անմիջականօրէն է ներկայից տեղա-փոխում անցեալ եւ անցեալից կրկին դալիս հասնում իր ներկային, կար-ծես սրանց միջեւ ընդամէնը մէկ քայլ կայ: Ձեռնով ժամանակների միջեւ փոխում տարածութիւնը, դրանց մօտեցնելով իրար, ապա եւ համակցելով, դրոշն անցեալն ու ներկան պատկերում է իրեն մէկ-միասնական ժամանակ: Հերոսի կեանքը շրջանակուած է միասնականի արժեքով, նա ներառում է, արտայայտում այդ ժամանակի մարդկային ու ժողովրդական բովանդակու-թեան որոշ գծեր:

Գալստեանը չի դիմում պատահական անցեալի, ամէն վաղեմութեան ւ

Նրա յետագարձ հայեացքը սեւեռուած է 1915ին, այստեղից է զալիս հերոսի կենսագրութիւնը, ժամանակակից կեանքը, կենդանի ժամանակը նա հասցնում է մինչեւ դարասկիզբ, ցոյց տալիս, որ ներկան սկսում է անցեալից: Նա երկարացնում է ասորոշներէս ժամանակի պարագիծը, անցեալի փառաբերը կենդանացնելով՝ զգացմունքներ բորբոքում աւ խորացնում, ուրիացնում ժեր հայեացքը հոսող կեանքի, կենդանի իրականութեան հանդէպ: Կեանքի ու պատմութեան այս զուգահեռականութիւնը Գալլոյեանի ամբողջ ստեղծագործութեան արանցքային գիծն է, հայ ժողովրդի ճակատագրի ցրուած ժառանգը հաւաքող մի դադարաւոր: Ինչպէս Խնչումեանի մօտ, այնպէս էլ այստեղ մարդը ո՛չ միայն դէպքի ակննատես է կամ մասնակից, այլեւ՝ ենթակայ հասարակութեան ժողովրդի ճակատագրի գլխաւոր ծանրութեանը, ճակատագիր մարմնաւորող, ճակատագրի արտայայտիչ: Նրանց միջեւ, սակայն, կայ պարզորոշ նկատելի տարբերութիւն. խնչումեանական հերոսներն ընդգրկում են մի բնահանուր քան, որ շփուած է բազմաթիւ դարաշրջանների, իսկ Միրոն եւ միւսները զուրա չեն գալիս 20րդ դարից, պարփակում են հայ ժողովրդի ճակատագրի վերջին ալեկոծումները, հետեւաբար եւ՝ աւելի կոնկրետ են:

Վերականգնողական յիշողութիւններից է նաեւ զաղթը՝ Խութեցի Հայրէի նամուսաց դիմանկարով: Գալլոյեանը մանրամասնօրէն չի պատկերում նրան, այլ դրոշմում է ռեալիստական, քնական մի քանի գիծ, մէկ-երկու յատկանշային գոյներ: (Այս մօտեցումը նիւթին՝ նրա արձակի բնորոշ կողմերից է, նրա դեղորսուսական հայեացքի բաղադրամաս): Նարէի նկարագրերը, որտեղ միախառնուած են տառապանքն ու ամաչկոտութիւնը, կանաչի գեղեցկութիւնն ու համեստութիւնը, զիպչում է ընթերցողի հոգուն եւ յուզում նրան: Միրոն զաղթի վկան է, Նարէն՝ կենդանի զոհ, նրանց զուգընթաց զաղթի լուռ եւ արտում ցաւն է, որ ճառագայթում է, արձագանգում ժամանակների մէջ:

Միրոյի վէպը սկսում է, երբ նա մենակ է, յետոյ ամուսնանում է, ունենում զաւակներ, եւ ամէն ինչ աւարտում՝ կրկին մենութեան դրկում: Միայնութիւնն անհրաժեշտ է՝ յուշերի արթնացման համար:

Սա վիպակ-մենախօսութիւն է, մենախօսում է հերոսը, մենախօսում է նաեւ նրա ժողովուրդը, մենախօսում է հեղինակը:

Գալլոյեանի անհղծագործութիւնները, սովորաբար, չունեն որոշակի ֆարսույս, դրանցում գործողութիւնները յանախ շաւարտուած՝ ընդհատուած են, ամուր չէ գէպքերի միաբանութիւնը, կարճ տարածութեան մէջ հերոսներն արագօրէն գալիս են ու գնում, եւ այս ամէնը որոշ դրախտների առիթ է տուել խօսելու նրա արձակի կոմպոզիցիոն թուլութեան մասին: Բայց արդե՞՞ք այդպէս է:

Կոմպոզիցիայի իրադրո՞ման փորձուած միջոցներ այստեղ, ի հարկէ, գոյութիւն ունեն: Գալլոյեանի կոմպոզիցիոն կառոյցները, որ կուռ են ու ամբողջական, յենուած են գլխաւորապէս զգացմունքի վրայ: Տաք դրաց-մուշէր յուշալիւարհից սկզբնաւորում է ու հոսում՝ ներառնելով, տաք եւ մօտեցնելով, հարազատացնելով գործողութիւնների հատուածները, տարբեր հերոսներին, բաժան-բաժան գէպքերը: Բոլորը գտնուած են այս հոսանքում, որ ցաւի, սիրոյ, մաքսո՞ման, կարօտի շարժում է: Ահա Վիւմանի ցամաքող-նիւքը, որ ամէնից աւելի է ցրուած-կտրուած եւ, միաժամանակ, ամբողջական է, հաւաք՝ միւսներից ոչ պակաս: Վիւմանն վէպի հատուածները նոյնպէս կապուած են զգացմունքի շղթայով, որի գլխաւոր քոմպոզիցիոն թիւնը սէրն է հողի նկատմամբ, քարից հաց, առեւ է՝ կենսահիւթ, քամիւռ հայ ժողովրդի հին եւ միշտ նոր, քարի ու հերոսական աշխատանքը, որ հասցում

է հսկանոր շարժման աստիճանին:

«Բովտուն»ը Գալլոյեանի ղիխաւոր թեման հարստացնում է նորօրեայ գոյներով, կամրջում անցելու ներկային: Վէպի հերոսները այն մարդկանց օրինական ժառանգներն են, որոնք նախորդ դործերում տառապում են կտրուից եւ յաղթում են, յաղթում կարօտը: Նրանք ժառանգել են հայրերի ուժը, հոգեւոր դեղեցկութիւններն ու համբերութիւնը, եւ այս ամէնը ծառայելով են իրենց առջեւ բացուած նոր կեանքին: Երիտասարդ Արմայի նկարագրում գծուած չէ լսել Միլոյի, կածաններով անցած բիւրաւոր հայրի ծանր շնչառութիւնը: Արման նրանց յաղթանակն է, երազանքների ու ձգտումների պահպանը, նրանց նոր իրականութիւնը:

Գալլոյեանի արձակը յաճախ շեղւում է դրականութեան տեսութեան կարգ ու կանոնից եւ ինքը հարթում իր ճամբան: Ծիլը դատելու համար՝ անհրաժեշտ է նրան համզել, ելնել նրան հարազատ գիրքերից: Առհասարակ, գեղարուեստական ստեղծագործութեան վրայ դրուած քննական հայեացքը սխալ է լինի ինքնայատուկ, մէկ ու միակ սկզբունքի կիրառութիւնը ամենեւին չի բխում արուեստի ազատ ու բազմազան էութիւնից:

Գալլոյեանի գեղարուեստական ուշիւրհը ներծծուած է բնաշխարհիկ երեւոյթներով, բառային ու քերականական ձեւերով, բնութեան այդ անկիւնին բնորոշ գոյներով եւ գծերով, կենցաղային պատկերներով, ներյատուկ սովորութիւններով, որոնք նրա երկերին հաղորդում են ուրոյն, անկրկնելի բոյր ու կոլորիտ: Սակայն այդ երկերը կոլորիտային չեն: Եւ ահա թէ ինչու: Գալլոյեանը ամէն ինչ բացառիկ հետեւողականութեամբ ծառայեցնում է իր գլխաւոր ինդերին՝ «էրկեր» սիրոյ, ժողովրդի ձգտման, հոգեւոր նկարագրի մարմնաւորմանը: Այստեղից էլ՝ նա հետամտում է առարկայի, երեւոյթի ոչ թէ արտաքին յատկանշներին, դրանց մեխանիկական շարժմանը, ինչպէս գրական կոլորիտներն են անում, կենցաղադրները, այլ՝ ներքին բովանդակութեանը: Յիշենք, օրինակ, հարսանիքի մանրակրկիտ նկարագրութիւնը «Կածանի» նամարդանքում՝ սասունքների երգերը, պարերը, դառում-դոյնները, թնդիւնները, որոնք ստեղծում են սպեղնի պատկեր ու մթնոլորտ, չո ներսում արթնացնում հայրենիք, հող եւ ժողովուրդ: Հարսանիքը մեղք է բերում աւելի մեծ հնչեղութիւն, քան իրականում ունի: Աւելի մեծ հնչեղութիւն ունեն Գալլոյեանի ստեղծագործութիւններում հանդիպող շատ առարկաներ, բառեր, անուններ ու երեւոյթներ, հեղինակի օգնութեամբ՝ բոլորն էլ խախտում են իրենց ընդդէմը, ասես թօթափում իրենց, հեռանում իրենց կենցաղային էութիւնից եւ մասնակցում մեր յուզաշխարհի ստեղծմանը: Եւ մէկ ուրիշ ձգտում՝ պործածելով հին բառ ու բան, որի հետեւում մեծ կամ փոքր երեւոյթ կայ, դրողը փորձում է այդ երեւոյթը փրկել մոռացումից եւ յանձնել ժամանակակից կեանքին: Դա նրան շատ դէպքերում յաջողւում է («Մարտիայ» սարի ամպերը՝ պատմութեամբար եւ ուրիշ դործեր), բազմաթիւ հին բաներ մաքրուած են պատմութեան փոշիներից եւ շողողուն են նոր կեանքի համար կոչուած լոյսերով:

Գրականութիւնը, միշտ եւ այժմ էլ, ունի երկու ղիխաւոր թեմա: Մէկը, այսպէս կոչուած, ապրելու ինդերն է՝ մարդու հանապազօրեայ կոիւր հացի համար, իսկ միւսը՝ հոգեւոր պահանջմունքների հոսքը: Մնացած բոլոր թեմաներն աւելում են սրանց: Ձիջեցնելով առաջինի արժէքն ու նշանակութիւնը, ինձ թւում է՝ երկրորդը բարձր է կանգնած եւ գալիս է մարդկային էութեան աւելի խոր շերտերից: Մուշեղ Գալլոյեանի երեք դրքերը պատկանում են այս հոսանքին:

ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼԵԱՆ

digitised by A.R.A.R.®

Ն. Դ Ի Մ Ա Բ Ս Ե Ա Ն

ՔԱՂԱՔԱՅԻՆ՝

ՄՈՒԹԵՂ ԳԱԼԹՈՅԵԱՆԻ ՄԷՋ

«Որովհետեւ ինչ որ տրամաբանա-
կամ է, իրական է եւ ինչ որ իրական է,
է՛ աշնպէս՝ ինչպէս պէտք է ըլլայ եւ ա-
ռովհետեւ պետութիւնը տրամաբանակա-
նօրէն տիեզերական է, քաղաքացին, իբ-
րեւ պետութեան մէկ բջիջը՝ միշտ տրա-
մաբանական է, իրական եւ աշնպէս՝
ինչպէս պէտք է ըլլայ, աշնպէս՝ քարո-
յականի տէր: Իր իւրայատուկ բանական-
նութիւնը իր լիութիւնը կը գտնէ պետու-
թեան մէջ: Սակայն, այս մէկը, քաղաք-
աւի բանականութիւն չէ: Որովհետեւ,
պետութիւնը ինքնին պատմութեամբ մէկ
ժամանակաշրջանն է: Պետութիւնը եր-
բեք զագաթնաւոր, վախճանական կէ-
տը չէ ազատութեան գիտակցութեամբ յա-
ռաջդիմութեան, որ աշխարհի պատմու-
թիւնն է»:

Ռուբեն Ս. Հարթման այս բառե-
րով կը սկսի Հեկէյի «Բանականութիւնը
պատմութեան մէջ» գործին յառաջաբա-
նը:

Մուշեղ Գալստեան, Հեկէյի եւ ան-
կէ շատ առաջ տակաւին՝ Սոկրատի,
Պլատոնի, Արիստոտէլի եւ Հռոմէական
քաղաքացիական դիտակցութեան մասին
կրնար բացարձակապէս զաղափար չու-
նենալ:

Կրնար, նոյնպէս, զբողի իր փոք-
րեայ դրեակէն երբեք վար չիջնել,
չտաղնապիլ, չհուսլ, չընդվզիլ, չմբկիլ
իր ժողովուրդին ցաւերուն հետ եւ բե-
կրանքով չողողուիլ, երբ իր հայրենիքը
յաղտութիւններ արձանագրէր: Ընդհա-
կապէս, կրնար նոյնիսկ, ինչպէս վար-
ժըւած ենք տեսնելու, անձնական յոյզե-
րու ոլորտին մէջ կորսուիլ, չամանադա-

նել տեսնել, երբ փողոցներուն մէջ իր
ժողովուրդին արիւնք կը քամուէր եւ,
առհասարակ, կտրուիլ իր ժամանակէն,
իր պատմութենէն եւ այն տւանդէն, որ
փոխանցուած է իրեն:

Կրնար նոյնպէս ըլլալ զբող մը, որ
իր գրականութեան մէջ արծարծած գա-
ղափարներով կը տարբերի զաղափար-
ներէն այն մարդուն, որ ինքն է զարմ-
եալ, սակայն այս պարագային՝ զիրա-
դաշտ» առօրեայի լրճուկ փոքրագու-
թիւններու սահմանին մէջ:

Սակայն բոլոր այս երևույթներէն
վեր եւ անդին, գիտութեան մը գիտա-
կանացած գիտելիքներէն դերիվեր՝ նե-
րայնացած դիտակցութիւն մը ահաւա-
սիկ Գալստեանը կը վերածէր այն քա-
ղաքացիին, որուն զիւրայատուկ բանա-
կանութիւնը իր լիութիւնը կը գտնէ պե-
տութեան մէջ՝ հակառակ այն յոտա-
կատեա եւ իսկապէս իրապաշտ անգրա-
դարէին, որ այն պետութիւնը, որ իրն է
ծնունդով, իբրեւ հայրենիք, «պատմու-
թեան մէկ ժամանակաշրջանն է» միայն
եւ կատարելագործման համբուն վրայ
կը գտնուի յարատեւօրէն, որովհետեւ
«պատմութեան գիտակցութեան յառաջ-
դիմութեան» տարբերին մէկ փոքր օղակն
է միայն:

Պետութիւնը, այլ խօսքով՝ հայրե-
նիքը, որուն ամէնէն պարիւն քաղաքա-
ցիներէն մէկը ըլլալու կոչուած էր Գալ-
ստեան, իր կեանքին եւ պորձունէու-
թեան կենդանի օրինակովն իսկ, այն
ստեղծագործութիւնն էր, որ տրամաբա-
նականօրէն ընդոծին՝ կամ ընդոծին՝ հե-
տեւարար տրամաբանական՝ մաքսուած

ներս զաշտը կ'ընձեռէր անհաս քաղտաքացիին :

Որովհետեւ, Հեկէլի իսկ հասկացողութեամբ, «այն վայրկեանն սկսեալ, երբ անհատը գիտակից է իր ազատութեան, ան քաղաքացին է քաղաքական պետութեան մը եւ անգամը՝ մշակութային հասկանալովութեան մը, որովհետեւ պատմութիւնը ազատութեան գիտակցութեան յառաջդիմութիւնն է» :

Այս սահմաններուն մէջ, անհատական ազատութիւնը միայն ժամայնութեան է եւ կամայականութիւն է : Ինչպէս որ միաւոր մը առանձնապէս տիեզերական չի կրնար ըլլալ, նոյնպէս եւ քաղաքային առանձնապէս ազատութեան գիտակցութիւնը չի կրնար ըլլալ : Միայն հայրենիքը, իր ամբողջութեան մէջ, իր քաղաքացիներուն հաւաքական մշակութիւնը, կրնայ ազատութիւնը իրազործել եւ ներկայացնել : Ազատութեան այս հաւաքական բնուէրը, վերին հաշուով, հայրենիքի մը մշակոյթն իսկ է, որովհետեւ ազատութեան հաւաքական բնուէրը, մշակոյթն ու հայրենիքը իրարու միաձուլուած են :

Այս պաշտօնները, պատահականօրէն մէկտեղուած պաշտօններ չեն : Անոնք, Մուշեղ Գալլոյեանի ժառանգութիւնով, իր գրական արտադրութիւններուն եւ իր կենդանի գործունէութեան վրայ յատկապէս աշխարհէ մը կը թելադրուին :

Եւ ի՞նչ չէ ըրած Գալլոյեան, իբրեւ զտարին քաղաքացի, որպէսզի չարժանայ այս «հուսկ բանք»ին : Մենք այս պահուս զանց կ'ստենք իր գրական արժանիքները, հակառակ հաստատ այն գիտակցութեան, որ անոնցմով ան քաղաքացի դարձաւ եւ փոխադարձաբար : Այսինքն՝ քաղաքացի ըլլալուն համար կրցաւ գրական բարձր վաստակ մը, լի՝ հաւաքական կատարելագործումի, հարբեմի, ազատութեան եւ մշակոյթի համաձուլող բարախումբներով, ձգել իր ետին :

Գալլոյեանի կենսաբան ամբողջ մըտածանքները սահմանէն անդին գտնուող պատմական Հայաստանը եղած

էր : Ասոր արտայայտութիւնը «Բովտուն» եւ «Առի Միքոն» գործերուն մէջ յստակօրէն ուրուագծուած է խելախող, անանձնական, անձնագործ եւ պատմութեան խորհուրդը իրենց կուրծքին տակ շաղկած մարդոց, կերպարներուն մէջ :

Եւ ի՞նչ է զոհարեցութիւնը : Ո՞ր ատուանին կը մատուցուի անկէս : Ով՞քն է ինչ ասի ֆիտայիները, զորս Գալլոյեան կ'ողակոչէր իր գործերուն մէջ եւ ի՞նչ էր անոնց պայքարը : Որո՞ւ դէմ եւ ինչո՞ւ :

Գալլոյեանի պատմութեանը պարզ է եւ մեկին : Անոնք կը մարտնչէին հայրենիքով յատկանշուող պաշտօններուն իրազործման համար : Գաղափարները՝ հայրենի մշակոյթի վերյառնում, պահպանում եւ հայրենի մշակոյթը առանկոխող բոլոր արտաքին եւ ներքին ուժերու դէմ լարում էին : Գալլոյեանի ակնարկութիւնը գրական տիպարներուն ընդմէջէն, միայն անցեալին չի վերաբերիր : Կը վերաբերի նաեւ մեր ներկային : Հայրենիքը եւ պետութիւնը աղտոնող՝ տարբեր բնոյթ կը ստանան : Առաջինը յաւիտենական է, երկրորդը՝ ժամանակաւոր, առաջինը կատարեալ է, երկրորդը՝ անկատար, բայց կատարեալ դարձնելու ճիգի կարօտ, առաջինը մտաւորապէս է, երկրորդը՝ այդ մտաւորաբան մակարդակին հասցնելու միջոց, կամ՝ յոռեզոյն պարագային, արգելադրող խոչընդոտ, զոր շարքի նման պէտք է արմատախիւ ընել, եթէ հարկ է կամ անոր դրական կողմերը զատորոշելէ ետք, անոր բացասական կողմերը սքրտագրել :

«Կը յագթես թէ կը պարտաւիս՝ չարի դէմ ծառանայն առաքելութիւնն է, կը գտնես թէ ոչ՝ հայրենիքի երջանկութեան ծաւիկը որոնելը հայրենիքի քրդապարտութիւնն է» :

Հայրենիքի երջանկութեան ծաւիկը որոնելը եւ շարքի դէմ ծառանալը Գալլոյեանի դարձուցած էր իր կենսաբան նրապատկեր : Ան կը ծառանար Երեւանի մէջ տարածուած խուլիգանութեան, դրականահատութեան, բնակարանային գողութիւններու, միջնորդութիւններու, կեղծ

վկայականներ ծախողներու ու պորտա-
բուծութեան առաջնորդող ծնողական
դաստիարակութեան դէմ: Կը հարցա-
գրէր ա՛յն իրողութիւնը, թէ ինչո՞ւ 18-
20 հազար պատանիներ ու երիտասարդ-
ներ ոչ մէկ տեղ կ'ուսանին, ոչ մէկ տեղ
կ'աշխատին եւ ոչ մէկ օգտակար դեր կը
կատարեն: Հսկայական այս կարելիու-
թիւնը ո՛չ միայն չ'օգտաւործուիր, այլ-
եւ կը վատնուի շարադրծութիւններու
ճամբուն վրայ:

«Յանցագործութիւնների, հակահա-
սարկական երեւոյթների դէմ պայքա-
րի լաւագոյն միջոցը առաջին հերթին
դպիկ յանցագործութիւնը տանալ ճանա-
պարհների աւելիակց գտնելն է: Բայց,
ահա, սպասում եմք, որ պատմին, ե-
րիտասարդը յանցագործութեան մղուի,
այս ցար արձանագտնում եմք նը-
րան...», կ'ըսէր ան 1974ին, անորինակ
յանդիւնութեամբ, նոյնինքն Երեւանի
քաղաքապետ Գրիգոր Հարութեանին:

Հայրենիքը, արտաքինապէս դոյու-
թիւն ունեցող այն միութիւնն է, որ քա-
ղաքացիներուն ենթակայական կամքին
ընդմէջէն կ'իրադրծուի: Տրամաբանա-
կան կամքերու կառոյցն է անիկա, որ
միայն ուղղամիտ, արդար, այլ խօսքով՝
բարոյական կրնայ ըլլալ: Իսկ բարոյա-
կանը կը հիմնուի արժէքներու վրայ, ո-
րոնք տուեալ ժողովուրդին դարձուոր
մշակոյթին ընդմէջէն կը բխին: Մուշեղ
Գալշոյեանի երազը հայրենիքը այդ
բարձրութեան վրայ տեսնելն է: Այս
պատճառով է, որ կ'ընդվի երբ այլ ա-
րատներու կողքին, կը նկատէ, որ Երե-
ւանը ինքնաշարժներու խնդունով, ծու-
խով եւ ճայնային ապականումով կը լեց-
ւի: Կառաւարտներով կը խնդուի: Մըթ-
նոյրտային ապականում տեղի կ'ունե-
նայ: Մանուկներու համար խաղարան-
ներ չեն կառուցուիր: Հաւաքական կեան-
քի խոչընդոտ կը հանդիսանան անբարո-


յական, այսինքն՝ հաւաքական արժէքա-
բանութենէն դուրս դոնուող կեցուածք-
ներ եւ արարքներ: Բայց նաեւ մշակոյ-
թը չի պահպանուիր: Գրիգոր Հարութե-
անի հետ յիշեալ իր խօսակցութեան ըն-
թացքին «անմաշակ երգերի» առեւարա-
կանները կը խարանջ. «Իսա ծագր է մեր
երգի, ժողովրդի հագնուոր մշակոյթի նը-
կատմամբ»: Ապա՝ Կոմիտասի հայ երգը
մտքերէն, յայտնադրծելու քրտնաջան
աշխատանքին ակնարկելէ ետք, հարց
կու տայ. «Ժողովրդի նիւթական միջոց-
ներին ձեռք մեկնողը, երբ բռնում է,
պատմութեամբտուութեան է կտնելում,
իսկ իմչա՞ւ ժողովրդի հագնուոր կապա-
րայի դէմ հրապարակայնօրէն դաւա-
դրութիւն կազմակերպողը պէտք է ան-
պատիժ մնայ: Եւ այն էլ արքա՞ն ժա-
մանակ»:

Այլ խօսքով՝ Մուշեղ Գալշոյեան կեան-
քին եւ գրական վաստակին գլխաւոր մէկ
մասը քաղաքի եւ քաղաքացիի, հայրե-
նիք՝ քաղաքացի փոխարարելութեան
նուիրած է: Այդ մէկը իրադրծուած
տեսնելու համար, հաւաքական կեանքի
որեւէ մէկ մարդ չի վերկեր իր ուշա-
դրութենէն: Կը հետաքրքրուի, կը տե-
ղեկանայ, կը տաղնուի եւ, ի պահանջել
հարկին, կ'ըմբոստանայ:

Ի վերջո՞յ՝ ուրիշներէ շատ աւելի
հասու կերպով «Քաղաքի քննադու-
թեան» հարցը հրապարակ կը նետէ: Այդ
քննադուութիւնը, ուրիշ բան չէ, եթէ ոչ
հայուն երկարամեայ պատմութենէն փո-
խանցուած Հաւաքական Ուղի, զայն են-
թադրող արժէքաբանութիւն-բարոյակա-
նութիւնը, մշակոյթը եւ այս մշակոյ-
թով յատկանշուող Ազատութեան ա՛յն
ըմբռնումը, որ մե՛րն է, որովհետեւ
պատմութիւնը Ազատութեան Գիտակ-
ցութեան յաւաքիմութիւնն է:

Ն. ԴԻՄԻՏՅԱՆ

Չորի Միբոն

ՄԹԻՆ ՉՈՐԻ
ԼՈՒՍԷ ՄԱՐԴԸ

Անծանօթ ու միանգամայն սիրելի, Մուշկղ Յովհաննէսի Մանուկեան — Գալլոյեանը, իր «Չորի Միբոն», անգրանիկ վիպակը, անծանօթ ինձ համար, մեզ համար, երբ նոր է հասնում իր արուեստի թարմութիւնը, երբ անհնթեթօրէն այլեւս կարուել է իր կեանքի թելը, անկատար ու տակաւին բեղուն իր «Վտունկ», «Ընծայագիր», «Մաղկած քարեր», «Բովտուն» ու դեռ գրելիքը հասունութեան զենիթին, տասը տարի սիրտ տեւէր մինչեւ որ հասնէր Կաթնաղբիւրի յոյսը, ա՛խ այս աշխարհագրական ու հոգեկան սահմանները, այսպէս կորած եղբայրներ, անհաղորդ ու մենակ — Երեւան, Բէյրութ, Փարիզ, Նիւ Եորք...: Պատահական հաղորդութիւն հոգիների միջեւ, ասուպները աւելի յաճախ են հանդիպում իրար, քան մարդիկ ու հենց ասուպացած մտում ենք անծանօթներ, երբ ըմպում ենք նոյն բառի աղբիւրից, կիսում ծխակալած նոյն հացը, նոյն սկիւնի մէջ թաթախում մեր կարօտը, ափսո՛ս, ափսո՛ս, ափսո՛ս...:

Գիւղն ու դաւառը դեռ չի յաղեցել, եղեռնը արժատախիլ արեց բոլոր ծիւղերը եւ նոր ցիւրեր նոր սերմնացանների են կարօտ, զաղթը նստել է ս'չ միայն Սփիւռքում, այլեւ՝ Հայաստանում, ուր այսօրը բարձրանում է երէկուայ յուշերի մուշի վրայ: Ղաղթը շարունակում է մտերի մէջ, արեան մէջ, այլեւս թխպապառ հայեացքներում: Առանց գիւղի քաղաքը չի կարող ապրել: Ժողովուրդի պատմութիւնը դեռ լրիւ չի գրուել: Առանց աւանդութեան Երեւանը կը կործանուի: Կաթնաղբիւրները Վերելի շարունակութիւնն են՝ հիմքն ու յենակը, գիւղից է դալիս արեան մայրը, հին ու հեռաւոր բո-

լոր ժայնները, լինելութեան աւելն ու հայի նկարագրի պարզ բարդութիւնը, Պատահականութեան վերագրել, որ գիւղից են եկել Բակունցն ու Սեւակը, Մաթեւոսեանն ու Գալլոյեանը: Գիւղը սկիզբն է, հայի տիեզերքի երգիկը, որի ներքոյ պատմութիւնը հոսում է անկարելի հեքիաթների գետերով: Երբ յաղենայ հողը, երբ արձանագրուի պանդուխտ հողիներէ պատմութիւնը, այն ժամանակ կը զնանք քաղաք՝ վստահ, որ գիւղի ճամբան աւելի երկար է, քան միջ-մոլորակային տարածութիւնը:

Մուշեղ Գալլոյեանի «Զորի Միլոն» վիպակը գիւղը քաղաքին կապող այդ կածաններից մէկն է, սքանչելիօրէն միամիտ, ոտքերը տակաւին խոնաւ ու հողին հողարոյր, ինչպէս Թլկատինցին, Համաստեղը, ինչպէս Բակունցն ու Նուրիկեանը, ա՛յն տարբերութեամբ սակայն, որ իր այս վիպակում Գալլոյեանը միանգամայն ընդլուզուած է ժեր պատմութեան վերջին շրջանի համայնապատկերին, ա՛յն աստիճան, որ թուժ է, թէ ինքը բացակայ է, նիւթը կերտուած է ըստինքեան, Զորի Միլոնի պատմումով, նրա դիտանկիւնից, յետագարձ ակնարկներով, յուշի ու ցաւի թելերով՝ Քարապետից մինչեւ Երեւան, պատառ առ պատառ, զուգահեռ վերապրելով «Էրկիրը», որը շարունակ ներկայ է, նա՛յնքան իրական, որքան այսօրուայ իրականութիւնը:

Գալլոյեանի ժոռ անցեալը նպատակ չէ, այլ՝ անբաժանելի մասը ներկայի, ներկան իմաստասրութեւն է անցեալով, ներկան անցեալի մէջ է, նրա շարունակութիւնը, ազգով ու հողով, աւանդոյթներով ու երազներով, ու, մա՛նաւանդ՝ մշտնջենալ կարօտներով: «Միթո, իմ քրոնի մէջ եօթ տարուայ կարօտ կայ, մեր Սասնայ ձորերով մէկ կարօտ՝ գեղ ու գնդաստանի համար կայ, սար ու ձորի համար կայ, քար ու ծառի համար կայ... Միթո, մեր էրկիր գէլ ու գազանների, մեր էրկիր օճերի համար էլ իմ ետքու մէջ կարօտ կայ...: Տեսալ դու էդպէս գերի ու անօգնական, արաւն գարկեց իմ գլուխ, իմ աչքեր մթնեցին...»: Անցեալը հալածում է ժողովուն, անցեալը հալածում է ժողովրդին, եթէ անցեալը պիտի դառնայ փոշի ու չգրուած էջ:

Մարդկայնօրէն այնքան անթափանցելի է Հայոց եղենը, անբռնելի ու անյատակ, որ անկարելի է համապարփակ պատմութիւնը: Մինչեւ հիմա զրուածները հատուկտըր յուշեր են, ականատեսի վկայութիւններ, ողբերգական ու հերոսական դրուագներ, քերթողական ցատու ու ողբ, փոստադրական անկատար փորձեր, մեկուսի ճիչ, ամէն մի հայ մի հատոր, բիր բերաւոր հատորներ՝ մի կերպ պատմելու անպատմելին, որ եղաւ օրհասը մեր ժողովրդի, սերնդից սերունդ՝ մթազնելով ժեր օրն ու աշխարհը: Իր «Զորի Միլոն» գործով Գալլոյեանը պատկերում է Սասնայ Գործվարք գիւղի կոտորածը, իրապաշտօրէն անհեթեթ, յանկարծակի, արիւն ու ծուխ, Միլոնի աչքով դիտուած այնքան, որքան հնարաւոր է, զուտ, գիտատեսանկէ միշտ մասնաւորի վրայ, ա՛յնքան ուժեղ է լարումը, որ պատկերները դանդաղում են, սառում, քարանուժ՝ ստեղծելով ներքին շարժում, բազմապատկուելով, տարածուելով, քանդելով գիտակցութեան ու ենթագիտակցութեան բոլոր սահմանները: «Յետոյ... Յետոյ մի խզակաք իջաւ Յարութ պապի գլխին...: Պապն ընկաւ, գլուխը բարձրացրեց մայնց տան կողմ, իրեն մայնց, ասկեարները էլի գարկեցին ու պապի գլխին քաղաւեց հողի մէջ մըմաց...: Յարութ պապի գլխին չէր երեւում, ներմակ մագերի մէջ կարմիր կար, ծաղկաթերթեր էին կաթկթում պապի ներմակ ու կարմիր գլխին, տաւնը խուլ տնեւում էր, ինքը կիպ-կապուած էր ընկուզեմուց, Սամանը նստած էր դիմացը, ծնկներին քաւր ու քաւմէ, փռափռացնում էր Մեծ հարսի սկիւթ, խաչով սկիւթ շղթան, ծալտում էր եւ ասում.— Միթո, ոսկիների տեղն ասա, կեանքդ ինք փէշէշ...»: Ապա գաղթն ու գաղթի երկար ճամբան, խլակ-

նեք անոնցանից որսահանեցում ա կերանեցում, ընդհանուր անմարդկայնության մէջ մարդկայնութիւն, որ ընդհանուր անմարդկայնութեան խորտակում, մարդկեանց մարդկի, մի բան Փիլոսոֆիաների ներստան կոչւոյ Սեպտուրի վերայ, բայցը դուռն էն, մեռն է Ձորի Միջին՝ իր հետ ասանկով Սասունն ա յաշիւի կորսումը, որ այլեւս իր կեանքն է, իր անկորեայ յանդիմանը, մէկ մարդու պրերզութեանը, որ պրերզութեանն է համարն հարսութեան, մի հարս կանանը, որ կանանն է ամբողջ մի մարդկայնութիւնը։ Այստեղից էլ Գալլոսիանի վարժի անգնութեանն ա ինքնակրթութեանը, աստիճանայն յայտնի մշտութեանը, հրդ նապար աւելի աղչու է, համարարժեք, մասնաւորից հասնելով ընդհանրականին, ասանց յառկնութեան, ասերեւոյթ անկից ա աստիճանայն։ Ենթի Միջին գրանիթայ մի էլ է հանդիմանում Հայոց եղևնի պատմութեան։

Յառկանքան է երկը իր կառուցով, Փառարէն, երեք սերնդի, երեք մասնակալութեանի պատմութեանն է — Սասունի, որ յանկն Միջին շարանակ ներկայ է, միջին սերունդի, որն ընկաւ Երկրորդ Աշխարհամարտի արձակուրդի մէջ, եւ երրորդ սերունդի, որն արդի Խորհրդային Հայաստանն է խորհրդանշում։ Գործարարութեան իմաստանում սեղի է անկնում համարակցի Արայի ուղլում, զիւղից երկրորդային կայսրան գնալու համբին, հրդ Ձորի Միջին անկնում է զէղի պատերազմի գալու գնացով իր սրբան՝ Յարսութիւն։ Երանանում գործարարութեան չկայ, Գալլոսիանը մարդկութեան մարտն է անթաղանցութեան հասնելին՝ անցնելու ա ներկայ համարակցով միմեանց, շարանակ մեռնով պատմութի պատմութի վրայ, Միւս գերկատարները լուի կրտսիւններ են, նորիսի վիզակի վերջին մասում, հրդ նոր ասանք է ասանում Միջին կեանքը։ Գլխաւոր հերաներն են Ձորի Միջին ա ընթերցողը, որնը լրացնում են իրար, զիւնն միմեանց պաշտիքը, միմեան էլ աղլում են կեանքի անհրժեքութեանը։ Անտարանց մարդու մեռնում աստիճանայն պիտի վերանայր մասը պատմել, ասկան զորն անկնը մարդու արտաւանգէով հետ, որը հինգ աստիճան իտալից գրաւում է աշխարհութեանը։ Վիզակիսի իտալում մի ասան կայ՝ քիլաներ գիւղի արան, շին ա զան՝ անքի ցանցում ա անտալ աստիճանով բաց կրտիկն։ Եւ արտահանում ըստ ա ըստ ընթերցողի ասիւն ըստում է մի նոր այլաբան, աշխարհաբը Միջին հին ա նոր փորձատարութեանի, խաւերի, ըստում ասերգութեանի ա մարտամեանի, որդի Յարսութի երթը զէղի անկում ա գաճակն հարցականը, Հայաստանը կրկին իր արեան համբին, մարդ լինելու ցուր։ Ժողովուրդ աստիճան էր եւ այլ աստիճան աստիճան անգամ աստիճան, որ աշխարհում երկինքն ա երկինքը բազմել, զնալ կայ։ Ինչու՞ կայ։ Այր, Յարսութի պատմը, ինչու՞ զնայ...։ Մայլի վրայ Միջին կազմին նաան ընթերցողի ասիւն ըստում է վարդաբը եւ յանդիման ընկն վրայ է ամբողջ մի մարդկայն՝ իր վարդ ա բարբով, իր կանցնով ա անարդ հակապատգով։ Մեռն է Ձորի Միջին, գիտնեք, որ փրկութեան չկայ, Միջին հետ աղլում ենք մարդու ցուր, հարսութեան ցուր, մարդկութեան ցուր։ Քերեւա նա գիտնեք, որ իր իմաստարարին շղթի վերադառնալ ա իր մի համակում կանչում է Յարսութի։ Ենթար, զառ. Էն արտանից, որ իւր ասի զայն եկաւ արեց՝ արեւ չի կարացէ ասի մէջ, իմ արեւ, Յարսութի։ Էն արտանից, որ երեսուց արեց՝ եւ չի զիւղէ զրան։ Էն արտանից բաց չի ընկէ բանգրի մէջ, երկինքն ծալի չի կիւ... իմ ասի բանգրի, Յարսութի, իմ ծալի, Յարսութի...։ Կայ ա անտալ յառկնութեան, բարբի մարդ ա գաւան սիրտ, գաւալ հակապատգութեանի շարք, յարդ պատմականի անմիջական շարկալը։



Նկարները՝ ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲՅԱՆԻ

Մ. Գ Ա Լ Շ Ո Յ Ե Ա Ն

ՁՈՐԻ ՄԻՐՈՆ

Մութ էր, եւ ասկեարներ խտխտոցը հեքիաթում լսած շարքերի պարէ նման էր՝ զգուհի էր ու զգրւանքից նոր կատաղութիւն էր ծնւում։ Ամէն ինչ ժողացել էին, կար միայն Սեպասարը, Սեպասարի քարերը ու պարող շարքերի տեսիլքը։

— Հէ-հէ-հէ՛յ... — մոնչում էր Սննոն, եւ զղիւղ-զրմփոցը թրատւում էր, գոշիւնը հասնում էր ձորերն ու ետ դալիս. «Հէ-հէ-հէ՛յ», — եւ դա հոգու մէջ գալարուող ցաւ էր, գլորուող ու դեռ չզլորուած քար էր, ե՛ւ կռօ, ե՛ւ զգուհի, ե՛ւ հայհոյանք։ Հէ-հէ-հէ՛յ, Սննո, հէ-հէ-հէ՛յ Սեպասար։ Սննո՛ն էր տոհմ, թէ՞ Սեպասարը։ Սրկուան էլ։ Իրենք Սեպասարի թիկունքին էին կանգնած, Սեպասարը՝ իրենց։

Եւ այդ գիշեր սարը Սեպասար մնաց, իրենք՝ երգումի տէր։

Խոտ՝ լուսթիւն իջաւ սարի վրայ։ Հաւաքուեցին մի տեղ, լուս նայեցին իրար։ Ոչ իր հոգում էր կանգնել յաղթողի հպարտութիւնը, ոչ Սննոյի գէմբին կար, ոչ՝ Մանուկի, ոչ՝ Իշխանի, ոչ՝ Արթէնի, ոչ՝ Առաքելի։ Կոռի տաք պահն անցել էր եւ էլի պարտուած էին ու պարտուած, մեծ կորուստի տէր։ Կորուստի տէր էին, կորուստի տէր, կորուստի տէր։ Սեպասարի պէս սարերի, Գիւղց ձորի պէս ձորերի, շէնքերի, գերդաստանների, շների... Կորուստի տէր էին ու երգումի։

— Թիզ մի շնահանջինք զիրգէն։

Եւ գիտէին. երգումը կը մնայ, Սեպասարը՝ չէ։ Գիտէին, զարկուելու են, գիշերը, աղամամութիւն, դուցէ՛ յաջորդ օրուայ իրիկնապահին, երկու-երեք օր յետոյ։ Զարկուելու են։ Ասկեարները տրորելու են Սեպասարը։ Բայց ոչ մէկի աչքում զարկուելու վախը չկար։ Զկար։ Զարկուելը բռնած գործի վերջն էր։ Էդպէս։ Զարկուելը կորեկի արտը ցանել, վերջացնելն էր։ Զարկուելը սարերից սահնակով խռտ ու տերեւ բերել, մարագի դուռը հափքելն էր։ Էդպէս։ Զարկուելը... Զարկուելը... Ոչ ոք չէր մտածում զարկուելու մասին։ Զարկուելը սարերից իջնող եւ ասկեարների մութ հոգուն նստող ահն էր, սարերից իջնող ու Յարութ պապի տնթաղ զլիին քոռուող ճնճղկաթեւ հով էր եւ մի բուս հող պապի անթաղ զլիին համար, եւ շարձակւած գնդակ զիւղ Գործվարքի համար ու իրենց երկրի սար ու ձորերից առնէ՛ք շատնել, սար ու ձորերին անգաւաճան մնալ էր։ Եւ զարկուելը զարկուել չէր, պարտք էր ու պահանջ։

Գիշեր էր, խոտը լուսթիւն էր իջել Սեպասարի գլխին, վեցով նստած էին՝ հրացանները ծնկներին, քարերին թիկնած, ծածում... ցածում՝ կրակւած գիւղերը։ Երկինք էին լսփում արնոտ լեզուները, հայեացքը փախցնում էր, կոպերից պոկ չէին դալիս։ Եւ այրւում էին աչքերը, շփում էր ու այդ ժամանակ էր պոչ հայեացք դիպցնում Սննոյին, աղեքից մէկն ու մէկին. չէր տէր ինչու շխտակ նայի։ Եւ կարգը։ Ոչ մէկ միւսին իր-չիտակ նայել



չէր կարող. հայեացքները փախցնում էին՝ հրդեհնուած գետնից, հրդեհնուած երկնքից, միմեանց հրդեհնուած աչքերից: Գիւլոց ձորով մէկ օդ կար կրծքի տակ, Գիւլոց ձորով մէկ օդ կար՝ փոթորիկ էր, դուրս գալու ճամբայ էր որոնում, մէկէն դուրս գալու: Եւ ականջները դժժուած էին, քունքերին՝ թրմորուկի զարկ, ու սիրտն ուզում էր ասկեսարները նորէն սողան Սեպասարնի վեր, ու ելնի՝ կուրծքը դէժ անի քարին. տեղական անի, գլորի: Ասկեսարները ետ չդառնան, դան, ու քար գլորի, ձորերն էլի դրժագրժփան, եւ ջնջխուի գիշերուայ լերդացած լուսթիւնը: Ասկեսարները ետ չդառնան, դան, ինքը թողնի քարերը, թուրն անի եւ ատաղին զարկի հետ, ատաղին հերթին Սեպասարի գլխին նստած երկնքի կարմիր դէժը թրատի: Յետոյ...

Յետոյ, ինչպէ՞ս եղաւ, թիկունքի քարը շարժուեց, գլորուեց, քար պոկեց տարաւ ու... դզրդոցով իջան քարերը: Սարի փէշին խղբլթոց ընկաւ, ալաւ, ալաւ... Եւ քարերի ետեւից քարեր գլորեց:

— Միբո՞... —

Մնջոն կանգնեց դուռաց, բոլորը ոտքի ելան, ձայն հանեցին: Մնջոն որոտում ունէր սանձած, ամէնքն՝ ունէին եւ իր տրածը առիթ էր՝ ուռած կուրծք ու սիրտ մի շնչով դառարկելու:

— Միբո... Տեսա՛ւ՝ր Միբո... —

Եւ այս անգամ Մնջոյի ձայնը խոնար էր՝ Գիւլոց ձորում խեղդուող հեղեղատի արձագանգի պէս:

— Միբո, գեղի մէջ ցորեն դարու հետ փոխող չէղնի՞, — սայլապան Արոն դարձաւ Ձորի Միբոյին:

հերկու գիշեր, էրկու ցերեկ պաշտպան էղանք սարին...»:

— Փութ ցորենին՝ փութ ու կէս դարի... էրեխայ են, ինչ գարի, ինչ ցորեն, կ'ուտին, ձմեռ կ'եւնին դուրս... —

հերկու գիշեր, էրկու ցերեկ պաշտպան էղանք սարին...»:

Երկու գիշեր ու երկու ցերեկ պաշտպանեցին Սեպասարը. ցերեկուայ կրակոցների դէժ՝ նշանառու կրակոցներով, գիշերուան՝ քարերով: Ասկեսարները վերաւոր օձ էին դարձել:

Երկրորդ արեւմտացին իշխանը խփուեց... իշխանին թաղելու ժամա-

Նաև եղաւ: Հողին յանձնեցին զէնքով, Զէնքով Թաղէլուն Արթէնը դէմ էր,
Սնջոն պնդեց:

— Գերեզմանի մէջ էլ թող դիմաթափ չէղնի :

Յետոյ Իշխանը Հայեացքները Հաւաքեց իր շիրմաթիւին, Հաւաքեց ու
բաց չթողեց, Ամիսառնե էին ինչպէս Իշխանը: Մինչեւ Իշխանի զարգիւնը
ըն մէկի տաղով չէր անցել, ինչ՞ փոռ փորել, թաղել էր լինի: Իշխանը յե-
տոյ ո՞վ է խփուելու... Թաղելու տամանակ էր լինի՞ր... Գերեզման է՛նչե՛ն-
իսկ, յ... Ս. Երեմի քանց Իշխանի երանի տալու հետաւո՞ր ցանկութեան մէջ:
Իսկ Արթուրի ժխար խազ դարձաւ:

— Իշխան անթաղ չմնաց... Էս թարձրիկ տարի վրայ գերեզման ունեցաւ :

Ի՞նչ, Արթէ՛ն, Արթէ՛ն, ցանկացածը մի բուռ հող էր, չունեցաւ: Ամէն ծնունդի Աստուած մի բուռ հող է շնորհում վերին օրդայ չամար, Արթէ-նէն՝ խնայեց, Սննոյին՝ խնայեց, դարձածուրի Մանուկին՝ խնայեց, Առաքե-լին՝ խնայեց... Հապա՛ր-Հապարհեբրին՝ Նժանապէս:

Երկու ցերեկ, երկու գիշեր պաշտպան եղան Սեպասարին։ Յետոյ առկեսարները հրանոթ բերեցին ու երրորդ լուսաբացն ու Սեպասարը առան հրանոթի բերան։ Հրանոթը որոտաց, Սեպասարը պատասխան տուեց, հրանոթը մէկ որոտաց, Սեպասարը՝ չազար, թիփը՝ մէկ, Սեպասարը՝ չազար-չազար... Հէհէհէհ՛, Սեպասար։ Բարձրաբարձր էր, զլիով անցնող ամպերը զերծուռ-բոկուռում էին, եւ զազաթի ջարերին մամուռ կար ու նախշ։ Աէ, զազաթի ջարերը ջար չէին՝ թազ էին, թազ, եւ այդ լուսելուսին թափ-թրփեցին ջարերի նախշում մամուռները, ջարերը կարծր ճաշ տուեցին։ Հէհէհէհ՛, Սեպասար... Կարկուռի պէս արկ թափուեց գլխին, ջնքն առիւծ էր, արթնացաւ, թափ տուեց բաշը, զէմ ամէն արկի չազար ջար ուղարկեւ։ Լեռու, ռաբ արեւ եղաւ, ջարէ Հեղեղ պոկուեց։

Հոսսաբացից ժինչև արեւալ զնդակոծեցին: Արեւալին Արթէնը...
զարկուեց: Զարկուելուց առաջ ելաւ Սննոյի մօտ.

— Անջօ... Անջօ, երդում թող երդում մնայ, բայց... բայց էս վիճակի մէջ զիբբէի վրայ մնալ միտք չունի... Թոփի գէտ կռիւ թողնինք սաբին, նաւանջինք, սուրիւ սաբի վրայ բռնինք զիբբէ:

Արթէնի խօսքը իր... նաեւ իր սրտովն էր, իսկ Սնջոն խոժոռուեց:

— Թէ՛ թիկունքից զարկուհլու միտք սւնին, քու երդումս ոտատակ տալ, գնահատել:

— Մեջո... ինձ անպատիւ մի աղբ, երդումս որտեղ մէջ պահեւ, դաբի մորալ պահեցուց օգուտ է:

— Սեպտեմբեր Թուրքի բերան Թողնող-գնացող Հեմ, գու թու սիրտ ու
երգում առ, ուրիշ սար գնա՛ :

Արթէնք կոտորուած դնաց, դերձ բոնից իր քարի թիկունքին ու... արեւալին պարկուկաց: Թաղելու ժամանակ չեղաւ...

Միւս գաբիւռողը Առաքելն էր...

Յեւոք, գեաբմաւցի Մանուկը...

Մնացին ինչն ու Սննդն։ Մնացին դերձերի վրայ, Մնացին իրենց հերթին։ Ասէն որոտի հետ աչք էր գեղցցնում Սննդին՝ կա՛հ, չկա՛հ... Իսկ Սննդն էր քարի թիկունքին քաշ էր։ Սննդն Սեպասարի գլխի նարկաբաժին, կարմիր ճաշ տուած քաղերից էր՝ կաթոլ էր քաշէ հեղեղի հետ սոսկուէր՝ կարմիր ճաշ տուած քաղերից էր։ Խփուկու ու հերթը ո՛ւնէ էր, իրենք, Թէ՛ Սննդան Գրեհոնի որոտի զէս։ Խփուկու ու հերթը ո՛ւնէ էր, իրենք, Թէ՛ Սննդան։ Նոյնը չէ՛... Բայց... ո՛ր ուրաք կէ արհեստի, Սննդն, Թէ՛... Զար...

digitised by gharale.R.A.@

կըւելը հաստատ էր ու հաստատ, եւ ուղեղից դուրս չէր գալիս՝ ինքը շուտ կը զարկուի, թէ՞ Սննդն: Եւ կարօտ էր զգում Սննդի նկատմամբ, սիրտն ուզում էր դնար, մեկնուէր Սննդի կողքին, գրկէր թիկունքը, գէմքը ունդ՝ մէր Սննդի դէմքին, սեղմէ՛ր, սեղմէ՛ր, յետոյ Սննդն այդպէս քար չմնար՝ թեքուէր, աչք դիպչնէր իր աչքին եւ արցունք թող լինէր Սննդի աչքի մէջ, եւ անձայն լաց լինէին... Լաց լինէին՝ զարկուած տղերքի համար, վերաւոր Սեպտասարի համար, ամէ՛ն, ամէ՛ն, ամէն ինչի համար ու հենց այդպէս զրկուած զարկուէին, միասին զարկուէին, ոչ Սննդն՝ սկիզբից, ոչ՝ ինքը, ոչ՝ ինքը, ոչ՝... ու փորձ արեց Սննդի մօտ գնալու... Ձգնաց:

Յետոյ ձորերում փշրուող հրանօթի որոտի ու Սեպտասարի պատասխան-որոտումների հետ հեռո՛ւ, հեռուից մի յոյս եկաւ՝ ասկեարները եղածը կը համարեն բաւարար, էլի գնդակոծութիւն չի լինի, կը սկսեն սողալ Սեպտասարը եւ ինքն ու Սննդն համազարկ կը տան, ամէն մէկը տասը-տասը ներկու լցուած հրացան ունեն, համազարկ կը տան եւ դուցէ, դուցէ...

Դեռ շնչում էին ինքն ու Սննդն, շնչի մէջ՝ դաւարուող վրէժ, ու մեռնել չէր ուզում:

Էլի որոտաց հրանօթը եւ այս անգամ...

Այս անգամ Սննդն դիրքից հրուեց, ծնկածալ եղաւ, կիսականգնել ու ընկաւ թիկունքին: Եւ այս անգամ Սննդն աչք չդարձրեց իր կողմ, ու այս անգամ՝ չորթ շարժեց:

— Մի՛րօ... Մի՛րօ, կը խնդրիմ ինձ քաշիս իմ դիրքի վրայ...

Մարդու վերլին խօսքն էր՝ կատարեց, ու Սննդն շնորհակալ նայեց, բերան բացեց, ասելիքը չդարձաւ բառ եւ աչք ու հայեացքով հասկացրեց «Մի՛րօ, քու դիրքին գնա՛»:

Չլսեց. ծունկ իջաւ, առաւ համբոյր, իսկ Սննդն աչքերով կոխ տրեց:

«Քու դիրքին...»:

Էլի հրանօթի որոտ եղաւ եւ դա միայն իր համար էր: Ձէ, Սեպտասարի ու իր... Ձէ, միայն Սեպտասարի համար էր: Ասկեար ու ասկեարի հրանօթի կոխը Սեպտասարի հետ էր միայն: Սննդի պէս ինքն էլ ճակատից դարկուած լինէր, թոք ու սարի կոխը կը լինէր էլի:

Մինչեւ արեւալ ու արեւ մի պարան ճամբայ կտրեց, կռուեց Սեպտասարը: Գազաթին ինչքան թաղթար կար բոլորը կարմիր ճաք տուեցին, կտոր-կտոր եղան, փշուր-փշուր: Ընկածը կանգնածի թիկունքում չէր պահուում. պսկուում իջնում էր... Քարէ ալիք էր, քարէ հեղեղ:

Հէ՛հէ՛հէ՛յ, Սեպտասար... Սարը երգում ունէր Սննդի պէս:

Յետոյ... յետոյ զարկուելու իր հերթն էլ հկաւ: Ինքն էր արեւն խառնում Սեպտասարի փշրուած քարերին, սարի հին ու նոր կանաչներին: Ձգում էր, որ մասը հեռու է եւ ուզում էր խանձուր դնել վէրքին ու կրակի մասին էր մտածում, ուզում էր արիւնահոսութեան դէմն առնել ու շապիկը պատուելու մասին էր մտածում, ուզում էր դիրքը թողնէր, քաշքաշ իջնէր սարից ու... շիտակաչ նայել չէր կարող երեսն ի վար մեկնուած Սննդի կողմ:

Ապա թմրութիւն իջաւ Սեպտասարի գլխին, ամէն ինչ դարձաւ թեթեւ, փափո՛ւկ: Խանձրձուկ ունենալու մ'չ ցանկութիւն, ո՛չ ուժ: Թւում էր, ինքը սարի գլխին չէ Յարութ պապի ճօճքի վրայ է: Ձէ, հանդա՛րա լողում է օդում: Կուրծքն ի վար մեկնուած էր ու երբ շարժուելու փորձ էր անում, գլուխը վանքի գմբէթի չափ խոշոր էր ու Սեպտասարի ամպի պէս թեթեւ, թեթեւ...

Եւ յիշողութեան պատասխաններ էին պոկուում ուղեղից, տնցած-գնացած բաներ, որոնք ինքը երբեւէ չէր յիշել ու չէր յիշելու:

Փոքր էր, շա՛տ-շատ փոքր էր, պորտաք... Սանդի վրայ նստած էր մի ծիւտ... Ուզում էր բռնել, ծիւտը մասների արանքից պոկուում-նստում էր մի՛ քիչ այն կողմ, նստում էր մի՛ քիչ այն կողմ, մի՛ քիչ...:

Հօր ուսին նստած գնում էին արտ: Քարի հաեից նապաստակ փախաւ... Մի ականջը սեւ էր, մէկը՝ ճերմակ... Մի ականջը սեւ էր, մէկը՝ ճերմակ, մի ականջը սեւ էր, մէկը...:

Քաց քարի մօտ լուրջ բոյն էր դրել: Ինում հինգը պուտ-պուտ ձուկար, չորսը՝ մօտի՛կ-մօտի՛կ, մէկը՝ մի՛ քիչ այն կողմ: Մէկը՝ մի՛ քիչ այն կողմ... Մի՛ քիչ...:

Սանդիկ օրերի յիշողութիւններից պատասխաններ էին պոկուում ուղեղից, փափո՛ւկ ալիք տալիս, մեծ ու նախշուն շրջանակներ կազմում օդի մէջ, գունդ ու կծիկ շարժւում, մեծանում, յետոյ կարւում, խառնում էին իրար...:

Ուշքի եկաւ, գիշեր էր. ոչ թոփ ու որոտում, ոչ ասկեար: Քրո ու քաշ իջաւ սարից... Ձէ, իջնել չէր՝ տղաներից փախչել, գող-գող փախչել էր... Սեպտաբրի փէշին շուրթերը կպցրեց քարի թաց պոնկին, շուրթերը մոկեց՝ ծուեց ջրի շիթը... Մէ քուր, ե՛ւ մամուռ, ե՛ւ նիխար հող, ե՛ւ փոշուր քար խառնեց երակներում մնացած պուտ տրեան հետ...:

Ձորի Միբոն խոնարհեց գլուխը ու նրա մաշուած թերթունքներից կխառնեց-տարբերուեց օր էն օր ու օրերի իր կեանքի թելը՝ ո՞նց չկարելի... Սեպտաբրի փէշի ծննդուն ագրիւրի ջուրը անմահական էր՝ պահեց:

Յետոյ Ձորի Միբոն հայեացքը հաւաքեց ճամբից, հայեացքը տարաւ հասցրեց հետու լեռնապարը, աչքերը մանրացրեց՝ ծակեց մշուշը: Այնտեղ, յետնապարից այն կողմ, «տղեքեց» մի բան մնացել է՝ իր համար շնչաւոր: Նայեց, հայեց Ձորի Միբոն, ծածկուեցին աչքերը՝ տրորեց ու ասաց որդուն.

— Յարութ, կուտի միջի ընկերութեան ընկերութիւն չի հասնի. թեւ ու թիկունքի չէ՝ հոգու ընկերութիւն է: Ու կուտի միջի ընկերոջ պատճառով թեւ ու թիկունք չկան չի հասնի. ընկերոջ թեւ ու թիկունք չկան չի հասնի. ընկերոջ չկան չի հասնի. ընկերոջ չկան չի հասնի...:

— Մեր Միբոն էս տարի կոմերիտական կ'ընդունուի, — ժպտաց Արոն, ապա լրջացաւ, — վայ թէ չընդունին՝ ծննդականով է աստեղծութիւն, էնպէս՝ պատիւ-մատիկ, տասերկու էղնի-չէղնի... Մենդական սխալ է, գիւղիտը-չորդի սխալումնք... Յարութ, փոխել կ'էղնի՞:

— Եթէ սխալուել են, պէտք է ճշդեն: Պարտաւոր են:

— Գիւղիտը-չորդ Միբոնի մօր կ'ուզարկեմ. Միբոնի մէջ գիր կ'իմանայ. էրկու տարի լիկկայան գնաց: Միբոնի մէջ...

«Յարութ, բա քո մէջ ո՞ւր է, դառ, — Ձորի Միբոնի շուրթերը դողդոջեցին, — հէշ կը յիշե՛ս... էղնէր ու լար ու քեզ ճամբէր կուտ... Իմ աչքեր ցամաք աղբիւր է... Նարէ՛... Խուրթի՛ հարս... Յարութի մէջ... Լուսնոգի Նարէ՛, տղէն կուտ է կ'երթայ, — մտքում լաց հղաւ, — տղին պաշտպան էղի, Նարէ՛...»:

Յետոյ Ձորի Միբոն մտքում հա՛ կրկնեց՝ Խուրթի հարս... Նարէ... Յարութի մէջ... Խուրթի հարս... Նարէ... Յարութի մէջ... Ձիւղնեկու համար Ձորի Միբոն ճիշդ պիտի թափէր, ելնէր սիրտ ու հոգու դէմ՝ չեղաւ, եւ անունները թաւալուեցին, թաւալուեցին ու բերան չբացած ականջն ըն-

կաւ իր ձայնը՝ խոնարհ էր ու խոնարհ երգ։ Անունները թաւալուեցին, թաւալուեցին ու լսեց խոթեցի հարսի ձայնը, նարէի ձայնը, Յարութի մօր ձայնը, մէկ ու նոյն ձայնն էր՝ խոնարհ ու խոնարհ երգ։ Յետոյ Ձորի Միտոն պինդ-պինդ նայեց Յարութին ու տեսաւ նարէի աչքերը, նարէի շուրթերը եւ ճակատը ճերմակ, եւ անհնազանդ մաղբիւր... պինդ-պինդ նայեց ու սեղ-մըւեց որդուն, քաշեց որդուն գլուխը մօտ բերեց, սեղմեց իր գէմքին ու աւաց։

— Յարութ, քու հեռանալով... քու հեռանալով շատ բան է կը հեռանայ... Աշխարհն է կը մթնէ, Յարութ։

«Գաղթի երկրորդ ամսին հանդիպեցայ խոթեցի հարսին...»։

Բոլորը խոթեցի հարս էին ասում։ Մոցուոր էր։ Եւ ինչքան աչքը դիպչում էր խոթեցի հարսին, խոթեցի խոթեցի էր յիշում... Երբ Միտոն դարձ տարաւ, խոթեցի ծոցուոր էր ու գրկանոց ունէր։ խոթեցի ծոցուոր ու գրկանոցով՝ առաջնեկն էր՝ Յարութ պապը իր անունով կնքեց։

(«Ժմ օր մօտեցաւ, կը մօտենայ, իմ անուն կը բաշխիմ քու տղին, Միտո»)։

Սեւ սարի անտառում խոթեցի հարսը ունեցաւ տղայ։ Ոչ ոք չտեսաւ մանչի աշխարհ գալը։ խոթեցի հարսին աչքալուսանք տուող չեղաւ եւ ոչ մէկը միտք չունեցաւ անուն բաշխէր մանչին։

Բիզտուած մարերն էր խոթեցի հարսը, ծունկ էր ծալում, հստի ետեւից փոխում ոտ, օրօրում էր ու մէկ-մէկ յիշում, որ ուտելից կախ ընկած կապ-քրթիկի մէջ շունչ ու շնչաւոր է։ Եւ ծալում էր ու մտահան անում, օրօրում, գնում...

Զրօսկան էր խոթեցի հարսը։ Կոտորում էր, գաղթ էր, հարսնութիւն էր անում։ խոթեցու հարս էր՝ չրօսկան։

— Լաւ, — ասում էր իշխնձորցի կամէն, — քու հօր աւեր տան հետ աւրաւ քու հարսնութիւն։ Մեծ ու փոքր, հարս ու հարսնութիւն չկայ, հաւա-սար գաղթական ենք... Ոստա՛, կը տրաքուի քու սիրտ։

Փէշերից ծուկներն էին մնացել փշերի վրայ. հա՛, հա ծունկըաց պիտի մնար ու դրա համար ամաչում էր, ցուրտ ու քամուց, սոթ ու թօնից շորը փսթուէ էր՝ ամաչում էր. գլխաշորի ճոթերը կուրծքի մօտ փրայ էր պահում։ Յետոյ, վիճակին գլխի, մահան էր անում, մահան անում, որ շորը ճղճղուած է ու գլխաշորի ճոթերը պլստում-բացում էին կուրծքի մօտ։ Մէկ էլ գլխի էր ընկնում, ձեռքն ու գլխաշորի ճոթերը պահում էր կրծքի վրայ։ Միայն այդ պահին էր ինքը նկատում, որ խոթեցի հարսը... խոթեցի հարսը խորոտ է եւ տեղն ու տեղն մոռանում էր։

Այդպէս՝ մինչեւ կոտորածի առաջին ձմեռ, մինչեւ ձմեռն կէտ, մինչեւ գարնանամուտ։ Եւ խոթեցի հարսը չիմացաւ, թէ տղան ե՞րբ առաւ լեզու, ասաւ խօսք։

— Մալէ, հաց։

(Ո՞վ սովորեցրեց մանչին, ի՞նչ խմացաւ, որ աշխարհում հաց ու հացանուն կայ...)։

Ականջն ընկած խօսքը կա՛մ հասնում էր մօր ուղեղին կամ ընկնում փշերի բերանը, աւազների մէջ։ Եւ չիմացաւ, թէ մանչը իր լեզուն՝ օդ ու պետից հաւաքած իր երկու բառը, ե՞րբ առաւ-համբարձաւ երկինք... Մատ-

միտ անշունչ մարմինը սեղմեց կրծքին, ամուր, ամուր սեղմեց՝ առաջին անգամ։ Եւ ճշաց ու լաց եղաւ ու լացի միջից եղերգեց...

— Իմ էրեխին թաղէ՛ք... Կը խնդրիմ՝ թաղէ՛ք... Մեղքո՛ւկ է... անկնո՛ւնք է... անո՛ւն չունի...

Ե՛ւ սեղմեց կրծքին, ե՛ւ կոծ ու պաղատանք արեց, ե՛ւ ճանկեց սառած զետինը, ե՛ւ ասաց եղերախաղ...

— Մեղքո՛ւկ է, թաղէ՛ք...

Ջանան մարէն գետափից առաւ պտղունց ցեխ, խաչ արեց մանչի պարտ ու ճակատին, հոգէ կնունք արեց, ու Մուրադ պետի ափին աւելացաւ մի փոքրիկ կնճիռ...

Այդ օրը առաջին անգամ լսեցին Խութեցի հարսի ձայնը։ Յետոյ լեզու թրկեց իշխնձորի կամէի հետ, յետոյ... Փէչեբը ծուէն-ծուէն կախուեցին, ծուէն-ծուէն ամօթ թափուեց սար ու քարերի մէջ։ Ծծի մէկը բաց էր, մէկը՝ լաթ ու մաթի մէջ, եւ Խութեցի հարսի գլխաւորն ու ձեռքը չկանչող դաջին կրծքի վրայ։

Եւ մի օր, օրը ցերեկով, ոտքի տակ գցեց հարսնութիւնն էլ, կենարժասի ամօթն էլ հետը...

Գոյի ձորում էին, թաքստոցում՝ համր ու դլխաքարչ։ Մէլ էլ Խութեցի հարսը շարժուեց, թաքստոցից դուրս դալու փորձ առաւ։ Կամէն զարմացաւ, հարց տուեց.

— Ի՞նչ միտք ունիս։

— Հասնիմ էնտեղ, դառնամ, — ձեռքը մեկնեց ձորի ծունկը։

— Խեղա՞ր, լաւ։

— Իմ սիրտ կը խառնէ, — ասաց գունատ ու խեղճ։

— Սիրտ խառնելու պատճառով մեռնի՞նք. ամէն քարի տակ անօրէն կայ։

Խութեցի հարսի ծնկները դողում էին. բոլորը հասկացան, որ... աչքից հետու տեղի պէտք ունի։ Եւ չլսեց, քայլ արեց։

— Նստի՛ր... Նստի՛ր քու տեղ... անիծած, — խուլ ճշաց իշխնձորի կամէն։

— Ոտաց ճամբայ էրթալ կ'ուզիմ..., — նոյն տոնով պատասխանեց Խութեցի հարսը։ Ասաց, կարմրեց, աչքերի մէջ արցունք ցողեց, արցունքի մէջ եւ ցաւ, եւ զայրոյթ։ Վճռական քայլ արեց.

— Կ'երթամ։

Քառասունհինգ-յիսուն աչք ուղրուեց Խութեցի հարսի վրայ, քառասունհինգ-յիսուն ձեռք մեկնուեց ծածուած փէշը։

— Ինչ դալաթութիւն կ'անիս, հոս էրէ, — կամէն ոտքի կանգնեց, — քու դալաթութեան պատճառով ամէնիս օրի՛ կը մտանիս... օռապէ...

Խութեցի հարսը արցունքը ղրթացրեց, աչքերում մերկացաւ զայրոյթը՝ ուղղեց իշխնձորցի կամէին.

— Քեաւթաւ շուն։

Ապա եւ ամէնքի վրայ ճօճեց աչքերի մերկ թուրը.

— Անօրէններ, — ճշաց, կրճատացրեց աստմները, քերանը ծոճեց, արհամարհանքով ժպտաց՝ քիչ էր՝ ծիծաղեց՝ շատ բարձր էր, թաքստոցը արձագանգում էր ու նորէն չորչրուկ ձեռքեր կարկառեցին Խութեցի հարսի կողմ. աղաչանքի պէս սպառնացին՝ փակեցին բերանը, սպառնալիքի պէս աղաչեցին՝ ծուտտեցին փսոսուած շորը։ Քառասունհինգ-յիսուն չորչրուկ ձեռք, իր ձեռքերն էլ հետը, իր... իր, կարկառեցին՝ իրենց զաղթական կեանքի համար ժամ ու օր խնդրեցին Խութեցի հարսից։ Խութեցի հարսը

սառած ժպիտով նայեց ձեռքերին, իր գզգզուած դերիային, մերկացած տակի շորին, յետոյ տակի շորը... Իջեցրեց եւ ինչ «զալաթութիւն» անում էր, արեց զաղթականների խմբի կենտրոնում...

Ձորի Միրոն աչքերը փակեց:

— Ամօթ էր, — մտածեց ձայնարկու:

— Ի՞նչ, Հայրիկ, — Հարց տուեց Յարութ որդին:

— Հէ՛չ, դառ:

«Մեզ Համար էր ամօթ. չէ՛՝ Խութեցի Հարսին» — Եւ լուեց, եւ ափերով փակեց աչքերը, մնաց, մնաց, դարձաւ Յարութ որդուն:

— Յարութ, աղամարդ մնաս... Լսէ՛ ու մահան չանիս՝ մնաս տղամարդ, — Թունդ կրկնեց, — կուր է, նեղ վիճակ կը պատահի, մահի հետ Համաձայնութի, այրութիւն կորցնելուն՝ չէ... Մերը կուր չէր, — ցածրացրեց ձայնը. էլ Յարութի Համար չէր, — մերն ուրիշ էր:

— Յարութ, գերմանացու էսեղի անուն Ֆաշիստ է, — Հարկ Համարեց սայլապան Արոն:

— Աւել անուն չէ, քեռի Արօ, Ֆաշիստ նշանակում է... ինչպէս բացատրեմ, որ Հասկանաս...

— Ի՞մ Հասկանալով էսպէս է. — ոնց որ մէկ մանի գեղ, Հարց տայ. Արտոյի տուն ո՞րն է: Ձեն իմանայ: Ասի՝ «Մահ գլուխ» Արտոյի տուն՝ բոլոր կ'իմանան... Մերօ, մեր էրկիր մարդիկ էսեղի անուն շունեն, ինչի՞ց էր: «Ե՛ք օր Խութեցի Հարս լացա՛ւ, լացա՛ւ, լացա՛ւ...», — Ձորի Միրոյի ականջներում մանուեց սայլի ճռռոցը՝ «լացա՛ւ, լացա՛ւ, լացա՛ւ...»:

Քաշուեց անձուի խորքը հոնգուր-հոնգուր լաց եղաւ, կարցրած ամէն ինչի Համար մինչեւ գիշեր լաց եղաւ:

Գիշերը Թաքստոցից ելան՝ խմբից բաժանուեց, գնաց: Եւ ոչ ոք չասեց, ինքն էլ, ինքն էլ չասեց:

— Խութեցի Հարս, մենակ ո՞ւր, մի բաժանուի մեղնէ, մեռնինքապրինք՝ միասին:

Խութեցի Հարսը առանձին գնաց: Ո՞ւր: Իրենք խմբով ձոր ու ձոր քայլեցին: Ո՞ւր: Ուղղութեան մասին մտածող կա՞ր. մութ էր, չար աչքին անտես, պիտի քայլէին: Ձէ, լմկուած լան պէս քարէ պիտի դային, Թուր ու Թուանքից պահէին շիւնք, անէին կտոր Հացի ճար. պահէին շունչ:

Այդ գիշեր մէկ Խութեցի Հարսին միտ բերեց, տաս՝ Խանդութին, մէկ-մէկ՝ Խութեցի Հարսին, Հարիւր՝ Խանդութին՝ գրկանոցով ու ծոցուոր: Այդ գիշեր էլի նոր զաղթականներ Հանդիպեցին, էլի Հարցուփորձ արեց:

— Ձեր մէջ Թաղամանքի չկա՞յ... Խանդութ անուամբ Հարս չէ՞ք տեսէ... Թաղամանքի աղջիկ, Գործվարքի Հարս... Գրկանոցով... Մոցւոր...

Յետոյ, այդ գիշեր ինքն ու մոտակայի Հմայիակը մահն աչք տուած իջան սեւ լուսն ու սեւ քոլոպով լցուած գիւղ Ալթինի. մահն աչք տուած փորձ արեցին երկու-երեք գուռ ու երդիկի վրայ՝ չեղաւ, ապա մտան մի գոմ՝ բնիկ էր, հօտաղին, հօտաղին... խեղդեցին... Հա՛ խեղդեցին հօտաղին, մէկական ոչխար շալակած դոմից ելան, տափէ-տափ, շնորի հետ կուր տալով գիւղից ելան, ծնկեծալ գնացին, չունչ առան, գնացին... Եւ ինքը մոռացաւ, որ Խանդութ կայ, Յարութ գրկանոց կայ, որ... որ...

Մնացել էր մի ոչխար ու ոչխարը յօշոտելու կերքը...

Այդ գիշեր ինքը գայլ ու դաղան էր...

Հասաւ զաղթականների խմբին, ոչխարը շալակից ցած բերեց, ընչա-կտոր նստեց ու... ու բաց չթողեց ոչխարի վիղը: Չթողեց՝ իր որսն էր,

իր որոն էր՝ զաղթականները բղիկ-բղիկ կ'անէին, իրեն բաժին չէր մնայ...

Ձանան մարէն մօտեցաւ։

— Ձալ է, Հա՛, — ասաւ, — ո՞րձ է, — շօշափեց ու աչքերը կ'աչքեց ու խաբարի ականջին, — եա՛, Յիսուս, — խաչակնքեց, — Միբո, իմ աչք լաւ չի ջրկէ, տես ա՞յ ականջին խաչ նշան կա՞յ։

Պատասխան չտուեց։

— Ծա՛, — էլի զարմացաւ մարէն, — Աստուած է վկայ՝ իմ մատաղցուն է, Հերու զարնան զլուխ, կոտորումից ամիս առաջ ծնուաւ, Սուրբ Կարապետին մատաղ խոտացայ, ականջին խաչ-նշան արի... է՛, Մշոյ սուրբ Թան Սուրբ Կարապետ...

Մարէի մատաղացուն էր, չէ՞, մարէն տէր էր ու ներշնչուել էր, բացել ձեռն-ճերմակ գլուխը եւ ցուրտ երկնքի տակ աղօթք էր անում, արցունք էր թափում, զանգատ էր անում «Երկնային Տէրով», որ իր անմեղ զարններին մոռացել է... Ձէ՛, Հաւատալու բան չէ՛, անօրէնների ճանկից փրկուած մատաղացուն վկայ՝ չէ՛։ Ապա եւ մարէն խնդրեց, որ մատաղը կտրուի դէմանդուռուն ու ափսոսաց, որ Կիրակի չէ։ Յետոյ...

Ինքը յանկարծ յիշեց Խումար մարէին, յիշեց... յիշեց... ու Խանդութին յիշեց եւ բաց թողեց ուխարի վիզը։

Իսկ գլուխն ափերի մէջ առած-նստած Հմայեակը Հայհոյեց երկնային Տէրովն էլ, Մշոյ սուրբ Թան Սուրբ Կարապետին էլ, Ձանան մարէին էլ եւ խըլեց մարէի «մատաղացուն» ու զարկեց գետին։ Մարէն Հմայեակի փոխարէն մեղայ եկաւ, խնդրեց Աստծուն։

— Ձլոխ, սիրտ էլած է։

Դարձաւ պաղատեց Հմայեակին։

— Գլուխ աղօթարան զարձու։

Հմայեակը հրեց-գլուրեց Ձանան մարէն, եւ մարէն լաց եղաւ երեխայի պէս...

Է՛, զաղթական... Ծո՛ւն... Գա՛յլ... Գաղա՛ն...

Կրակ չարեցին, չկար, լինէր՝ էլի չէին անի, կը մատնուէին թուր ու թուանքի։ Եւ բաժանեցին, հում-հում կերան միսը եւ լուսաբացի հետ մտան քարանձաւ...

Դարձել էին վայրենի՛, վայրենի. տնանկ էին, քարանձաւի բնակիչ էին, վայրենի մարդ։ Եարժմունքի մէջ վայրենութիւն, խօսք ու գրոյցի մէջ՝ վայրենութիւն, քնել-արթնանալու մէջ՝ վայրենութիւն, ուտելիք ճարել՝ վայրենու նման։ Էղզլէ՛ս էր, Հա։

Ճոթ հացի համար ձեռնքաշութիւն եղաւ, կոխ-արիւն թափել եղաւ։ Եղաւ, բայց...

Բայց ձեռք պարզեւ-մուրալ՝ չէ։ Ձեղա՛ւ։

Ձորի Միբոն խորը շունչ քաշեց, շնչեց մի տեսակ հանդիստ ու ցանկութեամբ ու այդ կում շնչով իրեն ապրելու իրաւունք տուեց։

— Յարութ, լսէ, կռիւ է, կը պատահի զուրկ մնալ, անթուրիւն։ Յարութ... Սովից մեռնելուն համաձայն եմ, ձեռք պարզել, հաց մուրալուն՝ չէ։

— Միբո, Անդրանիկ նմանապէս էդ կ'ասէր, — սայլապան Արոյի խօսքը անցաւ հօր եւ որդու արանքով։

— Ե՛ս հաց մուրամ, հայրիկ, — վերաւորուեց Յարութը։

— Դառ, պատերազմ է։ Գործից կտրուել կայ, գէրութիւն կայ։

— Կը մեռնեմ, ֆաշիստներին գերի չեմ յանձնուի, — նոյն խռովկան տոնով պատասխանեց որդին։

— Պատերազմ է, Յարութ, — մոայլ կրկնեց Ջորի Միրոն։

— Միրո, չլսեցիր իմ խօսքը, զօրավար Անդրանիկ նմանապէս մուրաւունքէմ էր։ Հաւատա՛, Անդրանիկի խօսքէն ականջով եմ լսէ։ Եկաւ, կանդնեց մեր կենտրոն, հարց տուեց՝ սովա՞ծ էք։ Մեր գլուխներ կախեցինք։ Ասաց. հայեր, իմ աչք մահ չտեսէ, էլի կը տեսնի, բայց ձեռք պարզող մուրացող տեսնել չի ուզէ... Միրո, էս դադրած օր վկայ՝ զօրավարի բերանի խօսքն է։

— Կը հաւատամ, Արօ, կը հաւատամ, — անցած ճանապարհին Ջորի Միրոն առաջին անգամ լի բերան պատասխան տուեց սալլապան Արոյին եւ շարունակեց մտքում։

«Անգէն ժողովուրդ՝ թուր ու թուանքի բերան, իշխանութիւն չկար, կար տառ կուսակցութիւն՝ տառ գիծ։ Զօրավար Անդրանիկ կը զարկուէր էս-տեղ-էնտեղ... կեանք կուտի մէջ անցկացրեց ու...»։

— Զօրավար Անդրանիկ չվիրաւորուեց, — յիշեց եւ հարկ համարեց առել որդուն, — կեանք կուտի մէջ անցկացրեց ու չվիրաւորուեց... Գիծա-նա՛ս ինչի, Յարութ, ժողովուրդ փրկելու երդում ունէր, երդում պահելու համար բոլոր գաղթական հայերի կամք տուէր էր իր հողու մէջ ու էդ կամք չթողեց դնակ մօտ դայ իրեն։ Իմացա՛ր, դառ։

Յարութը հետաքրքիր ու երկար նայեց հօրը, գլխով արեց, թէ՛ հա, հասկացայ, մինչեւ վերջ չհասկանալով սակայն հօր ասածը եւ հարցրեց։

— Զօրավար Անդրանիկը ի՞նչ կուսակցութեան անդամ էր, հայրիկ։

— Զօրավար Անդրանիկ մարդ էր, — մոայլ պատասխանեց Ջորի Միրոն։

— Անդրանիկ, — Արոն էլի ձգեց՝ ոչ իր ձայնով։

«Դադթականների երկնային ու երկրային տէր... Մարդ էր... Այր էր... իմ նման... ես... Անպատարից յետոյ կլոր տարին էրիսի ու մօր հետ, պառաւ ու ծերունու հետ քրոջաչ տուի, դահրումար ճանկեցի-կերայ, իմ գլուխ պահեցի քարանձաւների մէջ...»։

Ջորի Միրոն ծումեց դէմքը. է՛ն օրերի Միրոյի նկատմամբ արհամարհանք էր։

Եւ խոնաւ անձաւի ծաղկաւար դէմքից հեզնանք ու քմծիծաղ էր թափւում բաց դլիսին եւ ականջներում ընկնում էր ձայն։

«Միրո, քու կեանք էդքան թա՛նկ է»։

Եւ փնչատում էր, բռունցքների մէջ խեղդում բաղուկների կիտուած ուժը։ Իրօք պէ՛տք է այդքան սիրել սեփական շունը եւ դողալ բրդոտուած մի շիկեքի համար...։

— Ես կ'երթամ մեր քոչ գտնելու, — խորից բաժանուելու վճիռ արաւ Գնաց... Բնաւեր մարդկանց խմբերի հանդիպեց, հարց ու փորձ արեց։

«Անթի թաղավանք գեղէն մարդ չկա՞յ ձեր մէջ... Խանդուկ անունով հարս չէ՞ք տեսէ։ Թաղավանքի աղջիկ, Գործվարքի հարս... Անունով Խանդուկ... Գրկանոցով... Ծոցուտը...»։

Հարց ու փորձ արեց, բաժանուեց, զնայ։ Էլի հանդիպեց, բաժանուեց էլի։ Էլի ու էլի...

Կլոր տարին որոնեց։ Խոյս տուեց թուր ու թուանքից, երբեք չու՛տաւ իր անթիի ու մերկ մարմինը՝ որոնեց։ Ու փնտաւորեց տեղը մի անգամ

ազատեց իրեն հաստատ մահից... Քսան հողու պարանով կապկպեցին՝ կողք-կողքի, մի շարք։ Կապկպեցին՝ խոնարար դրեցին միմեկահանութիւնում շահածի աջը, միմեկը նստեցին հացի։ Ինքը շարքի ծայրում էր՝ դոց լուրթ ու մշուշուած գլխով, ինչպէս բոլորը։ Յետոյ հոգին ծառս եղաւ։ Ճիգ արեց, բացեց պարանի հանդոյցը... Ետեւից կրակ բացին, գոռգոռացին, հայհոյեցին... Յետոյ, երբ ետ նայեց, տեսաւ, որ ծռած շինքները հաթողանից ազատողներ էլի են եղել...

— Յարութ, դառ, լսէ ու մտնան շահիս... Վիզ շծուիս, մահ չընդունիս կամօք։ Կոռւի քու մահուան դէմ։ Եղիթ էղար, կ'ապրիս, չէ՞՝ մեռնել կայ ու կայ։ Քու ձեռք ու ոտք կը կապեն, սիրտ կապել չէ՞ղնի։ Մահի դէմ կուտի ճար կը գտնի չկապած սիրտ... Յարութ, էն մարդ կամօք կ'ընդունէ մահ, ով վրէժ ու փափաք չունէ։

— Ընձարիտ է, Միբո։ Միսիկի մօք կ'ասեմ...

«Գարնանից-գարուն փնտռեցի...»։

Եւ առաւ լուր։

— Խանդութ Զղնի ձորի քարտփից մահ ընդունեց՝ անօրէններ անպատուել կ'ուզեն։

Մէկն ասաւ, տասը հաստատեցին։ Լսեց ու Սեւ սարի ամպն իջաւ դէմքին, անտառի կոտորուած ճիւղերի պէս կախուեցին թևերը, Անդոկայ սարի ծուրը լցուեց աչքերի մէջ։

Յուշերը օձի պէս խայթեցին Ձորի Միրոյին։ ցնցուեց, աւելի ամուր անդմուտից որդուն ու քակուեց։ Տնքոցի վրայ սայլապան Արոն չուռ եկաւ ու տեսաւ Միրոյի փակ աչքերը։

Այն ժամանակ էլ՝ քանհինգ տարի առաջ, երբ իմացաւ կնոջ ու որդու հետ պատահածը՝ այդպէս ու աւելի սիրաքանդումով տնեաց։ Յետոյ ձայն հանեց անբառ, դոռաց վայրենու պէս, դրկուեց մի ժայռաբեկօրի, առամենիքը սեղմեց, շարժեց, տեղահան արաւ, գլորեց։ Ձորը դղրդաց, հազար տեղից, հազար ձայնով արձագանդ տուեց ու առաւ, եւ հրազեններ պայթեցին ձորը լցուած որոտ աղմուկի վրայ։ Մեքրոպը մօտեցաւ, բռնեց թևից։

— Աշխարհն է կրակ ընկէ կը վառուի, Միբո, տղամարդ միս'։

Քափով չուռ եկաւ, կրակուած աչքերով նայեց Մեքրոպին, չար ու խոժոռ ամէնքին նայեց, եւ ամէնքը թուացին օտար։

Ու ողջ գիշեր տնեաց։ Իսկ արեւըացի հեռ թմբութիւն իջաւ մարմնին, հոգուն՝ լուռ թախիծ։ Տունը յիշեց, տանեցիներին՝ մէկիկ-մէկիկ, տան ու տանեցու հանդիպելու յոյսը խլրտաց արտում... Ախր, մեծ եղբայր Զարեհը, հօրեղբայր Նշանն ու հօրեղբայր Կիրակոսը էն արնոտ առաւօտ, կոտորածից տառջ, դնացին կորեկի արտ։ Պետրոսն ու Պողէն դառ ու Հորթ առած՝ ելան Ընկուղասար։ Գուցէ... Գուցէ ազատուել են, ու կը հանդիպեն մի օր։ Յոյս էր՝ յայտնուեց՝ չեղած տեղից։ Ու երբ հեռաւոր մի կրակոց լսեց, կուչ եկաւ, սեղմուեց քարին, յետոյ արտապնդուեց խուժը մարդկանց մօտի-կութիւնից ու մնաց նրանց հետ։

Եւ գլուխը մշուշի մէջ էր, երբեմն թւում էր, թէ Խանդութը իր կողք

բին է ու ոտքը կախ էր զգուժ. ախր, խանդավառ ծոցուոր է: Յետոյ ուղքի էր գալիս, բայց եւ անպուշտ ցանկութեամբ թեքում-նայում էր ու ցրնցում իր ստուերից: Այդպէս, խանդավառ մասին լուր տուած զաղթականներին հետ ոտք փոխեց մի քանի օր:

Իսկ մի առում...:

Ֆիւսան մարէն վերջին կորեկհացն էր փշուր-փշուր անում, որ բաժանէր: Բոլոր Հայեացքները խառնուել, գողնոցի վրայ բզկտում էին իրար, Հայեացքներից կրակ էր բնկել, այրում էր մարէի ծարձրումը գողնոցը: Մէկ էլ կովի բառաչ լսուեց: Հայեացքները շուտ եկան ու նիզակների պէս շարժուեցին կովին: Կովը մարդու հոտ էր առել. ախր մզողում էր: Աչքերի մէջ սեւ փայլ ու տրամութեան սեւ սուսող կար: Յղի էր, ծնելու օրերն էին: Կանգնել էր շուտ ոտքերով, լցուած կուրծքը հարում էր, Հայեացքը կոտորեւեց Ֆիւսան մարէի վրայ, գլուխը երկարեց, էլի մզողաց, մօտ դալու շարժում արաւ: Թոկ երբ Սողոմ ելաւ ոտքի՝ դժգոհ թափ տուեց գլուխը, բառաչեց երկար ու գիւլ, շուտ եկաւ քնաց՝ ծանրաքայլ, շարժարտով: Սողոմի աչքերը փայլում էին, շուրթերը՝ ամուր սեղմուած: Հանեց խանչալը...

— Սողոմ... ծանրացած է, — ասաց ինքը:

Սողոմ նայեց չար ու տարօրինակ: Սովալուկ խմբում, փուշ ու քարերի արանքից, աղաւաղուած աչքեր հանդիպեցին իրար՝ յոյս ու կոխ տուեցին, ապա կանգ առան մէկ իր, մէկ էլ Սողոմի վրայ: Սողոմ դաբոնակալ շտապեց: Ինքը թաւ տեղից, խանչալը հանած կանգնեց գիմացը: Ծակատ ու աչքով կոխ տուեցին: Իսկ կովը հեռանում էր. գուցէ բաժին դառնար ետթողանակների կամ զաղթականների մի ուրիշ խմբի: Ու Սողոմ, աչք չկտրելով կովից, դուռաց:

— Մի օր, քաշուի իմ ճամբից...

— Կը դարկուիմ, բայց ծանրած անասունին մօտ չես էրթայ:

Սողոմի աչքերի փայլը դիպաւ խանչալի շեղբին, խանչալը՝ իր աջ ուսին...

Նրկու օր յետոյ, երբ աչք բացեց, մշուշի միջից երեւացին Սողոմի ախրը աչքերը: Մուկի եկաւ, բան ասաց իրեն, թէ ինչ՝ գլխի շրնկաւ: Իսկ երբ ոտքի վրայ էր արդէն, նկատեց, որ հազին նոր տրեխներ կան: Հանեց, շարժեց մի կողմ, հազաւ ծակ տրեխները, խմբից հեռացաւ՝ կաղին տալով, վիրաւոր ուս ու ձեռքով եւ խռովայոյզ ուխտ ու պայմանով...

Էլ մօտ չգնաց զաղթական ոչ մի խմբի, մնաց մութ ու ծիւղ լցուած ձորերի հետ, գլխներին փոշի մաղած սարերի, փշտած աղբիւրների, մնաց սեւապարթ անասունների հետ, գալլի ձագ ցնկնող շների հետ... Մնաց մեռնակ զաղթական, թափառեց, թափառեց, թափառեց... Իջաւ Ջղնի ձորը՝ աչքերը ծակծակեց փշերի վրայ, ծանր-ծանր բարձրացաւ, մտաւ Սեւ սարի անտառը՝ վիրաւոր արլի պէս թշուրեց, արլի պէս բնկոյց ջարդեց-կերաւ: Մօտեց Խուրի շուրջը, մօտ-մօտ արեց Մովսսարին, եւ Մարաթուկին, եւ Մեպասարին, գնաց Ընկուզասարի կողմ եւ Ֆիդասարի, եւ Մասրաձորի, մօտեց գիւղ Գործվարքի շուրջը, փշաքաղուեց, դարձաւ... Եւ Շերոյին յիշեց եւ յիշեց... յիշեց Խուրիի հարսին՝ հա՛ յիշեց: Ինչո՞ւ էր յիշում... Աւեր Նրկի զաղթականներից թէ կար մէկը, որի հետ ուզում էր ոտք փոխէր՝ Շերոյն էր... Մէկ էլ Խուրիի հարսն էր՝ թէ կար... Հանդիպէր... Մենակ լինէր հանդիպէր Խուրիի հարսը, հանդիպէր, ինքը գլուխ կախ կանգնէր գէջը, գլուխ կախ ասէր:

Հիւսիսեցի հարս... քաւ ասով մեղք ունիմ, ամօ՛թ, ամօ՛թ մեղք ունիմ, կը խնդրիմ ներս...:

Ասէր... տսէր.

«Խուրթիցի հարս, քու անուն ինչպէ՞ս է»:

Ասէր.

«Իրար հետ թողաւական էլնինք մեր աւեր երկրի մէջ, խուրթիցի...»
— անուն ինչպէ՞ս է, — մեռնինք-ապրինք՝ իրար հետ»:

Երկու դարուն ու երկու ձմեռ դաղթական ոչ մի խմբի մօտ չգնաց, տեսաւ՝ մօտ չգնաց, հանգիստից՝ ճամբէն թեքեց, թափառեց սար ու ձորի թափառական ջրերի հետ, ընկերացաւ անընկեր մնացած սարերին, անընկեր մնացած ձորերին, անընկեր մնացած արտ ու անտառներին... Յետոյ...

Գաղթականներից ով սպրեց՝ կորցրեց յոյսը, աւեր տան ու տեղին դառնալու յոյսը կորցրեց՝ թողեց-անցաւ Արաքսն էս կողմ, ու... երկիրը դարձաւ որբ:

Այդա եւ ինքը երկիրը թողեց որբութեան հետ, անցաւ Արաքսն էս կողմ: Երկրի սար ու ձորերում ուրաւ, խճճած կածանի ծայր թողեց Մարգարայի կամուրջի պոնկին, անցաւ Արաքսն էս կողմ: Անցաւ ու մէկէն կարօտեց դէնը մնացածին, նրանց, որ արդէն յողնեցրել էին, տիրութեան չափ կարօտեց՝ նայեց, նայեց, խաչակնքեց տամուկ աչքերով ու երկու ոտէ կէտ թջաւ ոտքերի մօտ, տաք փուռ մէջ: Անցաւ ու...

Աւելի փտարուած էր, աւելի դաղթական: Սար չկար, ստերի տակ գուրան էր, երկրի բանջար ու արմատիքից չկար, ոչ՝ անտառ ու վայրի պրտուղ: Քչեց հասուն մի արտի վրայ. հասկ փչրեց-կերաւ, փչրեց-կերաւ, փչրեց՝ լցրեց պարկը:

— Է՛յ, վայրենի դաղթական, — մէկը շէր, խումբ էր՝ մանկազ ու գերանդով քսան աչք կար իր քոթոնած շորերին, բաց կուրծք ու սրունքներին եւ ճակատ ու շինք ծածկած, եւ աչք ու քերան լցուած մազ ու մօրուքներ:

— Քեզ հետ ենք, է՛յ, վայրենի դաղթական, արտը մի փչացրու:

Չնայեց, չպատասխանեց, բուռ-բուռ հասկ փչրեց-լցրեց բերանը, փրչրեց՝ լցրեց պարկը:

— Դէ շուտ դուրս արի-գնա՛ւ:

Չնայեց ու մտքում պատասխան տուեց.

«Բ՛ար էրթամ, հայ, կամօք ու կարօտ»՝ վ հասայ ձեր շէն ու մտայ ձեր արտ»:

— Գաղթական, արտից դուրս արի, թէ չէ գերանդին կը պցեմ վիզդ: Չնայեց ու մտքում պատասխան տուեց.

«Իմ ա՛ն ու մա՛ն անցել է, հայ, քու գերանդին առ-գնա՛ւ»:

— Հայա՛ւ, կրակն ենք ընկել էս դաղթականների ձեռքը:

Էլ չհամբերեց.

— Քու սրտէ՛ն կը խօսիս, հայ, քու պտպու պտէկ...
Ու քայլ արեց: Խումբը հա-հա գնաց: Յետոյ մէկը գերանդին ուսից վար բերեց ու ինքը այդ մէկի վրայ քչեց: Յետոյ մանկազ ու գերանդուարները փախան՝ «վայրենի դաղթականներին» հայհայլով: Արտը թողեցին իրեն, փախան...

Բուռ-բուռ հասկ փչրեց-լցրեց պարկը, ապա մտաւ դաշտի գիւղը, մըտաւ մի դաշտեցու տուն, կանգնեց տան կենտրոնում, թնդաց.

— Քուրիկ, քու տաշտ առ-արի:

— Հայ չուենեք... էն Աստուածը՝ չուենեք, — կինը ահ ունեցաւ:

— Քու էրկան կանչէ հոս:

— Գնացել ա էքի:

— էքին ի՞նչ տեսել է, — որոտաց, ձեռնափայտով խառնեց տան եղած-
չեղածը, — գնացել ա էքի, — տնազ արեց, տակնուվրայ արեց տունը, չնա-
րեց բան, — էքի... Քու պապու էքին... — կանգնեց, նայեց շուրջը շուրջը՝
յատակին-պատերին, առաստաղին...

— Ճերմակ պատերո՞ւն մաի՞կ։ Մուխ չի՞ դիպէ... Թունդիր չու-
նի՞ն... օջա՞խ է...

Երկու տարի անձայն էր գրուցել սար ու ձորի հետ, թէ շուրթ էր
չարժել՝ եղել էր խաղ՝ իմացած բոլոր ախուր խաղերը։ Հիմա բերան էր բա-
ցել ու խօսելու կարիք ունէր։ Եւ ինչ մտածելու բան էր, մտածում էր մայ-
նարկու։

— Առանց թունդիր օջա՞խ... Առանց ծխոտ պատի օջա՞խ...

Յետոյ աչքը դիպաւ պատի ժամացոյցին։

— Օ՛հ-Օ՛հ-Օ՛հ, սահաթին մտիկ էրէ, սահաթին, սահաթին...

Ու խոժոռուած նայեց, նայեց ժամացոյցին, թունոտ նայեց։

— Իմ կեանքի ժամէ՞ր կը հաշուես, քու պապու շխիկոց...

Ձորի Միրոն նոր ծխախոտ վառեց, ծխի զզզողած վարազոյր կախեց
գէճքին եւ մտածեց հազար անգամ մտածածը. ախր ի՞նչ էին արել Սոմանի
կառավարութեանը։ Հէ՛լէ։ Օր է՞ն օրերի եղածը ի՞նչ էր. Թուրքի ու հայի կը-
ռի՞ւ։ Ձէ։ Հայի կոտորում էր։ Ինչո՞ւ կոտորեցին։ Մի սուլթան, սուլթան
Համիդին արնակից մի նոր սուլթան հայի արմատը արեւերես հանելու հրա-
ման տուեց ու մի աշխարհ համաձայն եղաւ։ Ինչո՞ւ... Մի ժողովուրդ մեր-
ժուեց։ Մի սուլթանի կողմից ու աշխարհի կողմից մերժուեց։ Մերժուեց,
տնանկ եղաւ, մնաց սար ու քարի հետ։ Հա, մերժուած ժողովրդին աէր կանգ-
նողը սար ու ձորն եղաւ, անտառ ու քարանձաւն եղաւ... էդպէս էր։ Էդ-
պէս է... Մարդու ու աշխարհի կողմից մերժուած մարդու միակ բարեկամը
բնութիւնն է մնում... Հա, դադթական էին. ուտելիք ու խմելիք իրենց սար
ու ձորից էին ուզում, ապաստարան ու ապահովութիւն սար ու ձորից էին
ուզում, բնութիւնից։ Ու՛ տալիս էր։ Տուեց, տուեց ու քաշեց-տարաւ, քա-
շեց աւելի մօտ տարաւ իրեն, տարաւ, տարաւ դարձեց վայրենի, մօտեցրեց
սարի զազաններին։ Յետոյ զաղթականներն ելան իրար դէմ, յետոյ զաղթա-
կանները սկսեցին իրար մերժել ու կամաց-կամաց ամէն զաղթական հայ դար-
ձաւ մենակ զաղթական, մնաց մենակ, մենակ՝ սար ու քարի հետ... Խու-
թեցի հարսը, աշխարհից խռով, թողեց, իր համար դնաց, հիթնցի ալեհեր
Սանոն՝ իր համար... Ինքը երկու տարի մենակ մնաց Երկրի սարերի, ան-
տառների, ձորերի ու ջրերի հետ, երկու տարի վայրենացած շների պէս,
վայրենացած շների հետ զգուշութեամբ զայլերի հետ...

— Յարութ, թէ մարդ չընդունուի մարդու կողմէն՝ կը մնայ մէն-մե-
նակ, — փխտափայեց Ձորի Միրոն, — մենակ մնաց՝ դուրս կ'առնէ-կ'ընկ-
նի սար ու ձոր... Հա, մարդկանցից փախ՝ սարերի հետ ընկերութիւն կ'ա-
նէ ու սարեր կ'ընդունին...

Լոց։ Լուռ մնաց նաեւ Յարութ որդին. հայրը ինչո՞ւ է այդպիսի բա-
նէր ասում... Ի՞նչ մենակութեան մասին է խօսքը։

— Յարութ, պատերազմեց-կուռել, ասել է թէ չընդունել իրար։ Իսօր
դերմանացին քեզ չի ընդունում, գու՛ զերմանացուն... Կը պատահի, դառ,
կոխ է՝ կը պատահի, կեանք է՝ կը պատահի մենակութիւն զգաս էս խառ-
նակ աշխարհի մէջ. մտաբերէ քու հօր՝ Ձորի Միրոնին, յիշէ, որ աշխարհի
մէջ մի շնչաւոր կայ՝ քեզ իր հոգուց բարձր ընդունող։ Յիշէ ու խառն չես
մնայ աշխարհի հետ...

— Է՛հ, է՛հ, աշխարհ... Միրո, քու խօսք ճշմարիտ է։ Էս մեր Գա-

բազմաթիվ գեղի մէջ կայ մարդ՝ իմ սիրտ հետ խօսելի չի ուղէ, կ'ուզէ խոսի մնայ, բայց չէղնի, — սայլապան Արոն իր խմացածով արձագանգեց Միւրայի խօսքին, — չէղնի, Միւրո, անտէր մնայ, գեղ է, ամէն օր հանդիպել կայ, տալ ու առնել կայ:

«Էս աշխարհի մէջ դո՞ւ ում կողմէն կ'ընդունուիս, Ձորի Միւրո», — ինքն իրեն հարց տուեց եւ տուեց պատասխան:

«Յարութի»:

«Յարութ՝ որպէս հէր կ'ընդունէ... Յարութի մտքի մէջ աշխարհ ուրի՛շ, քու մտքի մէջ աշխարհ՝ ուրի՛շ... Յարութի կոմսոմոլ ընկեր Յարի Վոլոդ քեզիէ մօտ է Յարութին...»:

«Էղնի թող... Յարութ կը դառնայ ետ կը դայ, Հայկուշին հարս կը բերիս, թոռներ կ'ունենաս... Թոռնիկ կ'ունենաս, անուն կը կնքիս Միւրո ու էդ մատմիս Միւրոն Ձորի Միւրային կ'ընդունէ... Էրեխեքն ու ծերեր իրար լաւ կը հասկանան: Ու աշխարհի կողմէն ընդունուած՝ կ'երթաս աշխարհէն...»:

Տագտաք քլիթքլիթաց Ձորի Միւրայի հոգին:

— Յարութ...

— Ի՞նչ, հայրիկ:

— Հէ՛շ, դաս...

«Դառնաս, ետ դաս, Ձորի Միւրային աշխարհի հետ շփոյնիս մենակ...»:

— Միւրո, կ'իմանա՞ խօսք ում մասին է:

Միւրոն բան չհասկացաւ Արոյի տատից:

— Օրինակ, բրիգադիր Գէլոն... կը քէլէ թէքթէք, տնկանկայէն, գլուխ բարձր, մարդու գէժք ու էրեսին չի նայէ, տուած բարեւ հա ընդունած, հա՛ չէ: Բարեւ չտալու թիաք կ'ունենամ, կը դառնամ կը բարեւիմ. անտէր մնա՛. բրիգադիր է՝ լուծ ու լծկան ուղել կայ, ձեռք աշխօր կայ, ու ես՝ աշխօրով ապրող մարդ: Կը դառնամ կը բարեւիմ:

— Ուզես-չուզես, — մտածելոտ առաց Միւրոն եւ աւելացրեց, — քու գեղացին է:

— Բրիգադիր Գէլոն դարձնէ գեղի տէր, — Արոն շարունակեց գանգառը, — բայց էս գեղի տէր, թէ ճիշդ իմանան, Ձորի Միւրոն է, — ասաց բարձրաձայն եւ շուռ եկաւ Միւրայի կողմ, — գեղի տէր դու ես:

Յարութը ծիծաղեց:

— Հա՛, գեղի հիմք քու հէր դրեց, Յարութ, իմ թիաք սուր է:

Ձորի Միւրոն յօնքերը բերեց իրար:

— Կը յիշի՞ս, Միւրո:

— Կը յիշիմ, — ասաց մռայլ եւ մտքում աւելացրեց.

«Օր էսպէս ամառ օր էր...»:

— Քեզնէ յետոյ ճախրկանցի Նհոն ու Հովնցի Մեարոպ հիմք փորեցին, յետոյ՝ Օհան ու Սարգիս, իմ թիաք սուր է, ես լաւ կը յիշիմ, Գէլոն մեր Միւրիկի տարիքին էր (Միւրիկից մեծ, Միւրիկ փո՛քր է), Գէլոյի ու իր հօր դալ ուշ էր: Կը յիշի՞ս, Միւրո:

«Օր ամառուայ էր ու աշխարհի մէջ նորէն կոխ կար...»:

— Էսօր Գէլոն դարձէ տէ՛ր ու Միւրոն էրթայ ջուր խնգրէ՝ մերժուի...

Տնամերձի դարին քանի՞ անգամ ես ջրէ, Միւրո:

— Սնուի ժամանակ:

— Դէ տե՛ս, Գէլոն՝ տաւ անգամ: Է՛հ, է, աշխարհ... Տնամերձին

ինչքա՞ն դարի կը հաւաքիտ:

— Կ'էղնի, — անորոշ պատասխանեց Միւրոն:

— Մի՛րօ, հաստատ, գեղի մէջ ցորեն դարձւ հետ փոխող չի՞ էղնի: Փութ ցորենին՝ փութ ու կէս դարի:

— Կը պատահի:

— Թէ գեղի տէր Գէլոն է, խելքածօտ չէ թէ էղնի: Բայց, — ոայլապան Արոն դարձաւ Յարութին, — բայց ի՞մ հոգու մէջ, Յարութ, գեղի տէր քու էղնի է: Հա՛, էս դադրած օր վկայ: Տոս ու քսան տեղ իմ խօսք էդ է էղնի ու էդ էղնի:

«Թիւ քսանն էր, ամառ օր էր ու աշխարհի մէջ նորէն կոխ...»:

— Մի՛րօ, էս տարուայ իմ ցորենի պէս խոշոր-հատ ցորեն չի էղնի, գարուց՝ խոշոր:

«Դաշտեցու գոնից անիրաւունք բա՛ն ու քունդ առա, դաշտի գեղից ելայ, ուղղութիւն բռնեցի Արագած...»:

Սայլանիները նորից փաթաթեցին Ձորի Մերոյի յուշերը...

...

...

Քայլ-քայլ հեռացաւ դաշտի գիւղից եւ դաշտի գիւղ ու Արագածից այն կողմ մնացած իր լեռներից: Քայլ-քայլ սար բարձրացաւ եւ թուաց, թէ ոտքերը իրեն իր լեռներն են տանում: Քայլեց մի օր, երկու օր, կիսածուկ գիւղի մտաւ-դուրս եկաւ: Կարող էր բա՛նն ու քունդը դնել անլեզու մի դրան մօտ (կայի՛ն), ճոռացնել դուռը, ներս մտնել ու յոգնած շնչով կենդանութիւն տալ լքուած տանը:

Կարող էր հարց ու փորձ անել-դանել գիւղատէրերին (թէ տէր կար), խնդրէ անել:

«Գողթական մարդ եմ. թող արա էս գեղի փշին քողտիկ չինեմ»:

Դուրսիկախ մտաւ գիւղեր, ելաւ, խոռվ-խոռվ անցաւ գիւղանկշտերով, գնաց: Քայլեց երկու օր, երեք օր: Ամպի քուլաների հետ թաւալվոր տըւեց, բարձրացաւ սարերը...

Տնտեսը էր փնտռում...

Բա՛ն ու քունդ առած ծալեծունկ ոտք փոխեց՝ երեք օր, չորս օր... Անտառոտ սար էր փնտռում եւ մամաշուրթ աղբիւր...

Աւ խոռվ-խոռվ, մառախուղի հետ, մառախուղի պէս թաւալուեց, ձորեր իջաւ-ելաւ, բարձրացաւ սարերը, բարձրացաւ ու չորրորդ օրը դադար առաւ՝ շուրջորով հազիւ թրջած պուտ-աղբիւրի կողքին, հաշտ ու համաձայն նստեց, հի՛ն-հին ծանօթի պէս...

Կիրճում առաջինը ինքը փորեց հիմք...

Հինգ տարի քունդ ու բա՛ն չէր առել ձեռքը: Հինգ տարի միայն տորեկ էր հոգ՝ ափի մէջ չէր առել, չէր առել հող ու ծլի հոտ: Հինգ տարի հողից դուրս եկող բոյր ու գոլորշի՝ երակների մէջ արեան ետք, ճակատ ու թիկունքին՝ քրտինք չէր դարձել... Քունդի ծայրը գիպաւ գետին, մի պլտ-դունց հողի հետ պոկուեց մի ունդ բոյր ու գոգ ընկաւ իր թիկն ու թիկունքը, կարմիր-կանաչ ցուլացին աչքերը եւ շուրթերը դողացին, եւ ունդները լայնացան...

Յետոյ խաղաղութիւն իջաւ խոռված հոգու մէջ, մերկ լեռների վրայ, կիրճում: Մկանները ոխթաւ ու թափով կծկուեցին-բացուեցին, մազերի միջից զլոր-զլոր պոկուած քրտինքը կեռ քթի ծայրից ծիր առաւ ու երբ շուրթից մէջքը, թուաց, թէ սակորների մէջ ծուծի փոխարէն հող է՝ խոնաւ զո-

վաթեամբ։ Ու երբ մթնշաղը ծուարեց կիրճում, ինքը գլուխը դրեց սրտուռ հողի վրայ ու դադարած մարմնով լցրեց տան հիմքը...

Շարաթ յետոյ նոր մարդիկ ոտք դրեցին կիրճ։ Ինքը կէս ծունկ հիմք էր փորել արդէն, լցրել ջրարի բուռ-բուռ մնացորդներով եւ սրճաքտերով ու անտաշ քարեր էր դրել իրար վրայ, կանգնեցրել գօտեչափ պատ եւ ձորին նայող պատի կենտրոնում կտրել դուռ։

Ունահետքը գտել էին՝ եկան, նստոտեցին իր կիսատ տան մօտ։ Ոչ ոք չառաջ։

«Բարի աշխատիւ, հայ, ի՞նչ կը շինես?»

Եւ ինքը չապառեց բարեւի... Պոչ հայկացք դիպցրեց՝ դադարեցնելով էին։ Սիրտը ցաւ ունեցաւ, բայց դէմ գուրս եկաւ սիրտ ու ցաւի, մոքուժ առաջ։

«Ի՞նչ էկաք... Ուրիշ սար չկա՞ր...»

Եւ սիրտը համաձայն չեղաւ, սիրտն իրեն ասաց։

«Ուրիշ սար թափառել միտք չունի... Հերիք անտուն մնաք, դադարեցնելու հայեր, իմ... իմ կողքի հետ հիմք փորէք»։

Յետոյ չդիմացաւ... պարզ աչքով նայեց խոնարհուած դադարեցնողներին, չդիմացաւ՝ նստեց ճախրկանցի Նհոյի կողքին՝ նրա պէս խոնարհուած, նրա պէս լուռ, չդիմացաւ՝ դնաց քլունդ բերեց, դրեց դէմ-դիմաց Նհոյին։ Ամէն մէկը իր համար ոտք ու քայլով շափ արեց, փորեց հիմք։

Ու էլի մարդիկ ոտք դրեցին կիրճ։

Տալվորիկցի Ջաքարը եկաւ, դադարուած եկաւ, նստեց ձորի պոնկին։ Առաւօտ էր եկաւ, արեւմտոց եղաւ՝ անշարժ էր, մթնեց՝ անշարժ էր, քարի վրայ քար կտրեց-մնաց... Նորէն լոյս բացուեց՝ անշարժ էր։

— Ի՞նչ նստար-մնացիր, Ջաքար... — մօտ գնաց ճախրկանցի Նհոյ։
Ձնայեց, չչարժուեց, շտուեց պատասխան, մնաց՝ հայկացքը ձորի մէջ կախ։

— Ել, տուր քո հողուն, հիմք փորէ։

— Էլ ինձ տուն պէտք չէ՞... կրակ ու ճրագ պէտք չէ՞... Իմն անցա՛ւ... Գերդաստանի մենակ մնացի, անաստուած, մարա՛ւ իմ ծուխ... Գար դիր քու պատին, ինձնէ գործ չունիս... Ես էս քարերի վրայ կը մեռնիմ, ամա կը դառնամ...

Ինքը նայեց տալվորիկցի Ջաքարի ծռուած-նմոթուած շինքին, աչքերին՝ աննդով վառուող, նայեց, բացումաց բազուկներին՝ երակները կապոյտ էին, հաղիւ էին արոփում ու հասկացաւ, որ այդ երակներէ պուտ արիւնը էլ ժառանգուող չէ։ Ո՛ւշ է... Եւ արտի խորքում հոնգուր-հոնգուր լաց եղաւ տալվորիկցի Ջաքարի համար...

— Ձէ, սխալ է. տալվորիկցին անտուն իրաւունք չէ մնայ, — առարկեց Նհոյ, — քնդն յետոյ թող դոցուի քու դուռ, մարդիկ նային, միտք բերին, օղորմի տան քեզ, քու տո՛մին... Հիմք փորէ, Ջաքար։

Նհոյ քլունդը մօտեցրեց։ Ջաքարը կանգնեց, ստեղծ հրեց քլունդը, թիկունք արեց, դնաց սարն ի վեր՝ ամէն օր ծունկ զարկող, չուող ամպերի կողմ։ Գնաց, որ մեռնի ամպերի մէջ, դառնալ ամալ, թափառի սարէ սար, երկրէ երկիր, հասնի Մովսասար, Մարաթուկ... Էրկիր։ Նայեցին Ջաքարի ետեւից ու ոչ մէկը բերան չբացեց, չկանչեց։ Ջաքարը ետ չէր դալ։ Միտք ու աչքով ճամբայ դրեցին մինչեւ ամպերը, ետ դարձան եւ հայկացք կախեցին քառասկի հիմք ու պատերին...

«Տալվորիկցի Ջաջար էսօրուայ իմ տարիքն ունէր, — մտածեց Ձորի Միրոն, — հա, էսօրուայ իմ տարիքից չորս-հինգ տարի մեծ էզնէր-չէզնէր»:

Յետոյ զոյգ ափով ողալից կնճռոտուած դէմքը, ու մատերի արունքով նայեց որդուն, նայեց, նայեց՝ մի քիչ թաքուն (թէ ինչու՝ չիմացու), մի քիչ՝ ահով ու նայելու այդ պահ ու ձեւի մէջ չարազուշակ քան տեսաւ. ձեռքերը շտապ հեռացրեց դէմքից:

— Յարութ... էս ամպշուղ երկնքի տակ ինչքան քու աչք կը կտրէ, ինչքան ու ինչքան քու աչք կը կտրէ, քեզնէ դատ, քեզնէ դատ, դատ, բա՛ն չունիմ... Ջաւերիս իմ տուն, չգոցիս իմ դուռ... էս ճամբէն երկտկիս, դառնաւ...:

— Աստուած մեծ է, Միրո, — յարեց սալապան Արոն, — քու սիրտ հանդիստ պահէ ու քու առողջութիւն լաւ պահէ, որ տղէն դառնայ դայ ու քեզ առողջ տեսնի, ուրախանայ:

— Ամէն ինչ լաւ կը լինի, հայրիկ, — Յարութը զգացուեց ու զայրացաւ, — ես էդ Փաշիստեօրի... Ես կը գտնեմ ետ կը դամ, անպայման կը դամ, հայրիկ, անպայման:

— Ապրիս դու, Յարութ, ապրիս, լաւ, — պնդեց Արոն, — դու քու հորից ամուր ես: Քու հոր խրատ տուր՝ թող իր առողջութեան լաւ նայէ, առողջութեան, ինձմէ բեթար մեծ մարդ, մենակ մարդ, ունեցածը՝ դարի: Գարէ հաց, Յարութ, հարկ է մատուցել բերին... Միրո, քեզ ցորեն հաց է պէտք:

Կիրճում առաջինը ինքը ծուխ հանեց...

Տան կենտրոնում կրակ վառեց, դուրս եկաւ: Եւ երդիկից կ'լաւ ծուխ, եւ անձեմ պատերից: Քողտիկը ծուխ շնչեց, ծուխ դարձաւ: Մարդիկ թողնեցին քան ու դուրս, հայեացքները խառնեցին կիրճը լցուող, առ երկինք բարձրացող ծխին, ծխացող քողտիկին: Մարդիկ՝ նստած կիսատ պատերի վրայ, հիմքերի մէջ կանգնած ծուխ շնչեցին, դարձան օդի պէս ծուխ շնչեցին, յիշեցին չէն ու օջախ, յիշեցին ու էլի յիշեցին, ծխի հետ, ծխի պէս կտրեցին-անցան ժամանակ ու աշխարհներ, ծանր ու թեթեւ արին ճակատագրեր, եւ Նահն ասաց:

— Ջաջար մեղք էր...

Միտ բերեցին տալվորիկցի Ջաջարին ու խոնարհեցին գլուխները:

Իրեկնապահ էր, կիրճի վրայ կախուած լիալուսին կար, ինքը՝ թիկունքը մի քարի, հայեացքը շողել էր ծխի հետ, հասցրել երկինք: Մուխը մէկ պղտորուած աղբիւրի անջրով էր երեւում աչքին, մէկ՝ ջարդուած սեան եւ ճիւղակուտոր ծառի էր նման, եւ ծռուած սրի, մէկ՝ ահօտ էր, մէկ՝ հեղեղուած արտ: Մուխը առեւ-աւարել էր իր հայեացքը, ու աչքերը շողուն էին: Եւ լուսինը լուսին չէր՝ երկնքի պատուածք էր ու քողտիկից բարձրացողը ծուխ չէր՝ կռթնեցի հարսի քղկտուած շորն էր՝ ծարձրուած կարկառան երկնքի պատուածքին:

Մուխը լցուել էր իր աչքերը, իր ունքերը, երակների մէջ էր ու հոսում էր արեան հետ, Եւ երբ աչքերը նորից դարձրեց իր տանը, մթնաշող ու ծխով պարուրուած տունը թուաց կիսաւեր, ծխացող բերդ. ու յիշեց Սաւոյ ճախրկան թաղը, երիզող ձորը, կամուրջը... Ինքն ու Մխէն անցնում, գնում էին Դաւթի աւերակ բերդը, նստում Դաւթի ձիերի մուրճներին:

Եւ այդ իրիկուն կարեքի համար կերճից աշխարհ գնացած փասնքցի Առաքելը դարձաւ ետ եկաւ, աշխարհից բերեց լուր:

— Բուշեւիկներ հասան Երեւան, յեղափոխութիւն յաղթանակ է տարէ: Լուրն առան, նայեցին իրար՝ ամէնքի աչք աւ դէմքին հարցական կար: Իզածի մասին կարդին պատկերացում չունէին:

— Առաքել, քու լուր խեղճ է, թէ՛ շառ, — հարց տուեց Նահն:

— Դաշտեցի հարուստների սրտից արուն կը կաթայ- բուշեւիկներ հո- ղեր կը խլին հարուստներից, կը բաշխին խուֆուրա մարդկանց: Ի՞՞մ ծանօթ թեւ էր առէ-կը թոնէր:

— Հա՛... Օրհնուի քու ծուխ, Առաքել, լուր բարի է, — հանդուս- ցաւ ճախրկանցի Նահն, յետոյ մռայլուեց, աչք դցեց լուրջութեամբ, եւ ամէն- քը նայեցին լերկ ու քարքարոտ լեռներին:

— Ոչ հող ունինք, ոչ՝ ջուր... Մեր մէջ ոչ հողատէր կայ, ոչ՝ հո- ղապուրկ: Հաւատար գաղթական ենք, — ասաց Նահն:

Միւս աստուտ ինքն էլ եկաւ կերճից, գնաց նոր լուրից գրնդացող աշ- խարհը:

Թափին ուղիւս համար չէր գնում:

Գնաց, առաջին պատահած գիւղից իմացաւ գերիւսանի՞ ճամբէն, գնաց՝ մի շարաթ բեռնակիր եղաւ ու յիշեց Մխէին, յետոյ մտաւ «Ղանթարի տուկ» առաւ մի կնուռ, մի ճրագ, մի քիչ մեխ, ծիւնի, դրկաբան, վերջին արտ- օռնէ՝ կէս շիշ նաւթ, յետոյ բոլորը լցրեց, դարեց կնուռի մէջ, շարակն ա- ռաւ, քույր արեց ու... Ու տեսաւ... տեսաւ Խուլթեցի հարսին: Ձեռքերը կրծքին խաչած, նստած էր թեւ ու ասեղի դուքանի դրանը: Ուր կախ դցեց, դուքանին մօտիկ պտոյտ տուեց, որ Խուլթեցի հարսը նկատի իրեն, չնկա- տեց՝ անգիտելով կրծքին խաչած էր, կուզէիս էր ու անլուր «Ղանթարի տա- կ»ի աղմուկին: Մօտիկ-մօտիկ պտոյտ տուեց՝ չեղաւ եւ մօտ գնաց, ճայն հանեց:

— Խուլթեցի հարս...

Խուլթեցի հարսը ցնցուեց, յետոյ շփոթուած կանգնեց, նայեց իրեն, յիշեց... յիշեց՝ կարմրեց, շփոթուած ասաց:

— Աստու բարին, ախպէր:

— Խուլթեցի հարս, — ասաց ու լռեց: Ի՞նչ ունի տոնիւ... Հա՛...: — Խուլթեցի հարս, քու տոթը մեղք ունիմ, ամօ՛թ, ամօ՛թ մեղք ունիմ... Դատերն ունին... Ներող կ'էղնիս:

Խուլթեցի հարսը գլուխը խոնարհեց, աչքերի մէջ օր է՛ն օրերի ար- ցունքից կար:

— Խուլթեցի հարս, քեզնէ յետոյ... ես բաժնուայ խմբէն, — լռեց: Ինչի՞ համար ասաց, ի՞նչ պէտք էր... — Քու անուն ինչպէ՞ս է:

— Նարէ, — բարձրացրեց գլուխը:

Վարէ, Նարէ... — մտքում կրկնեց, — Խանդուիթ... Նարէ...:

— Լաւ անուն է, — ասաց:

— Ի՞մ էրիկ նմանապէս ի՞մ անուն հաւան էր, — խոնարհ ասաց, — էս չէ՛՝ էրկրին: Էս ինձ նինա կը կանչէ:

— Էստեղին ո՛վ է, Նարէ, — խանդի պէս մի բան ունեցաւ, — քու անուն ինչի՞ կը փչացու. քու կնուռքի անուն ի՞նչ իրաւունքով կը փոխէ:

— Էս դուքանի տէր վանոն է, — տխուր ասաց Նարէն, — ճարտասա- րաւոյ, ախպէր... Քու անուն ինչպէ՞ս է:

digitised by A.R.A.R.®

— Մի՛րո՛ւ :
 — Հո՞ւս կ'ապրի՞ս :
 — Հո՞ւս... Ուրիշ աշխարհ էլ չկէ՛ր կ'երթենք ուրիշ աշխարհ : Սար կ'ապրի՛մ, Նարէ... Քողտիկ չի՛նկցի :
 — Լաւ է, — իր համար ասաց Նարէն, — սար լաւ է, — իրեն ղիմեց, — հոս իմ շունչ կը կտրուի, ճարահատ կ'ապրի՛մ... Հըր'ի, մեր էրկըր ռարե՛ր...
 — Մեր էրկըր ռարե՛ր, — Նարէի ցաւով կրկնեց ինքը ու լռեցին : Նարէն խաղ արեց դատու հետ, եւ մատները դողում էին, ինքը նայեց Նարէի մատներին, Նարէի թագա շորին, Նարէի մազերին, դէմքին, ուղեցաւ էլի բան ասէ՛ր՝ չիմացաւ ինչ, ուղեցաւ քայլ առնել, ոտը կախ գցեց, յետոյ շատ եղաւ լռութիւնը, եւ զրոյցը շարունակելու համար ասաց.

— Ես էրթամ, Նարէ :
 — Ո՞ւր, — երեխայի լալկան ձայն էր :
 — Սար էրթամ :
 — Հոս մենա՞կ կ'ապրի՞ս :
 Հարցը դուր եկաւ իրեն, եւ նոր տրամութիւն բերեց հարցը, մի այնպիսի տրամութիւն, որն ինքը երկար ժամանակ մէկին ցոյց տալու պահանջ ունէր, թէ ում՝ չգիտէր : Ու մի գիրկ թաց ամպ իջաւ-նստեց ճակատին, եւ հայեացքը ճօճուեց՝ ծանր-ծանր :
 — Մենա՛կ, մենակ կ'ապրի՛մ, — ասաց, — աշխարհի հետ մենակ եմ :
 Եւ էլի լռեցին ու գտ անվայել լռութիւն չէր. երբ էլ բերան բացէր, ժամ, երկու ժամ յետոյ ասէր բառ՝ կը լինէր կիսատ խօսքի շարունակութիւնը : Լռեցին, եւ Նարէի աչքերից էլ կախուեց իր թաց ու ծանր հայեացքը :
 — Ես Վանոյի լեզուն չեմ սիրի, — ասաց Նարէն, — կը պառկիմ իմ թիկունք Վանոյին, կ'եմ իմ թիկունք Վանոյին, — ասաց անկաշկանդ, չկարմրեց, անկաշկանդ նայեց, — էս գուքան իմ աչքին փուշ ու փուշ է... իմ սիրտ սար կ'ուզէ...

...Երեւանից դուրս եկան, ճամբից էլ դուրս ու տորեցին կիրճի ուղղութիւնը : Քայլեցին ինքը առջեւից, Նարէն՝ իր հետքով : Մակ արեխնեւով տորեց կիրճի ուղղութիւնը, իսկ մտքում խնդրեցին ու բացուեցին, սեղ հասան ու մոլորուած մնացին քառասուն-քառասունհինգ տարում անցուղարձ իր բոլոր, բոլոր ճանապարհներն ու կամանները : Միւս արեւմտային հասան կիրճ, ձորին նայող դեռ անդուռ ու անծխի իր մութ դրանը, ու մտքում եղած բոլոր ճամբաները դարձան հանգոյց, մի սառած աչք, մի քար ու կպանմնացին ձորի ճաքած շրթին...

— Էս է մեր քողտիկ, Նարէ, — ասաց :
 — Յօժար եմ, — տխուր ու ամաչկոտ ժպտաց Նարէն :

Ձորի Միւրոն կարօտ ունեցաւ թիկունքում մնացած դիւղի, իր տուն ու ձորի համար : Դարձաւ ետ նայեց : Քարաղլուխ դիւղը չէր երեւում : Այդ պահին մտքում եղած դիւղը օր է՛ն աշուն օրուանն էր. միայն իր քողտիկը ծածկ ունէր ու երգիկ, միւսները դեռ քար էին դնում քարի վրայ, քողտիկը դեռ գուռ շունչէր ու թոնիր չկար... Նարէն պատրաստեց... Նարէ՛, Նարէ...
 — Յարութ, աշխարհ ամենամեծ կորուստ մարդու կորուստն է : Մարդու կորուստ անդարձ կորուստ է :

Լռեց ու պահ լռութեան մէջ բոլոր կորուստները անցուղարձ արին, բայրը ծախն ու մեծ էին :
 — Էրկըր ու հողի կորուստ ծանր կորուստ է, — շարունակեց Ձորի

Միբոն, — բայց հող անձա՛հ է, — լոնց, — հող ուրիշ տէր չի՛ ընդունէ, — լոնց, — հող ի՞ր տիրոջ հետ արնակից է ու ի՞ր արնակցին կը սպասէ՛, կը սպասէ՛, ու օրերից մի օր՝ կը հանդիպին։ Հողի կորուստ անդարձ կորուստ չէ՛։

— Էն խեղճ Կուպէն թեւ ու թիկունք ջարդեց, քար դարձրեց հող՝ տընամեմէն նորմայից շատ համարեցին՝ առան, — յիշեց ռայլապան Աբոն։

«Հողի կորուստ անդարձ կորուստ չէ, — Զորի Միբոն հաւատաց իր ասածին եւ մտքում նորից տարաւ-բերեց, — գերմանացին կը պարտուի. օտնարդար դործ միշտ է տապալուէ, էս կռուի յաղթող Սովետն է ու բարոյ-խեղճ մեր էրկրի ճամբէն կը բացուի»։

— Յետոյ Կուպէն գնաց էն քարուքոյ ճամբի քարեր հաւաքեց, քարեր կտրեց, դեռնի տակի քարեր նմանապէս կտրեց, Կուպէն էն քարուքոյ ճամբէն դարձուց հող, մի տարի թութուն ցանեց (ինչ թութուն է՛ր, Միբո, ինչ թութուն, տարուայ հաց բերեց), միւս տարի կախող Կուպէի հողի մէջ գոմի հիմք փորեց։

«Հա, ռուս առիւծ կռուող է, յաղթանակ ռուսինն է... Ռուս է կաւահասա Մուշ ու Տիգրանակերտ, ու Դիմաքեքի աննկու միտք ունէր, նիկոյն չթողեց»։

— Մենակ Կուպէն։ Յարութ, քու միտք չի գայ. դու ծնուած չէր, զու փորը էր, Յարութ, ինչքան հող էս մեր Քարազուխ գեղին կայ, թէ՛ կոխողին, թէ՛ անդամներին, բոլոր արուն քրտինքով էղաւ։ Քար էր, Յարութ, քար ու կրայ էր, էկանք, թեւ ու թիկունք ջարդեցինք, քար դարձրինք հող։ Ի՞մ խօսք ճի՛շդ է, Միբո։

— Ընձարիտ է։

— Հա, հա լաւ կը յիշեմ, իմ միտք սուր է։

«Ընձարիտ է... Թիղ հողի կարօտ ենք ու...»։

— Միբո, էսօր էլ Գէւոն է, էրէկուայ էրեխէն, գեղ ու հողին տէր է։ Տէր դու հա, Միբո։ Դու ու Կուպէն ու հա ու... Իրիկուն գեղ հառայ, Յարութ, իմ խօսք կը կրկնիմ, հա, Գէւոյից ահ լուսնիմ, գեղի հիմնադիր քու հէրն է։ Զորի Միբոն է։

«Ու տանքի վրայ ցանք արի, եոնջայ ցանեցի... Երանի՛ էն օրուան... Նարէն կար... Յարութով ծօցուոր էր... է՛ն օրուան երանի»։

Ողջ գիշեր անձրեւ եկաւ՝ կիրճի վրայ ու տնանուն գիւղի։ Իր հիմք գրած գիւղը գետ անուն լուսնէր։ Մեկոն միտք ունէր գնէր անուն՝ Հով, Մեարոպ՝ Հաւարք, Առաքել՝ Փսանք, Սահնը միտք ունէր գնէր անուն՝ Գիլոնք, Աւգին՝ Յրոնք, Նհոն՝ Ճախրկան... Ամէն մէկն իր կորած գիւղի անունին էր ուզում լուսն տալ, բայց գիտէր, որ գիւղի անուանակոյժան պատին ու իր լուսունքը իրենն է՝ Միբոյին ու... Լուսն էին եւ լուսն էր ինքը։

Ողջ գիշեր անձրեւ եկաւ՝ կիրճի վրայ, անանուն գիւղի հւ իր հինգ-վեց աճական կտուրի վրայ, հւ Կուպերը չեկան իրար։

— Միբո... Միբո, քնի, — ասում էր Նարէն, — տարի օր քարերի հետ կռիւ հա տուէ, մարդ, թեւ ու թիկունք ետ ջարդէ, քնի։

Արեւաբացից արեւմտոց ճողտիկի շուրջը շուրջէր քանդել էր, շարժել էր քար, գլորել ձորը։ Առամենքը սեղմել էր, սեղմել-ծամել ու կարել՝ իրեն ու հրէկուայ իր Աստծուն իրար կապող թելը, քար էր տեղաշարժել, գլորել ձորը, արարել հող։ Արեւբացից արեւմտոց եղել էր լծկան արարիչ։

— Միբո, չէ՞ս գագրէ, քնի...

digitised by A.R.A.R.®

Մի տարի գիշեր անձրեւ եկաւ, մի տարի գիշեր աչք չկ'պցրեց՝ ախր անձրեւը սար ու քարի վրայ էր գալիս, կորչում-գնում էր, ախր, արտի վերայ պիտի գար, արտի, ցել ու ցանքի: Ձկար:

Եւ ամբողջ օրը անձրեւը արտի պէս պահեց բաց երդիկի տակ, թրջեց, քսեց աչք ու ճակատին: Ելաւ կանգնեց շինին, ունկ գրեց, օրս ու հողին լցրեց անձրեւի խշշոցով, ետ եկաւ նորից՝ անձրեւացանք արեց իր կարպետին, նարէի կողքին: Դրան մօտ խաչ դարձաւ: Պարնան անձրեւի համար, երգիկի տակ՝ արտ, էլի ու էլի, եւ չքնեց:

Առաւօտը բացուեց թաց խաղաղութեամբ: Արեւը սրբեց իր խրճիթի թաց աչքերը, շինող քարերի միջից կաթ-կաթ արցունք հաւաքեց: Նայեց գոյրջացող սար ու ձորին, նայեց անանուն գիւղի մարդկանց աչքերի մէջ ու հասկացաւ, որ բոլորն են անքուն մնացել: Թիզ ցտեղի երազն են փռել անձրեւի տակ:

Մինչեւ արեւստոց էլի քար շարժեց, քարի տակից ելաւ քար, էլի ելաւ, մինչեւ արեւստոց հող ջուկեց քարերի միջից:

Յետոյ բարձրացաւ կտուրը, կտուրի հողից վերցրեց մի բուռ ու լռեց: Հողը քրտուռ էր ու խոնաւ, գոլշուն էր: Այդպիսի հողով մի արա ունենար, ունենար սերմացու, ունենար արօր ու լծկան՝ ցանք անէր...

Բուռ հողը արորում, գունդ էր դառնում, արտի պէս երկրիդիւում էր իր ափերի մէջ: Մտտով ահօս բացեց տանիքի վրայ, ինչքան ձեռքը երկարում էր՝ տարաւ, իստոյ մատի ծայրից աչքերը ահօսն ուռած, քարշ տուին, տարան, ելան եօթ սար, կտրեցին եօթ ձոր, մի թաց քարափի գլխից իջան վար, պտոյտ եկան սիգապատ, կիսատակօս կորեկի արտի մէջ, դարձան ետ ու թօն արին կտուրին բացուած մատակօսի վրայ... Մտտը կպել էր պլտղունց հողին ու չէր պոկւում: Եղունդի տակից տաքութիւն էր հասնում ու կորներին, թոքերին շունչ էր հասնում, մտերմիկ գրոյց էր հասնում ականջներին, ու եփ էր դալիս արիւնը: Ձէ՛, գիմանալ չի լինի, ցանք պէտք է անի, ցանք: գիշերը անձրեւ է գալու...

Վար իջաւ, տան պուճախից առաւ առույտի սերմի հանդոյցը, ելաւ դուրս: Տասը բուռ հող խառնեց բուռ սեմին, գոգնոց կապեց, բնագոյով աչք անց երկինք եւ հող ու սերմով լցուած բուռ՝ երկիր մոլորակի պտոյտը դնեց իր խրճիթի տանիքին:

Կիրճի վրայ ծունկ էին դարկել ծոցուոր ամպերը, օդի մէջ կայծակի համը կար, ինքը ցանք էր անում անձրեւից առաջ:

Ողջ գիշեր անձրեւ եկաւ: Ահով ականջ դրեց ու որոշեց անձրեւի թափը, կանգնեց շինի վրայ՝ աչք ու ափով որոշեց անձրեւի թափը: Վախեցաւ տեղատարափ լինի, «արտը» քշի-տանի:

Յաջորդ օրը գիւղը դրնդում էր.

— Մերոն տանիքի վրայ ետնվայ է ցանէ:

— Մերոն խնցեւ է:

— Ձորի Մերոն...

— Մերոն... Ձորի Մերոն...

Յաջորդ օրը դաւառից հողաչափ եկաւ նորայայտ գիւղը: Եկաւ, իջաւ ձիուց, պահանջայեացք դրեց չորսրոլոր, թէ՛ ձիուս սանձը բռնող ուղարկէ: Սանձը բռնող չեղաւ: Սպասեց գիւղատիրոջ ու պիսրի, ծխատէրերին կանչող գլխին՝ չեկան, դայրացած ձգձգեց սանձը, ձին վրնջաց, ու հաւաքւեցին... Եկուորի գլխին թափուեցին քարէկարկուտ հայեացք. էս գիւղի ճամբէն քեզ ո՞վ ցոյց տուեց... Ինչո՞ւ ես եկել... Ի՞նչ է ուղածդ: Յետոյ

բռնեցին թեւից, կանգնեցրին իր խորճիթի մօտ, չէր ուզում, քաշ տունն կը-
տուրը:

— Ձափ արա, — ասին, — մեր գեղի հող ու ցանքն էս է:

— Հողաշարը փողպատը պոկեց, մի նստեց, դարձաւ ետ գնաց, գիւղին
թողնելով մի անուն՝ Փարազուխ, ծոցատետրի մէջ՝ մի թիւ ու մի պծիկ-
ծիւի գիծաց՝ երեսուն, հողի գիծաց՝ գիծ: Իսկ լեզուի տակ ծննդաց մի պատ-
մութիւն. խելքը թոցրած խութ... խութ... արտեղացի՞, հա, էլի, խութե-
ցի մի մարդ կտուրի վրայ առնոյտ է ցանկի:

— Միբո, քու դարին ե՞րբ կը քաղիս. Միտիկն ուղարկիմ օգնութեան:
«Քողտիկի կտուրին քաղ էլ էրի...»:

— Հա, տղին կ'ուղարկիմ օգնէ քու հօր, Յարութ, մենակ մարդ է,
մեղք է:

— Ծնորհակալութիւն, քեռի Արօ, մարդիկ պէտք է իրար օգնեն:
«Քողտիկի կտուրից ետնջայ քաղեցի...»:

Մանգաղն առաւ, սրաքարն առաւ, մի կուլայ ջուր, է՛, էն թաց քա-
րափառակի կորեկարտի կածանը մտքից դնեց ուքերի տակ, բարձրացաւ
կտուրը: Մանգաղը սուր էր՝ էլի սրեց, արձակեց կուրծքի կոճակները, թաշ-
կինակը դատկատեղից հանեց, կապեց դուխը, որ չգարկուի արեւից, երկըն-
քից խեր ու բարին առաւ ու սկսեց... Ափի մէջ անուշ խուտուտ զգաց, ա-
րիւնը խենթացաւ, հասաւ աշտերի ճերմակը ծրեց, ետ դառաւ եկաւ՝ ման-
գաղի շեղբի հետ տակ-տիկանց քսուեց ճարտքի հողին... Սէ՛շ՛... Արտի էն
ծայրից լո՞ր թաւ, զգոյշ, Միբո, մայր կը լինի, բնի մէջ պուտ-պուտ ձու-
կը լինի, բնի կողքերը չհմեւ, հա, լորը յանկարծ կը կորցնի բոյնը, զգոյշ:
Սէ՛շ՛... Ձէ՛, խմե՛ ընկել է թեւ ու թիկունքդ, Միբո, կամաց հնձիբ, հե-
մա կը տաքանաս, կը բացուես, գաղբաշունչ առ, կուլայից ջուր խմի, քուր
պահիր մանգաղդ:

Մինչեւ ծունկը մի քիչ հողոտուեց, թիկունքը տաքացաւ մի քիչ, մին-
չեւ մի պինչը լցուեց խոտ ու հողի բոյրով... «խոտհարքը» պրծաւ:

Մանգաղը ուււաց ու... Արթնացաւ անուշ երազից, հպճպացրեց աշ-
քե՛րը:

... Երեք դարուն յետոյ գիւղը նորէն դրնդաց:

— Երկինք ամպեց. Ձորի Միբոյի տուն մրկաթ է:

Առնոյտը արժատ էր գցեւհատել գերաններին, օղակ-օղակ փաթաթ-
ւել, կախուել օճորքից:

— Տանիք շուտ տալ է պէտք, Միբո, ուրիշ ճար չկայ, — խորհուրդ
էր տալիս նարէն:

Ձեռքը չէր բռնում... բայց հնար ու ճար չկար:

Մի գիւնի էլ, երբ գիւղը քնած էր, բանն ու քլունդն առած բարձրա-
ցաւ կտուրը...

Էիդ դարուն ձմռան դարուն էր, տնաքանդ դարուն էր... Տան ծածկ
քանդուեց, յետոյ նարէն հիւանդացաւ: Նարէին սելով ասրայ բժշկի... տա-
րայ բժշկի... տարայ ու... Յարութ մնաց մօրէ որբ... էդ դարուն Յարութ
լճրա տարեկան էր...»:

Ձորի Միբոն էլի պինդ-պինդ նայեց որդուն ու դառաւ նարէի աշխրհ
եւ ճակատը ճերմակ, եւ անհնազանդ մազերը, Միբոն մրտած երեսայի պէս
սեղմուեց որդուն եւ ասաց.

— Ի՞մ աշաց միջէն աշխարհն է կը պոկուի, կ'երթայ, Յարութ:

Ուրիշ ոչինչ, ոչինչ չունէր Ձորի Միւրոն՝ մի Յարութ։ Պատերազմ էր ու Յարութ որդուն ճանապարհում էր կռիւ։ Սայլով պիտի հասնէին կայարան, Արոն սայլն առած պիտի դառնար զիւր, հայր ու որդի նստէին զնացք ու Երեւանում, տղերքին կռիւ տանող զնացքի դոյժ-սուղոցի տակ Ձորի Միւրոն մէկ էլ պիտի համբուէր Յարութ որդուն։

Ու ճոճալով զնաց սայլը, քարոքոյ ճամբով քարշ տուեց Միւրոյի յուշերը, զնաց։

Սայլանիւնների օղերից մէկը հին էր՝ կարկատանուած, ճաք ու ծակերով, միւսը՝ զարբին Նգորի մուրճի տակից նոր էր դուրս եկել, մի քիչ քուրայի դոյնն ունէր եւ մուրճի չմաշուած հետքեր։

Հին ու նոր երկաթօղերը ճոճալով զլորուեցին՝ կողք կողքի, ոլոր-մոլոր զլորուեցին, գիւղ Քարազլիից պոկուած ճամբով զլորուեցին, զլորուեցին, փաթաթեցին Ձորի Միւրոյի յուշերը ու հասան Ղաղարարուուն երկաթուղային կայարանը։

Սայլապան Արոն համբուեց Յարութի ճակատը։

— Էրթաս բարի, դառնաս բարի, Յարութ, — ասաց։ Կամեցաւ աւելացնել. զքու հօր մասին չմտածիս, ես կ'օգնեմ, բայց կրկնեց, — դառնաս բարի, լաօ, դառնաս բարի։

Ու սայլն առած բռնեց գիւղի ճամբան։

Իսկ հայր ու որդի սպասեցին Երեւանի զնացքին։

— Էսօր զնացք կ'ուշանայ, — իր օրտինն ասաց Ձորի Միւրոն։

— Ձի ուշանայ, — համոզուած առարկեց Յարութը։

— Էսօր զնացք չէղնէ՛ր, էգուց՝ չէղնէ՛ր, էլօր՝ չէղնէ՛ր... — իր համար միմիայն Ձորի Միւրոն։

— Ինչո՞ւ ես այդպէս ասում, հայրիկ, զնացքի էսօրուայ մի օր, մի ժամ ուշանալը գիտե՞ս ինչ է նշանակում։

— Կ'իմանամ, դառ։

Ու լուեց ու սեղմուեց որդուն ու լոկց՝ ստիպեց որդուն էլ լուել, եւ զնացքը սոււնց-սողոցեց Ձորի Միւրոյի ու Յարութ որդու արանքում ծուարած ապք լուսթիւնը...

Ամէսը մէկ-երկու անգամ փոստատարը նամակ բերեց Յարութից։

— Հայկուշ, մեռնիմ էն նախշուն աչքերուն, մէկ էլ կարդա՛ւ։

Ձորի Միւրոն էլի ու էլի էր լսում Յարութի սողն ու բառը, յետոյ նամակ էր թելադրում։

«Յարութ, դառ։

Էն օրուանից, որ քու տոք դուրս ելաւ տնից՝ արեւ չի կաթացէ տան մէջը։ Իմ արեւ, Յարութ։

Էն օրուանից, որ հեռացար դոնից՝ հով չի դիպէ դրան։ Իմ հով, Յարութ։

Էն օրուանից բոց չի ընկէ թուեղրի մէջը, երդիկից ծուխ չի ելէ... Իմ տաք թոնդիւր, Յարութ, իմ ծուխ, Յարութ...»։

Նամակը թելադրում, կարգաւ էր տալիս, համբուրում աղջկայ ճա-

կատն ու, զնում ձորապոռնիկի իր տունը՝ բոլի մէջ Յարութի կռուահոտ համա-
կը, մտքում ու աչքերի դէմ՝ ձորաքերանին հաւաքուած ժողովուրդ ու զուռ-
նա, կարմիր-կանաչ կապած փետայ Յարութ ու ճերմակ քողերի տակ աչքե-
րը խոնարհած Հայկանուշ հարս :

Աշխարհ եռանկիւնածալ նամակ էր դարձել : Ու Ձորի Մերոյի աշխարհն
էր ալդպէս՝ եռանկիւնածալ նամակ՝ մի պաղաթը ձորի պոռնիկի քար շեմին,
մէկը՝ երկնքում, երրորդը՝ է՛, եօթը սարից այն կողմ, թո՛ւ ու թռանքի
տակ :

Ռմբարկուեց երրորդ դաղաթը եւ Մերոյի աշխարհը դարձաւ աւեր :
Քար կտրեց դրան մօտ դրած իր քարի վրայ եւ ձորի մէջ թափեց աչքերի
մշուշն ու սեւը : Դարձաւ տան պատին ծեփուած, աղաւաղուած ստուեր :

Գիւղացիները խղճացին նրան :

— Ի՞մ սիրտ կը վկայէր, որ Ձորի Մերոյի տղին բան կը պատահէ, —
առայց Արոն, — հէյ վախ, Միբո...

— Գոցուաւ մարդու դուռ, խեղճ Միբո :

— Կտրուաւ մարդու ծուխ, տնաւեր Միբո :

— Հը՛, անաստուած մարդ, քար հողի է՛ կը դիմանայ...

Յետոյ ամէն մէկը երազեց եռանկիւնածալ իր աշխարհը, բոնեց զաշտ
ու կալի ճամբայ, աչք անեց պահեստի դրանն, ու մոռացան նրան :

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՑԵԱՆ

(Հատուած)

ՈՒՐ ԵՍ ԳՆՈՒՄ

Մուշեղ Գալշոյանի յիշատակին

Աշնան օրն է տխուր մարում
Ծաղիկների շողփից,
Պառկել ես դու այնտեղ՝ սարում,
Հրացանը կողփիդ:

Վերում կապո՛յտ-կապո՛յտ երկինք,
Կարօտի չափ տրտում,
Հեռու-հեռում մի լուրք երկիր,
Սասնայ կորած մի տուն:

Մուխն է ելնում բարա՛կ-բարա՛կ,
Սնուշ հոտ կայ հացի,
Ու կայ մաքուր մի աղբիւրակ,
Նման անուշ լացի...

Ո՞վ է կանչում հեռուից, քեզ ո՞վ,
Ո՞վ է ճայնում, իմ ծուռ,
Աչքերդ փակ՝ սեւ կածաւնով
Ո՞ւր ես գնում, ախ, ո՞ւր...

Սար ու հանդին մութ է իջել,
Զկայ դարձի հնար,
Կանգնիր, տղա՛, քո հերթը չէ,
Նախ ես պիտի գնամ:

Բայց գնում ես աչքերդ փակ,
Ու վիհն այդ շատ է շեղ,
Ախ, ետ դարձիր, իմ կապուտուշ,
Գալշոյի ծուռ Մուշեղ:

Այդ առաւօտ Սասնայ սարում
Մի աստղ ընկաւ հանգած,
Հացն իր լացեց մի ջինջ աղբիւր
Ու չորացաւ յանկարծ:

Կարմրել են ծաղիկ ու սեզ
Քո արեան տա՛ շողփից,
Պառկել ես դու ֆիդայու պէս
Հրացանը կողփիդ...

ՎԱՀԱԳՆ ԴԱԽԹԵԱՆ

ՆԱ ԻՐ ԺՈՂՈՎՈՐԴԻՆՆ Է ...

Մեծերով հարուստ հայ գրականությունը վերջում ցույց կտա իր ուսերը: Ամենքիս ուզածն զիպուածը օգնողական գրողների ընտանիքից խլեց Մուշեղ Գալշոյեանին: Գրական մեծութեան այս վանքական քննածոն, լեռնայ օրհնութեան արժանացած այս ընտանիքը միայն Պեղոսով չէր մտնի գրական մեր ընտանիքը, ճշրան հնազանդ եղաւ Քան Գուկիկ Զալալին, որը Սասունից տնտեսական վայրէջք էր կտաւ: Եւ Սրագանի այս փարսանները, որի սանձը պտղեանական օրհնէի իրաւունքով բռնել էր Մուշեղ Գալշոյեան արժանագիրը, ծառ Դուրի աներկ-ըայնի փոստերից մէկը:

Նրա գրքերը եւ տալի շատ չգրած-գրելիք գրքերը, նրա երազանքները երկփնդ էին: Ստանի կարօտը, որ նրա արեան մէջ էր եւ թալիկի սերը, որ հաստատուած էր նրա ծնունդով: Սիրում էր թալիկը եւ կարօտում Սասունը: Սրա Սասունի կարօտով շէնցում էր թալիկը, իր նորագ հայրենիքը: Մէկի երազներով սնում էր միւսի իրականութիւնը: *«Ջուրի Միջոց»* վիպակի ներքաշը, որ անցել էր արեան եւ գաղթի ողջ տառապանքը, կարգիւ էր ծննդովայր, ընտանիք, ծաղկեցնելով Արագածի փէշերի թառած այս փարսանները, նորից եւ քերեց կարգաւորը եւ, մանաւանդ՝ ապրելու եւ գոյատեւելու իրաւունքը: Ձորի Միջոց, Ժայռերից պահուած այդ հեղձոր, Ժայռեղէն սասունցիներ եւ նորագ Հայաստանի քաղաքացիներ:

Մուշեղ Գալշոյեանն ուներ իր ուրայն աշխարհը, ուներ իր հագստի ու ցուլի տեսչական ուղղութիւնը, ու թէն այդ աշխարհը գեղար-ւեստականացնողների առայնելը չէր, սակայն այդ աշխարհի մէջ ուներ իր աշխարհը, որ գոյ-նեքն ու երանգներն իրենն էին, սխառն ու գգոցած իրենն էին, գրածն ու գրելիքն իրենն էր՝ Գալշոյեանից: Ամուր էր նրա հոգին, սկզբում-էր՝ անբնականի, երազանք՝ հոգեղէն եւ կեանքը երազային:

Մանուան մանուան անգամ, նայնիկ չհաստատուել իր ազգայնական, նա ուժերի գեր-մարդկային լարումով փորձում էր ժողով ու կատակել, զարմանք պատճառելով նայնիկ բազմապիսի բռնիքներին, իր բզկուած, մեծա-

մարմնի եւ շմեռող հոգու կարգով: Այդպիսին էր մեր Մուշեղը: Հզոր իր մարդկայնութեամբ, հզոր իր գրականութեամբ, քաղաքացի իր պայծառ անկողնային:

Սիրում եւ երգում էր գիւղը, իր հայրենի գիւղը, որ հոգը մի բառ հացի գիւղացի երկու բառ քրտնէ է խմում, որ մերգը կարմրում եւ շաքարով է լցում լերի քարերի վրայ, որ կալտակը անգամ չկայ, եւ քարերը եւ հրեւո աշխատանքը համագոր է շահած ծանր հակառա-մարտի: Սիրում էր գիւղը, բայց գիւղագիր չէր:

Սիրում էր քաղաք՝ իր Երևանը, որի սովորի պատգամաւորն էր, որի իրաւունքներ չէին, կոշտի ծնունդը վերածնում, քաղաք էր իր հոգին: Սիրում էր քաղաքը, բայց քաղաք-գիր-արքանիստ չէր:

Նա իր կարգած աշխարհի փնջային էր եւ իր նորագ հայրենիք երգելը, մարտիկն ու քաղաքացին: Նա *«Ջուրի Միջոց»* արդին էր եւ *«Քոյուն»* խաղանք շէնցումը: Նա իր պատմութեան իր հերոսների ծնունդ էր եւ ծնունդն էր իր իսկ հերոսների: Այդպիսին էր Մուշեղ Գալշոյեանը:

Նա հեռացաւ մեզից հսկայական ու-ժերի բառով ծաղկումը շրջանում: Գնաց, իր հետ տանելով իր չգրած տանական գրքերը, գնաց խառնուելու մեծերի գերդաստանին եւ հարստ-ցունելու իր հայրենի հոգը:

Գրական աշխարհը չեն զատարկում եւ չեն քափուրանում: Կենսից հեռացած գրողը կուրած չէ, նրա ետմահու կեանքն տալի տեսչական է եւ իսկական գրողի մահը՝ սկիզբն է նրա անմահութեան: Ցան աշտակ այլ ուղղութիւն ու-նի: Ցան նրա տարածի մէջ է, որը կարու ան-վերադարձ, իսկ այն, ինչ նա քողել է մեզ եւ իր ժողովրդին՝ զա ժողովրդական հարստութիւն է եւ իր անմահութեան վկայագիրը...

Հետեւաբար, նա յաւիտեան իր ժողովուրդին է, նրա ընդեր ժամանակների ժամանակա-կիցը...





Վ. ՕՇԱԿԱՆ

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ ԱՐՈՒԵՍՏԸ

Հոկտեմբեր 17ին, որսորդական յիմար արկածի մը հետեւանքով մեռած է Մուշեղ Գալշոյեան, խորհրդահայ գրականութեան միջին տարիքի լաւագոյն արձակագիրներէն մէկը: Արտասահմանեան թերթերէն միայն Փարիզի «Յառաջ»ն էր, որ կէս սինակի մը չափ զլացած էր անոր կենսագրութեան ու մատենագրութեան: Խմբագիրները մամուլի էջերը լայն կը բանան անշուշտ պատմութեան, արուեստի ու բանասիրութեան, զոհուած համագումարներէն մինչեւ մեր առջժամորժեհներու ոսկորներու առաւօտեան ճաթոտուքի արձագանգներուն: Բարով վայելեն իրենց նետուած աչքի փոշին, մշակոյթի այդ խոհարարները, սակայն, մամուլի հանրապետութեան ազմկարար բռնապետները չեն կրնար անտոյժ կերպով անտեսել լո՛ւին, մեկուսի ճակատագիրը ստեղծագործ մարդոց, որոնց երկին շնորհիւ է, որ դեռ գոյութիւն ունի հայ մշակոյթ մը: Գալշոյեան մը արժեւորելը մասնագիտական հարց է անկասկած, սակայն անհրաժեշտ է, որ մեր հանրութիւնը գիտնայ, թէ ի՞նչ ուժեր ունինք, ե՞րբ է, որ կը տկարանանք՝ անոնց կորուստով:

Խորհրդահայ գրականութիւնը ցարդ երեք փուլէ անցած է — Յեղափոխական կամ սլոյլիտարական շրջան, Միջպատերազմեան շրջան ու Յետպատերազմեան կամ Նորագումի շրջան եւ այժմ կը պտնուի իր շորթորդ փուլին մէջ, որ կը յատկանշուի իր ինքնապայութեամբ, իր երիտասարդական արժատականութեամբ: Ամէնէն անչաճեկանը, վաղանցուկը՝ երկրորդը եղած է եւ որուն ողբն ու դատապարտութիւնը քանիցս Շիրազը ինքը կատարած է: Նորորդը, նորոգումի սերունդը, որուն կը պատկանի Գալշոյեան՝ կրցած է իր ինքնութիւնը պարտադրել իր ժամանակաշրջանին, մտայնութեանց վրայ, մասամբ շնորհիւ ա՛յն ողբեկան կային, որ կրցած է ստեղծել իր ու յեղափոխական սերունդին՝ Զարեհի, Բաղդուցի եւ Նմաններու աւանդութեան հետ: Շատ տարօրինակ խառնուրդ մըն է Գալշոյեանի սերունդին նկարա-

դիրք եւ որուն մաս կը կազմեն տազանդաւոր ուրիշ դրոշներ, ինչպիսին են Հ. Մաթեւոսեան, Գ. Արշակեան, Վ. Պետրոսեան, Պ. Ջէյթուեցեան ու բանաստեղծներէն Ռ. Դաւոյեան, խառնուրդ մը աւանդաւորացի, պահպանողական ու ատենց հակադիր՝ անձնական, զարտուղի խառնուածքին։ Այսպէս է, որ Գալուստեանին արձակը, ինչպէս նաեւ Մաթեւոսեանինը, ժըռտումն իսկ է Գ. Դեմիրճեանի, Ս. Զօրեանի եւ Ս. Խանդավեանի գրական ըմբռնումներուն, որոնք այնքան մօտ էին մեր ժողովուրդի սրտին։ Այս միջին տարիքի գրողներն ալ մօտ են միջին Հայուն զգայնութեանց, սակայն տարբեր ձեւով։ Ըստ երեւոյթին, ա'լ կարելի չէ քիչ մը բնական, քիչ մը բռնի Հայրենասիրութիւն, բարոյական, քիչ մը դիւրին խրատ ու լաւատեսութիւն խառնել գրական էջին — Հայաստանի ընթերցողը չատ աւելի խըստապահանջ է, աւելի ճշակ ունի, քան ասկէ քսան տարի առաջ։ Այնպէս կը թուի, որ 1960էն ի վեր նոր սկիզբ մըն էր, որ կը կերտուէր արձակագիրներուն մօտ, որոնք ձեռք կը զարնէին էն ուժառայաւ թեմային, որ կար երկրին մէջ — հողը։ Գալուստեանի հողը այլեւս այդ բարեմիտ, անկորնչելի, զաստիարակիչ ու զգացական գրողներու Հայրենասիրական «հողը» չէ։ Այլ՝ պատուակ իսկ, միջոց՝ մարդկային ձիւ, անձկալի պահեր, գեծեր բռնելու, պատաստելու։ Ահաւասիկ հաստուած մը ընկալումն է։

Ջուրը հեկա։

Գալիս էր ժայռակալ ակումբից փախած, գօտեպիմդ հունով՝ հաւաք, ոչ մի ալիք ետ չէր մայում, գալիս էր անհամբեր, անհրկմիտ-ընթացք։ Մարդիկ վազում էին ցրանցքի պոնկով, ուզում էին գրկել. եւ ձեռք ու ճակատներով համբարում էին ցրի հետ, ուզում էին մի քան գոնել եւ քաշկիմակներն ու գլխարկներն էին մետում ալիքների մէջ եւ ցրանցքի վրայ պար բռնած ննդակներին։

Ջուրը անհամբեր հեկա։

Տետոյ ջրկապաններ բացեցին, ջուրը երակ-երակ տալուց Բովտամ կաւահողում, գլուխը քաղեց Բովտամ փոշու գոտում եւ հանդարտեց։ Բովտամ հին ու փոշու ծոցում ալիքները ընկղմում-ժնում էին ու ճմկկտալով աչք քացում։

Բովտամը երազի մէջ էր. սկզբների շրջանները գառանցում էին կանաչ գարուն եւ յոյսի շշուկներ...:

(էջ 156)

Գալուստեան ուշ մտած է գրական կեանքէն ներս — 1969ին, 36 տարեկանին։ Ասկայն իր Հետ բերած է ոճի թարմութիւն մը ու այդի մաքրութիւն մը, որ հազուադէպ է։ Հեռաքրքրական է մարդկային պիւրկ կացութիւնները ու հողի Հետ մարդոց յարաբերութիւնը զգալու, արտայայտելու իր իւրաքանչիւր կերպը, որուն հաւանաբար իմաստութիւն անունը պիտի տանք։ Ուրիշ խօսքով՝ «հողի միտաբեր» (մենք Սփիւռքի մէջ այդ միտաբերի մասին միայն վարկած կրնանք բանաձեւել, զրկուած ըլլալով հողի փորձառութեանն ու ատով պայմանաւոր ապրումներէն)։ Ահա պահ մը.

Օրը մայմ շոգ օրն էր մնում, ճամապարհը չէր հասնում դաւադիր Զգիւրա քաղաքը, եւ Մոկաց Միրզէն մնում էր քամքին, Դիւտը, միայնակ ու անվերջ ճամբարդ։

Եւ մա քաղեց, որ երաժշտութիւնը մտնում ամբողջ ծաւալով. այդպէս երգը զատնում էր աւելի ճշմարիտ. երգի եղանակն ու օրնայ շոգը ճուլում-զատնում էին մէկ։

digitised by A.R.A.R.@

— Զէ, առտ բամ է, զամբմ, Սանթրոմ ձայնարկու պատասխանեց իր մտքերին: — Օսկի սիրողը հոգ չի սիրէ, Բագրատ: Էն մարդը, որ հոգին փռ-
դիմ եւ օսկում տուեց, փողմ ու օսկիմ կը դառնամ էմոր հայրենիք ու էդ մարդ
օսկիմ քար ու հողի հետ չի փոխէ: Սուտ բամ է...:

(էջ 122)

*Եթէ այս է հողի «միտիքին» առաջին աստիճանը՝ ուրեմն գոյուար չէ
հասկանալ ինչու Մաթեւոսեանի ու Գալլոյեանի նախահայրը փնտռելու է
Բակուլեցի ու, մանաւանդ՝ Արոփեանի ստեղծած աշխարհներուն մթին ան-
կիւններուն մէջ ծուարած ու անհասկնալի: Երբ 1974ին, Գալլոյեանի այս
«Բովտուն»ը Հայաստանի Գրողներու Միութեան գրական առաջին կարգի
մրցանակի արժանացաւ՝ արդեօ՞ք այդ առաջինութեան համար էր:*

*Իր տիպարներու որոշ կողմերով, Գալլոյեանի աշխարհը շատ հեռու
չէ սփռուքեան ու յատկապէս Այնճարի, Պուրճ Համուտի հայութեան գու-
նաչեղ, վաւերական մարդոցմէ ստեղծուած պղտիկ աշխարհէն: «Բովտուն»ը
մասնաւոր ներք մը կամ դիպաշար մը չունի: Հող, մարդիկ, աշխատանք,
քար ու ջուր, ցաւ ու հաճոյք, պայքար, յաղթանակ, հայկական հնազարեան
խանդավառութիւն ու տխրութիւն — ասոնք կը լեցնեն վէպը ու կը յորդին
կողքերէն դուրս դէպի համահայկական զգացական, հոգեբանական միու-
թիւն մը, զոնէ կապ մը: Ահա տեսարան մը:*

— Գիմի՛ր...

Սեզաններին գինի շատ կար, համարեա՛ միայն գինի կար: Հաց ու
պանրի մնացորդ, երշիկի շաղ եկած կնկաներ եւ գինի, խառնիխառն շշեր՝
չբացուած, կիտաւ, դատարկ: Դատարկութեամբը Եւսի շատ սեզաններին
տակ էին՝ կանգնած, տապալուած, ասիւրի տակ տարուբեր, գլորուող,
գրկագոցող:

— Գիմի՛ր:

.....

Մի ցանկ գոռում-պանայում էր:

— Լուսի՛ր... Լուսի՛ր... — քայց խող չկար: — Մի բաղէ, —
ցուցմասը տնկեց, — լուսի՛ր...

Այս ու այն կողմից ծածաղում էին:

— Լուսի՛ր...

— Մարդ է՛ք, տօ՛...

— Թիւո՛ւ, — գայրացաւ կենաց ցանկացողը, խմեց եւ մշուշուած
աչք ու ճակատով խոնարհուեց դատարկ քաժակին:

Մէկը հարբած ձայնով սկսեց՝

Իրբեւ արծիւ սաւառնում եւ լեռ ու մայր...:

— Զառա՛ւն, — ճաշարանը քնդաց, — առա՛ն...

— Գիմի՛ր:

— ...ճի՛ի՛ր...

Քաժակները շրթկացրին, ասի՛ի ելան...

Թնդեցնում եւ երկինք դետին տենչալառ...

— ...առա՛ւն: — Մէկը գլխարկը շարտեց դէպի առաստաղը եւ տէր
չկանգնեց:

Առայնակցողները շատ էին՝ ամեն մէկն իր ճայնով, իր իմացած բան
ու խօսքով, եւ երգը խեղդուեց արմուկի մէջ:

Հայոց ազգի փառք ու պարծանք, Անդրանիկ...

— Ո՛ւր է Անդրանիկը... Անգրանիկ... Անդ-քա-միկ... Անդրանիկ
գորավարը, — Սանթրոնն աստի կանգնեց, — հռուռու՛ւ...

— Փաշա՛ն...

— Սո՛ւսս, հո փաշեֆի՛..., — հայհոյեց Սանթրոնն:

— Կը ծեծեմ, — Արմայի ականջի տակ գոռում էր թագրատը: — Կը
զցեմ ռաֆերիս սակ: Կին է, ի՞նչ իրաւունքով է երկու փքանոց արկզը գըր-
կում: Ես տղամարդ եմ ծնուել, Արմա, տղամարդ եմ, էս կոնքրս մի գեր-
դաստան պէտք է պահե՛նք, թէ չէ: Ես քոյլ չեմ տայ...

Տուն գնո՛ւ՛... Տունս ծախում եմ, ա՛վ է ուզում:

— Ով «Արարատ»ի կենցաղը չիմի, կը հայհոյեմ: Մէկ... երկու...
երեք...

Հսկայ լեռներ քեզ ապաստան, Անդրանիկ...

— ...աաաա՛ան...

— Կը բաժանուիմ, կը տեսնես, որ կը բաժանուիմ: Ես դրա ցեղը...
եկած օրումնից ուզում է մօրս դուրս գցի: Կը բաժանուե՛մ...

.

— Լռութի՛ւն... Լռութի՛ւն... մի ըռպէ՛...

— Լսէ՛ք, այ թայամ, — մէկը յիշեց՝ ամազեց Մարութեանին:

— Հա-հա-հա-հա՛...

— Թխում՛ւ, — կենաց ցանկացողը գայրացած խմեց:

*Ֆեղայիներ, ջան ֆեղայիներ,
Ձեր մայրերը ձեզ մատաղ...*

— աաաա՛աան...

Գինի՛:

— Հռուռում՛ւ..., — Սանթրոնն աստի կանգնեց, — մէկ... երկու...
երեք, — քարձրածայն հաշուեց, — տասներինգը... Մոեամէջ Ալի չկայ...

*Մշոյ Սուլթանն սուրբ Կարապետ
Թող լինի ձեզ պահապան*

— Սուրբ Կարապետ կ'երթա՛ւ, — գոռաց Սանթրոնն, — ուրիշ պայ-
ման չի՛ք. աշխարհի չէմպիոնն իմ Դաւիթն է. իրաւունքն իմն է... ի՛մն է...
պիտի երթամ...

(Էջ 225-228)

*Գալլոյեանին այս տաք, ճիկէրին խօսող ու խորապէս հայկական խառ-
նրած ջը, որ այնքան մօտ է մեր սրտին՝ իր հետ իր սահմանափակումն ալ
կը բերէ անշուշտ: Վիպառանին հորիզոնը Հայաստանէն դուրս չի կրնար ել-
լիւ, իր տիպարները հայկական սրտառուչ տաղնայներէ անդին ու վեր՝ չատ
քիչ բան ունին առլիք միջազգային մայրաքաղաքներու ճառսին մէջ մոլո-
րած ու անոնց դաժան օրէնքներուն մէջ բռնուած հայերուն: Այսօրուայ մար-
դը, մտայնութեամբ ու կենցաղով՝ միշտ քիչ մը սոփեսացուի կը հակի*

ու հաւանաբար քիչ ցուլք դռնէ ան իրմէ, իր հետաքրքրութիւններէն ու ապրումներէն՝ Գալլոյեանի բուռն, վարակիչ զգացումներու հնոցին մէջ: Սակայն ի՞նչ փոյթ, ի վերջոյ կարեւորը ա՛յն է, որ դրող մը ինքնատիպ, վաւերական ապրում մը բռնէ իր բառերով, հիմնականը ա՛յն է, որ իր դարուն ժարդիկ անոր երկին մէջէն իրենց ինքնութեան դադանիքին մօտենան, անոր երկը հայելի մը ըլլայ, ուր դարը ինքզինքը սահմանէ, զերանցնի:

Խորունկ, խոկուն, բայց եւ տենդոտ գրիչ մըն է Մուշեղ Գալլոյեան, ճարտար՝ ժարդկային ու զուտ հայկական ապրումի պահերը նուաճելու, օժտուած կառույցի քացառիկ բնագոյով, կարող ժամանակի յգացքին ներշնչութիւններն ու բարդութիւնները գործածելու, ինչպէս եւ դիտակցական զանազան ժակարդակներու վրայ զարդացնելու իր գրական երկը: Ամէնէն ցաւալին ա՛յն էր հաւանաբար, որ Գալլոյեան կը ձեկնէր աշխարհէն տոկուն իմաստութեան մը հասած եւ որմէ անդին բոլոր կարելիութիւնները կը հրաւիրէին զինք: Ահա ինչպէս կը տեսնէ ինք իր տիեզերքը.

Վարար ու պզտոր մի գետ, գալարում, քաբարում, ճանաչում ու մացառում ափերով...: Ո՛չ երկիւնքն է երեւում, ո՛չ ետրիզոնի եզրը: Գետը վարար ու պզտոր է, եւ իմէր իրքեւ թէ՛ փշոււմ է... Փորձում է լողալ, ափ ելնել Եւրոպայի մէջ Կարմիր ծովի կառուած ձեռք ու ոտքից, քառում յատակը...:

— «Օգնեցէ՛ք», — գոռում է, բայց ծայն դուրս չի գալիս:

Եւ սուգում է, ծեծկում պզտոր ալիքներով ու փշոււմ՝ ամորաշ անաղղութիւն:

Յետոյ, իրքեւ թէ, հեկց գետի կեդրոնում կանգնած է մի ընկուզեմի...: Եւ այդ օտար աշխարհում ծանօթը միայն դա էր, ընկուզեմի՞ն՝ ուժեղ ու քարի, մտքիւմ, յաւաքող, կանչող: Եւ իմէր ուժ տաւ, շեղակի ցնդեց ալիքները, ազատուց կառած քարերից եւ ալիք գրկեց ընկուզեմին: Յետոյ մագլցեց նստեց մի հաստ ցիւղի եւ յոգնած ու խաղաղ մայից վար:

Արեւծագիւն, աչքը բացելու հետ, Արման այն զգացումն ունեցաւ, թէ՛ իմէր բռնածի միջից լողաց դուրս. բռնածիկի մէջ էր, ապրումէ խանձարութի եւ այդ մետաքսէ քարուքը բացուեց եւ իմէր լողաց դուրս:

Եւ սպա, աչքը բացելում պէտ, որպէս ճառագայթ կտրեց-տնցաւ՝

«Նայմ մարդը ամէն օր ծնում է, ամէն օր մեռում...»:

(էջ 240-241)

Մարդկային եղբրականութեան այս ըմբռնումէն է, որ ձեւ կ'առնէ Գալլոյեանի հաւատքը կեանքի ու ժարդուն վրայ, անոր սէրը՝ հանդէպ հողին ու բնութեան բարութեանը: Ու եթէ քիչ մը պարզունակ է այս ամբողջ փիլիսոփայական սիւքեմը, պատճառը ա՛յն է, որ Գալլոյեանի տաղանդը իր լիութիւնը կը գտնէ մտածումի կազապարներէն անդին՝ յուզումներու, կեանքի ոճի, ժարդկային զգացական կապերու հանգուցներուն մէջ: Ու ա՛յդ կալուածին մէջ ինչ որ իր դարձը նուաճած է՝ մնայուն (որքան որ «մնայուն» արտօնուած է անուանել արուեստի արժէքները) գեղեցկութիւն մըն է մեր գրականութեան համար:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

(31 Հոկտեմբեր 1980, Ռէտնըր)

ԿՈՐՍՍԻ ԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Մանր ինքնին անհեթեթաբան է, առանկի եւս՝ երկտասարդ տարիքում եւ, առանկի եւս, եթէ նոյնքան անհեթեթապատեհարի հետեւանք է:

Մուշեղ Գալշոյեանի կարուստը, թացի զուտ մարդկային ցուրից, ծա՛նր ցաւից, զգալի է լինելու նաեւ սովետահայ արդի արձակուի, որի տաղանդաւոր մըշակներէից էր նա: Մեր արձակուի տրհեստակաւորէն գոյացաւ մի թափուր սնդ, որն ալլեւս փոխարինող չի ունենայ: Այլապէս է լինում միշտ, երբ տաղանդներն են հետանում կեանքից, մարդիկ, որոնք աչքի են ընկել վառ անհատականութեամբ, իրենց ինքնատիպ ու անկրկնելի ձայնով:

Ինձ համար չափազանց դժուար է համոզեալ գալ սգոյ խօսք գրելու այն տրիտուր պարտականութեամբ, քանի որ Մուշեղ Գալշոյեանն իմ սերնդակիցն էր, եւ նրա կարուստը արձակագիրների իմ սերնդի համար նաեւ անձնական վիշտ է, խիտ անձնական: Դժուար է ստալ թանկանուութեամբ յանդիմարտն անհատարեցեղ ընկերոջը եւ դեռ հանդարտ դատաւութեամբ գնահատանքի խօսքեր փնտռել: Յատկապէս հանգիստ չի տալիս այն միտքը, թէ Մուշեղը դեռ որքա՛ն ամէլիքներ ունէր, որքա՛ն հագեւար արժէքներ կարող էր ստեղծել, ուրախացնելով մեզ ու իր հազարաւոր ընթերցողներին: Մենք միշտ փնտռելու ենք նրան եւ զգալու ենք նրա լուռ ներկայութիւնը մեր կողքին: Գոնէ միտքաբուրսին է, ինչ-որ չափով միտքաբուրսին, որ Յա հասցրեց կեանքանութեան օրօք ստեղծել այնպիսի գործեր, որոնք մնայուն արժէք ունեն եւ սովետահայ արձակի այսօրուայ ու վաղուայ հարստութիւնն են: Թէկուզ ուրեմն էլ մի պահ

տարօրինակ թուայ, կ'ուզեմայի, շա՛տ կ'ուզեմայի, որ նրա արածին զուամարէր նաեւ այն ամէնը, ինչ Յա ստեղծելու էր դեռ, որովհետեւ հեղց այսօր արդէն պարզ տեսանելի է նրա արձակի գարգացման ուղղութիւնը եւ, աւա՛ղ, արդէն անիրագործելի հեռանկարը: Վըստահ եմ, որ նրա ընթերցողի համար եւս խորք ու անհասակնայի չի լինի այսպիսի զգացողութիւնը:

Կար մի հրաշալի արձակագիր, նոյնքան հրաշալի ու ազնիւ մի մարդ, իմ սերնդակիցը, իր ժողովրդի ճակատագրով ապրող ակտիւ եւ ազնիւ քաղաքացին եւ յանկարծ, նրա ստեղծագործութիւնը, որ դեռ երեկ սովետահայ ժամանակակից արձակի գարգացման ընթացքի ամփոփական մասնակիցն էր, աչքերիդ առաջ, մէկ օրուայ մէջ դառնում է պատմութիւն: Պատմութիւն, որը պիտի միշտ կեանքանի եւ անքաժան ուղեկից դառնայ ողջերիս համար:

Հայ արձակը, որքան էլ հարուստ լինի ու անպատ, միեւնոյն է, ազգատանում է իր իւրաքանչիւր տաղանդաւոր մշակի մահուամբ: Սա է կորուստի խորութիւնը: Իսկ ապրած տարիների խորութիւնը այն արժէքներն են, որոնցով ամէն մի մշակ հարստացնում է իր մայրենի մշակոյթը: Հարստացման եւ ազգատանման այս անկերպանակի շրջափառ է գրականութեան ճակատագիրը, որին մասնակից լինելը վիճակուած է միայն իսկական տաղանդներին: Մուշեղ Գալշոյեանի ստեղծագործութիւնն այս օրինակաւորութիւնն է կրում իր մէջ, ուրեմն եւ՝ մեր արձակի անհառու երեւոյթներից մէկն է: Ու այդպիսին կը մընայ վաղը եւ ընդմիշտ:

ՊԵՐՃ ԶԵՏՈՒՆՑԵԱՆ

digitised by

A.R.A.R.®

Ա.Լ. ԹՈՓՉԵԱՆ

ՄԱՐԴՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ



Մ. ԳԱԼՇԱՅԵԱՆ, ԻԲՅՈ ՍԵՊՏԵՄԲԵՐ

Յաճախ չէ, որ արժեքազրի իւրաքանչիւր ստեղծագործութիւնը թէ՛ պրորբաններով եւ թէ թեմայով դառնում է նախորդի օրգանական շարունակութիւնը: Մուշեղ Գալշեանի ողջ արձակը մինչեւ այժմ կարծես լուրջ նախապատրաստութիւն էր «Բալստան» վէպի համար: Վէպին նախորդած երկու գրքերը, հրաշայի ակնարկների ընդարձակ շարքը՝ օփումած հանրապետական մամուլի էջերում, այդ ոչ երկար, բայց արգասաւոր ճանապարհի վկաներն են: Ծանապարհ, որ հեղինակին բերեց զէպի արդիականութիւն, դէպի մեր գրականութեան ամենազօռար տեղամասը՝ գիւղական թեման, այսօրուայ գիւղի արտացոլումը արձակի միջոցներով: Այս հանգամանքը մի փոքր շեշտուած ենք ներկայացնում, քանի որ Մ. Գալշեանը այն եզակի արձակագիրներից էր, որը գրեթէ աուրք շտուեց (բացառութեամբ մէկ-երկու ակնարկի) վերջին տարիներս բուռն ծաղկում ապրած, այսօրէս կոչուած, «հորապաշտական» արձակին: Եւ դա բնական էր, քանի որ արձակագիրը գրականութիւն եկաւ լրագրողի հարուստ փորձով, հանրապետութեան գիւղական իրականութեան ճշտակ ու գլուխը խորապէս ուսումնասիրած եւ վերջում: Բուական է թերթի վերոյիշեալ ակնարկները եւ կը համոզուենք դրանում: Արձակագիրը գրականութիւն էր մտնում փաստից եւ ոչ թէ յօրինով եւ հակադրական անութիւններից թմբկոծող մշուշից: Մ. Գալշեանը հաւանաբար լաւ պիտակցում էր, որ կարեւորը սկունքների ընտրութիւնն է, պտնել այն ճիշդ ուղին, որը ամենակարճ ժամանակում կը հասցնի այսօրւան, միաժամանակ շփոթելով, որ հեռանանք մեր անցեալին վերաբերող հարցերից: Թերեւս սա է պատճառը, որ Մ. Գալշեանի գրեթէ բոլոր ստեղծագործութիւնները ժամանակային երկու շերտ ունեն, հերոսները երկճեղքուած են ներկայի եւ անցեալի միջեւ: Դա անցեալի հասարակ մի բաղձանք

էն, զա հերոսի բնաւորութեան արժաններն են, ժողովրդի անաւարտ պրոբլեմներն են ժամանակի մէջ:

Այս վիճակն է, որ շարունակ տեսնում ենք Մ. Գալլոյեանի ոտաջին լուրջ եւ ծաւալուն ստեղծագործութեան մէջ. «Ձալի Միրոն», Հայրենիքը կորցրած Ձորի Միրոն պիտի նոր Հայաստան գտնէր: Հեղինակը նոյնիսկ ներան օժտել է ինչ-ինչ առասպելական գծերով՝ Միրոն կարծես Նոյն էր, որ ջրհեղեղից յետոյ իջել էր Արարատ լեռան դադաթից, որ մտնէր իւր մարդկային էութեան մէջ եւ դնէր նոր, ապագայ կեանքի հիմքերը: Հայրենիքի ծուռտուած մարմինը բուժելու համար նոր մարդու պահանջ կար: Հայրենիքի գաղափարը նա պէտք է մարմին դարձնէր, ապրող իրականութիւն: Անհրաժեշտ էր գտնել այդ երկու տարրերը՝ Մարդը եւ Հայրենիքը, գրանք անջակերթօրէն կապող ամենամոտաւ հանդոյցը, այդ երկուսի համադրութեան կենսածէր:

Մ. Գալլոյեանը մինչեւ «Բնվտուն» հասնելը, այդ երկու տարրերի միաւորման ուղին որոնեց «Ծաղկած քարեր»-ում: Այստեղ արգէն («Լուսաւարչի կանքերը» եւ «Ազնաւախար» փաստագրական վիպակներում) արձակագիրը կեանքի զէպքերի մէջ փորձում է գտնել այդ երկու միաւորները գոտեմարման միջոցը: Իւրաքանչիւր նոր փառտ, նոր երեւոյթ Մ. Գալլոյեանը պահանջում էր որպէս անցած տեղանքի արդիւնք: Թերեւս դա էր պատճառը, որ վերադառնալով վիպակներում ներկան շարունակ անցեալի կողքին է, եւ այդ երկուսը իրար են կապում մարդկային որոշակի կենսագրութեամբ, որը ոչ այլ ինչ է, քան մարդու գործունէութեան, արարչագործութեան կամ, աւելի պարզ ասած՝ աշխատանքի պատմութիւն: Եւ «Բնվտուն» վէպում Մ. Գալլոյեանը փորձում է Հայրենիք, Մարդ եւ Աշխատանք հասկացութիւնները ո՛չ միայն միաւորել, այլեւ դնահատել արդիականութեան լոյսի տակ:

Ի՞նչն է ասիպէլ արձակագրին վերատին զնահատելու մարդու դերը հասարակութեան մէջ, որոնք մարդկային ծնունդը կոյնկոտիւմում, բնորոշել մարդու ներկայութեան աստիճանը, ձեւը եւ չափանիշը եւ, վերջապէս, ինչպէ՞ս է հաստատում մարդկայինը «Բնվտուն» վէպում:

Վէպի Ֆորուլան թուում է ոչ մի հետաքրքիր բան չունի: Լեռնայի ստիպուած լքում են իրենց նախկին բնակավայրը (այնտեղ ջրամբար պիտի կառուցուի) եւ դալիս են իրենց նախկին դիւղից քիչ հեռու խոպան, անջրգի հողերի վրայ հաստատում: Նրանք ամէն ինչ պէտք է նորից սկսեն. միայն տներն է, որ պարտադրաբար ստանում են, մնացած ամէն ինչը պէտք է նոր ստեղծեն. նոր կոյնկոտիւ, նոր դաշտ, առաջին տունը, առաջին հերկ, առաջին ջուր... գրեթէ ամէն ինչ առաջին է: Կարելի է ասել, որ սա արգէն դարձել է Մ. Գալլոյեանի մշտական եւ սիրած վիճակը. իւր արժաններից պոկւած մարդը, որ գրեթէ մերկ ձեռքերով կանգնած է բնութեան դէմ, սեփական եւ ուրիշների թուլութեան, անծանօթ միջավայրի դէմ: Գալլոյեանի հերոսները մի շարունակական մաքառման մէջ են, նրանք ամէն օր, ամէն վայրկեան պէտք է ապացուցեն, որ իրենք իրաւունք ունեն մարդ կոչուելու, եւ եթէ չլինէր անցեալի յուշը, բարոյական պարտքերը եւ ապագայի յատակ գիտակցումը, ապա այս մաքառումը կարող էր սիդիֆիան տառապանքի վերածուել: Մինչդեռ Մ. Գալլոյեանի հերոսների մաքառումը ապարդիւն չի անցնում: Բայց եւ այնպէս, նրա արձակում կայ մի տեսակ անողոք, բայց առնական, արգար հուժանիղձ: Մ. Գալլոյեանը մարդուն դնում է այնպիսի՝ իրադրութիւնների մէջ, ուր վերջնականօրէն բացւում է նրա բարոյական աշխարհը: Թոյլը եւ վատը անկարող են ծպտուել, իսկ զօրեղը, մաքուրը, աղ-

ները չեն կարող կորչել: Մարդը շարունակ եւ անվերջ տարրաբազադրուում է ինքն իր մէջ, ոչ մի անյայտ անկիւն չի մնում, ուր կարողանան թաքնուել ցածր եւ յոռի կրքերը:

Վէպն առանց որեւէ օուր, արտակարգ իրադարձութիւնների պատմում է, թէ ինչպէս են ստեղծւում նոր բնակավայր, նոր բնակարաններ, նոր մարդիկ: Ահա ամբողջը: Եւ երկի առաջին էջից մինչեւ վերջինը տեսնում ենք միայն աշխատող մարդկանց: Թւում է, թէ աւելի տաղտկալի բան անհնար է նկարագրել, հեղինակը գիտակցաբար վէպը գրկել է հետաքրքիր, զբաւել հրեւալու հնարաւորութիւններից. աւելի քան երեք հարիւր էջի օտարմանը նա պատմում է միեւնոյն մարդկանց նոյն հոգսերը, նոյն մտքերը, եւ դրացւում է, որ հեղինակը չի ձգտում հետաքրքրութիւն մտցնել պատմութի մէջ: Վէպն ասես անտաշ, մաժոտպատ մի ապառաժ լինի, թէ կարող եւ թափանցիկ ներս, քանդակագործի հայեացքով նայի եւ զգայ գեղեցկութիւնը, թէ չեւ կարող... Իսկ վէպի համեմատաբար անյաջող հատուածները նրանք են, որոնք ինչ-որ չափով դուրս են մնացել այս հանհետաքրքիր ուրիշից, որտեղ հեղինակը ձգտել է արձակի հետինիկա՝ ցուցարներել, յղկել ոճը, յնդուէ: «Բովտուն» վէպը կարելի է պատմել նոյնիսկ երկու քառուկերի պէս մասին, թէ ինչպէս է մարդն աշխատում:

Մարդն աշխատանքով է նուաճել իր գոյութեան իրաւունքը, եւ դա նրա ինքնահաստատման կարեւորագոյն ձեւն է: Սակայն աշխատանքը Մ. Գալշոյանի վէպում դառնում է նաեւ միջոց (եւ միակը)՝ աւելին անելու, աւելին լինելու, աւելի կատարելա Մարդ դառնալու, ինչ որ մէջ նստած թշնամունք յաղթահարելու: Աշխատանքը դառնում է մարդու բոլոր ուժերի զբոսնում, մարդացման կատարելալ ձեւ, մարդու գոյութեան հիմքը, նրա ներկայութեան միակ չափանիշը ժամանակի մէջ: Եւ, վերջապէս, աշխատանքն է, որ մարդուն իրաւունք է տալիս մարդ կոչուելու, իր տեղն ունենալու մեր հասարակութեան մէջ: «Մեզ միացնողը սա է», — ասում է Արման, նայելով մատղաշ տնկիներին:

Վէպի օկիդոն իր մանրամասն նկարագրութիւններով, պատմում է, թէ ինչպէս է քանդուում հին կոլեկտիւ եւ փնտրում նորը. «Յակնիք բնակարանի» նկատմամբ ամէն մէկը իր առնչութիւնն է բերել, իր ծառայից քաղի պատկերը՝ եւ տանը, եւ ցանկապատի: Նրանք պատրաստի իմպրովիների հետ ստացել են նոյնպիսի եւ նոյն քաղաքային-տնտեսականները: Աւելի պերճաբան է այս սոցիալ. «Մի խաղ եմ ձեռքի ու մի խաղի չեն գալիս, — տարբեր գիւղի ծնունդ երեխաներ են»: Կենցաղային մանրութիւնների նկարագրութիւնն անբաժանելիորէն վերաճում, դառնում է մի խտացուած պատկեր, ստանում կարեւոր իմաստ. մարդկային հասարակութեան գոյութեան հիմքը փոխադրուում է, համատեղ եւ նպատակասլաց գործունէութիւնը. «Մեծակ վաճառ չի ընկուի, չէ՛, Բագրատ, էն խեղճ Կարայիմ օգնիր», յորդորում է պառաւ Զանադը: Կարայի դրաման կատարելալ մեղակութիւնն է: Մայրաստիճան աղանիւ, բիւրեղեայ մարդ, իրադրութեանը եւ մարդկանց անշատօրէն գնահատող, բայց ահա նրա ազնիւ մղումները շուտ են դալիս իր դէմ: Եւ դարձեալ քննադատի սովորական, առօրեայ մանրամասները աճում-դառնում են խորհրդանշանի: Կարոն սկսում է վանք շինել՝ ուղիղ եւ փոխարեական իմաստով, քանի որ օրն օրի վրայ հեռանում է մարդկանցից, քանի որ ուրիշ ճանապարհ աշխատ չկայ նրա համար, ուրիշ ոչինչ աշխատ չի կարող անել, կամայ թէ ակամայ նա խախտել է համակեցութեան կանոնները, ներքուստ համաձայն չէ այն կանգնելն, որով ապրում է իր շրջապատը: Նա պէտք է մեն-մենակ իր

Հաւատարմութիւնը Կարոն փաստօրէն դուրս է դալիս Հասարակութիւնից եւ ժամանակից, նրա տշխատանքը սկսում է ինչ-որ չափով դառնալ սիգիֆիկան. փորձում է աղնութիւն ցուցարներէլ, արդարութեան հասնել, բայց շարունակ մնում է իր բարձրացրած եւ շրջապատ հարցերի ծանրութեան տակ, ոչ մի համաձայնութիւն, իրախոսանք կամ օգնութիւն չըջապատի մարդկանցից, եւ զարմանալի մի բան. Կարոն բարձրացնում է հարցեր, որոնք աւելի չափ պէտք են միւսներին, սակայն ստացւում է անպէս, որ կոնկրետը ամէն անգամ քաշւում է մի կողմ, եւ Կարոն նոյնիսկ ինչ-որ չափով դժմագոյ-արդարութիւն տպաւորութիւն է թողնում: Այսպէս թէ այնպէս, Կարոյի ջանքերը ոչ թէ օգնում, այլ խանգարում են մարդկանց եւ իր ապարդիւն որոնումներով նա մեզ համոզում է, որ մարդն աշար ի վիճակի չէ մեկուսանալու ժամանակից, մարդկութիւնից (թէկուզ յանուն մարդկութեան), որ անկարող է «անհատական» հաւատ ստեղծել: Մարդու հաւատը հենց որոնչակի կեանքն է կոնկրետի մէջ: Այդ է համոզում մեզ Կարոյի դրաման:

Բայց ահա Սանթրոն, եւ դարձեալ զարմանալի մի բան. այս մէկը կարծես հետեւողականօրէն իրեն դուրս է դնում կոնկրետից, աշարուայ հարցերից, քայլում է աւելի՛ նայելով ետ կամ պարզապէս հայեացքն ուղղւած է ետ՝ դէպի անցեալը, իսկ Արմայի ասելով՝ «Եւր հայեացքն է հասնում, այնտեղ ուր դիմել չի կարող...»: Սակայն Սանթրոն որքան որ հայեացքը դէպի անցեալն է, նոյնքան էլ կապւում է մարդկանց: Նա իսկական աշխատող է, աշխատւոյն մարդ, շրջապատի հանդէպ չափազանց նրբանկատ, բայց եւ անպէս, աւելի շատ իր ֆիզիկական ներկայութեամբ, իսկ հոգեպէս նա դառնում է Արմայի հետ. «Արմայի պէս գեղը մեր աչաց դէմ գետնի տակ կ'անցնի, մարդիկ գետնի տակ ցոր գեղ կը փնտռեն», — ասում է Սանթրոն, հնազանդի աշխատանքին նայելով: Նա կորցրել է ժամանակի ընթացքի զրոյացութիւնը, նա ապրում է ոչ միայն անցեալում, այլեւ ամէն ինչ (այդ թւում եւ իրեն) փորձում է անցեալ դարձնել:

Մ. Գալստեանի ղէպում հերոսի՝ հասարակութեան մէջ ամբողջական ներկայութեան կարեւոր չափանիշներից մէկը ժամանակի ճիշդ գզացողութիւնն է, անցեալի, ներկայի եւ ապագայի խելացի միահիւստումը: Աւելի՛ն. կարելի է ասել, որ ժամանակը դէպի գիտաւոր հերոսն է: Իւրաքանչիւր դէպք, խօսք, շարժում կամ առարկայ տեսնում ենք առնուազն երկու ժամանակներ. իր զուգահեռների մէջ: Մի կողմից՝ մարդկանց մի խումբ անընդի, անտպաս հողում ջանք է թափում իր ներկայութեան վկայականը ստեղծելու՝ նոր բնակավայր կառուցելու, միւս կողմից՝ հենց խոսքի մշակողների կողքին մարդկանց մի այլ խումբ ջանք է թափում գետնի տակն անցած բնակավայրի հետքերը գտնելու: Մարդը շարունակ իրեն հաստատելով՝ իրեն է որոնում ժամանակի մէջ: Կարուտը եւ պիտը, կործանումը եւ ստեղծումը կարծես նոյնն են, եւ Մ. Գալստեանը բաւական դիպուկ է գտել դրեթէ միեւնոյն գործն անող մարդկանց միջեւ ընկած արհեստական անջրպետ. ինքնահաստատման նոր ապացոյց ստեղծող մարդը չի հասկանում իր նախնիների գոյութեան ապացոյցները որոնող մարդուն. խոսքի մշակողները արհամարհանքով են նայում հնազանդներին:

Վէպի հերոսներն էլ շարունակ անցեալի եւ ներկայի մէջ են, անգամ երկխոսութիւնների մէջ մասը զարգանում է զուգահեռ ժամանակներով, հերոսների միտքը շարունակ զրգազգածեւ ցատկի մէջ է՝ ներկայից անցեալ եւ հակառակը: Իւրաքանչիւր արարք չափում է անցեալի, ներկայի եւ ապագայի զննահատականերով, հերոսի բարոյական պատասխանատուութիւնը:

գիտում է ոչ թէ կոնկրետ մէկ պահի, այլ ժամանակի ամենայն տարածքի միայն՝ այսօրուայ արարքը երկկուայ դործի շարունակութիւնն է եւ վաղուայ սխրանքի հիմքը: Արմայի հանած ապառաժ քարը աւելի շուտ ապագայի արակ է, իսկ Երոյի ապառնի «Վոյդան», դեռ չիրականացած, դառնում է անցեալ: Եւ հերոսները շարունակ դադարում են ժամանակի այս հակասութիւնները յաղթահարելով: Վէպի հերոսների համար ճանաչել ժամանակը նշանակում է ճանաչել ինքն իրեն: Անդամ վերացական թուացող քարոյսակաւ-հոգեկան մի շարք արժէքներ դործուն են դառնում այն ժամանակ, երբ համընթաց են ժամանակի հետ (նոյն Կարոյի ազնուութեան պրոբլեմը):

Մարդու եւ ժամանակի այս ներդաշնակութեան խախտումը հերոսներին աստիճանաբար խորթացնում է հասարակութիւնից եւ ժողովրդից: Կարոն այնպէս է դուրս մնացել ժամանակի հոլովոյթից, որ նրա ներկայութիւնը վերածուել է կատարեալ աւելորդութեան, նրա ազնուութիւնը, նրա պայքարը յանուն արդարութեան չօչափելի ոչ մի օգուտ չեն տալիս, ընդհակառակն, աւելի են նպաստում օրինազանցներին՝ հաստատուելու եւ անվնաս պարելու:

Աւանդ հեռանում է ներսէսը. դա նրա ներքին պատիւնիւն արտայայտութիւնն է, նոր պիւղը լիովին ցոյց տուեց նրա ներքին եւ արտաքին բոլոր կարողութիւնները, դժուարին քննութեան նա չդիմացաւ: Նրա հոգեկան կատարեալ բացակայութիւնը, բնականաբար, պէտք է վերածուէր նաեւ Ֆիդիկուկան բացակայութեան: Մարդ, որը կամովին հրաժարուել է Աստուծոյ բանից, որը ոչինչ չունի, կարիք չունի եւ, վերջապէս, չի կարողանում ժողովանց հետ հաղորդակցուել: Իսկ Արտուշն իր ներկայութիւնն արդէն թողել է պատերազմում, նրա ժամանակն աւարտուել է, նա արդէն բացակայ է եւ, աւելին անել չկարողանալով, իրեն փնտռում է ուրիշների՝ պատանիների մէջ, իր կորցրածը վերադանելու յոյսով: Միայն Սանթրոնն է, որ կարողանում է դանհատել Արտուշին. «Թե՛ կռուի մասնակից է, ուրիշն աստիճան է: Արտուշի իսկական հակապատկերն է Բաղրատը, եւ «աւարտ» բառն էլ սա է դործածում: Արտուշի պատիւնիւնը բացարձակապէս անհասկանալի բան է նրա համար, քանի որ, ըստ Բաղրատի, մարդու գոյութիւնը մարդկանց մէջ ընդամենը մկանների պրկում է, օգտակար արդիւնաւէտ եւ դանդաղ աշխատանք, մի բան, որ նա անում է օրն ի թուն, հրաշալի, մի ամբողջ գիւղի շափ: «Բովսաւն» մէջպէս ժամանակի սիթմից ընկնողները նոյնիսկ սկսում են խանդարել իրենց իսկ փայփայած երազների իրադործմանը: Ուտից գլուխ հայրենասէր, Արմանուկով ապրող Սանթրոնն ինչ-որ չափով նահանջում է այսօրուայ պահանջներից. երկատուած ապրում է՝ Հողին Արմանուկում, մարմինն՝ այստեղ: Սանթրոն միակն է վէպում, որ խօսում է բարբառով, աւելի շեշտուած բարբառ, քան անգամ պոստա Ջանանը. «Ենպէս է խօսում, կարծես Մշաչ Էդ անտէր գիւղից նոր պէտք է քնիւ, ... սրտնեղած տուում է Բաղրատը Սանթրոյի մասին: Սակայն Սանթրոն ուրիշ կերպ չի կարող խօսել, եւ մէջպէս նրանից բացի ուրիշ ոչ ոք չի կարող խօսել բարբառով (չնայած բաւական հաւաստի կը լինէր, եթէ վէպում մի քանի բարբառ լսուէր, չէ՞ որ ասանը ասեղծուել է Հայաստանի տարբեր վայրերից եկած բնակիչներից), քանի որ Դիկկենսի «Մեծ յոյսեր» մէջպէս հերոսուհւս պէս Սանթրոյի համար ժամանակը օրուայ եւ որոշակի ժամի վրայ կանգ առած ժամացոյցի սլաք է: Եւ ժամանակը կանգնեցնելով, անցեալի մէջ մոայնով մենակ, Սանթրոն իր համար ապրելու մեւ է յօրինել, «Ամէն մարդ իր մարմնն ինքն իր եղանակներով պէտք է մարել»: Բարբառի այս օգտագործումը լիտ-

վին արդարացուել է. ստեղծուած է ո՛չ թէ անգլային մի տիպ, այլ՝ ժողովրդի ճակատագիրն ընդհանրացնող բնաւորութիւն: Իսկ ապագան նրա համար իր Դաւիթ որդու յաղթանակն է երազի մէջ: Նա հոգեպէս ի վիճակի չէ աշտօրուայ աշխատանքի մէջ ապագայի իրագործում տեսնել, չնայած աշխատում է անձնուէր եւ մի քանի հոգու գործ է տնում, Բագրատին գրեթէ հասարար աշխատում. «ձիշդ է ասում, էլի, մարդը ճիշդ է... Բայց ինչու՞ է աւել-պակաս խօսում: Հայոց հարցը եւ ամապատում պէտք է քննենք, խօսանք մշակենք, թէ՛ հայոց հարցը քննենք, պլամ կատարենք, թէ՛...», — Սանթրոյից ներքուստ զգոհում է Կիրակոսեանը՝ ուղիղ գիրեկտորը, որի համար ժամանակը հենց այն պահն է, որ հոսում է, նա կատարելապէս գործի մարդ է: Կիրակոսեանի համար անցեալ եւ ապառնի կարծես գոյութիւն չունեն, չնայած որ գործի հիմնալի կազմակերպիչ է, մարդկանց հետ աշխատել պիտէ, մէկ-երկու տարում ոչնչից ստեղծում է մի ծաղկուն աւան: Եթէ Սանթրոն շարունակ փորձում է ներկան տանել անցեալ, ապա պատահաւ Ձանանը ձգտում է անցեալը բերել ներկայ: Սանթրոն աստուծոյ է, որ շուտ չի ծնունել եւ Գէորգ Ձաւուչի զինուորը չի եղել, նա հայրենիքին ծառայելու միայն այս ձեւը պիտէ: Իսկ Ձանանը աստուծոյ է, որ Մանասը եւ ոսկի ձեռքեր ունեցող բազմահմուտ իր նախնիները չեն կարող յարութիւն տանել, մասնակցել աշտօրուայ կեանքին:

Յաջորդ «բացականքներն» են Երոն եւ իր որդին՝ Վարսուր, ա՛յն Երոն, որին հիանալի բնորոշում է ապրիս Արման. «Օգուտ քաղը Երոն է յորինել»: Երոն ներկայ է այնքանով, որքանով օգուտ ունի ժամանակից, մարդկանցից: Սակայն ժամանակը դաժան խաղ է խաղում Երոյի գլխին՝ նրա ողջ երազանքը: Զուտ առողջ իր դէմ: Երազում է Երոն, որ զուր գար... Լաւ բերելն, ար ճախկն հարեւան Սարիբեկը: Բայց, ո՛չ, մահանում է Երոն եւ Սարիբեկն է նրա գերեզմանին դամբանական ասում: Բնաւ պատահական չէ, որ այս վէպում, որ մարդկանց միջեւ թշնամութիւն որպէս այդպիսին չկայ (միակ թշնամիները ջրի տակ անցած քարերն են), Երոն եւ Արման ամենաակնդրանքային «հակառակորդներն» են. «Էս օրը վկայ, էդ տղի խելքը անօգուտ խելք է. ո՛չ իրեն է պէտք գալու, ո՛չ անձամբին, ո՛չ ծանօթին», — բնութագրում է Երոն Արմային: Երոյին շափազանց անհրաժեշտ է իր ներկայութիւնը նիւթականացնել ժամանակի մէջ՝ արժէքաւոր, օգուտ բերող բանով: Երոն ժամանակին «վերածուել» է Նիկոլայի արծաթներէ, իսկ այժմ նրա երազն է «Վոլդա» «գառնայ»:

Արմայի հայրը իր հերթական «հեռակայ» երկխօսութիւններից մէկում որդուն համոզում է տեսականորէն, որ «քայլերը որպէս փիլիսոփայն քրեւոյթ-դիւտում է դէպի առաջ անկումների մի շղթայ»: Եւ Արման վէպում կարծես ապացոյցն է այն բանի, որ իւրաքանչիւր քայլի հետ մարդը պէտք է յաղթահարի անկումների վտանգը: Արման կեանքի իւրաքանչիւր պահը դիտում է որպէս մի հերթական փորձութիւն, մի անվերջ քննութիւն մարդ մնալու համար: Վէպում նա դառնում է իր չրջապատի գրեթէ բոլոր փորձութիւնների յաղթահարման օրինակը: Արման կարծես իւրաքանչիւր հերոսի հնարաւոր տարբերակն է, բայց ճշդուած կամ ուժեղացուած վիճակում: Նրա մէջ մի մասնիկ կայ Կարոյից՝ ժամանակի մէջ ճիշդ գրուած, նրա մէջ կայ Սանթրոն, բայց ներկայի մէջ բերուած, կայ Ձանանը՝ անցեալի նկատմամբ ունեցած խոր հաւատով եւ յարգանքով, կայ Բագրատի յամառութիւնը, եւ կայ անգամ Արատը: Ինչ-որ չափով, ինչ-որ մասնիկով, գրեթէ բոլորը տարբեր ձեւով կան Արմայի մէջ: Բոլորի կենսագրութիւնները գալիս միաւորում են

նրա մէջ՝ դրական եւ բացասական. Մ. Գալլոյեանը, մատնանշելով բացասականը, ուղղակիօրէն, միանգամից չի դատապարտում, այլ տեղ-տեղ խօսում է այդ մասին հումորով, տեղ-տեղ դառնութեամբ եւ բացասականի կողքին է դնում հեարաւոր ճիշդ տարբերակը՝ Արմային:

Միակ հերոսը, որ ի սպառ բացակայում է Արմայի մէջ, Երեմն է՝ եւրոն: Եւ անհնար է, որ Երեմը տեղ գտնի Արմայի մէջ, քանի որ Արման յայտարարում է, որ «օգուտը» դարձել է բոլոր բառերի առաջնորդը եւ սեփական օրինակով կուռում է այդպիսի առաջնորդի գէմ: Բոլորը դարդուած են իրենց տնամերձում խաղող եւ այլ մրգատու ծառեր տնկելով, իսկ Արման յամառօրէն գուռ է տաշում, ասելով, թէ «եիմ ու ցոր գնդեցկութիւն» չկայ: Հօր պատմութիւնը ալքիմիկոսի մասին գալիս է լրացնելու նրա հոգեկան նկարագրը. ալքիմիկոսը ոսկի փնտռելուց դատ ուրիշ ոչինչ չի անելու նոյն-իսկ այն դէպքում, երբ նրան մեն-մենակ, առանց ապրուստի եւ գործիքների թողնեն, եւ նա Հաստատ իմանայ, որ թայանուելու է: Ալքիմիկոսը, ի հակադրութեան իր հարեւանի, միայն ստեղծել, արարել գիտէ, իսկ օգուտի մասին մտածող հարեւանը՝ միայն թալանել: Երոյի օգտապաշտութեան մէջ Արման տեսնում է մարդու դեգրադացիան. «Եթէ գուռը կամ մնաց բաներ աւելորդ լինէին, մարդը քարանձաւից դուրս չէր գայ: Այն օրը, երբ մարդկանց բոլոր մկաններն ու բջիջները կ'աշխատեն միայն հացի պահանջով, այդ օրից մարդիկ կը դառնան քարանձաւարնակներ, քէկուզ եւ երկմաքերների ղնակիներ, միեւնոյն է՝ նրանք արդէն քարանձաւարնակներ են» — դիմում է հայրը Արմային: Այս ճշմարտութիւնը հասկանում է անգամ անցեալի մէջ ապրող Սանթրոն. «Որտեղ հաց, էմտեղ կաց»։ Էդ խօսքը ժողովուրդը չի տեսէ: Բայց քէ ժողովուրդը տէր է կանգներ Էդ խօսքին, ուրեմն Էդ ժողովուրդը կ'օրած է»:

Արման եւ Սանթրոն այս խոհերով պատասխան են տալիս Հեղինակի երեք զբօսըրում արուող որոնումներին: Հայրենիք եւ Մարդ իմաստները ամբողջապէս են ժամանակի թելադրած Աշխատանքով: Դա է մարդու ներկայութեան հիմնական չափանիշը, ըստ օրում, դա ո'չ միայն ֆիզիկական ներկայութիւն, այլնու գուցէ աւելի շատ՝ հոգեկան եւ բարոյական ուժերի ճշգրտորէն ներգրում է, Մարդու ամէնօրեայ ծնունդ, այլապէս մարդն ապրելով ամենաարդիական նպատաններում, կարող է անկատարիօրէն քարանձաւ վերադառնալ:

Մուշեղ Գալլոյեանի «Բովտուն»ը գալիս է մէկ անգամ եւս սպաշուցելու, որ Հայրենիքն ամէնից առաջ բարոյական ու հոգեկան բարձր յատկանիշներով օժտուած մարդու անձնուէր աշխատանքն է, որ հայրենիքը եւ ճշմարիտ հայրենասիրութիւնն այն է, ինչ մեզանից պահանջում է անել ժամանակը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՁԵԱՆ

ԶԱՐԹԻՐ, ԼԱՍ...

...Առաջին անգամ այս երգը լսեցի՜ք Մուշեղ Գալաշյանից: «Առանցարդ» խմբագրությունում էինք աշխատում, նայն անհեկում: Երգում էր մեզմ, յուզում էր քառ ձայնով: Երգում էր եւ տվորեցնում բոլորիս: Եւտեղ այդ եին երգը զորքենց էւ տարածուեց ամէնուր: Յետոյ միտսին (էլի մի անհեկում) աշխատեցինք «Գարու»-ն խմբագրությունում: Միտեղմ գործուղումներ գնացինք, միտեղմ գրեցինք յօդուած: Իսկ ընդամենը մի քանի օր անայ Կոմիտասի փառքում գրուղում էինք: Խօսեց զժողով Միտեղմ նկարա-նանում մտեղմ, ողբունց մեր կողմով անցնող շեղեղոր Խուրէն Հալիկեղեղանի՜ ազգային եին երգերը նորովի մեկնարաններս փորձերի համար, այնուհետեւ անորադարձու փառքին, յետոյ էլ ցումով յիշեց Կարենի մանր...:

Իսկ ընդամենը մի քանի օր յետոյ... Անդա-պատեղի, ամիտումսայի երեւոյք: Պաշր պատա-հանանուրին:

Մուշեղն աղբում էր կեանքի ամէն քաղէն, հետաքրքում էր ամէն ինչով, ուներ զգայուն հագի: Գնացել էինք Արագածի շրջան: Ստիպեց, որ մտնենք Իրազկան գիւղ: Ուժայել Արամեանն էլ մեզ հետ էր: Մուշեղը մտնում էր ծերունի-ներին եւ հարցնում նրանց կեանքի մասին: «Հայ-րիկ զան, թիկ արտեղացի՜ եւ, քանի՜ երեխայ ունես, քանի՜ հարս, քանի՜ բռն...»: Ներումի-ներին մէկն ասաց. «Տղայ զան, ազատ չտեղի-ջանել մտեղսու, էլ ես էտեղացի չեմ, էմտե-ղին եմ, արտեղ եմսա սղատ է...»:

Մուշեղը, այդ զուղ մտղը, երեխայի պէտ լաց եղու ու համբուրեց քուրջ ծերունուն: Յե-տոյ, ուր էլ ծղանք, չմոռացու այդ ծերունուն: Միշտ յիշում էր: Ասաց՝ պատմումէք եմ գրե-լու: Իսկ երբ Արագածին վերադառնայուց արջ ժամանակ յետոյ Ռաֆայել Արամեանը վախճան-ւեց, հանդիպեց ինձ եւ ասաց. «Ինչո՞ւ եմ լու մարդիկ մանանում...»:

Սիրելի, անկրկնելի Մուշեղ, իսկապէս՝ իմ-չո՞ւ եմ լու մարդիկ մանանում: Ինչո՞ւ դու էլ կրկնեցիր այդ սխալը: Այս տօղերը գրելուց ա-

ռաջ տխուր գրուցում էինք ընկերներով: Խօսում էինք միտյն Մուշեղի մասին: Մէկն ասաց. «Զայ-րանում էր, երբ հին երգերը վատ էին երգումս: Միտն ասաց. «Մի անգամ ինձ ասաց՝ եւ անա-ցած չե՞ս ինձինք, ինչուում եմ չանդամես, սիրտս մտեղուր է...»: Երբորդն ասաց. «Յետոյ՜ կ'իմա-նանք, թէ ինչ գրող էր եւ ինչ մարդ...»: Եւ այս օրերին, ում էլ հանդիպում եմ, Կոնորդներս օնգմում է. «Գնաց մեր լու ընկերը: Մուշեղ Գալաշյանը էի՜ գրեց, բայց գրեց մեղում զըր-գեր: Պիչ, բայց՝ լու»:

Մուշեղ Գալաշյանը իսկապէս գրող էր: Գը-տան տարի ասաց Թալինից հետաքրքիր եւ ինձ-նատիպ ակնարկներ էր ուղարկում «Առանցարդ»: Յետոյ սիրով հրաւիրուեց խմբագրութիւն: Վա-րում էր ցիւղամտնութեան բաժինը: Գիւղը գիտեր անքերի: Սիրտեղումս էր Ստեփանն, երաշալի գիտեր պատմութիւնը, կնեղաղը, սո-վորոյթները: Եւ գրում էր յուզիչ պատմութե-ններ, այնուհետեւ զժողով Միտեղմ, «Բոմոտեղը, «Մաղկած քարեր»ը, «Գնունկը»... Լինելով աս-ղանդաւոր արձակագիր, բարեխղճօրէն մշակում էր խմբագրում էր ցիւղից ստացուած քղբակ-ցութիւնները, անդապաղ պատասխանում բոլոր մամակներին: Մասնագիտութեամբ, աշխատան-քով, գրողական եւ մարդկային շնուկ յիշեցնում էր Ակսել Քակունցին: Միշտ ծանրախոն, գուպ, ինքնամիտք, լուրջ եւ քարի Մուշեղը (այդ նշել եմ եւ իմ վերջին գրեղում) գաղթմտելի տա՛հ հօգի ունէր եւ կարող էր բանկուել, երբ ծարցը վե-րաբերում էր գրական, հասարակական, ազգային մեծ խնդիրներին: Իսկական հայրենասեր: Դա մի մարդ էր, որի իօսքը միշտ անէր արժէք: Կապոյտ աչերը լին էին կապոյտ երազներով: Վերջերս տեսայ զժողով Միտեղմ խեղճորին. «Ո՛ր հայկապ սցենար: Գրողն այդպէս տխուր իմանայ կեանք...»: Այո, մտ շատ լու գիտեր կեանքը, բայց շատ կարճ վայելեց այն: Ուրեմն՝ էլ ինչպէ՞ս շանեմք. «Զարթի՛ր, լու», մըմիմ ինչի...»:

ԱՐԱՄԵԱՆԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

Գ. Ա Ճ Ե Մ Ե Ա Ն

ԻՐԱՒՈՒՆՔ ՉՈՒՆԻՍ, ՄՈՒՇԵՂ



ՄՈՒՇԵՂ ԳԱՆՇԱՅԵԱՆ

Լուսնի ազնիւ եւ ազնուական այս տղան:

Այս՝ պարզօրէն ազայ՝ քառասուն տարիքը քեռականիւն հոգի իսկ:

Հիմա քանի՞ տարեկան է առկայն: Քառասունեօրը տարեկանին, երբ կեանքը անակնկալօրէն կանգ առաւ իրեն համար, տարիք չունի այլեւս Մուշեղ Գալշտանը: Պիտի չմեծնայ, չծերանայ ան, ու պիտի մնայ նոյն տղան:

Բարեբախտաբար:

Կարելի՞ է:

Բայց քացատրեմ: Սիրելի, անփութարինելի հարագատ մը կորսնցուցած եմ՝ յանձին երիտասարդ եւ տաղանդաւոր արձակագիր Մուշեղ Գալշտանին, որ մահացաւ Երեւանի մէջ ասկէ քանի մը ամիս առաջ: Մահուան լուրը այնպէս զնցեց զիս, որ շրջան մը իսկապէս չկրցայ հաւատալ, եւ իրականութեան, իրական կեանքին հետ կապս խզուեցաւ: Շշմած էի: Կամ քթացած էր ուղեղս, որովհետեւ չէր կրնար ընդունիլ իրականութիւնը. եւ կը մեռնի տեսակ մը անփական դրութեան մէջ: Բացակայ, անգոյ գոյութիւն մը: Տխուր էի: Ձեմ գիտեր: Կը յիշեմ հիւս, քէ անհետօրէն դառնացած էի եւ չէի կրնար ներել իրեն՝ մահաւանդ իրեն: Անհատաւոր էր, անկարելի: Եւ ուղեղս կամ գիտակցութիւնը

նրա նոյն նախադասութիւնը կը կրկնէր անընդհատ:

— Իրաւունք չունիս, Մուշեղ:

Սուգ չէր: Այսօր ալ սգալու հարց չկայ ինծի համար, որովհետեւ իմ գիտակցութեան մէջ մեռած չէ ան, չի՛ կրնար մեռնիլ մահաւանդ: Կենդանի է ու կենդանի պիտի մնայ միշտ: Ատոր համար է, որ պիտի չծերանայ երբեք, ու պիտի մնայ նոյն տղան:

Տղայ, որ քարի էր այնքան, միամիտ, ազնիւ եւ ազնուական:

Այս քառերը գիրար կ'ամբողջացնեն Մուշեղ Գալշտանի պարագային, եւ այդ կերպով միայն ըմբռնելի կ'ըլլան: Այլապէս՝ անբաւարար խմտաւ չունին երբեք: Մուշեղի պարագային: Ինծի ծանօթ ոչ մէկ անձի մասին կրնամ նոյն ստորագրելները միածամանակ գործածել: Մարդ արարածը կրնայ քարի եւ ազնիւ ըլլալ, բայց ոչ անպայմանօրէն միամիտ: Բաւին դրական խմտումը: Մուշեղի միամտութիւնը պարզամտութիւն չէր, եւ ոչ ալ բթամտութիւն, այլ՝ հաւատքի գորութիւն, որ կը բնորոշէր անոր նկարագիրը, խառնուածքն ու վարակաւ հասունութիւնը: Եւ միայն այս

միամտութեան կամ հաւատքի յաւար-
ձակին մէջ կարելի է ըմբռնել եւ մեկնել
իր գրականութիւնը: Այլապէս տարօրի-
նակ երեւոյթ է գրող Գալշոյեանը — ա-
նըմբռնելի, անմատչելի, անհաղորդ,
դժուար: Եւ դէժ՝ ինչպէս ինք էր:

Լուս՝ ըսի սկիզբը: Նաեւ լուս էր՝
իր լեռներուն կամ *«Մաղկած քարեր»* յան-
պէս: Բայց իր լուսիւնը օտարական,
պատահական լուսիւն չէր: Լուս էր,
որովհետեւ բարկացած էր: Բառը իրեն
չի պատշաճիր անշուշտ, եւ վստահ եմ,
թէ ոչ ոք տեսած կամ լսած է իր բար-
կանայր: Իր ազնուութեամբ մարդ մը
չի կրնար սպառել համբերութիւնը եւ
սրտքիւս անտեղի կերպով: Բայց եւ
այնպէս՝ անհաստատի, անբուժելի կեր-
պով բարկացած մարդ մըն էր Մաղեղ
Գալշոյեան հայրը:

Որ մնաց փակուած ինքն իր մէջ, ու
չկրցաւ ներել մարդկութեան: Աշխար-
հին: Պատմութեան: Ոչ ոքի խօսեցաւ այս
մասին, չուզեց արտայայտուիլ եւ ու-
րիշներու կեանքը եւս թունաւորել: Ու
լոնց: Լոնց: Եւ այդ իսկ պատճառով՝ իր
գրականութիւնը եղաւ ու մնաց խրթին
ու հայտարար արձանագրութիւն: Մասնաւ:
Ոչ թէ գրականութիւն կամ արուեստ:
Այլ՝ այդ լուսեան նոյնքան մը լուս,
այսինքն՝ անգիր արձանագրութիւնը:
Հայտնութեան ամբողջ վիշտը ինք շաղկա-
ծ էր կարծէ՛ք եւ, բնականաբար, ո՛չ միայն
լուս էր, այլեւ չէր կրնար ժպտիլ նոյն-
իսկ: Համակ քաղցրութիւն էր, հանգա-
րաբարայ, բարեացական ու համբերող
քաղաքացի- բայց ժպտիլ չէր սորված իր
ճառասունէն աւելի տարած տարիներուն
ընթացքին: Գէթ մինչեւ 1974 թուակա-
նը, երբ վերջին տեղամ տնտայ զինք:
Հայաստանի բոլոր գրողներն ու ար-
ւեստագէտները, ինչպէս նաեւ արուես-
տի եւ մշակութի ծառայողները, գրեթէ
անխտիր, ժառանգորդներն են նոյն վիշ-
տին, ու կը բռնենք զայն իրարու մի-
ջեւ: Եւ իրարմով զօրացած՝ անհաւա-
սար, անհաւատալի պայքար կը մղեն
փրկելու եւ վերականգնելու կարելիւն:
Նուագագոյնը մայրիս: Անոնց, հայրենի՛

հողին վրայ ապրող մեր մտաւորականնե-
րուն համար, շատ աւելի շօշափելի, ան-
միջական, իմանալի իրականութիւն է
հողին կորուստը: Հայուն վիշտը: Հաս-
կընալի է: Բայց ասոնք բոլոր, գրեթէ
առանց բացառութեան, կը ժպտին նաեւ
նրբեմն ու կ'ապրին վերջապէս: Մինչ-
դեռ Մաղեղ յաւիտենական գեղեցիկ վե-
րածած էր իր կեանքը ու կը տառապէր
առանձնութեան մէջ:

Այլապէս պարզ ու խոնարհ, աշխա-
տասէր երիտասարդ մըն էր: Յաջա-
նալ ու բարձրահասակ — հսկայ կոչ-
ւելու չափ — շէկ եւ կապուտաչեւայ, գե-
ղադէմ հանելուկ մը, որ կը ճզմէր քեզ
բազակներուն մէջ, երբ ազդագուրուէր:
Լուս ու դառնացած, բայց տխուր չէր
երբեք, հակառակ ամոր, որ ժպտի կա-
րելի չէր տեսնել դէմքին վրայ: Իսկա-
կան հանելուկ մը, որ իր առանձնութեան
մէջ ինքնավստահ կերպով կը տփէր,
բայց հաշիւ կամ հատուցում չէր պա-
հանքեր: Զարմանալի չէ հետեւեալը, որ
ստանդարտից տարածակ կարճ ժամանակա-
միջոցի մը բնութեան կրցաւ դառնալ
Հայաստանի իրեն սերնդակիցներուն մէջ
ամենէն վաւերական եւ տիրական ար-
ձակագիրներէն մէկը՝ իր սեփական դրոշ-
մով եւ պատկառելի վաստակով: Տաս-
նընից տարի միայն: Ասկէ առաջ հա-
մարեա՛ն անծանօթ, իր գրական առաջին
փորձերը կատարող — թէեւ երեսունին
հասած արդէն — Հայաստանի քաղա-
նագար երիտասարդներէն մէկն էր:

Ասոր գիտակցութիւնն է, որ կրկնել
կու տայ ինծի, թէ իրաւունք չունէր այս-
քան կանուխ եւ մէկ աչքը քաց մեկնե-
լու այս աշխարհէն, որ ժպտող նոյնիսկ
զիցաւ իրեն: Կատարելիք ունէր եւ ինքն
իրեն նշանակած առաջնութիւն: Գրա-
կան ստեղծագործութեան լիութեան հա-
տած, ասկէ հտէ էր, որ իր իսկական
գործը պիտի տար եւ հարստացնէր մեր
գրականութիւնը մօր եւ եղանի երկե-
րով: Խորհրդահայ գրականութեան անդ-
րանիկ սերունդի ճակատագրիցէն բնա-
շիջեցան բոլոր, եւ ամենց յայտնիցին
նոյնիսկ աւելի կրտսերները, բայց մինչ

այդ հառած էր, բարեբախտաբար, երբե-
տաւարդ սերունդ մը, որ իր վրայ կը
կեդրոնացնէր մեր յոյսը: Եւ այս սե-
րունդի գլխաւոր գէտերէն մէկը, իր
գրականութեամբ որակաւոր եւ եզակի
արժէքով, նշանակեց Մուշեղ Գալշտեանը
էր:

Արդ, քաւք քաւք, խնդրե՛մ, ինչպէ՞ս
կարելի է հաշտուիլ իր անակնկալ մահ-
ւան գաղափարին հետ: Ինչպէ՞ս ընդու-
նիլ, եւ ներել աշխարհին, եւ նշանակ-
իլ իրեն: Իրաւունք ունէ՞ր: Եւ կրնամ կրքե-
նել միայն:

— Իրաւունք չունիս, Մուշե՛ղ:

Առ՜ւգ: Երբեք: Ինք համաճայն պի-
տի չըլլար, պիտի չարտօնէր: Արդարեւ,
իրապաշտ իր խառնուածքով, զգացական
զեղումներու չէր կրնար հանդուրժել եւ
կ'անհանգստանար, երբ ամենազայգի տը-
կարութիւնն իսկ մատնէիր: Թէեւ իրեն
յատուկ կերպով գայուն էր ի՛նք, բայց
սովորաբար կը գտնէր ինքզինքն ու կը
քաղէր յուզումը լուսութեան մէջ: Մէկ
անգամ միայն, մտերմութեան մէջ, ու
երբ հարբած էր արդէն, ակամատես ե-

զայ իր յուզումին դաժանութեան, որ կը
պատժէր զինք, շնչահեղձ կ'ընէր գրեթէ:
Բայց չլացաւ ան, չխօսեցաւ, այլ միայն
երգեց: Ժամեր անընդհատ: Եւ նոյն եր-
գը միայն: Առանց անհանգիստ գգայու,
առանց անհանգստացնելու զիս նաեւ:

Այդ երգին տղերսը, վիշտն ու ցա-
տումը կ'արձագանգեն ականջներուս եւ
գիտակցութեանս մէջ մինչեւ այսօր, ու
չեմ կրնար ձերբագատուիլ անոնց պատ-
ճառած յանախաճէն: Բայց չեմ կրնար
խօսիլ կամ գրել այդ մասին, որովհե-
տեւ համոզուած եմ, թէ պիտի չկարե-
նամ վերստեղծել այդ պահը, յուզումը,
ու մեկնել երգին ազերտը: Պիտի չկարե-
նամ քարգմանել գայն, այսինքն՝ կեն-
դանի գիրի վերածել, որովհետեւ վիշտը
չի քարգմանուիր, չի քացատրուիր: Այլ
միայն կ'ապրուի:

Այդ վիշտով ապրեցաւ Մուշեղ Գալ-
շտեան:

Եւ այդ վիշտով ալ՝ կ'ապրի տակա-
ւին, որովհետեւ չէ մեռած ան:

Ինչպէս չէ մեռած իր վիշտը:

ԳԵՌԳ ԱՃԵՄԵԱՆ

Ե Ղ Ե Ր Ե Ր Գ

Մուշեղ Գալստյանի յիշատակին

Ուրուստեսիլ պիտի ըլլաւ անտառներում մթնակոխ
պարանոցէն վեր՝ մինչեւ ծառերը ծեր գարթնէին
Մարմանդ կրակը արդէն, խօլ ցնծուի, ցայտկաւոր
Գամերուն մէջ Սասունի մատակները անհամար
պիտի երկունք հերտին: Լուաշը տաք սրտի պէս
պիտի հանգչէր ակնում շինականին, որ այդտեղ
թաւ պէտքերը շարած, երացանին հնամաշ
եղնիկի եւ երինջի պատմութիւնը կը պատմէր
ասկի գլուխը դրած ցրտամրմուռ դարպասին

Պիտի Սասունը ծնգար, պիտի ծափ տար ծիրանին
ու գիշեր մը վերջապէս, գաղտագողի, շնչահատ
պիտի Սասունած ծանկի գար:
Ի՞նչ պատմութիւն, հայեցի, մեր սանջամբները երկար
ակնբարբի քննարկով իրենց հոգին աւանդին, կրկին կրկին ծնելու
քառապատիկ գորաւոր, որ անգամ մը եւս մեծ
նահատակի արեան պէս շնչեմէ, խեղդուիլ մերժելով
եւ քռակնով որ վայրը իր նորեկ սուգը վառէ

Եւ ճայնազն այս ապստամ ռ՞ր արահետը կ'օծէ
որ շշուկիս շոյանքով տատակները ծռէին
Ես համբայ չեմ որոներ Նիւ Շորֆէն մինչեւ Երեւան
նրբակետիւ արդէն չկայ տարածութիւն կոշտած փռչին
Ձկար, չկայ աւ չի մնար
Երբ բառերը արեւմտեան, արեւելեան
կը վերածուին անցնողական մարմիններու
իրենց ձեռքին՝ տարափելի սաղմնահանը հայ հոգիի

Ուղեմուտիդ գուգեբգեցին Հռոմիւն ու Ամստերդամ
Ի՞նչ կեանքերէ վաղցրակտն մերթ մոլեցին
մերթ ծփաթել՝ յաւերժացան:
Թաղ քեզ գրկէ ծիսարանը Սուրբ Մաշտոցի
որ երկինքէ լուաշի պէս բարեկէ վրայ
Ու ռսկեհար գլուխդ թաղ դիգեդերգներ հով երերեմ
Անկարութիւն, լուկ նկատն այս պահպանիչի

Գիրիդ նշխար

Այ չեմ հարցներ
գարնամ դարձեալ պիտի ծաղկի՞ ծիրանին
Սասնայ լանջին ձիւնը նիրհեց քեւատարած

Վ.Ե.Ա.ՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ-ՓԱՆՈՍԵԱՆ

1981, Նիւ Եորք

8. Պ Է Ր Պ Ե Ր Ե Ա Ն

Մ Ի Ա Յ Ն Ա Կ Ծ Ա Ռ Ը

Մուշեղ Գալլոյանի հրատարակած *Վերջին պատմաժողովներն* մէջ կ'իյնայ «Միայնակ ծառը» («Մովսիսական գրականութիւն», թիւ 7, 1980)։

Հետաքրքրականորէն, պատմաժողով լոյս կը տեսնէ չարքի մը մէջ, որուն ընկերացող կտորներն են «Դաշտապանը» եւ «Մամբրէ արքան»։ Այսօրինքն՝ պատմաժողովներ, որոնք կ'արծարծեն տարիքոտ տիպարներու տաղանակները...։ Գլխաւորաբար մարդոց, որոնք Արեւմտահայաստանէն եկած են, կորսուած երկրի մը ու կորսուած անցեալի մը տաղնապը կ'ապրին, կամ՝ ժամանակի փոփոխութիւնը տարրեր կացութիւն մը ստեղծած է իրենց համար, ձգելով զիրենք առանձին եւ նոր ժամանակներու հետ անհաշտ («Դաշտապանը»)։

Արեւմտահայաստանէն դաղթած, հող կորսնցուցած եւ այդ անցեալով ճենճերոց հերոսին հարցը անշուշտ նոր չէ Գալլոյանի դրականութեան մէջ։ «Ձորի Միքէլ» անուն վիպակէն սկսեալ այս երակը աւելի եւս շեշտուեցաւ եւ առանձին դիտարկուեց իրեն համար։ Գալլոյան կենդանացուց իրեն այդքան ծանօթ ստանդիներուն եւ կորսուած Երկրի միւս քաղաքացիներուն աշխարհը, այսինքն՝ իր ժառանգած արեւմտ աշխարհը, որուն տիպարներուն, բարքերուն, բարբառին եւ առասպելներուն ո'չ միայն ծանօթ էր, այլեւ անոնց մէջ մեծցած էր եւ անոնցմէ սնունդ։ Սակայն հիմնական յատկանիշ մը կայ այստեղ։ Գալլոյան այդ մարդոց պարագայական կամ գէպեքոս պարտադրանքով ստեղծուած կացութիւնը ո'չ միայն կրցաւ տեսնել, այլեւ տակէ անդին, հոն պահուած մարդկային կացութիւնը՝ ողբերգութիւնը կըրցաւ առանձնացնել։

Քանի այս տիպարները Երկրէն կու գան եւ Գալլոյանը կանխող տիրուղներու կը պատկանին, այդ բոլոր ենթասերը յառաջացած տարիք ունին։ Շատ հաւանաբար, հոսկէ կը բխին նաեւ իրենց ժամանաւոր հորցերն ու առանձնութիւնը, որ թէ՛ իրենց տարիքին հետ կապուած է եւ թէ իրենց դաղթական ըլլալու իրականութեան ու հազմիմահին։ Առաւելութիւն մը նաեւ. այս մարդոց կենցաղին աւարտած կամ սմբողջացած ըլլալու թրոգութիւնը կարծէք յատակատեսութիւն մը կամ պայծառ լոյս մը սփռած է անոնց կենցաղին վրայ։ Այլեւ անոնք այլաբանական ու խորհրդանշական եղբեր կը ստանան։

✱

Վերոյիշեալ աշխարհին բոլոր տարրերը կը բերէ «Միայնակ ծառը»։ Հոն կայ եւ առանձնութիւնը, եւ կորսուած աշխարհին տաղնապը, որոնք

Հազարոյի հոգեբանութեան հոլովոյթին եւ բնութեան հետ ժառանգոր կապին ընդմէջէն կը զարգանան:

Հազարոն առանձին ապրող ծերունի մըն է, որուն հացատան տանցքային դերանը անձրեւներէն կ՝սած է: Քաղաքաբնակ որդին իրօտացած է ամբողջ ու իրեն օգնել, սակայն, հաւանաբար իր կենցաղին կամ բողբոջադուրեան պատճառաւ չէ կրցած: Արդ, երգիքի փութման վտանգին դիմաց, աշնանային օր մը, Հազարոն կ'երթայ գիւղի ճամբուն վրայ ինկած առանձին բարտին կտրելով տուն բերելու:

Անշուշտ ինչի հարց է Հազարոյի համար կենդանի ծառ կտրելը: Սկիզբը ան ինքզինք պիտի միտքարէ ծառը համոզելով, որ երկուքն ալ առանձին են (ու ծեր), միասին կ'ապրին, սակայն մինչեւ ծառին տապալումը, մարդուն եւ ծառին միջեւ յարաբերութիւն մը կը զազարնայ, ուր Հազարոյի բոլոր հարցերն ու տաղանքները դրսևորուելու ելք կը փնտռեն, եւ ծառին ողբերգութիւնը առանձնաբար կը նոյնանայ մարդուն ողբերգութեան հետ: Ինչ որ կը պատահի, ներքին մենախօսութեան մը, երկար մենախօսութեան մը արդիւնքն է: Սակայն Գալլոյի հերոսները վարժ են այդ ներքին ճամբորդութիւններուն, թոյլէքներուն ու մենախօսութեան...: Իրենց ներքին աշխարհը յաճախ լատ աւելի կենսական նշանակութիւն ունի, քան արտաքին աշխարհը: Ինչո՞ւ այս կայսութիւնը, ինչո՞ւ իրերու աշխարհին հետ այս կոպտութիւնը — պիտի հարցնէ ընթերցողը:

Ձորին մէջ տարածուող մշուշը տեսնելով՝ Հազարոյի մէջ կ'արթննայ Սերբի Աղբիւրի երգն ու մահը («Գրեյնգուգամ դու մամ էս»), որ հայ մարդու ճակատագրին ու կացութեան առնչութեամբ թելադրական է.

«... Որքան խորիւղաւոր է աշխարհի քնոյթը՝ մալք, խորիւղաւոր, եւ որքան անստոյգ է մարդու մակատագիրը...» (էջ 50):

Հայուն անորոշ ճակատագիրը, յանկարծական վտանգներն ու տեղափոխութիւնը, մահուան բերտ ու անհեթեթ ներկայութիւնը, որոնք իբրեւ մշտական վտանգ կ'ախուսած են Հազարոնեւոր զինուն, մասնաւոր հոգեմիճակ մը կազմաւորած են, ուր այդեւ արտաքին իրականութիւնը, երեւութական ապահովութիւնն ու լաւ ազգային մը կապուած ուսանողական լաւատեսութիւնը շատ ալ խմտաւ լուսին...: Անոնց դիմաց կայ մարդուն մենութիւնը (իրեւել գոյութենական վիճակ), իր ներքին կամ անցեալին կապուած ճշմարտութիւնը եւ հոգին ու անոր տարրերուն հետ կապը: Հոս կը գտնուի Հազարոյի հոգեբանութեան եւ շարժառիթներուն բանալին, անկախ այն իրողութենէն, որ վերի օրինակը մէկն է այն յղումներէն, որ կ'երթայ կորսութեան աշխարհին, Սերբիներու ու այլ ֆետայիներու կենդանի առասպելին, որմէ ան կը ստանայ իր հոգեկան քնննչը:

Հոսկէ կու գայ նաեւ ինքզինք ճամբորդ զգալու, տեղ մը վերջնական կայք չկարենալ հոստատակելու կացութիւնը («Հազարոն կարծում է, քէ իմք մամրոյք է...» (էջ 49): Հազարոն ինքզինք ճամբորդ կը զգայ, որովհետեւ չին տունն ու աշխարհը տակաւին կենդանի կը մնան իր մէջ. առաւել՝ որովհետեւ ներքին իրականութիւնը չի ձգեր, որ գտնուած տեղը հաստատուի եւ ինքն իրմէ դուրս գայ: Առկախ ըլլալու հոգեմիճակ մը...

Մարդ կացինահարելու տունն կը զգայ, որ միայնակ ծառը միայնակ մարդուն նման դորաւոր է, ծառը եւս ապրած է կացինին աշխով եւ, Հազարոյի

գիտակցութեան մէջ այն դադարաւոր կ'արթննայ, որ ան ծառն ու ինքզինք կը խորէ՛լ յայտնենով, որ միասին կ'ապրին:

Աւելի՛ն. իրենց կացութիւնը յաճախ նոյնանման է: Ծածրայէն սուրացող, Հազրոն բարեւոյց եւ պատասխանին իսկ շապառող անցորդները, Հակառակ անոր, որ կը ճանչնան, երբեք չեն նշմարեք զինք, ճիշդ ծառին պէս, որ ճամբէն քիչ մը վար եւ ձորին վրայ ինկած է, իր ճակատագրին ձգուած ու աննշմար: Հազրոն եւս մինակ կ'ապրէ եւ գիւղէն քուրս. տեղ մը, որ հոն է եւ հոն չէ: Նոր սերունդը, իր կենցաղով տարուած, զովէն կ'անցնէ եւ ո՛չ միայն իր տապալակով կամ դոյութեամբ չի կրնար զբաղիլ, այլեւ իր պատասխանը չի կրնար լսել... Անցեող ինքնաշարժներու պատմութիւնը, որոնցմէ ո՛չ մէկ զէժք պիտի տեսնէ, ո՛չ մէկ ձայն պիտի ճանչնայ, ամբողջ պատմութեան վրայ պիտի երկարէ, շարունակ շփոթելով մարդուն կացութիւնը եւ, անողորմելիօրէն՝ մարդուն եւ ծառին նմանութիւնը:

Արեւածագէն հոգ լոյսի խաղ մը տեղի կ'ունենայ — լոյսի կտոր մը, որ կրնայն ու ձորէն կ'անցնէ եւ կարծէք երկինք կը բարձրանայ... Բնութիւնը իր այս խաղերէն, Հազրոյի բերնով՝ հրաշքներէն ո՛չ մէկը կը կրկնէ. Երբեք չեն համար համար ծառը ապրած է՝ երկրի ու երկինքի հարազատութիւնը տեսնելու համար:

Քիվիֆե՞ր եմ այս ցամաքով անցաւ արձագանքը, որ չեմ նկատում ծառը, սատանի ձի հեծածները, — եւ քոյ չնկատեմ միայնակ ծառը, — երկինքն ու գետինը ծառի համար հրաշքներ ունի պահած՝ արեւածագից տրեւումն ու գիշերաւայ մութ ծաղիկի մէջ: Եւ միշտ՝ գեղեցիկ եւ միշտ՝ անկրկնելի եւ միշտ՝ զարմանալի... Ահա լոյս ու տոռիւրի հետաքրքիր խաղը, երկնքում ծաղկած կտաւատի կապոյտ արտը, երկնքում անած ընկուզենին, անա ընկուզենաւ սաղարթում խնկած մտախնդի քղիկը, գեղին տերեւների թռչում՝ մի կաթ քրի մէջ ծաղկած մեծ Արեգակը, քարաքարտ լանջում՝ այս մեղմամտութիւն ցորենի քարկ արտը, լեռներում լեռնաւանդ ամպերի երգիչը... Եւ այս ամենը, եւ այս ամենը՝ մի պատու օրուայ մէջ: Եւ օրուայ հրաշքների հրաշքը՝ լոյսը-լոյսի սուփրէն, որ վազում էր կիրճով...» (էջ 55):

Հազրոյին համար հասկնալի է այլեւս ծառին ներկայութիւնը այնտեղ, եւ ինք, անգիտակցաբար, մահուան դատապարտած է զայն: Այս գիտակցութեան օւրելիք՝ այլ իրականութիւն մը կը սկսի հասկնալի դառնալ իրեն, այս անգամ լոյս սփռելով իր ներքին աշխարհին վրայ: Հազրոյի երիտասարդութեան հետ կապուած իրենց բակի ընկուզենիին պատմութիւնը կայ, որուն մէկ արժանաւոր համար՝ ամերիկացի մը, Օսմանի ընկերակցութեամբ, եկած ու դրամ առաջարկած է...: Բնականաբար Հազրոն մերժած է, որովհետեւ ընկուզենին իր հայրերէն մնացած ժառանգութիւն է, որ ո՛չ իրեն կը պատկանէ, ո՛չ հօրը. անյիշելի ժամանակներէն կու պայ եւ ապագային կ'երթայ: Հազրոյի յիշողութեան մէջ՝ իրենց տան ընկուզենին եւ գիւղի ընկուզենիները մնացած են ինչպէս որ կան, մինչ Օսմանը շատոնց կրնայ կտրած ըլլալ դանոնք...: Այսինքն՝ միայնակ ծառին մահուան հետ, Հազրոյի ներքին աշխարհին մէջ եւս բան մը կը մեռնի, իր ներքին իրականութեան համարբերէն մէկը:

«Բնի կանգուն շերտն ի վեր կտրուածքի սարսուռն է հասում ու ճիւղաւորում, իսկ վերքում հաւաքում-գալիս եւ քնի հատածքից պարպում էր կացինի սարսուռը: — Այս ի՞նչ արեց Հազրոն. դժուար ապրած այս ծառը ի՞նչ համբոյս կտրեց Հազրոն: Սա, այս յամառ ու միայնակ ծառը ամուսնի ծառերից մէկը չէր, սա քրքրի հետ խաղացող գետնի ծառերից մէկը չէր քաջ գիւնդում գութագրաւոր ծառերից մէկը չէր...: Ի՞նչ արեց Հազրոն: —

Միայն այսօր, հենց այսօր, հենց Հաղութից ստացած կացնի գողը չէր, որ բռնել էր ծառից. մոր չէր կացնի տեղ՝ ծնունդ օրից էր բռն գրել՝ մանկութեան հետ, ի ծնել եւ մանկութեան հետ ու անի հետ սնել էր։ — Սա գուրգուրանքը անցուղաբանների ամտաբերի հայեացքներում որոնող հաւատարմոր ծառ էր, գետը քարէ ընդերքում որոնող յամառ ծառ էր, ամտաբից վերաբերում-վերադարձում ծառ էր, սա հրաշքներով ապրող երազկոտ ծառ էր... այս ի՞նչ արեց Հաղութն» (էջ 56)։

Հոս է Հաղութի ողբերգությունը, իրեն այդքան նմանող ծառի մը իրականությունը, ուղիղ և ուղիղ անդադարաւոր և ի՞նչ կ'ըլլայ այդպիսի ծառ մը կտրուկը։ Ծառի վերջին տատանումներուն դիմաց՝ ծերունին կը փորձէ, որ ծառը ի՛ր վրայ իյնայ, դինք գրկէ ու ինք մնայ տեղը տակ. ստեղծած ծառը կը խուսափի և կը ծռի դէպի ձորը...

Հողերանական նուրբ զարգացում մը կայ այս բոլորին մէջ, որ տարն-չուրիներով, ներքին զրոյցով և թելադրականութեամբ կը զարգանայ։ Մուշեղ Գալլոյի արեւին, ստուերին, անձրեւին, մշուշին և միւս բոլոր մանրամասնութիւններուն հետեւող գրող է, որ կրնայ ծառին մէջ կարուղի երկը զգալ, կրնայ զգալ, որ ծառը այնքաւ երկնիքին հետ կապ չունի, ծառին մերժումը զգալ (ծերունիի գիրկին) և զժուար ապրած մարդոց ու ծառերուն զժուար մահը տեսնել։ Այս մանրամասնութիւնը կենդանի ու խօսուն ժամանակներին է, որ շնչող կը դարձնէ Գալլոյի զրականութիւնը։

«Մտքը քայտում էր։ Երկնի սովոր սաղարթը գետին հետ չէր հաշտուում. սաղարթը ծնվում էր քարերին, սաղարթը ուզում էր ստուերի հետ-քով թռչել, իսկ բունը գաղում էր. բունը մօտ էր ապրել երկրին եւ գիտէր երկրի օրէնքը. երկրում ծնունդը քրքում էր երկնիք թռչի, երկիր է վերադառնալու» (էջ 58)։

Անշուշտ խոր բանաստեղծութիւն կայ այս բոլորին մէջ։

Այս մէկը հոս կը գրեւորուի ընդհանուր մթնոլորտին մէջ։ Բնութեան նկարագրութիւնը և Հաղութի Հողերանական զարգացումը այնպիսի՝ նուրբ կապերով կը շաղկապուին, այնպիսի՝ նրբաբաններով կը հարստանան, զորս անկարելի է անտեսել, չանդարդաւորաւ։ Մտախաղը, որ կ'իջնէ ու կը շարունակէ ծառը. անձրեւի ստեղծած թացութիւնը, զոր հեղինակը շօշափելի կը դարձնէ ամէնուրեք...։ Բունի ստուերին գողը, որ մէկ արտայայտութիւն էր կ'ըլլայ ծերունիի ներքին դողին, և ապա՝ արեւի շողերը ծառին շուրջ։

«Մտքը գիտէր, որ արեւը մնաւ թաքիւ է ասում, գիտէր, որ Արեգակը հրաժեշտի դիպիկ շալիկ է հագցնում իրեն» (էջ 56)։

Արտաքին ու ներքին աշխարհներու այս ընդհանրացումը, որ յատուկ ու վաւերական մթնոլորտ մը կը ստեղծէ, արարքին նկատմամբ կը բերէ ո՛չ միայն Հաղութի ներքին գիտակցութեան արթնացումը, այլեւ կը նպաստէ երեւոյթներուն դիմաց կանգ առնելու։ Վերջին էջերուն վրայ, գողացող ծառին դիմաց, ծերունին կը մտածէ։ «Դժուար ապրած ծառերը դժուար են մեռնում» (էջ 59)։ Այս պատճառով ալ, մանրամասն նկարագրութիւնը ու Հողերանական նրբաբաններու խորացումը կենսական կը դառնան և մասնաւոր իմաստ կը ստանան։ Իսկ այս բոլորը յաւելեալ արժէք կը ստանան, երբ նրաճող եղած է ու կրնար ըլլալ ի՛ր շատ մը գործերուն մէջ...

Կտակ ունենալը, որ կու գան գրողէ մը, որ չար նկատուելու չափ անպատեկ ինչ որ ամէնէն էականն է և այս բոլորին զարգացումին մէջ տեւողը, բոլոր պարագայական սահմաններէն անդին, Գալլոյի կարողութիւնն է մարգկային կեցութիւնը տեսնելու Հաղութի առանձնութեան մէջ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՆՆԵ

ՀԷՅ ՄՈՒՇԵՂ...

Բա զու էն մա՛րդն էիք, քա դու էն աղա-
մա՛րդն էիք, որ պիտի էլ պիտի մահով գնա-
յիք... Պատահական ու շարադաստիկ զեղա-
կով... Ախր քո կեանքն ուրիշ էր, ախր քո յը-
պասակն ուրիշ էր: Երէկ չէ՛ր, որ անմահ իս-
լինէ Պաշտենցի եօթնասունամեակի առթիւ:
Խոսեցիր Բարսեղն կարմիր, արնագոյն ծաղկի
մասին... Երէկ չէ՛ր, որ եկար Հրատարակչու-
թիւն եւ ասացիր. «Ա՛յ պատմութեան ռեժիս-
ժերը արժանի արժանի, որ ուզում եմ ապիւն. փո-
րերի մասին է, բայց՝ մեծերի համար: Որ կար-
գան, իմանան...»: Երէկ չէ՛ր, որ սրտազանգ
Հրատարակչու (ա՛խ, երանի շատնէիք...) ու կո-
չեցիր. «Ա՛յ մեծ մէկը պիտի կրակել իմանալ...»: Առանց
զենքի՛ էլ ի՞նչ աղամարդ:

Հէ՛յ Մուշեղ...: Հրատարակչու մտաւ
զուր Էիք դալիս Մայմիի կողմերը ու ծիս-
միտ խփոցով, կարծելով, թէ ձթալանի թշու-
մունքն եւ սպանում: Տղայիս էլ, Հրատարակչու, զեղ
Հեռ էիք տանում, որ կրակել սովորի...

Քո իրականումն էլ շատով, ազգովին պիտի
անելիք, եւ ես, քո կրտսեր եղբայրը, քո արիւ-
նակից եղբայրը, զեղ պիտի շատ ու շատ երկու-
րեանք ցանկանայի, ի փառս մեր ազգի ու Հայ
զրահանութեան: Պիտի շատ ու շատ ցինի իմ-
մէն, ու կէսն էլ Հեղինէն ի յիշատակ Հայ-
րենականի այն քաղերի, որոնց արժանաւոր մա-
նանդորդն էիք դու...: Որոնց կեանքի մարմնա-
ցումն էիք դու...: Քո պաշտելի Յայիկ Պաշ-
տենցի զինվորականների կանչանքն համաձայն քո
կոնչն էլ թառամ էր մեր արեւից, մեր Հաղուց:
Մեր Հին աշխարհագրագիտի ու մեղ պատմի էր
զգաստ...: Այսուհետեւ շոյնդէս կը պահի, ու
կ'ապրենք այդ կանչով յաւիտեան յաւիտենից,
բայց... առանց զեղ:

Առանց զեղ...: Երբե՛ք: Ես, որ Հիմա լաց
եմ լինում զեղ համար, — ես Հպարտանում եմ
քեզնով: Ես Հպարտանում եմ քո գրականու-
թեամբ, քո յիշատակով: Քո Տաւրոս որդով:
Հպարտանում եմ, որովհետեւ դու, ինչ ախար-
հում էլ որ լինես, — այս կամ այն, — ազգ եւ
պահւելու, մարդ եւ պահւելու...

Հէ՛յ Մուշեղ...: Թովհ Հայրենիկ իղձերը,
որ ապրում էին քո մէջ, էլի մեղ Հեռ են: Քո
պաշտելի մայրիկի առանձն երկերը, ծովը եւ
Ուսումնասիրը, որ քո աչքերի գոյնն անեն, էլի
մեղ Հեռ են: Քո մազերի ուղիւն, որ մեր ցորեն-
հացի արդարութեան էր, ծփում-ալիքում է
ալիքերիս առաջ:

Տխուր եմ այսօր...: Ու պիտի ախար լի-
նեմ երկար՝ առանց քո զուտ, բայց պայթուցիկ
հերկայութեան, որի կարեւոր մենք աշխարհ շատ
ունենե՞ք...: Բարսեղն ծաղիկը փնտաղներից մե-
կը պահպանե՛ք:

Մուշեղ, զեղ լի՛ աղում աղպէս պահելէ...

Դու երազանք ունէիր. դու պիտի գրէիր ոգ
գրկութան հերոսների նոր տարեգրութիւնը...:
Ախար, որ երազանքդ կիսատ մնաց:

ԴԱՆԻԹ ՅՈՎՀԱՆՆԻՍ

ՈՒՐ ԿԵՐԹԱՍ, ԿՈՌԻՆԿ

Գուցէ միշտ է՝ զիմ սիրում են աստուած-
ները. ես շուտ է մոռանում: Բայց միշտ է այն,
որ ում ծարդի են սիրում, նա կեանքից յետոյ
էլ մնում է ապրողների մէջ, շարունակում աղ-
ջել: Աղպէս էլ դու պիտի ապրես, սիրելի Մու-
շեղ, որովհետեւ ընթերցողներդ ու զեղ ճանա-
չողներդ շատ են սիրում ու հաւատում քեզ, քո
ստեղծած գրքերին: Սիրում են կայծքարի պէս
կարծր, հաստատուն թուարութեանը համար,
ծնունդով հայրենացւում ապրող կապուտ աչքե-
րիդ շիտակ նայումների համար...

Ուսանող էի, պատմութեան դերի Վարդան
ամառը, կարգացրի, հասնեցիր:

— Դիտողականութիւն ունես, կուշտու-
տ ունես, բայց պատմութեանը ճանաչմանը չեմ
սկսում, ազգանունդ փոխարէն, եթէ ամերիկե-
կան գրողի ազգանուն լինէր, ոչինչ չէր փոխ-
ւի, ուզում եմ ասել, որ գրածիդ մէջ պէտք է
երևայ քո ու՛ լինելը, ո՛ւմ աղան ես, ընդ որ-
անգամ ես:

Ուրիշ պատմութեան դերէ: Կարգացրի,
պիտուականութիւն, մի պատմութեան վերնագրին էլ
ինքզ զրեցի՝ «Հայրենի երկիր»:

Շատ էի սիրում երգել, յատկապէս Սասնայ
մի քանի երգեր, որոնք ջոնն էիք համարում,
միայն ջոնը, երգում էիք մտերմների շրջանում:
Այնքան փակ, մի զիջ առաջ թեքում, մախ մեռ-
ջող հակադիր, երգում էիք...

Լուսու դեմ բնկու, զարկեցին Գեորգ...

Յիշում եմ, մի անգամ անգանի շուրջ գրա-
կանագէտներից մէկն էր համար կիսամայն եր-
գում էր քո սիրած երգերից մէկը: Միանգամից
բռնեցիք, զարթացր:

— Դա իմ երգն է, չեղեմ: Այդ երգը եր-
գելու թրուռնք պիտի անենաւ, չեղեմ...

Հիմա, այս Դանի Կորինի, երբ եղելութիւնը
Հրապարակարար պէս մնում է բուրբիս սրտերը,
ուզում եմ հարցնել քեզ, սիրելի Մուշեղ.

— Ո՛ւմ յանձնեցիր, ո՛ւմ յայտնի թողեցիր
քո սիրած երգերը, այն, որ միայն գո՛ւ պիտի
երգէիր, Հիմա մի՛ է երգելու... Գո՛ւ կ'երգես,
կուսնէ:

ՄԵՐՈՒԹԱՆ ՏԵՐ ԳՈՒԼԱՆԵԱՆ

Հ Ո Գ Ե Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Գիտեմ, պառկած ես հիմա, քաղերուն մէջ քու ծաղկած՝ հայ-դուկներու աստիտակամ խաղաղութեամբ զարդարուած: Գիտեմ, թէ կոնգն աշտ ընդմիշտ պիտի դժգոհ քննայ եւ աշխարհէն դառնացած մեր արիւնին ոսկի, ոսկի խնձորներուն լիւթեամ տակ ոստերը քու ալ երբեք, պիտի երբեք չկէին:

Շատ լաւ գիտեմ, թէ ծառերուդ շուրջ բոլոր երկրի բայրերը ցանոյ հովերն ամէն պիտի մարին վշտահար եւ Գալշոյենց արտը արդար անգամ մըն ալ պիտի թաղուի լուսեան երկունքներուն մէջ յամառ: Այո բայրը շատ լաւ գիտեմ, անգի՛ր գիտեմ:

Ես ի՛նչ ընեմ, ի՛նչ չընեմ:

Գնա՛ խաղաղ. դժգոհ թէ գոհ՝ գնա՛ խաղաղ: Գնա հանգիստ, եւ ասիւրացի խաւար, խաւա՛ր կուտակած գայրոյթներուն ծիլերն վեր-ջին ցանէ կիրքով մարմիններուն մէջ երկնային, որ բո՛ց ծլին, որ շա՛մք պայթին:

Գնա՛ խաղաղ,

գի դուն կ'երբաս, արձագանգի նման եիմա մեզի հասնող ծառ ժամերուն մեր պատմութեան, ասպետներուն մեր յայտնութեան, որոնք հագած ցաւում աւ շանք՝ մեխակներով կը զարդարեն ուղիդ դժուար:

Գնա՛ գալիք որդաններուն, որոնք արեան թաւշներէն արդ կ'արարեն պարեգօտներ քեզի համար, մեզի համար եւ մոյն դժուար ակունքներուն ընծայ գրուած մանուկներուն համար նաեւ: Գնա՛ խաղաղ եւ քայլերուդ ընկերակից խաւարն աշտ ծանր արշալոյսի որդան կարմիր խոստում ըլլայ, ջարդուիշուր դալար կազմիդ մեր արտե-րուն թող անսպառ սերմի ակունք եւ սօն ըլլայ:

Գնա՛ խաղաղ, գնա՛ հանգիստ, ուրախ, հպարտ...

է:

Եւ Սասնոյ լեռներն արթնցան ցաւում
նակտի գիրին դէմ իրենց կրկնուած,
մինչ ամպերը սեւ անորոշութեան ախտէն վարակուած՝
սնդացին կառած պրոնզներու տաճ արիւնը արդար:

Կանգնած եմ արդ հոն —

ժայռերու ծագէն լեռնացած բազմ ուրերը փրտա,
որոնց քայլերուն ընդառաջ հոսող լեռներն են հրկէզ
կորսուած յեզուի անառակ բառեր, դառն ուժգին:

Կանգնած ես դուն հոս,
մենք կանգնած եմք հոս —
Արագած սարի լանջերէն քառուած Բովստուն ու քարտուն,
կռուակին որդան վիշտերէն բանուած կառոյց անանուն,
տխուր յուշերու ծաղկած քարաստան, տեսլահա՛ր արին...
Կանգնած ես արդ հոս —
Քարտէսին հազար ծալքերուն մարդ,
մարմորոյ-ծղոյ Սասնայ ծռոններու դուն իմ ծուռ պայքար,
Միջերկրականի դաժան մայքերէն միջիւ Ասլամտանն ձգձգուած,
յիւսա՛ր, ձիւ՛ք երակներուն հրդեհներ ցանց երկունքի անտառ՝
կանգնած ես, կանգնած, աշխարհով ձգուած՝
Իրրեւ գալիքի սրբազան աւանդ
Եւ գորշ ներկայի ռազմայց անյաղք...

Կանգնած ես անխօս, կանգնած ես ճայնեղ Աստուծոյ նման,
Աստուծոյ նման դուն ե՛ւ բողոք ես, դուն ե՛ւ նզովք ես,
Եւ դեռ՝ գալիքի կոյտ պատգամներու մատենան ես կապոյտ,
Հայոց Աշխարհի խորհուրդի ակումբ՝ դաժան եւ անգութ...

Ջահերն արդեօք այսօր՛ն, այսօր՛ն կը ճանչնայի՛ր,
որ վնդեցիք դառնալ գոհն ու գոհաբերը մեր մութ կեանքին:
Գալիքն արդեօք այսօր՛ն, այսօր՛ն գոց գիտէիք,
որ վնդեցիք դառնալ միակ անձնագրին ե՛ւ ներկայի, ե՛ւ գալիքի:

Ու կը ծնիս —
մեր աշխարհի մէն մի ծիլի ծիրիքին հետ պիտի ծնիս,
ու կը ծնիս —
մեր աշխարհի մէն մի քարի լեռնացւան հետ պիտի ծնիս,
ու կը ծնիս —
մեր աշխարհի անձրեւներուն պատարագէն պիտի ծնիս,
ու կը ծնիս —
Երկրի կապոյտ անկիւններէն հրդեհ-հրդեհ պիտի ծնիս,
ու կը ծնիս —
Ֆիստաներու գրռներուն իրրեւ օրհնանք պիտի ծնիս,
ու կը ծնիս —
Խորային հետ, Չաւուշին քեւ, Դժոխքին սիրտ պիտի ծնիս,
Մանուկ Գալջօ, դուն տա՛ք թումդիր,
պարտութենէն, յաղթանակէն, սկիզբներուն մայր սկիզբէն
դու՛ք անդադար եւ անվախեան պիտի ծնի՛ք, պիտի ծնի՛ք,
արդ կը ծնիք, կ'անիք, կ'անիք եւ վերստի՛ն մեզ կը ծնիք...

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

(ՀԱՄԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ)



ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՅ

ԲՐԱԲԻՈՆ

ԾԱՂԻԿ

ՈՐՈՆՈՂԸ

Մ Ո Ւ Շ Ե Ղ Գ Ա Ն Շ Ո Ց Ե Ա Ն

Ուրեմա Սարոյեանը իր գրքերը համարում է մարդկանց ուղղուած նամակներ: Սարոյեանը աշխարհի գրողն է, աշխարհի մարդկանց ընկունում է որպէս իր բարեկամները եւ իր քաղաքի նամակներն ուղղում է նրանց՝ մոլորակի բնակիչներին:

Սարուբանի երկրակից հաշիկ Դաշտենցը իր ընթերցող-ներին ուզող երկու համակ: «Խողեղան»ը եւ «Ռանչպար-Ոնրի կանչը»: Վերջինը ընթերցողներին հասաւ հեղինակի մահից յետոյ, բայց հասաւ հեռագրի պէս: Եւ Դաշտենցը իր «նամակները» հասցնողից ոչ թէ աշխարհի բոլոր մարդ-կանց, այլ յատկապէս կամ, աւելի ճիշդ՝ միայն ու միայն մեզ, իր ազգակիցներին:

Դաշտենցի վէպերը Դաւթի ջրաղացի առաջող-Ջրաղաց-պան քնոյ թամոյի հեքիաթներն են: «Խողեղան»ի եւ «Ռանչ-պար»ի կանչի վերնագրուած հատուածները, իրօք, հե-քիաթների շարուկ են: Այդ հեքիաթները կարող ենք ետ ու առաջ պատմել, այսինքն՝ տեղափոխել շատ հատուածներ, տեղափոխել նաեւ մի վէպից միւսը, կարող ենք նոյնիսկ երկու վէպերը ամփոփել նոյն կազմի մէջ... Մեզինք հեռա-ցած նոյն լեռներին, այդ լեռներից հեռացած եւ արդէն աշ-խարհից հեռացած նոյն մարդկանց մասին նոյն ու մէկ ասքն է հասցնողը մեզ հաշիկ Դաշտենցը:

Չկան յատուկ ընտրուած հերոսներ՝ դրական ու բացա-ռական, եւ բարեւ: Դաշտենցի հերոսները իրական են եւ հեքիաթային, իսկ բարեւը՝ շարի եւ բարու բարեւ, չկայ աւանդական վէպի սկիզբ ու վերջ. սկիզբը առասպելն է կամ հեքիաթը, վերջը՝ առասպելական կամ հեքիաթային իրական-նութիւնը, չկայ, ուրեմն, դէպի յատուկ նպատակ դնացող սրահետային աղիդ դիմ, իսկ ընթացքը էպոսի փլուածքներն ու թռիչքներն են, չկայ դեղարուեստական հնարանք, իսկ եթէ, այնուամենայնիւ, գոյութիւն ունի, դա հեքիաթային պատումն է: Եւ դա հենց այդպէս էլ պէտք է լինէր. հաշիկ Դաշտենցը պատմում է իր մանկութեան աշխարհի մասին, իսկ մանկութիւնը ինքն է հեքիաթ, պատմում է առասպելից ծնուած եւ առասպել դարձած մի երկրի մասին, իսկ առաս-պելն ինքն է հեքիաթ եւ, վերջին հաշուով, այդ աշխարհը, իրօք, հեքիաթային էր՝ իր բնութեամբ, իր պատմութեամբ, իր տոհմիկ ժողովրդի բնական-նախատեսած-հեքիաթային կեանքով: — Ուզում էք հաւատացէք, ուզում էք՝ ոչ, — Անւ արի հօտաղը չար փայտը ձեռքին վագում է դէպի կայ-ծակը՝ կրակ բերելու: Սեւ տարի ամսառին մամանայ է իջել եւ մարդն ու արջը մոյն ծառից մանամայ են ուտում. նրանք միմեանց չեն խանգարում. մոյն տարի ծնունդն են, եւ մա-նանան երկնքից նրանց համար է իջել: Մշուշի ծաւենները Մշոյ դաշտից բարձրանում են դէպի Սեւ սարը. Մեղրագե-տում Աստղիկի ծառնեծառներն են լողանում, եւ հավի հա-դեղանը — Աստուրը, գետում լողացող այդ Աստղիկներից մէկի կնուսք փախցրել է. կնուսն տէրը քով է՝ իր հարս-նացումն պէտք է լինի, եւ Աստուրի մահակակից հավի Տօ-նէն, կնուսը չամիչով լցրած, արձնում է տիրոջը: Մի պա-

առաջ դրանք կանգնած իլիկ է մտնում, ծտերը քառել են մրա
 ուտերին, ծվվում են. պառաւը հասկանում է ձննդկերէն եւ
 նրանց հետ գրայցի մէջ է. իր եւ ծտերի երկրում, այն Խորք
 էր, չարքեր յայտնուեցին, որդին լեռներն է ընկել չարքերի
 դէմ կռուելու, պառաւը ծտերից որդու մասին է հարցնւփոք-
 ւում: Թամայի ջրազացը Դաւթի շինածն է, եւ քարերը երկ-
 նային՝ ո՛չ մաշուել ունեն, ո՛չ կռանելու պէտք: Եւ ջրա-
 զացի պատերին նստած ալիւրը հագար տարուայ հնուքիւն
 ունի: — Առասպելը յայտնում է որպէս իրականութիւն,
 իրականութիւնը դառնում է առասպել, դժուար է նաեւ զա-
 տել ռաւմանները՝ որտեղ աւարտուեց առասպելը եւ սկըս-
 ւեց առասպելական կեանքը, որտեղ ընդհատուեց Հեքիաթը
 եւ սկսուեց Հեքիաթային կեանքը: Եւ այդ իրականը ո՛ր
 ժամանակում է: Ամէն աղունատիրոջ ալիւրին ասացող Թա-
 ման հագար տարուայ ալիւրից խառնում է մի պտղունց, եւ
 ժամանակները խառնում են՝ հագար տարի առաջ անցած
 օրը դալիս-ձուլում է ներկայ օրուան, դարերը ձուլում են
 վայրկեանին, վայրկեանը՝ յաւերժութեանը, եւ ազօրբի
 անկուտն քարերը շարունակում են պատել Սասնայ տան հին
 ու նոր Հեքիաթը: Ժամանակը Դաւթենցի վէպերում երա-
 ծանի կամարն է՝ ծայրում հայոց առաջին վէպ Վասնայ
 ծոնիւն է, միւսում՝ «Խոզեղան» ու «Բանջարների կանչ»
 են: Եւ Ժամանի աննրիթեղէն, շարժուն ու գունեղ կամա-
 րով Դաւթենցի վէպի բնակիչները հոսում են դէպի Վասնայ
 ծոնիւն ու այնտեղից հայոց առաջին վէպի բնակիչները հո-
 սում են դէպի ասացող գաւառից մօտ Խաչիկի Վասնայ ծոն-
 քի նոր պատումները: — Առասպելական նոյն լեռներն ու
 ձորերն են, լեռներում քափառող քուլի աշներն ու ոչխար-
 ները քլով Դաւթի հօտի մնացորդներն են, նոյնն են գետե-
 րը, նոյնն է ջրազացը, հագար տարի առաջ ջրազացուան էլի
 Թաման է եղել, Պառաւի շաղգամի արտը Ռսկեհատի շաղ-
 գամի արտն է, Սեւ քարի բնակիչներից մէկը Ձենով Օհանն
 է, ահա սուրբ Ազրերիկի կրօնաւոր Կաթմասը մրա կանչից
 խլացել է, Ասատուրը Սասնայ տան հագար տարի առաջուայ
 հովիւն է. ահա Սեւ տարում գայլ է խեղդում, մի ճշմարտ
 հայ Հալէպ քաղաքում տուն է շինել՝ Դարբին Ջենսը քը-
 լումզն առած հասել է Հալէպ, քանզի օտար հոգում հիմ-
 նած հայ տունը եւ, ահա, հսկայ քլումզն ուսին գալիս է՝
 Դարբին Ջենսը՝ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛ քէ՛
 շեմը՝ քարափին, Ջենսի ժայռեղէն տունը Դաւթի քերչն է
 կամ Դաւթի քերչը Ջենսի տունն է... Անցեալն ու ներկան
 կապած ծիածանի կամարի տակ քէ մի բան է փոխուել, դա
 այն է, որ Մովսեսում քափառող Դաւթի հօտը պակասել
 է, եւ չարն է շատացել: Եւ Թելօ Մեսրոպն ու հարեւան գիւ-
 ղացին վէճի մէջ են՝ որքա՞ն է միլիոնը: Վիճում են ու գը-

նում սուրբ Աղբերիկ՝ պարգեւաւ, քէ արքա՞ն է միլիոնը՝ հա-
րիւր հազար, քէ՞ հազար հազար...: Հեմք այդքան հայ զին-
ւոր է հալկաւոր հայոց լեռները մաքրելու չարքերից...: Բայց, — ուզում էք հաւատացէ՛ք, ուզում է՞ք՝ աչ, — մի
տղայ, մեծ-մեծակ մի ջախել՝ կարմիր իրիցու տնից, անունն
Արաքօ, ձին հեծած կանգնել է Երիվկատարին. սուլթանն Հա-
միդին կռիւ է յայտարարել:

Սա հեթա՞թ է, թէ՞ իրականութիւն:

Մեզ հասած Դաւթի հեթաթը յանկարծ յայտնուեալ է
որպէս իրականութիւն, իսկ իրականութիւնը, որ թշնամի
բանակի գէժ մենակ կանգնած Արաքօն է, դառնում է հե-
թաթ: — Դաւթին է ֆուռկիկ Ջալալին հեծած կանգնել
Մարութայ սարի գլխին, մենակ մի զինուոր, իսկ վարը
Մուրայ Մելիքի աւարառու բանակն է. թիւ կայ աստղերին՝
թիւ չկայ զօրքին:

Այո՛, նոյն Դաւթին է՝ նոյն միայնակ զինուորը:

Հայ Ֆիդայական շարժման սկիզբը առաջին հեթաթա-
յին, բայց պատմականորէն հիշող, մեզ ներկայացնելով, Պա-
շիկ Դաշաւենցը հարց է տալիս՝ որքա՞ն ժամանակ է անցել:
ահա, քունկերով դարի ժուռքն է, բայց Դաւթից մինչեւ
Արաքօն ծիածանի կամարի տակ լեռների ու նրանց մարդ-
կանց ճակատագրում ի՞նչն է փոխուել...: Կայծակնահար
նոյն լեռներն են, շարքերով լցուած նոյն զինքը, իր մե-
նակութեանը խաշուած նոյն ժողովուրդը եւ ըմբոստ ճա-
կատով նոյն միայնակ զինուորը՝ անունը Դաւթ թէ Արաքօ:
Արաքօ:

Մոռէ Իմոն հասել է մինչեւ Ինչլիկ եւ քրիստոնէայ թա-
ղաւորից, ի տեղ օգնութեան, մի օրօրոց է ստացել նուէր:
Այդ լեռների պատուիրակը աշխարհի հզօրներից հզօր որ
թաղաւորի գունն էլ դնար, այդ օրօրոցը կը ստանար՝ օրօ-
րի՛ր յոյսդ:

Յոյսը դարձեալ հրաշքն է. Պայթող աղբիւրի ակունքից
յայտնուող ֆուռկիկ Ջալալին, երկրի ընդերքից յայտնուող
հրեղէն ձին:

Այդ հրեղէն ձին Արաքօն էր: Այդ հրեղէն ձին Աղբիւր
Սերոբն էր, Սպաղանայ Մակարն էր, Գէորգ Չաւուշը, Անդ-
րանիկը, Դժոխք Հրայրը, Սմբատը, Գալէն, Ջոլոն, Մօրուք
Կարոն, Արծիւ Պետոն, Սեփարեցի Սաքոն, Կոստ Եակոբը,
Լաճկանցի Արթէնը, Առդայ Ջօրիկը, Ալադին Միսակը,
Բրինդարը, Սէյիտ Պօղոսը, Արտոնքոյ Ջնդոն, Մուքոն,
Բամբակու Մելոն, Կայծակ Անդրէասը, այդ հրեղէն ձին
Շէշիկա Մանուկն էր, Փեթարայ Մանուկը, Փեթարայ Թա-
ղէն, Փեթարայ Ախոն, Փեթարայ Իսրոն...

Պայթող Աղբիւրի հրաշքը հայ Ֆիդայիներն էին:

Հրեղէն շնչով այրեր, հայրենիքի մատաղայն ուրդներ,

որ ասյրեցին միայն Հայրենիքի կեանքով եւ դեռ իրենց կենդանութեան ժամանակ գործան պատմութիւն, բայց Հայոց պատմութեան Հազիւ լուսանցքում տեղ գտան:

Եւ ահա նրանց անասպելական կեանքը, վեհ ու արդար պարծը, Հերոսական պատմութիւնը, որի շունչը այնքան պէտք էր մեր ժողովրդին, «Ռաւնապարների կառնչով մեզ է ներկայացնում Հայ Ֆիդայիների արդարամիտ պատմաբան Յաչիկ Դաշտենցը: Եւ ներկայացնում է քննախոյզ պատմաբանի Հմտութեամբ, պատմութեան Հերոսներին՝ ծննդավայրերով, կնքանուններով ու պատմանուններով, իրարարժուութիւնները՝ կապերով, գործողութիւնները՝ կոնկրետ ժամանակով եւ որոշակի տեղերով:

«Ռաւնապարների կառնչում Դաշտենցը նաեւ Հմուտ աշխարհագրադէտ է եւ քարտէսագիր, նաեւ բուսաբան:

Եթէ այս դիւերին յաջորդող արշալոյսը այն արշալոյսն է, որ ես պէտք է պնդեմ իմ դօտին եւ բացեմ Դաշտենցի ինձ ուղղած «նամակն» ու կարգում. «Կարմիր Մառ, ո՞ւր ես, ես կայ», ես պէտք է հասնեմ Մշոյ դաշտ, Մուշ քաղաք չմտած թեքում դէպի արեւմուտք, դնամ Արածանի արեւմտեան ափով՝ դէպի Աջմանուկ ու Քարձոր գիւղերը եւ, Աջմանուկը աջ թողած, կտրեմ դէպի Արածանի դնացող գետակը, Քարձոր չհասած, պիտի լսեմ ջրվէժի ձայն եւ դա Գուռգուռայ կոչուող ջրվէժի ձայնն է եւ, ջրվէժի ձայնը ականջին, Քարձորի տակով պիտի հասնեմ Խորոնք, եթէ չեմ յիշում, կը բացեմ Դաշտենցի «նամակը» — Խորոնքը պատմահայր Մովսէս Խորենացու ծննդավայրն է, իսկ Խորոնքից վերեւ Խորմա լեռն է եւ լեռան ստորոտին՝ Կարմիր Մառը: Եթէ ահա, թէ այդ գիւղը Կարմիր Մառը չէ, այլ՝ Ղզլազանը, ես չեմ շփոթուի. Դաշտենցն ինձ արդէն զգուշացրել է՝ օտարները գիւղի անունը փոխել են, պարզապէս՝ Թարգմանել, Ղզլազանը նոյն Կարմիր Մառն է: Ահա՛ աջ կողմում անտառն է, կաղամախենաւ, լուսանի, բողախի ծառերը, բայց անտառում իշխողը կարմրատերեւ նորձենին է:

Ահա այդպէս Դաշտենցը մեզ է ժառանգում Հայրենի եղբրքի քարտէսը...

Դժոխքի պատկերը երեւակայութեան արդիւնք չէ: Դժոխքը, իր վերակացուններով, երկրից են վերցրել ու երեւակայորէն տեղափոխել ընդերք: Անօրէնները դժոխք էին դարձրել այն երկրը, ուր գործում էին Հայ Ֆիդայիները: Եւ նրանք կամօք էին Հազիւ դժոխքի բոցերից կարուած կրակէ շապիկները: — Հայրենիքի որդու առաքելութիւնն էր դա: Ինչպէ՞ս կարող է լինել Հանդիստ եւ անձնական ապահով կեանք, երբ Հայրենիքն ինքն է անապահով, որտեղի՞ց պէտք է յայտնուի անձնական երջանկութիւնը, երբ Հայրենիքն ինքն է ապերժանիկ, ո՞ւր կը տանի անձնական փառքի



... Ասպետութիւն,
ազատութիւն, հերո-
սութիւն, փառք եւ
երջանկութիւն է ա-
նանձնական կեանքը:
Եւ ամսամամ է ա-
նանձնական կեանքի
սահմանը: — Հայ ֆի-
դայիները օրինակով
մեզ հետ այսպէս է
խօսում անանձնական
ապրում հաշիկ Դաշ-
տեմը:

ձգտումը, որը հայրենիքն ինքն է անփոփոխական, ո՞րն է անձ-
նական սէրը, որը սիրոյ օրորոց հայրենիքը զօտիքի վերա-
կացուն է օրորում...: Քարանձառն է նրանց տունը, ամե-
նաշատը, ամենաշատը՝ գիւղեղրի ժառանգը կամ զումը, խոտը
կամ միւսն է նրանց անկողինը, փոթորիկն է նրանց ուղիտա-
հեղէնը, բարն է նրանց բարձր, սեփական շունչն է նրանց
կրակը, դէնքի հետ պսակում, ուսապարկերում մի կտոր
կորեկ-հաց, կամ մի բուռ փոթիկն, աւազարկերում՝ իրենց
պատանքացուն, հարստ ճակատները թշնամու նենդ գնդա-
կի դէմ, դոր ու դիշեր լեռներում քայլում են կրակի շաղիկ
հագած առուածները: — Դաշտենյը մեզ այսպէս է ներ-
կայանում հայրենիքի ինքնագոհ ուրերին: — Արարչու-
թիւն է անանձնական կեանքը: Այդպիսի կեանքով կարող է
ապրել միայն նա՛, ով իր ազատութիւնը չի զատում հայրե-
նիքի ազատութիւնից, ով իր փառքը չի բաժանում հայրե-
նիքի փառքից, ով իր երջանկութիւնը չի բաժանում հայրե-
նիքի երջանկութիւնից, ով իր սէրը չի զատում հայրենիքի
սիրուց...: Ասպետութիւն, ազատութիւն, հերոսութիւն,
փառք եւ երջանկութիւն է անանձնական կեանքը: Եւ անսահ-
ման է անանձնական կեանքի սահմանը: — Հայ ֆիդայիներ-
ը օրինակով մեզ հետ այսպէս է խօսում անանձնական ապ-

րած Խաչիկ Դաշտենցը :

Կարմիր իրիցու տան հրքեմնի աւետարանում գրուած է եղև, թէ աւետեաց հրկրի լեռներում մի ծաղիկ է աճում՝ երջանկութեան Բրաբրոն ծաղիկը : Շատերն են ելել երջանկութեան Բրաբրոն ծաղիկը որոնելու, էն գլխէն որոնել են, բայց ոչ մէկը չի գտել : Եւ երջանկութեան ծաղիկը ետեւից զնացողը այլեւս համարում էր ցնորքով տարուած, խենթ :

Այդ «խենթը» Կարմիր իրիցու տան Արարոն էր :

Հայոց լեռների երջանկութեան ծաղիկը որոնող «խենթերը» ֆիդայիներն էին :

Մի տղայ, միայնակ ու ասպետ մի զինուոր՝ արիւնարու եւ նենդ մի բանակի գէմ : Եօթ զինուոր՝ եօթ բանակի գէմ : Ամենաշատը քառասուն զինուոր՝ քառասուն հազարահոց արիւնարու եւ նենդ բանակի գէմ : («Քառասուն» թիւը հեքիաթային է, իսկ պատմութիւնը՝ իրական) : Միայնակ զինուորը գիտէր, որ մի բանակի յաղթել չի կարող : Քառասունը գիտէին, որ յաղթանակը քառասուն դադ խորը՝ քառասուն ջրաղացքարի սակ է, սակայն... որոնում էին իրենց լեռների Բրաբրոն ծաղիկը : — Ֆիդայութիւնը ապրելու սկզբունք էր, — «Ռեմնիպարմիրի կանչը» «նաժակով» սա է մեզ ասում Խաչիկ Դաշտենցը : — Կը յաղթես թէ կը պարտուես՝ չարի զէմ ծառանայն առաքելութիւն է, կը գտնես թէ ոչ՝ հայրենիքի երջանկութեան ծաղիկը որոնելը հայրենիքի որդու պարտքն է :

Ուխտին հաւատարիմ՝ գէնքին պատկուած, նրանցից շատերը փաթաթուեցին իրենց պատանքացու կտաններով եւ, որպէս Բրաբրոն ծաղիկ հունդեր, թաղուեցին սարերում : Ու մնաց՝ տեսաւ հայ զուգոթան եւ տեղահանուող, լլկուող, մորթուող ու այրուող ժողովրդի համար դարձաւ պաշտպան բանակի սիմվոլ եւ բանակ, առաջնորդի սիմվոլ եւ առաջնորդ, կամքի սիմվոլ եւ կամք, յոյսի սիմվոլ եւ յոյս : Եւ ասպայդ քչերից էլի սոյ մնաց՝ մի առաւօտ տեսաւ, որ արդէն աւեր ու տնջուել երկրում, Մուշից մեր՝ Միրնկատարին ծաղիկ է Բրաբրոն ծաղիկը... Դա ոռուս ռազմատի սուխն էր՝ բոցերով բռնկուած : Սա գեղեցիկ խօսք չէ, եւ ես չեմ յօրինում : Դաշտենցն է յուշում այս արտայայտութիւնը : «Ողորդեալ» եւ «Ռեմնիպարմիրի կանչ» հերոսները, որ հերոսներ չեն, այլ իրական մարդիկ, նրանք՝ ծխացող փառասկների այդ օրուայ անօթեան բնակիչներն ու մոլեգին «խենթերը» այդպէս ընդունեցին՝ որպէս Բրաբրոն ծաղիկներ ընդունեցին չէկ սալդատների բոցավառ սուխները : «Ցնորքով տարուած» հայ «խենթերը», որ հայրենիքի երջանկութեան ծաղիկն էին որոնում, ուրեմն այդ էին որոնում՝ հայոց դաժան լեռների երկինքը-խաչակնքող չարխափան սուխները... Ահա տնջացող հողը խաչակնքուած է,

Երկինքը խաշակնքուած է, Տաւրոսի լեռներում Տաւրոս ան-
ւանակիր մի որր, նոյն ինքը՝ Սեւ սարի հովիւ Տօնէի որդի
Քաշիկը ծաղկեպօսակ է դործում ոռու գինուորի գլխարկին,
ոսացող Թաժոն նորից է բացել Դաւթի ջրաղացի դուռը,
ոռուական սուրճներէ բոցերից թաք ու թուք ճրագներ են
փառուել Մոյս դաշտում, հին Փիղաջիններից մի քանիսը փո-
խել են Փիղաջական հագուստը, հաղել դիւղացու շորեր եւ
խուրջիները ուսերը դրած որբեր են հաւաքում քրդերի վը-
րաններից։ Մի որբը՝ մի ոսկի։

«Ի՞նչ ես անում, Խորո, ի՞նչ հայի ես, — հարցրեց զօ-
րովարը։

— Որբեր հաւաքեմք, փաշա, շիթիլ անեմք Հայաստանի
համար»։

Այնքան շօշափելի է շարքերից ազաա բաղձալի Հայաս-
տան ստեղծելու յոյսը։

Բայց եւրոպացի այն ո՞ր թաղաւորն էր այդ լեռների
պատուիրակին օրօրոց նուիրել՝ օրօրի՛ր յոյսդ։ Հայոց լեռ-
ները հենց այդպէս՝ աւեր ու անշունչ էին պէտք նրան։ Եւ
աշխարհի հզոր բոլոր թաղաւորներին հենց այդպիսի փոք-
րիկ եւ քղկտուած եւ անզօր մի երկիր էր պէտք՝ չափելու
իրենց թղթերի մեծութիւնը։ — «Ալադին Միսակի երգից յուզ-
ւած քուրդ մի հովիւ հայ որքուկին անվճար յաճանց որքա-
ստերիմ, բայց ի՞նչ է քո սրտանմիկ երգը աշխարհի տէրե-
րի համար, ի՞նչ է քո ցաւը. ի՞նչ է քո երազը, ա՛ւմ է պէտք
քո թոյլ աչքը, որ այդպէս խոնարհ դնում ես քո կրծքին։ Եւ
ո՛վ պէտք է գտնի քո հայրենիքի Բլաթիոն ծաղիկը»։ —
«Թանայալներին կանչող երէկուայ մեր տխուր պատմու-
թեան եւ ընդհանրապէս աշխարհի պատմութեան այս անո-
ղ՞ք դասն է մեզ յիշեցնում Քաշիկ Դաւթենցը։

Եւ յուսախար Մախլուտո՞ն էր տնքում, Սեւ սարի որ-
բուկ Տաւրո՞սն էր մղկտում, թէ՞ Դաւթենցն է ցաւով պրել-
«Այնպէս եմ ուզում Ալադին Միսակին տեսնել, այնպէս
եմ ուզում, որ նա երգի...

«Երգի՛ր, Միսակ, երգի՛ր։ Երգի՛ր էն երգը, որ այնպէս
սրտալի էիր երգում...

«... ես սարերն բնկած Բլաթիոն ծաղիկ էի փնտռում.
Բլաթիոն ծաղիկ երգը երգիր»։

Իր կեանքը անանձնական ապրած Քաշիկ Դաւթենցը եր-
ջանկութեան ծաղիկը որոնող այն «խենթերից» մէկն էր։
Այսօր նա եռթանառուն տարեկան է եւ մեզնից հեռացած։
Բայց պնդով հեռանում է, թէ՞ մօտենում։ Ինչպէս հայ
Փիղաջիները դաշտազէմցի Քաշիկի կանչով նոր-նոր դալիս
են զէպի մեզ, այնպէս էլ ինքը՝ Քաշիկ Դաւթենցը նրանց
հետ դալիս է եւ ամէն սերնդի հետ կ'որոնի իր հայրենիքի
Բլաթիոն ծաղիկը։

Յ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

ԾԱՂԿԱԾ ԲԱՐԵՐ

Գեղարուեստական գրականության
սեմին ոտք դնելէ առաջ, տարաբախտ
Մուշեղ Փալլոյանը անուն հանած ալ-
նարկագիր էր, որուն պակուժը կազմեց
1978ին լոյս տեսած «Ծաղկած քարեր»
խորագրուած հատորը:

«Ծաղկած քարեր»ը կը բաղկանայ
«Գիմարք ծաղիկը», «Օճախի տէրը»,
«Լուսաւորչի կամքեղը», «Ազնաւաբար»
և «Միքայիլի ծառ» ենթախորագրերէն
կրող պատմութիւններէ, անկնարկներէ
և վաւերագրական էջերէ, որոնք հա-
կադակ իրենց աշխատանքներէն
ընդգրկուած են՝ որուն, կ'ընդգրկուին իրարու՝ գաղա-
փարներու միասնութեամբ:

Հատորի թեման բնութագրումն է
ասֆալտէ ճամբաներ կառուցող, ջը-
րանցքներ հունտուող, լեռնահանքերու
մամուռ թախիժ երդիքներու շունչով
փառատող և, վերջապէս, կեանքը շի-
նարար ոգիով ըմբռնող համեստ մարդոց
գոյատեւման ձգտումն:

Վերոյիշեալ գործերով՝ Մուշեղ
Փալլոյանն արարներ չի կերպարեր, ոչ
ալ գէշերու և անոնց անբնական հար-
ցերուն նկատմամբ աստիճանական դար-
պացում մը կը յայտնաբերէ: Այլ քաղե-
լով զիւրի առօրեայէն կական դրուագ-
ներ՝ կը բացայայտէ ա'յն բազմաթիւ,
որով իր կենդանագրած անձերէն իւրա-
քանիւրը կը կառչէ հայրենի բարձրա-
ւանդակին՝ դայն շնչաւորելու և ծաղ-
կեցնելու իր սեփական գոյութեամբ,
գործով և հաւատքով:

«Ծաղկած քարեր»ու առաջին գոյգ
բաժիններու պատմութիւնները կը յատ-
կանչուին հոգեկան վիճակներու նկատ-



մամբ իրենց պարզած համեմատական
շահեկանութեամբ և այս կալուածն է,
որ առանկարար զարգացուցած է Փալ-
լոյանն, փորձելով զոսկուրել մարդուն
զգացական աշխարհը՝ հոգեբանական
տարրի սեւեռումով:

Արդարեւ, Հեղինակի նկարագրած
կերպարները ընդհանրապէս կը տալնա-
պին կորսուած երջանկութեան մը մըզ-
ճաւանջով, զոր վերադառնելու իրենց ան-
կարեկիւր ճիգին մէջ կը մատնուին այն-
պիսի՝ վիճակներու, ուր ներկան կը պոյ-
մանաւորուի անդաճ յուշերու տիրա-
պետութեամբ: Պատմութիւններու մեծ
մասին մօտ ուշադրաւ է այս երեւոյթը,
ուր ներքին տողնապ մը զգալի կը դառ-
նայ մերթ խորհրդածութեամբ և մերթ
երկճայն գրոյցով:

«Գիմարք ծաղիկ» և «Օճախի տէրը»
բաժինները ընդգրկող եօթը պատմութեա-
ններ իրենց կառուցային և մատուցման
ձեւին մէջ չեն ընթանար համաձայն
պատմութեան ծանօթ այն յօրինումին,
ուր տուեալ վիճակ մը նոր տուեալներու
տրամաբանական յառաջխաղացքով կը
յանգի իր վախճանական հանգրուանին:
Այլ վերջիւումով և մտորումով կեանքի

կոչուած են թակայական ապրումներ կը փոխանցեն անոնք՝ զգացական վճիռ գործնելով, անկեղծ եւ հարազատ։ Այսպէս, աւագործի մը «առաջին էջի վամֆի փլաւակները» սկսած պատմութեամբ առաջ աւագործի էջերուն տարողութիւնը ունի միայն եւ կ'եզրափակուի քաղցրայտւշ ապրումէ մը փոխանցուած թեւադրականութեամբ («Օրիորդ Մարի»)։ Տրակտորները նոր բացատներ բանալու իրենց չիլիարար առաքելութեան մէջ, ծննդական չին չին կարօտ մը կ'արժարծեն Ռարսեզ քեռիի սրտին, որուն ցաւատանջ մը տածուածով կը ներգրաւուի պատմութեամբ մը ամբողջ թեման («Փիմարք Ծաղիկ»)։

Արդարեւ, վերջիշումէ վերջիշում յառաջացած անդրադարձի տակ պահելով իր նկարագրած կերպարները, Գալչոյիան դանց կ'առնէ ժամանակի զգալականը, որով ազդ կերպարները անդուպ մղումով մը կը կառնին տնցեալին՝ իրեն յարակից ներկայութիւն եւ գոյակից մօրմոռ...

Ժամանակի այս դանցառումը կը կերարկուի ո՛չ միայն անհատ կերպարներու մօտ, այլեւ՝ հաւաքական իրականութեան պարագային եւս։

Այս երեւոյթը կ'ըմբռնուի «Ազոտաւաճար» խորագրեալ վաւերագրական էջերով, ուր պատմական հեռաւոր թէ մօտիկ տնցեալէն որոշ վկայութիւններ մէջընկերով, հեղինակը կը հաստատէ, թէ ժամանակը կրաւորական ներկայութիւն մը կը հանդիսանայ միայն, դարաշրջանէ մը ալ դարաշրջան փոխանցման տուեալ մը պարզագէտ, մինչդեռ էականը եւ անյեղին՝ հայութեան մղած պայքարն է ի խնդիր լինելութեան եւ առաջադրելու զսպանակող տգիտատենչողին, որ կը գոյատեւէ ժամանակէն ալ անդին։ Այդ ողին անհաւասար կոտի մը մէջ թէպէտ կրնայ ենթարկուիլ մահուան սպառնալիքին, բայց շնորհիւ իր ներդրակ աւժականութեան՝ անիկա կը յառնէ վերանորոգ կենդանութեամբ։

Այս առնչութեամբ, հեղինակը կը վկայակոչէ Սիւնեաց աշխարհը, որ դոյառեւմտեան համար դարերով պայքարած

է պարփակներու, Լենկթիմուրներու եւ թրքական ոսնձդութեան դէմ եւ յանձնուած՝ քարանձաւներու խոնաւ մթնութեան, թէ՛ իւրաքանչիւր կոտի վախձանին, սարսափը աչքերուն՝ կրկին ողջունած է ծիծաղախիտ լոյսը բարձունքներու Քարանձաւէն դէպի լուսաշող բարձունք եւ վերադարձ դէպի քարանձաւային տիրութիւն։ Այս է եղած հոլովոյթը իր գոյութեան։ Աւելին, սինեաց ամէն մէկ ժայռ Ազոտաւաճար մըն է, ուր շղթայուած ամէն մէկ տենչ ուշ կամ վաղ դուրս կու գայ իր պարտադիր կայանքէն՝ ազատութեան նոր հանգրուաններ նուաճելու վճռականութեամբ։

Այսպէս, պահելով ժամանակի տրեւալը իր զուտ կրուսքական իմաստին մէջ եւ իր սեփական հակառակի՛րն իսկ արհամարհելու ձգտումով դերագանց յատկութիւն մը վերապահելով հայ ուզիին՝ Սուշեղ Գալչոյեան կ'անդրադառնայ Հայաստանի խորհրդայնացումով յառաջացած ընկերային թէ տնտեսական նոր իրադրութեանց, որոնց լոյսին տակ ան կը փորձէ դուզանալ մը զծել քարանձաւներէ դէպի սարեր բարձրացող եւ քարը ծաղկեցնող հայ շինականին եւ կեանքը նոյն ոգորումով եւ տեսլականով ընկալող անոր նախնիներուն որդեգրած հայեցողութեան միջեւ։

Թէ՛ հայրենի լեռնաշխարհի այլապան բարձունքներուն ծաղկած դիւզերը՝ Խնձորեակը, Ձորաշէնը, Կոռնիճորը, Գորիսը, Ջանդեղուրը, Ղափանը, Փաշարանը եւ Մեղրին, իրենց գոյութեան իրաւունքը հիմնաւորած են նախնիներէն փոխանցուած ա'յն հաւատքով, որ ապրելու համար հարկ է դիմել մինչեւ իսկ անհնարին միջոցառումներու, հողը քարէն եւ ջուրը երկինքէն իսկ կորզելու գնով։ Այս հաւատքով էր, կը գրէ Գալչոյեան, որ «Սամաւէլը քարանձաւում թռչնից կրակուած ու չկրակուած գնդակներ, ժանգոտած ու մաշուած սուր ու թուր, քարոյն խոփ ու փտած բրնձ, խաշում՝ ճրագ-լոյս ու Աւետարանի մի քանի թերթ, չգիտեմ ինչ ու ինչ եւ տաւ իր գերդաստանը, ռատիոնը, օդեր, քար

գնած—յօգտագործած հեռախոսատուփը
ևւ քաղից ֆարամաւը, ևւ ձորից ելաւ։

Այս ըմբռնումով էր, որ շինական-
ներ հաւատացին, թէ՛ «զետը իր Որո-
տամ ամաւը պիտի քողմի ձորում եւ Գո-
րիսի լեռները բարձրամայ մի խոնարհ
ամուսնով՝ «Որոտամի ռոգզմամ սիս-
տեմ»։

Եւ այսպէս, հայոց լեռնաշխարհի
ձորերն է վեր բազում սերունդներ բարձ-
րացած են։ «Մէկ—մէկ ելիլ ձորից գնա-
ցիլ են. աշխարհի կանչն ակամօքներին
գնացել» էր հաստատէ Գալլոյեան, «Ե-
րեմի լեռները ազատութեան համար զը-
նացել են, աշխարհի քարին որոնելու
համար զնացել են, աշխարհը փրկելու
համար գնացել են...»։

Եւ անոնք իրենց անվեհեր դնացում
ա՛յ միայն կենդանութիւն են սփռած հա-
յոց լեռնաշխարհի ամայտառնի լանջե-
րուն, շուշ տուած Ժայռին, կեանք մու-
ծած հողին, այլեւ պաշտպանած են ա-
նոնք հայրենական գոյն մէկ սրբու-
թիւն, իրձ ու երազանք՝ պատերազմե-
րու օրհասական ժամերուն...։

Հատորի վաւերագրական էջերէ
բողկացած այս բաժինին մէջ, կենդա-
նագրելով տուեալ գիւղի մը մէկ բարե-
մասնութիւնը, Գալլոյեան կը հիմնադ-
րէ իր պատկերացումը այդ գիւղի կեան-
քի հոլովոյթին քաջածանօթ անհատներէ
կատարուած շահեկան մէջբերումներով։
Այս ինքնատիւ մօտեցումը իրապաշտ եւ
կենսունակ տարրերով կը հարստացնէ
հեղինակի պատմումը եւ հնարաւոր չա-
փով մը կը նպատակ անոր դիւրահաղորդ
ընկալութեան։ Օրինակ, զափանցի Ար-
տաշէս Մատուրեանէ մէջբերուած վկա-
յագրութիւնը ո՛չ միայն կը կենդանացնէ
Շիրակահող գիւղի հողային մէկ վիճակի
հարցին առնչուած Սկսել Բակունցի յի-
շատակը, այլեւ այդ գիւղի աւորեայի
մասին հեղինակի նկարագրութիւնը կը
բարեխառնէ զգացական յասկնալ տար-
րերով։ Աւելին. Գալլոյեանի կողմէ մէջ-
բերուած Մատուրեանի մէկ այլ վկայու-
թիւնը Բաֆֆիի այցելութեան մասին,
որուն ընթացքին պղինձի հանքերու ա-
ռնչութեամբ վիպասանի արտայայտած

կարծիքները շահեկան ծանօթագրութիւն
մը կ'ապահովեն Ղափանի հանքերու եւ
հանքուղիներու նկարագրութեան զծով։

Գալլոյեան կը գիմէ նաեւ պատմա-
դրիկներէ փոխանցուած աւանդազրոյցե-
րու, հատորի թիման պատմական ճըշ-
գըրտութեամբ հետապնդելու դիտաւո-
րութեամբ։ Պատահական քմայքով մը
չէ, որ կը մէջբերէ Շապուհ թագաւորի,
լենկթիմուրի եւ Լուսաւորչի կանթիլին
չուրջ յօրինուած զրոյցները, այլ զանոնք
կը վաւերագրէ՝ ազգային բնորոշ ըմբռ-
նում մը կամ նկարագրային յատկութիւն
մը իր էսթետիկական իմաստով ներկայա-
ցընելու նախանձախնդրութեամբ։ Այս-
պէս, գարնան Պարսկաստանէն եկած եւ
Մեղրիի մէջ յայտնուած ձորեկները,
զազափարհերու տարապայման զուգոր-
դութեամբ յիշել կու տան հեղինակին՝
պարսից Շապուհ արքայի եւ սրենաց
Անդուկ իշխանի ծանօթ աւանդազրոյցը։

Իր սեւեռամբի առարկան հանդիսա-
ցող շինականի համեռու կեանքը, ինչպէս
նաեւ անոր աւորեայ տաղնապնէրը եւ
իրագործիչի տենչերը Գալլոյեան կը տե-
ղեկագրէ համապատասխան զրոյցներով
եւ տկնարկներով։ Շինականի անհատա-
կան ցաւին ւտրեթիւր այդ զրոյցները եւ
տկնարկները կ'անդրադառնան նաեւ հա-
ւաքական մտահոգութիւն մը արտայայ-
տող վիճակներու։ Յատկանշական է
«Լուսաւորչի կանթիլը» խորագրով բա-
ժինը, ուր ըստը վերածուած է նուիրա-
կան խորհուրդի՝ հայրենի դաշտերը ո-
ռողելու հապէս կենարար իր յատկու-
թեամբ։ Այս իմաստով, հայոց բարձրա-
ւանդակի բազմադէտ աղբիւրները եւ
Ապարանի ծովը անվթար պահելու ձը-
տումը շինականի քաղցր տառապանքին
մէկ երեւոյթն է պարզապէս. «— Ամիսը
եիմզ հարիւր տոննացեմնաւ ենք սրըս-
կում, — առում է Սուրիկը։ Փռչալ
գիւղից է, եիմզ տարի է թոյն գործիմ
է՛՝ սղերքի հետ լծի ափերը մօտիկ—մօ-
տիկ հարատում է, ցեմնաւառար է սրըս-
կում, որ Ապարանի ծովը չմաղի»։

Բանահաւաքի մը յատուկ հետաւու-
թեամբ, Գալլոյեան մօտէն կը հետեւի
այդ խոնարհ մարդոց շինարարական

գործունեութեանց, կը գրուցէ անոնց հետ եւ իր քաղաք թաղմերանդ տպաւորութիւնները, մինչեւ իսկ անհրաժեշտ մանրամասնութեամբ կը ներկայացնէ համադրական ձեւով: Լրատուական բընոյթով պարզուած այդ պատկերացումները ա՛յնքան ուժմէական են, վաւերական եւ տպաւորիչ, որ կը վերածեն «Ծաղկած քարեր» հատորը կեանքէն քաղուած եւ կեանքին հետ շաղկապուած կենդանի վկայութեան:

Գալչոյեանի լեզուն ունի առանձնաշատուկ ոճ մը, վճիտ եւ հեզասահ: Ան կ'ընթանայ մատուցուած իւրաքանչիւր նիւթի ոգիին եւ իմաստին հետ ներգալնակ զուգակցութեամբ, որով՝ տուեալ պատկերացումը՝ թէ՛ արտայայտական իր ձեւին եւ թէ՛ կառուցային իր գիծերուն Փէլջ, կը յայտնաբերուի բնական տարածքով մը պատմութեան:

Աւելի՛ն. այդ լեզուն հայրենի բնաշխարհի շուրթերուն պէս յորգազեղ է, անտաններուն պէս հրդեհիկ, քարանձաւներուն պէս խոր ու մույլ եւ լեռներուն պէս վերաբարձ: Հայրենի բնաշխարհի պատկերացումը՝ եղանակն է անիկա, որ պահ մը կը խորհրդածէ համաշխարհային մը տոջն եւ այլ տեղ, մամուտ շիրմաբարձ մը ի տես՝ զգացական մթնոլորտ մը կը կերպարէ: Փարանձաւէ քարանձաւ եւ աւանդազրոյցէ աւանդազրոյց կը մորթօքի, կը վարարի, կը վերանայ այդ լեզուն:

Հեղինակը իր համեստ գրուցակիցներուն խօսած Սասնոյ բարբառը կը վերադարձնէ իր բնագրային հարազատութեամբ: Օրինակ՝ «— Քու խօսք Արագածի անպերտ կայծակի՞մ կը պատկանի... Հա՞. էս տարի քիչ է, էս տարի Արագածի ամպ ու կայծակ պակաս է»:

Կրկնակ արժանիք մը կը գրեցնորէ Գալչոյեանի այս գրեկները: Նախ ա՛յն իմաստով, որ կերպարները կը ներկայանան իրենց կենցաղային հարազատ նկարագրով: Ապա, այդ բարբառի օգտագործումով՝ իր լեզուն կը ներթափուի եւ

կ'աշխուժանայ արեւմտահայերէնին բընորոշ յատկանիշներով:

Գալչոյեան ունի լայնաշունչ եւ զօրեղ երեւակայութիւն մը, որով՝ համապարփով գոյներով կը տեղեկագրէ հայրենի թաղմերանդ գիւղերը եւ կ'անդրադառնայ անոնցմէ իւրաքանչիւրին համապատասխան արժէքին, կեանքին եւ նըկարագրային բարեմասնութեանց, զորս կը համադրէ ան հատորը պայմանաւորող հիմնական զազափարի մը շուրջ:

Հեղինակը կը սիրէ ներկայացնել շրջապատի եւ բնութեան հետ աղերսուած մարդուն զգացական կապերը՝ իրենց փոխարկական իմաստով: Այսպէս, Լուսաւորչի կանթեղը կ'ըմբռնուի թէ՛ իրրեւ հաւատքի խորհրդանիշ եւ թէ՛ իրրեւ Արագածի երկինքէն կախուած ա՛յն ծրւէնը, որ վերածուելով անձրեւի մաքրաշիթ կայլակներուն՝ կ'ոռոգէ հայրենական երաշտ գաշտերը:

Կեանքի տեսանկի իրականութեան հետ, Գալչոյեան կը հաւատայ նաեւ ոգեղէնին եւ ոգեկան ապրումներու յարակալութեան: Հոգեղէնի ներկայութեան մէջ ոգեղէնի փնտրուածքով կը վերանայ ան եւ պակուցիչ զգացումով մը կը ձգտի բնակել ինչ որ անբաժան մէկ մասն է եղած կեանքին, շնչած եւ զոյակցած քարի հետ, իրրեւ աներեւոյթ մէկ յատկութիւնը քաբին:

Հոգը, իրեն համար, հոգեղէն իմաստ մը չի ներկայացներ միայն, այլ՝ եւ՝ դարերու ունեղներով նուիրագործ եւ պատմական նուաճումներով իրագործուած գոյատեւման խորհուրդ մը: Ինչպէս քարանձաւը թաքտոց մը չէ լուկ, այլ՝ խորհրդանիշը շղթայուած կամքի եւ զայն յառաջընթաց պայթարի լծող մղիչ ուժի:

Այս իմացումին սեւեռող աչքն է Մուշեղ Գալչոյեան, որ կը հաւատայ, թէ իրականի եւ ոգեկանի միաձոյլ ներգործութեամբ կը ծագկին եւ կ'իմաստաւորուին քարերը Հայաստանի, կ'ըլլան շԵԱՂԿԱԾ ՔԱՐԵՐ:

ՅԱՅՈՒՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Չորի Միրոյի անվուզական կերպարը մեր ժողովրդի մի հատաժողով ավագանի դիմաստուների խտացումն է:
(«Գարուն», 1970, թիւ 9) ՍԵՒԱԿ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

«Չորի Միրոն» մի մարդ է, որ գիտէ ու պզտիկ է ապրելու ժամանակը եւ մեռնելու ժամանակը, սիրելու ժամանակը եւ կռուելու ժամանակը: Սա ինքը կեանքն է՝ տարերային ու իմաստուն, խորհրդատու ու հաւատարակչի: ... «Չորի Միրոն» Մուշեղ Գալշոյեանի առաջին յաղթանակն է:
(«Սովետական գրականութիւն», 1971, թիւ 1) ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ

Այնպիսի գործեր, ինչպիսին «Չորի Միրոն» վիպակն է, կարող են ստեղծուել միայն մէկ անգամ եւ մնալ եպակի:
(«Գարուն», 1972, թիւ 11) ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԵԱՆ

Անցնայի յիշողութիւնների եւ ներկայ գործողութիւնների միջոցով՝ Գալշոյեանը կարողանում է ստեղծել 20րդ դարի հայ մարդու համառոտագ կերպար, այնպիսի մարդու, որը տեսել է եղեռն ու անբաժնութիւն, հայրենիքի կործանում եւ գաղթ եւ ապա նաեւ նոր հայրենիքում գցել նոր կեանքի հիմքերը:
(«Գարուն», 1975, թիւ 8) ԴԱՐԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Գալշոյեանը մանրաքանդակ արուեստագէտ է, իսկ մանրաքանդակութիւնը երևույթի բնորոշ ու տիպական գծերը մեծ խտացման հասցնելու կարողութիւնն է:
(«Սովետական գրականութիւն»: 1975, թիւ 9) ԳԱՌԻԿ ԱՆԱՆԵԱՆ

Գալշոյեանը բռնել է մեծ գրականութեան ուղին: Նրա ձիրքը տարեց տարի թափանցում է կեանքի բուռն տարերքի մէջ, արգասաւորում, բերելով գեղեցիկ էջեր, հմայիչ պատկերներ: Նա յաղթահարել է խոչընդոտները, գտել մեծ գրականութեան ճանապարհը:
(«Գրական թերթ», 1975, թիւ 32) ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶԵԱՆ

Գալշոյեանն իր հերոսներին ներկայացնում է ներքին մենախօսութեամբ կամ հեղինակային խօսքով ընդգծում է բնատրոպեան մի գլիժ, մի պատմութիւն, եւ ապա հերոսին շարունակ դնում այնպիսի վիճակներում, որոնք լրացնում են կերպարի ամբողջականութիւնը:
(«Գրական թերթ», 1975, թիւ 41) ԷՂՈՅԵԱՆ ԹՈՓՉԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Մ. Ի Հ Խ Ա Ն
Թ Ա Տ Ե Ր Ա Խ Ա Ղ Ե Ր

- Կրթիկոյ արժան
 - Մարդորսը
 - Ժամադրութիւն
 - Փաստալ
 - Պարոյր Հայկազն եւ Մովսէս Խորենացի
 - Տուգափեղկին ազգիկը
- Պէյրուք, 1980, Համազգայինի Վահէ Սէքեան տպարան, 261 էջ,
գին՝ 20 լ. ռսկի, արտասահման՝ 8 տոլար :



Գ. Ա Ճ Ե Մ Ե Ա Ն
ՏԵՍԼ ԿԱՆ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Բ. ԳԻՐԲ

- Պէյրուք, 1980



LUC-ANDRE MARCEL et G. POLADIAN

CHOIX DU POEMES ARMENIENS

- GREGOIRE DE NAREK
- POETES DU MOYEN AGE
- DANIEL VAROUJEAN
- YEGHICHE TCHARENTZ

- Պէյրուք, 1980, Համազգայինի Վահէ Սէքեան տպարան, 253 էջ,
գին՝ քղթական 30 փրան. փրանք, լաթական 40 փր. փրանք :

digitise



by A.R.A.R.

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻՐԱՆԱՆ	50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆ	27 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	5 Լ. ՈՍԿԻ

بَاكِين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 المدير المسؤول
 السيد ارتمين كارنيك قرانجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

ԲԱԿԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
 ՊՐԵՄՍ ՄԵԱՊԵԱՆ
 Խմբագրությունը տեղադրված է
 ՃԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ
 ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՅՈՍԵԱՆ

Հեռ. 296898